



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**(ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ - ՀԱՍԱՈՒՏ ԱԿՆԱՐԿ
ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)**

EUROPEAN NEIGHBOURHOOD POLICY (EUROPEAN UNION – BRIEF SURVEY AND DOCUMENT FILE)

**Երևան-Անտարես
Yerevan-Antares
2006**



ՆՏՌ 32:341

ԳՄԴ 66+67.91

Ե 744

Ե 744 «Եվրոպական հարևանության քաղաքականություն
(Եվրոպական Միություն – համառոտ ակնարկ և փաստաթղթերի
ժողովածոլ)».- Երևան, Անտարես, 2006. - 280 էջ:

Գիրքը հրատարակվել է Ֆրիդրիխ-Էբերտ-Հիմնադրամի հայաստանյան
մասնաճյուղի աջակցությամբ իրականացվող Եվրոպական Միության
«Ընդլայնված Եվրոպա – նոր հարևաններ» ծրագրի շրջանակներում:

Ժողովածոլ ներառում է հետևյալ նյութերը.

1. Եվրոպական Միություն: Եվրոպական Միության կառույցները:
Եվրոպական Միության որոշումների կայացման մեխանիզմը:
2. Անվտանգ Եվրոպան բարվոք աշխարհում. Եվրոպական անվտան-
գության ռազմավարությունը:
3. Հանձնաժողովի ուղերձը. Եվրոպական հարևանության քաղա-
քականություն. Ռազմավարական փաստաթուղթ:
4. Առաջարկ Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի Կարգի վերա-
բերյալ, որը սահմանում է հարևանության և գործընկերության
գործիքի հիմնական դրույթները:
5. Հանձնաժողովի կողմից Խորհրդին տրվող հաղորդագրությունը
Եվրոպական հարևանության քաղաքականության /ԵՐՔ/ ծրագրի
շրջանակներում նախատեսվող գործողությունների ծրագրերի շուրջ
Հանձնաժողովի առաջարկությունների մասին:
6. «Հաղորդագրություն Հանձնաժողովից Խորհրդին. Եվրոպական
հարևանության քաղաքականություն. Առաջարկություններ Հայա-
տանի, Աղրեջանի, Վրաստանի, Եգիպտոսի և Լիբանանի համար»:
7. Հանձնաժողովի աշխատակազմի աշխատանքային հաշվետվություն.
Եվրոպական հարևանության քաղաքականություն. Երկրի գեկույց.
Հայաստան:

«Եվրոպական Միություն. Եվրոպական Միության կառույցները. Եվրոպական
Միության որոշումների կայացման մեխանիզմը» պատրաստել է ՀՀ ԱԺ Արտաքին
հարաբերությունների վարչության գլխավոր մասնագետ Արիի Առաքելյանը:

ISBN 99941-57-71-X

Ե 0801000000
0130(01)06 2006 թ.

ԳՄԴ 66+67.91

© «Եվրոպական ինտեգրացիա» ՀԿ, 2006



Ծնորհակալություն ենք հայտնում «Բաց հասարակության իմաստիուտի օժանդակության Հիմնադրամ»-ի հայկական մասնաճյուղին՝ «Հաղորդագրություն Հանձնաժողովից Խորհրդին. Եվրոպական հարևանության քաղաքականություն. Առաջարկություններ Հայաստանի, Աղրբեջանի, Վրաստանի, Եգիպոտի և Լիբանանի համար», «Հանձնաժողովի աշխատակազմի աշխատանքային հաշվետվություն. Եվրոպական հարևանության քաղաքականություն. Երկրի գեկույց. Հայաստան» նյութերի հայերեն տարրերականների տրամադրման համար:

«Եվրոպական ինտեգրացիա» ՀԿ-ն և Ֆրիդրիխ -Էբերտ-Հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղը հայտնում են իրենց շնորհակալությունը ՀՀ ԱԺ Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովին՝ գործ պատրաստման աշխատանքներում խորհրդատվական աջակցություն ապահովելու համար:

Հրատարակիչները շնորհակալություն են հայտնում «ԱՐՄԵԴԱ» տեղեկատվական, վերլուծական գործակալությանը տեղեկատվական աջակցության համար:



«Եվրոպական ինտեգրացիա» ՀԿ Ֆրիդրիխ-Էբերտ-Հիմնադրամի Հայաստանյան Մասնաճյուղ



“European Neighbourhood Policy» (European Union – Brief Survey and Document File)”

The book was published by NGO "European Integration" under the "European Neighbourhood Policy" project with the assistance of Friedrich – Ebert – Foundation Armenian Branch.

It consists of the following documents:

1. European Union and its Institutions. Decision - Making in the European Union.
2. A Secure Europe in a Better World. European Security Strategy.
3. Communication from the Commission. European Neighbourhood Policy (ENP). Strategy Paper.
4. Proposal for a Regulation of the European Parliament and of the Council laying down general provisions establishing a European Neighbourhood and Partnership Instrument.
5. Communication from the Commission to the Council on the Commission Proposals for Action Plans under the European Neighbourhood Policy (ENP).
6. Communication from the Commission to the Council. European Neighbourhood Policy. Recommendations to Armenia, Azerbaijan, Georgia, Egypt and Lebanon.
7. Commission Staff Working Paper. European Neighbourhood Policy. Country Report. Armenia.

"European Union and its Institutions. Decision - Making in the European Union." document was prepared by Arpi Arakelian, Chief Specialist of the External Relations Department of the National Assembly of RA.



We express our deep gratitude to Open Society Institute Assistance Foundation-Armenia for providing the Armenian version of the documents “Communication from the Commission to the Council. European Neighbourhood Policy. Recommendations to Armenia, Azerbaijan, Georgia, Egypt and Lebanon.”, “Commission Staff Working Paper. European Neighbourhood Policy. Country Report. Armenia.”



NGO European Integration and Friedrich – Ebert – Foundation Armenian Branch express profound gratitude to the Standing Committee on Foreign Relations of the National Assembly of RA for counseling.

Publishers express gratitude to “ARMEDIA” Information, Analytical Agency for information support.



NGO “European Integration”

Friedrich – Ebert – Foundation
Armenian Branch



Ներածական խոսք

Եվրոպական ինտեգրումը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության առաջնահերթությունների շարքում է: Այն իր ուրույն տեղն ունի նաև պետական և ազգային անվտանգության գործում:

Բնականաբար, այս կարևոր խնդրին իր մասնակցությունն ունի նաև խորհրդարանը: Եվրոպական կառույցներում, մասնավորապես՝ ԵԽՄՎ-ում, ԵՄ-Հայաստան խորհրդարանական Համագործակցության Հանձնաժողովում մեր պատվիրակություններն իրենց կարևոր դերակատարությունն ունեն երկրի արտաքին քաղաքականության Եվրոպական ուղղությունը զարգացնելու գործում:

Մեր երկիրն ընդգրկվել է Եվրոպական Միության «Ընդլայնված Եվրոպա - Նոր հարևաններ» ծրագրում: Այդ ծրագրի հիմնադրույթներին և գաղափարախոսությանը ծանոթանալուն անկասկած կնպաստի նրա հիմնական փաստաթղթերի հրապարակումը հայերեն լեզվով: Համոզված են, որ այս գիրքը անհրաժեշտ է ոչ միայն լայն հասարակությանը, այլև, առաջին հերթին, ակտիվ հասարակական և քաղաքական գործունեություն իրականացնող անձանց:

Յուս հայտնելով, որ ննան կարևոր նախաձեռնությունները կունենան իրենց շարունակությունը՝ ցանկանում են իմ շնորհակալությունը հայտնել գրքի տպագրությունը կազմակերպողներին և, մասնավորապես՝ ՀՀ ԱԺ Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի Միջազգային կազմակերպությունների հետ տարվող աշխատանքների, ինտեգրացիոն խնդիրների և միջազգային փորձի տեղայնացման հարցերով ենթահանձնաժողովին, որն իր հնարավոր նպաստը ներդրեց գրքի հրատարակման գործում:

**ՀՀ ԱԺ Արտաքին հարաբերությունների
մշտական հանձնաժողովի նախագահ
Արմեն Ոուստամյան**



Preface

Dear reader,

it is our great pleasure to present to you this publication of our partner “NGO European Integration” with whom we have a fruitful cooperation since quite some time.

The publication is a collection of materials to support this cooperation as an input for events related to Armenias way towards Europe and the European Union organized by our partner and will also be beneficial to a wider interested public in the country.

In this context it supports Friedrich-Ebert-Stiftungs Caucasus-wide endeavour to foster the regions process to get closer to Europe and the European Union especially at a time when all three south-caucasian countries have signed an Action Plan within the EU’s neighbourhood policy.

Therefore we would like to congratulate our partner for the efforts put into the finalization of the publication and hope that it will be shared by a wider readership.

Günther Fichtner
Head of South-Caucasus Co-ordination Office
Friedrich-Ebert-Stiftung Tbilisi/Georgia



Ներածական խոսք

Հայաստանի Եվրախնտեգրման գործընթացում իր ուրույն տեղն ունի Եվրոպական Միության Եվրոպական Հարևանության Քաղաքականությունը /ԵՀՔ/: Մեր կարծիքով, նշված քաղաքականությամբ ստեղծված հնարավորությունների ճիշտ զնահատումն ու առաջարկվող գործիքների արդյունավետ և հետևողական կիրառումը կարող էն մեր երկրի համար ստեղծել բարենպաստ պայմաններ՝ ինտեգրման գործընթացում որպատճեն նոր փուլ թևակողմենու համար:

Ինչպես և ցանկացած քաղաքականություն և/կամ ծրագիր, այնպես էլ ԵՀՔ-ը՝ ունի իր նախագծման, ստեղծման, ընդունման և կիրառման տրամաբանությունը: Բազմաթիվ դեպքերում, կենտրոնանալով միայն կիրառման գործիքներին վերաբերող հարցերի շուրջ՝ մենք կորցնում ենք շրայի տրամաբանությունը: Այս պարագայում՝ արհեստականորեն նվազեցվում են և ստեղծված հնարավորությունները, և ակնկալվող արդյունքները:

Նշված ժողովածուի միջոցով փորձ է արվում ընթերցող լայն շրջանակների համար հնարավորություն ստեղծել ոչ միայն ծանոթանալու ԵՀՔ-ին, այլև՝ հարցը պատկերացնելու ընդհանրական տրամաբանական շրայի ներքո: Կարծում ենք, որ նյութերի հայերեն լեզվով տպագրումը նաև ԵՄ-ին վերաբերող գործընթացներին առավել խորապես տեղեկանալուն:

ԵՀՔ-ի կարևորագույն գործիք հանդիսացող Գործողությունների Ծրագիրը՝ շուտով կմտնի կիրառման փուլ: Այս տեսակետից ևս, հուսով ենք, որ ժողովածուն օգտակար կլիմի ինչպես պետական և քաղաքացիական ծառայողներին, այնպես էլ՝ քաղաքացիական հասարակության ինստիտուտների մեր գործընկերներին և երիտասարդ մասնագետներին:

Շնորհակալ կլիմենք մեր բոլոր գործընկերներին՝ ժողովածուի վերաբերյալ իրենց դիտողություններն ու առաջարկները տրամադրելու համար:

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում նաև գոքի պատրաստման և հրատարակման գործում ցանկացած եղանակով մեզ օժանդակած կազմակերպություններին և անձանց:

**«Եվրոպական ինտեգրացիա»
հասարակական կազմակերպություն**



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

- I. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ
- II. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԿԱՅԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ

★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՍՄԵՂԾՄԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Միավորված Եվրոպա գաղափարի ծնունդը

Միավորված Եվրոպայի գաղափարը դարերի պատմություն ունի: Եվրոպական ժողովուրդների միավորման ծրագրերը սակայն, հաճախ ունեցել են Եվրոպային տիրանալու նպատակ: Պանեվրոպական խաղաղ գաղափարները պատմության ընթացքում տարածվել են փիլիսոփաների, պետական գործիքների, գրողների կողմից: Այդպիսի օրինակները բազմաթիվ են: Վոլտերը մտածելով Եվրոպայի մասին՝ 1745 թվականին գրում է. «Եվրոպան մի մեծ համրապետություն է՝ բաժանված տարրեր երկրների, որոնք բոլորն ունեն կրոնական միևնույն հիմքը, հասարակական իրավունքի և քաղաքականության նույն սկզբունքները»: Խոսելով կայուն խաղաղության անհրաժեշտության մասին, իր աշխատություններից մեկում 1782 թվականին ժան Ժուլ Ռուստոն զարգացնում է ինքնության հարցն ու դրա բարդությունը և նշում: «Այսօր այլև չկան ֆրանսիացիներ, գերմանացիներ, անգլիացիներ, իսպանացներ: Կան միայն Եվրոպացիներ»: 1848 թվականին Փարիզում խաղաղությանը նվիրված իր հայտնի ելույթներից մեկում Վիկտոր Ջյուգոն նշում է. «Կգա մի օր, երբ դուք՝ ֆրանսիան, Ռուսաստանը, Անգլիան, Գերմանիան, մայրցամաքի բոլոր ազգությունները, առանց կորցնելու ձեր ինքնությունը, կիամախնքվեք մեկ միության մեջ: Կգա մի օր, երբ դեմ դիմաց կկանգնեն Ամերիկայի Միացյալ Նահանգները և Եվրոպայի Միացյալ Նահանգները, որոնք կփոխանակեն իրենց արտադրանքը, առևտուրը, արդյունաբերությունը, արվեստը...»: Այնուհետև, 1867 թվականին Ջյուգոն գրում է. «XX դարը կունենա մի արտասովոր ազգ՝ մեծ, հանճարեղ, ազատ, հարուստ, մտածող... Այն կունենա Փարիզ մայրաքաղաք և կկոչվի ոչ թե ֆրանսիա, այլ՝ Եվրոպա»:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին Միավորված Եվրոպա գաղափարի իրականացումը դարձավ իրողություն։ Եվրոպայում և ամբողջ աշխարհում ստեղծված իրադրությունը XX դարը նշանավորեց համաշխարհային պատմության գլոբալ փոփոխություններով։ Եվրոպա մայոցամաքի ավերածությունները, Եվրոպական Երկրների միջև ծագած տարածայնությունները թուլացրել են Եվրոպայի դիրքերը համաշխարհային տնտեսության



և Եվրոպական քաղաքակրթության մեջ: Պատերազմը լուցորել էր միավորման գաղափարի մինչ այդ առկա քննարկումները: Սակայն Երկրորդ համաշխարհային պատերազմի ճգնաժամից միայնակ դուրս գալու դժվարությունը կրկին շրջանառության մեջ դրեց միավորման գաղափարը, որը համախմբեց ինչպես հարդանակած Երկրներին, ինչպիսին, օրինակ, Ֆրանսիան էր, այնպես էլ պարտվածներին, ինչպիսին Գերմանիան էր: 1946 թվականին Ուիմսթոն Չերչիլը նշեց. «Մենք պետք է ստեղծենք Եվրոպայի Միացյալ Նահանգների պես ինչ-որ կառույց»:

Եվրոպական համայնքի /ընկերակցության/ ստեղծման գործում կարևոր դերակատարում են ունեցել Ռոբեր Շումանը և ժան Մոնեն: Աջիսի և պողպատի ֆրանս-գերմանական արդյունաբերության միավորման գաղափարը ոգեշնչվել էր ժան Մոնեի կողմից, որին սերտորեն աջակցում էր նաև Ռոբեր Շումանը: Վերոնշյալ ճյուղերը կարևոր նշանակություն ունեին այն ժամանակվա Գերմանիայի և Ֆրանսիայի արդյունաբերություններում: Մոնե-Շուման առաջարկությունը մեծ հետաքրքրություն առաջացրեց նաև Խոտալիայում և Բենիյուքսի Երկրներում: Բանն այն էր, որ ի տարբերություն Եվրոպական մյուս կազմակերպությունների, Ածխի և Պողպատի Եվրոպական ընկերակցության մեջ էր առաջին անգամ նշվում վերազգային սկրունքը:

Ածխի և պողպատի Եվրոպական ընկերակցության ստեղծման մասին պայմանագիրը ստորագրվեց Փարիզում՝ 1951թ. ապրիլի 18-ին, որի նախարանում հիմնականում ուշադրություն էր հրավիրվում խաղաղության պահպանման անհրաժեշտության վրա, որն ի սկզբանե համայնքի ստեղծման նախաձեռնողների հիմնական նպատակներից էր: Արդյունքում, ԱՊԵՇ-ը դարձավ «Վեցնյակի» կազմակերպություն, որի մեջ մտնում էին Ֆրանսիան, Գերմանիան, Խոտալիան, Բելգիան, Լյուքսենբուրգը, Հոլանդիան: 1957թ. Հռոմում ստորագրվեց Եվրոպական տնտեսական ընկերակցության և Աստոմային Էներգիայի բնագավառում Եվրոպական ընկերակցության /Եվրատում/ ստեղծման մասին պայմանագրերը: 1985թ. դեկտեմբերին ընդունվեց Միասնական Եվրոպական ակտը, որը ներառում է ինտեգրման տնտեսական և քաղաքական սկզբունքները: 1992թ. հոլանդական Մաստրիխտ քաղաքում ստորագրվեց Եվրոպական միության մասին պայմանագիրը (Մաստրիխտի պայմանագիր), որն ուժի մեջ մտավ 1993թ. նոյեմբերին:

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ★ ՔԱՂՓԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ

1997թ. ստորագրվեց Ամստերդամի պայմանագիրը: Այս փաստաթղթերը
եւ ստեղծման հիմնադիր փաստաթղթերն են:

ԵՎՐՈՊԱԿԱՍ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Երկրները, որոնք միասին կազմում են Եվրոպական միությունը, իրենց անկախությունն իրականացնում են համատեղ, որպեսզի համաշխարհային քատերաբենում ունենան իշխանություն և ազդեցություն, ինչը նրանցից յուրաքանչյուրն առանձին չեն կարող ունենալ:

Ինքնիշխանության մեկտեղումը գործնականում նշանակում է, որ անդամ երկրները որոշումների կայացման իրենց իրավասության որոշ մասը գիծում են ընդհանուր այն կառույցներին, որ իրենք են ստեղծել, որպեսզի ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվեն առավել ժողովրդավարական կերպով և եվրոպական մակարդակով:

I. ԵՎՐՈՊԱԿԱՍ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

Եվրոպական միության որոշումների ընդունման գործընթացն ընդհանրապես, և համատեղ որոշումների կայացման մեխանիզմը մասնավորապես, ներառում են երեք հիմնական կառույցներ.

- Եվրոպական խորհրդարան, որը ներկայացնում է Եվրոպական միության քաղաքացիներին և ուղղակիորեն ընտրվում է նրանց կողմից,
- Եվրոպական միության խորհրդուրդ, որը ներկայացնում է անդամ երկրները,
- Եվրոպական համաձայնողով, որը ներկայացնում է Եվրոպական միության շահերը:

«Միջազգային այս եռամկյունին» ընդունում է օրենքներ և մշակում քաղաքականություն (ուղղություններ, ընթացակարգեր, որոշումներ), որոնք կիրառվում են Եվրոպական միության ամբողջ տարածքում: Սկզբունքորեն Հանձնաժողովն է ներկայացնում Եվրոպական միության նոր օրենքները, սակայն դրանք ընդունում են Եվրոպական խորհրդարանը և Եվրոպական միության խորհրդուրդը:

Երկու այլ կառույցներ ևս ունեն կարևոր դերակատարում. Արդարադատության դատարանը, որն աջակցում է Եվրոպական իրավունքի կիրառմանը, և Առողջության դատարանը, որը Վերահսկում է Եվրոպական միության գործունեության ֆինանսավորումը:

Այդ կառույցները ստեղծվել են համաձայնագրերի հիման վրա, և Եվրոպական միության հիմքն են կազմում: Համաձայնագրերը հավանության են արժանացել անդամ երկրների նախագահների ու վարչապետների կողմից և վավերացվել են այդ երկրների խորհրդարաններում: Այս կառույցները ստեղծել են կամոնակարգեր և ընթացակարգեր, որոնց պետք է հետևեն Եվրոպական միության մարմինները: Եվրոպական միությունն այս կառույցներից զատ, ստեղծել է նաև այլ մարմիններ, որոնք ունեն մասնագիտացված դերակատարում:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՕՄԲՈՒԴՍՄԵՆՑ

Եվրոպական օմբուդսմենը վատ կառավարումից պաշտպանում է Եվրոպական միության քաղաքացիներին և ծեռնարկատիրությունը:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ պաշտպանության վերահսկող մարմին

Այս մարմինը երաշխավորն է այն բանի, որ Եվրոպական միության կառույցները հարգեն գաղտնիության ազգային իրավունքը՝ մշակելով իրենց տվյալները:

Ֆինանսական մարմինները

- Եվրոպական կենտրոնական բանկը պատասխանատու է Եվրոպական արժութային քաղաքականության համար,
- Եվրոպական ներդրումային բանկը ֆինանսավորում է Եվրոպական միության ներդրումների ծրագրերը,
- Եվրոպական ներդրումների հիմնադրամը երաշխիքներ և կապիտալ է ապահովում փոքր ու միջին ծեռնարկությունների համար:

Խորհրդատվական մարմինները

- Եվրոպական տնտեսական և սոցիալական հանձնաժողովը ներկայացնում է քաղաքացիական հասարակությունը և սոցիալական գործընկերներին,
- Ռեգիոնների հանձնաժողովը ներկայացնում է տեղական և տարածքային իշխանություններին:

Միջնաստիտուցիոնալ /միջկառույցային/ մարմինները

- Եվրահամայնքի պաշտոնական իրապարակումների գրասենյակը հրատարակում, տպագրում և տարածում է տեղեկատվություն Եվրոպական միության և նրա գործունեության մասին,
- Եվրոպական համայնքի կադրերի ընտրության գրասենյակն

★ ★ ★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ★ ★ ՔԱՂՓԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ

աշխատանքի է ընդունում Եվրոպական միության և նրա կառույցների աշխատակիցներին:

Ապակենտրոնացված գործակալություններ

• 15 մասնագիտացված գործակալությունները Եվրահամայնքի շրջանակներում լուծում են տեխնիկական, գիտական, կառավարման ոլորտներին առնչվող առանձնահատուկ հարցեր /ԵՄ առաջին սյուն, հավելված 1/:

• Անվտանգության ռւսումնասիրությունների Եվրոպական ինստիտուտը և Եվրոպական միության Սաթելիտ կենտրոնն անդրադարձում են ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականությանը վերաբերող որոշակի խնդիրների /ԵՄ երրորդ սյուն, հավելված 1/:

• Եվրոպոլը /Եվրոպական ռստիկանություն/ և Եվրոքասթը /ԵՎ-րոպական արդարադատություն/ քրեական հարցերում օգնում են կոորդինացմելու ռստիկանական և դատական համագործակցությունը /ԵՄ երրորդ սյուն, հավելված 1/:

Եվրոպական խորհրդարանի, Եվրոպական համաձայնության և Եվրոպական միության խորհրդի մասին առավել մանրամասն

Եվրոպական խորհրդարան

Խորհրդարանի ակունքները հասնում են մինչև 1950 թվականի հիմնարար համաձայնագրերը: 1979 թվականից Խորհրդարանի անդամները համամասնական ընտրակարգով ընտրվում են իրենց քաղաքացիների կողմից: Եվրոպական խորհրդարանի անդամներն ընտրվում են 5 տարի ժամկետով:

Եվրոպական միության 18 տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացի ունի քվեարկելու իրավունք: Այսպիսով, Խորհրդարանն արտահայտում է ԵՄ 374 միլիոն քաղաքացիների ժողովրդավարական ցանկությունը և Եվրոպական միության այլ կառույցների հետ քննարկումների ժամանակ ներկայացնում է նրանց շահերը:

Եվրոպական խորհրդարանի անդամներն ազգային կուսակցական խմբեր չեն կազմում, այլ հանդես են զալիս Եվրոպական լայն քաղաքական խմբերով, որոնք ներկայացնում են ԵՄ անդամ երկրներում գործող բոլոր հիմնական քաղաքական կուսակցությունները:

Եվրոպական խորհրդարանը ներկայումս ունի 732 անդամ

/հավելված 2/: Համաձայն Եվրոպական Սահմանադրության՝ անդամների թիվը կարող է հասնել 750-ի:

Մասատրիխստի համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո՝ 1993 թվականին, ԵՄ անդամ երկրների բոլոր քաղաքացիները կարող են քվեարկել այն երկրում, որտեղ բնակվում են: 1979 թվականին Եվրոպական խորհրդարանի անդամների 16,5%-ը կանայք էին: Այս թիվը 2004 թվականի ընտրություններից հետո 30,2% է:

Որտե՞ղ է տեղակայված Եվրոպական խորհրդարանը

Եվրոպական խորհրդարանն աշխատում է ֆրանսիայում, Բելգիայում և Լյուքսեմբուրգում:

Այնանամսյա լիագումար նստաշրջանները, որոնց մասնակցում են բոլոր անդամները, տեղի են ունենում Ստրասբուրգում /Ֆրանսիա/ Եվրոպական խորհրդարանի նստավայրում: Խորհրդարանի հանձնաժողովների նիստերը, ինչպես նաև լրացուցիչ այլ լիագումար նստաշրջանները տեղի են ունենում Բրյուսելում /Բելգիա/, իսկ Լյուքսեմբուրգում գտնվում են վարչական գրասենյակները /Գլխավորքարտուղարությունը/:

Եվրոպական խորհրդարանի նախագահությունը, Բյուրոն, Նախագահների համաժողովը

Եվրոպական խորհրդարանի նախագահը վերահսկում է խորհրդարանի ամբողջ գործունեությունը: Նա նախագահում է լիագումար նստաշրջանները, Բյուրոյի և նախագահների համաժողովի հանդիպումները, ներկայացնում է խորհրդարանը միջազգային հարաբերություններում:

Բյուրոն ուղղորդող մարմին է և պատասխանատու է խորհրդարանի բյուջեի, ինչպես նաև վարչական, կազմակերպչական աշխատակազմին առնչվող հարցերի համար: Բացի նախագահից և 14 փոխնախագահներից, խորհրդակցական ծայնի իրավունքով Բյուրոյում ընդգրկված են նաև 5 «կլիստորներ», որոնք պատասխանատու են Եվրոպական խորհրդարանի անդամներին առնչվող վարչական հարցերի համար:

Նախագահների համաժողովը բաղկացած է խորհրդարանի նախագահից և քաղաքական խմբերի ղեկավարներից: Քանի որ այս մարմնը պատասխանատու է խորհրդարանի համար՝ որպես քաղաքական կազմակերպություն, այն ինքն է ծևավորում խորհրդարանա-

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ★ ★ ՔԱՂՓԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ

կան հանձնաժողովները և պատվիրակությունները, որոշում է դրանց անդամների թիվը, Խորհրդարանում նրանց տեղերի բաշխումը և ծնավորում է լիազորմար նստաշրջանների ժամանակացույցն ու օրակարգերը: Այն քննարկում է Հանձնաժողովների նախագահների համաժողովի առաջարկությունները, որոնք վերաբերում են հանձնաժողովների և լիազորմար նստաշրջանների աշխատանքին:

Խորհրդարանի մշտական հանձնաժողովները, որոնք ներկայումս 20-ն են, իրականացնում են լիազորմար նստաշրջանների նախապատրաստական աշխատանքները: Յուրաքանչյուր հանձնաժողով նշանակում է նախագահ և փոխնախագահ և ունի քարտուղարություն:

Բացի մշտական հանձնաժողովներից, Խորհրդարանը կարող է ստեղծել ժամանակավոր հանձնաժողովներ և հրատապ հանձնաժողովներ: Խորհրդարանական համատեղ հանձնաժողովները կապ են պահպանում դիմող երկրների խորհրդարանների միջխորհրդարանական պատվիրակությունների հետ և ԵՄ ոչ անդամ երկրների խորհրդարանների հետ:

Աշխատանք ընդիանուր կանոնադրությամբ

Եվրոպական խորհրդարանի անդամները ստանում են այնքան աշխատավարձ, որքան ստանում են իրենց ազգային խորհրդարանների անդամները: Խորհրդարանը հանձն է առել ստեղծել ընդիանուր կանոնադրություն իր բոլոր անդամների համար, որպեսզի վերացնի ազգային խորհրդարանների աշխատավարձերի տարրերությունը և մեծացնի թափանցիկությունը: Սա Եվրոպական խորհրդարանի խնդրանքով աճրագրված է Անստերդամի համաձայնագրում և այս խնդիրը քննարկվել է Խորհրդարանի և Խորհրդի կողմից:

Թափանցիկությունը

Եվրոպական խորհրդարանի անդամները պետք է պետական ռեգիստրում իրապարակեն իրենց մասնագիտական գործունեության կամ ցանկացած այլ վճարովի աշխատանքի, կամ զբաղեցրած պաշտոնի մասին: Իրենք պետք է նաև տեղեկատվություն տան իրենց ֆինանսական աղբյուրների մասին:

Ի՞նչ է անում խորհրդարանը

Ինչպես բոլոր խորհրդարանները, այնպես էլ Եվրոպական խորհրդարանն ունի երեք հիմնարար իրավասություն՝ օրենսդրական, բյու-

ջետային և վերահսկողական: Եվրոպական Սահմանադրությունը հաստատում և ամրապնդում է խորհրդարանի այս եռակի դերը:

1. Խորհրդարանը Խորհրդի հետ կիսում է **օրենսդրական իրավասությունը**: Այն փաստը, որ խորհրդարանն ուղիղ ընտրված մարմին է, օգնում է երաշխավորելու Եվրոպական իրավունքի ժողովորակարական օրինականությունը:
2. Այն իրականացնում է **ժողովրդավարական վերահսկողություն** ԵՄ բոլոր կառույցների և մասնավորապես ԵՄ Հանձնաժողովի նկատմամբ: Խորհրդարանն ունի հանձնակատարների նշանակումն ընդունելու կամ մերժելու և ամբողջ հանձնաժողովին անվստահություն հայտնելու լիազորություններ:
3. Խորհրդարանը Խորհրդի հետ կիսում է **ԵՄ բյուջեի հանդեպ իրավասությունը** և այդպիսով կարող է ազդել բյուջեի ծախսերի վրա: Ընթացակարգի ավարտին Խորհրդարանը բյուջեն ընդունում կամ մերժում է ամբողջությամբ:

Վերոնշյալ երեք դերերի մասին ավելի մանրամասն

1. Օրենսդրական իշխանություն

ԵՄ օրենսդրության ընդունման համար ամենաընդիհանուր ընթացակարգը համատեղ որոշումների կայացումն է: Այս դեպքում Եվրոպական խորհրդարանը և Խորհրդուր հայտնվում են հավասար դիրքերում, և այս շրջանակում ընդունված ակտերը հանդիսանում են Խորհրդարանի ու Խորհրդի համատեղ ակտեր: Այս մեթոդը կիրառվում է նաև ամենատարբեր ոլորտներին առնչվող օրինասեղման գործունեության ընթացքում:

Մի շարք այլ առաջարկությունների համար Խորհրդարանը պետք է խորհրդակցի, և որոշ կարևոր քաղաքական և ինստիտուցիոնալ որոշումների կայացման համար անհրաժեշտ է նրա համաձայնությունը:

Բացի այդ, Խորհրդարանն ակտիվորեն աջակցում է նոր օրենսդրության ստեղծմանը և ուսումնասիրելով Հանձնաժողովի տարեկան աշխատանքային ծրագիրը՝ նշում, թե ինչ նոր օրենքներ են անհրաժեշտ, և այդ կապակցությամբ դիմում է Հանձնաժողովին՝ նախագծեր ներկայացնելու համար:

Եվրոպական խորհրդարանն ընդունում է ԵՄ օրենսդրությունը

Խորհրդի հետ համատեղ

Օրենսդրական ընթացակարգի համաձայն՝ Եվրոպական խորհր-

★ ★ ★ **ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
ՔԱՂՓԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ**

★ ★ ★

դարանը նախարարների խորհրդի հետ ընդունում է Հանձնաժողովի կողմից ներկայացվող նախագծերը: Հետևաբար, խորհրդարանը տալիս է վերջնական եզրակացություն: Օրենսդրական այս լիազորությունը խորհրդարանի հիմնական գործառույթն է: Եվրոպական Սահմանադրությունն առաջիկայում կընդարձակի այն ոլորտները, որտեղ խորհրդարանը խորհրդի հետ դեռևս հավասարապես չի կիսում այս իշխանությունը, ինչպիսիք, օրինակ, գյուղատնտեսության ոլորտի քառականությունը, ինչպիսիք, օրինակ, գաղտնաբառները:

Ինչպես են խորհրդարանը և խորհուրդը համատեղ ընդունում Եվրոպական օրենքները

Օրենսդրական ընդունված ընթացակարգը ներառում է մեկ,

երկու կամ երեք ընթերցում

- Հանձնաժողովը ներկայացնում է օրինագիծ:
- Եվրոպական խորհրդարանն իր համապատասխան հանձնաժողովի գեկույցի շուրջ կազմակերպում է քննարկումներ, հնչում են տեսակետներ, որոնք սովորաբար ձևակերպվում են որպես Հանձնաժողովի օրինագծում կատարվելիք փոփոխությունների առաջարկներ: Սա առաջին ընթերցումն է:
- Նախարարների խորհուրդը կամ ընդունում է խորհրդարանի փոփոխությունները՝ ընդունելով օրինագիծը, կամ փոփոխում է դրանք:
- Համապատասխան մշտական հանձնաժողովի առաջարկությունների հիման վրա Եվրոպական խորհրդարանն իր տեսակետը հայտնում է երկրորդ ընթերցման ժամանակ, այն ընդունում, մերժում կամ փոփոխում է խորհրդի դիրքորոշումը իր անդամների ձայների բացարձակ մեծամասնությամբ /367 ձայն/:
- Հանձնաժողովը հաճախ հաշվի է առնում խորհրդարանի առաջարկությունները և փոփոխված նախագիծն ուղարկում է խորհուրդը: Խորհուրդն այն կարող է ընդունել որակյալ մեծամասնությամբ: Խորհուրդը կարող է նախագիծը փոփոխել միայն միաձայն:
- Այն դեպքում, եթե Խորհրդարանն ու Խորհուրդը համաձայնության չեն գալիս, հրավիրվում է հաշտեցման հանձնաժողովի նիստ, որը բաղկացած է Խորհրդի անդամնե-



ոից և Խորհրդարանի պատվիրակությունից: Եվրոպական խորհրդարանի պատվիրակությունը, որն արտացոլում է Խորհրդարանի քաղաքական պատկերը, դեկավարում է Խորհրդարանի փոխնախագահներից մեկը, իսկ հանձնաժողովի կազմում ընդգրկվում է նաև Խորհրդարանի գեկուցողը:

- Գերակշիռ մեծամասնության դեպքում երկու կողմերը համաձայնության են հասնում երրորդ ընթերցման ժամանակ: Եթե համաձայնության չեն գալիս, ապա օրենքը չի ընդունվում /տես՝ համատեղ որոշումների ընդունման գծապատկերը/:

2. Ժողովրդավարական վերահսկողություն

Խորհրդարանը տարբեր ձևերով ժողովրդավարական վերահսկողություն է իրականացնում Եվրոպական այլ կառույցների նկատմամբ:

Նախ և առաջ նոր Հանձնաժողովի նշանակման ժամանակ Խորհրդարանը հարցազրույց է անցկացնում բոլոր թեկնածուների և Հանձնաժողովի նախագահի հետ /նշանակված անդամ երկրների կողմից/: Վերջիններս չեն կարող նշանակվել առանց Խորհրդարանի հավանության:

Այնուհետև Հանձնաժողովը քաղաքականապես պատասխանատու է Խորհրդարանի առջև, որը կարող է քվեարկության դնել «Հանձնաժողովի վստահության հարցը»՝ պահանջելով անքողջ Հանձնաժողովի հրաժարականը:

Ընդհանուր առմանը, Խորհրդարանն իր վերահսկողությունն իրականացնում է Հանձնաժողովի կողմից իրեն ուղարկված գեկույցները պարբերաբար ուսումնասիրելով /Գլխավոր գեկույց, Բյուջեի կատարման գեկույցներ, Համայնքի օրենքներին վերաբերող օրենսդրություն և այլն/: Բացի այդ, Խորհրդարանականները պարբերաբար Հանձնաժողովին են ուղղում իրենց գրավոր և բանավոր հարցերը:

Հանձնաժողովի անդամները նաև կազմում են Խորհրդարանի նստաշրջաններին, հանդիպումներին և խորհրդարանական հանձնաժողովների նիստերին՝ դրանով երկու կառույցների միջև ապահովելով շարունակական երկխոսություն:

Խորհրդարանը նաև վերահսկում է Խորհրդի աշխատանքը: Խորհրդարանի անդամները Խորհրդին դիմում են գրավոր ու բանավոր հարցերով, և Խորհրդի նախագահը մասնակցում է լիազումար նստաշրջաններին ու կարևորագույն քննարկումներին:

* * * * * **ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

* * *

Խորհրդարանը սերտորեն աշխատում է Խորհրդի հետ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականությունը և դատական համագործակցությունը, ինչպես նաև ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող այնպիսի հարցերի լուծման գործում, ինչպիսիք են՝ միգրացիոն քաղաքականությունը, թմրադեղերի դեմ պայքարը, միջազգային հանցագործությունը և այլն: Խորհրդի նախագահությունը Խորհրդարանին տեղյակ է պահում բոլոր այս հարցերի մասին:

Խորհրդարանը կարող է նաև իրականացնել ժողովրդավարական վերահսկողություն, այն է՝ ուսումնասիրել քաղաքացիների դիմումները և ստեղծել ժամանակավոր հանձնաժողովներ:

Վերջապես Խորհրդարանն իր աջակցություն է բերում ԵՄ բոլոր գագաթաժողովներին /Եվրոպական Խորհրդի հանդիպումներ/: Ցուրաքանչյուր գագաթաժողովի բացման ժամանակ Խորհրդարանի նախագահը հրավիրվում է արտահայտելու Խորհրդարանի դիրքորոշումը և վերաբերումքը Եվրոպական Խորհրդի օրակարգում ընդգրկված առանձնահատուկ հարցերի վերաբերյալ:

3. Ֆինանսական իրավասություն

Եվրոպական միության տարեկան բյուջեն որոշվում է համատեղ՝ Խորհրդարանի և Խորհրդի կողմից: Խորհրդարանն այն քննարկում է երկու հաջորդաբար ընթերցումների ընթացքում, և այն ուժի մեջ չի մտնում, քանի դեռ չի ստորագրվում Խորհրդարանի նախագահի կողմից: Խորհրդարանի Բյուջեի վերահսկման հանձնաժողովը /SOCOBUS/ վերահսկում է բյուջեի ծախսերը, և յուրաքանչյուր տարի Խորհրդարանը որոշում է ընդունել կամ չընդունել նախորդ տարվա ֆանձնաժողովի կողմից բյուջեի կատարումը: Ֆանձնաժողովը կատարում է այսպիսի հայտնի որպես «լիցքաթափում/բեռնաթափում»:

Ինչպե՞ս է ծախսվում բյուջեն

Բերենք մեկ օրինակ Եվրոպական Խորհրդարանի 2004 թ-ի բյուջեի վերաբերյալ: Բյուջեի 45,9%-ը հատկացվել է գյուղատնտեսությանը, 30,9%-ը՝ «կառուցվածքային» խնդիրներին, օրինակ՝ միջոցներ զարգացնելու համար Եվրոպական միության քիչ բարգավաճ շրջանները, 7,5%-ը՝ ներքին այն քաղաքականությունների, ինչպիսիք են՝ հետազոտությունները և սոցիալական հարցերը, 6,1%-ը՝ ԵՄ կառույցների գործունեության համար (ներառյալ 1,2%՝ Եվրոպական Խորհրդ-

դարանի բյուջեի համար): Բյուջեի 5%-ը հատկացվել է արտաքին գործութեալության (արտաքին քաղաքականություն, զարգացման աջակցություն և այլն) և 2,8%-ը՝ նախանդամակցային աջակցության համար:

Ինչպե՞ս է ֆինանսավորվում բյուջեն

Եվրոպական խորհրդարանի հետ խորհրդակցելուց հետո՝ բյուջեն ֆինանսավորվում է անդամ երկրների սեփական միջոցներից՝ համաձայն երկրների բարգավաճման մակարդակի (ըստ համախառն ներքին արդյունքի): Ներկայումս բյուջեն չի կարող գերազանցել Եվրոպական միության համախառն ներքին արդյունքի 1,27%-ը:

Ինչպե՞ս է կազմակերպվում խորհրդարանի աշխատանքը

Խորհրդարանի աշխատանքը բաժանվում է երկու հիմնական փուլերի.

- **Լիագումար նստաշրջանի նախապատրաստում:** Սա կատարվում է խորհրդարանի անդամների կողմից խորհրդարանական տարրեր հանձնաժողովներում, որոնք մասնագիտացված են ԵՄ գործունեության մասնակոր ոլորտներում: Քննարկումներին դրվելիք հարցերը նույնական քննարկվում են քաղաքական խմբերի կողմից:

- **Լիագումար նստաշրջանների անցկացում:** Լիագումար նստաշրջանները, որոնց աշխատանքներին մասնակցում են բոլոր անդամները, սովորաբար տեղի են ունենում Ստրասբուրգում /ամիսը մեկ անգամ՝ մեկ շաբաթ տևողությամբ/ և երեսն Բրյուսելում /երկու օր տևողությամբ/: Այդ նիստերի ընթացքում խորհրդարանն ուսումնասիրում է առաջարկված օրենսդրությունը և քվեարկում փոփոխությունները՝ մինչև ամբողջ տեքստի վերաբերյալ որոշման հասնելը:

Օրակարգը կարող է ընդգրկել նաև խորհրդի կամ Հանձնաժողովի հաղորդումները, ինչպես նաև Եվրոպական միությունում կամ ամբողջ աշխարհում ընթացիկ գործընթացների վերաբերյալ այլ հարցեր:

Եվրոպական խորհրդարանում գործում են 20 հանձնաժողով, ենթահանձնաժողով և ժամանակավոր հանձնաժողով:

Ներքին քաղաքականությունը

Բյուջենետային հանձնաժողով, Բյուջենետային վերահսկման հանձնաժողով, Տնտեսական և արժութային հարցերի հանձնաժողով, Աշխատան-

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ★ ★ ՔԱՂՓԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ

քի և սոցիալական հարցերի հանձնաժողով, Բնապահպանության, հասարակական առողջապահության և պարենային անվտանգության հանձնաժողով, Վրոյունաբերության, հետազոտությունների և էներգետիկայի հանձնաժողով, Միջազգային շուկայի և սպառողների պաշտպանության հանձնաժողով, Տրամադրութի և տուրիզմի հանձնաժողով, Ռեգիոնալ գարգացման հանձնաժողով, Գյուղատնտեսության հանձնաժողով, Զկնորության հանձնաժողով, Մշակույթի և կրթության հանձնաժողով, Իրավական հարցերի հանձնաժողով, Քաղաքացիական ազատության, արդարադատության և ներքին գործերի հանձնաժողով, Սահմանադրական հարցերի հանձնաժողով, Կանանց իրավունքների և գեներային հավասարության հանձնաժողով, Խնդրագրերի հանձնաժողով:

Արտաքին քաղաքականությունը

- Արտաքին հարաբերությունների հանձնաժողով.
- Մարդու իրավունքների ենթահանձնաժողով,
- Անվտանգության և պաշտպանության ենթահանձնաժողով:
- Զարգացման հանձնաժողով:
- Միջազգային առևտության հանձնաժողով:
- Ժամանակավոր հանձնաժողով:
- Ընդլայնված Եվրոպական միության քաղաքական մարտահրավերների և բյուջետային հարցերի ժամանակավոր հանձնաժողով:

Եվրոպական միության խորհուրդը

Խորհուրդը Եվրոպական միության հիմնական որոշում ընդունող մարմինն է: Ինչպես Եվրոպական խորհրդարանը, այնպես էլ խորհուրդը հիմնադիր համաձայնագրերով ստեղծվել է 1950 թվականին: Այն ներկայացնում է անդամ երկրներին, և նրա նիստերին մասնակցում են անդամ երկրների կառավարությունների մեկական նախարարներ: Թե որ նախարարն է մասնակցում նիստին, կախված է այն բանից, թե ինչ հարց է քննարկվում օրակարգում:

Եվրոպական միության հարաբերություններն աշխարհի այլ երկրների հետ իրականացվում են «Գլխավոր հարցերի և արտաքին հարաբերությունների խորհրդի» միջոցով: Սակայն այդ խորհուրդը նույնպես ունի լայն պատասխանատվություն գլխավոր քաղաքականության հարցերի վերաբերյալ, և այդ հանդիպունքներին մասնակցում են կառավարությունների կողմից ընտրված նախարարը կամ պետական քարտուղարը:

Ընդհանուր առմանք, գոյություն ունեն խորհրդի ինը ոլորտներ՝

- Գլխավոր հարցեր և արտաքին հարաբերություններ,
- Տնտեսական և ֆինանսական հարցեր /ECOFIN/
- Արդարադատություն և ներքին գործեր,
- Աշխատանք, սոցիալական քաղաքականություն, առողջապահություն և սպառողների հարցեր,
- Սրցակցություն /ներքին շուկա, արդյունաբերություն և հետազոտություններ/,
- Տրամադրութ, հեռահաղորդակցություն և էներգետիկ հարցեր,
- Գյուղատնտեսություն և ձկնորսություն,
- Բնապահպանություն,
- Կրթություն, երիտասարդություն և մշակույթ:

Այնուամենայնիվ, խորհուրդն այն միակ կառույցն է, որտեղ.

Յուրաքանչյուր նախարար խորհրդում լիազորված է ներկայացնելու իր կառավարությունը: Այլ կերպ ասած, նախարարի ստորագրությունը հավասարագոր է ամբողջ կառավարության ստորագրությանը: Ավելին, խորհրդում յուրաքանչյուր նախարար պատասխանատու է իր ազգային խորհրդարանի և քաղաքացիների համար, որոնց ներկայացնում է խորհրդարանը: Դա ապահովում է խորհրդի որոշումների ժողովականությունը:

Ի՞նչ է անում խորհուրդը

Խորհուրդն ունի պատասխանատվության 6 հիմնական ոլորտներ:

1. Ընդունում է օրենքներ: Բազմաթիվ ոլորտներում օրենքներն ընդունվում են Եվրոպական խորհրդարանի հետ համատեղ:
2. Կոորդինացնում է անդամ երկրների տնտեսական քաղաքականությունները:
3. Կնքում է միջազգային համաձայնագրեր Եվրոպական միության և մեկ կամ մի քանի երկրների, կամ միջազգային կազմակերպությունների հետ:
4. Ընդունում է Եվրոպական միության բյուջեն Եվրոպական խորհրդարանի հետ համատեղ:
5. Զարգացնում է Եվրոպական միության ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականությունները՝ Եվրո-

* * * * * **ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

պական խորհրդի կողմից ընդունված նորմատիվների հիման վրա:

6. Կոռորդինացնում է քրեական հարցերում ազգային դատարանների և ոստիկանական ուժերի միջև համագործակցությունը:

Պատասխանատվության այս ոլորտներից շատերը վերաբերում են «Շամայնք»-ի (ընկերակցության) ոլորտներին, որտեղ անդամ երկըները որոշել են մեկտեղել իրենց ինքնիշխանությունը և որոշումների կայացնան իրավասության որոշ մասը գիծել Եվրոպական միության կառույցներին: Այս ոլորտը Եվրոպական միության «առաջին այլունն է» /տես հավելված 1/:

Այնուամենայնիվ, պատասխանատվության վերջին երկու ոլորտները հիմնականում վերաբերում են այն բնագավառներին, որտեղ անդամ երկրները չեն գիշում իրենց իրավասությունը, սակայն աշխատում են միասին: Այն անվանվում է «միջկառավարական համագործակցություն» և վերաբերում է «Եվրոպական միության երկրորդ և երրորդ սյուներին»:

1. Օրենսդրությունը

Եվրոպական միության օրենքների մեծամասնությունն ընդունվում է խորհրդի և Եվրոպական խորհրդարանի հետ համատեղ:

Օրպես կանոն, Խորհրդարդն իր գործունեությունն իրականացնում է Հանձնաժողովի կողմից ներկայացված նախագծերի համաձայն, և Հանձնաժողովը պատասխանատվություն է կրում Եվրոպական միության ընդունված օրենսդրության ճշշտ կիրառման համար:

2. Անդամ երկրների տնտեսական քաղաքականության կոռորդինացումը

Եվրոպական միության երկրները կայացրել են նի որոշում, որով ցանկություն են հայտնել իրականացնել միասնական տնտեսական քաղաքականություն, ինչը պետք է իմանված լինի երկրների ազգային տնտեսական քաղաքականության հետ սերտ համագործակցության վրա: Այդ կոռորդինացումն իրականացվում է տնտեսական և ֆինանսական հարցերով նախարարների կողմից, որոնք միասին ձևավորում են տնտեսական և ֆինանսական հարցերի խորհրդը /ECOFIN/:

3. Միջազգային համաձայնագրերի կնքում

Յուրաքանչյուր տարի Խորհուրդը «կնքում է» /պաշտոնապես ստորագրում/ և մի շաբթ համաձայնագրեր Եվրոպական միության և Եվրոպական միության ոչ անդամ երկրների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ: Այդ համաձայնագրերը կարող են վերաբերել տարբեր ոլորտների, օրինակ՝ առևտորի և զարգացման ոլորտում համագործակցությանը, տեքստիլ արդյունաբերությանը, ծկնորսությանը, գիտությանը և տեխնոլոգիաներին, տրանսպորտին և այլն:

Խորհուրդը Եվրոպական միության անդամ երկրների հետ կարող է համաձայնագրեր կնքել այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են մաքսային համակարգը կամ հյուպատոսական պաշտպանությունը: Դամաձայնագրերը կարող են վերաբերել նաև արդարադատության և ներքին գործերի ոլորտներում համագործակցությանը:

4. Եվրոպական միության բյուջեի ընդունումը

Եվրոպական միության տարեկան բյուջեն ընդունվում է համատեղ՝ Խորհրդի և Եվրոպական խորհրդարանի կողմից: Եթե երկու կառույցները համաձայնության չեն գտնիս, ապա կանոնակարգը Խորհրդին թույլ է տալիս վերջնական որոշում ընդունել «պարտադիր ծախսերի» վերաբերյալ (հիմնականում գյուղատնտեսական ծախսերի, ինչպես նաև այն ծախսերի, որոնք բխում են Եվրոպական միության ոչ անդամ երկրների հետ կնքած համաձայնագրերից), մինչեւ Խորհրդարանին է պատկանում վերջին խոսքը «ոչ պարտադիր» ծախսերի և ընդհանուր բյուջեի վերջնական ընդունման հարցում:

5. Դամատեղ արտաքին և անվտանգության քաղաքականություն

Անդամ երկրները ջանում են ստեղծել ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականություն: Միաժամանակ արտաքին քաղաքականությունը, անվտանգության և պաշտպանության հարցերը ոլորտներ են, որոնց վերաբերյալ Եվրոպական միության անդամ երկրներն իրականացնում են անկախ վերահսկողություն: Այս ոլորտներում նրանք իրենց ազգային ինքնաշխանությունը չեն մեկտեղում, ըստ այդմ՝ Խորհրդարանի և Եվրոպական հանձնաժողովի դերը մնում է սահմանափակ: Այնուամենայնիվ, Եվրոպական միության երկրներն այս ոլորտներում կարող են համագործակցության առավելություններ ծերք բերել, և Խորհրդարան այն հիմնական ֆորումն է, որտեղ իրականացվում է այդ «միջկառավարական համագործակցությունը»:

★ ★ ★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Որպեսզի Եվրոպական միությունն առավել արդյունավետորեն արձագանքի միջազգային ճգնաժամերին, Եվրոպական խորհրդորը 1999 թվականի դեկտեմբերին Հելսինկիում կայացած գագաթողովում որոշեց, որ Եվրոպական միությունը պետք է ստեղծի «Արագ արձագանքներ»՝ բարկացած 60000 գինվորականներից, որոնք կկարողանան տեղակայվել 60 օրվա ընթացքում և ակտիվ մնալ 1 տարվա ընթացքում։ Խոսքը «Եվրոպական բանակի» մասին չէ։ Այդ կառույցի անդամները շարունակելու են պատկանել իրենց ազգային գինված ուժերին և ենթարկվել ազգային օրենքներին։ Նրանց դերը պետք է միայն այն լինի, որ ճգնաժամերի ժամանակ իրականացնեն մարդասիրական, փրկարարական և խաղաղության պահպանմանն ուղղված առաքելություններ։

Ճգնաժամերի ժամանակ քաղաքական վերահսկողություն հաստատելու և ռազմավարական ուղղություններ մշակելու համար Եվրոպական խորհրդորը 2000 թվականի դեկտեմբերին Նիսում որոշեց Եվրոպական միության խորհրդի հովանու ներքո ստեղծել մշտական գործող նոր քաղաքական և ռազմական կառույցներ։ Դրանք են.

- Քաղաքական և անվտանգության հանձնաժողովը /PSC/;
- Եվրոպական միության ռազմական հանձնաժողովը /EUMC/;
- Եվրոպական միության ռազմակայանը /EUMS/, որը բաղկացած է խորհրդի քարտուղարությունից անջատված գինվորական փորձագետներից։

EUMS-ը գտնվում է EUMC-ի ռազմական լիազորության ներքո, որը նրան օժանդակում է։

6. Արդարադատություն և ներքին գործեր

Թմրադեղերը, ահաբեկչությունը, մարդկանց առևտուրը և երեխաների սերտուալ շահագործումը խնդիրներ են, որոնք առավելապես հուզում են Եվրոպայի քաղաքացիներին։ Խոսքը վերաբերում է սահմանային շրջաններում քրեական գործունեությանը, որի դեմ արդյունավետ պայքար կարող է մղվել միայն սահմանային համատեղ համագործակցությամբ։ Եթե Եվրոպան իսկապես ցանկանում է պայքարել այդ աղետների դեմ և քաղաքացիական արդարադատության հնարավորություն տալ իր քաղաքացիներին ամբողջ Եվրոպական միությունում, ապա ազգային իրավական մարմինները, ոստիկանական ուժերը, մաքսային և միգրացիոն ծառայությունները պետք է համագործակցեն։

Նրանք պետք է երաշխավորեն, որ, օրինակ։

- Եվրոպական միության երկրներից մեկում ապահարզանի կամ երեխայի խնամակալության մասին դատարանի որոշումը ճանաչվի Եվրոպական միության մյուս երկրներում նույնպես,

- Եվրոպական միության արտաքին սահմանները հսկվեն ոստիկանների կողմից,

- մաքսային ծառայությունները և ոստիկանությունը տեղեկատվություն փոխանակեն թմրադեղերի և մարդկանց հնարավոր տեղափոխումների վերաբերյալ,

- ապաստան փնտրողներն ամբողջ Եվրոպական միությունում գրանցվեն միևնույն ճանապարհով, որպեսզի հնարավոր լինի խուսափել «ապաստանի վաճառքից»:

Վերոնշյալ ոլորտները, որոնք հայտնի են որպես «Արդարադատության և ներքին գործեր», ղեկավարվում են արդարադատության և ներքին գործերի նախարարների կողմից՝ համատեղ գործելով որպես Արդարադատության և ներքին գործերի խորհուրդ:

Ինչպես է կազմակերպվում Խորհրդի աշխատանքը

Եվրոպական միության յուրաքանչյուր անդամ երկիր Բրյուսելում ունի մշտական ներկայացուցչություն, որը եվրոպական թատերաբենում ներկայացնում է իր երկիրը և պաշտպանում իր ազգային շահերը: Այդ դեսպանները, որոնք հայտնի են որպես «Մշտական ներկայացուցիչներ», շաբաթը մեկ անգամ հանդիպում են Եվրախորհրդարանի Մշտական ներկայացուցիչների հանձնաժողովում /COREPER/: Այս հանձնաժողովի դերը Խորհրդի աշխատանքի նախապատրաստումն է, բացառությամբ գյուղատնտեսական հարցերի, որոնք իրականացնում է Գյուղատնտեսության հատուկ հանձնաժողովը: Այս հանձնաժողովին աջակցում են մի շարք աշխատանքային խճեր, որոնք բաղկացած են ազգային կառավարման մարմինների պաշտոնյաներից:

Խորհրդի նախագահությունը

Խորհրդի նախագահությունը կատարվում է ռոտացիոն կարգով՝ վեց ամիսը մեկ անգամ: Այլ կերպ ասած, ԵՄ յուրաքանչյուր երկիր 6 անսվա ընթացքում նախագահությունը բոլոր նիստերը, աջակցում է օրենսդրությանը և քաղաքական որոշումների կայացման գործընթացին ու փնտրում փոխազդումներ անդամ երկրների միջև:

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂՓԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ

2006 թվականի ընթացքում նախագահման հերթականությունը հետևյալն է.

2006թ. Առաջին կիսամյակ
Երկրորդ կիսամյակ Ավստրիա
Ֆինլանդիա

Գլխավոր քարտուղարությունը

Նախագահության օժանդակում է Գլխավոր քարտուղարությունը, որը բոլոր մակարդակներում նախապատրաստում և ապահովում է Խորհրդի աշխատանքների իրականացումը:

1999 թվականին Խավիեր Սոլանան նշանակվեց Խորհրդի Գլխավոր քարտուղար: Նա նաև Բարձր ներկայացուցիչն է Արտաքին ընդհանուր և անվտանգության քաղաքականության գծով և իր հնարավորությունների շրջանակում օգնում է Խորհրդին նախագծել ու իրականացնել քաղաքական որոշումներ: Նա Խորհրդի անունից ընդգրկված է նաև ԵՄ ոչ անդամ երկրների հետ քաղաքական երկխոսության մեջ:

Գլխավոր քարտուղարին աջակցում է Գլխավոր քարտուղարի տեղակալը, որը դեկավարում է Գլխավոր քարտուղարության աշխատանքը:

Քանի՞ ծայն ունի յուրաքանչյուր երկիր

Խորհրդում որոշումներն ընդունվում են քվեարկությամբ: Երկրի բնակչության մեծաքանակությամբ է պայմանավորվում այդ երկրի ծայների թիվը: Սակայն ծայների թիվը ճշգրտողեն համամասնական չէ: Այն ճշգրտված է ի օգուտ թիշ բնակչություն ունեցող երկրների:

2004 թվականի նոյեմբերի 1-ից անդամ երկրները կունենան ծայների հետևյալ համամասնությունը.

Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա և Միացյալ Թագավորություն	29
Իսպանիա, Լեհաստան	27
Ճուանդիա	13
Բելգիա, Չեխիա, Հունաստան, Հունգարիա, Պորտուգալիա	12
Ավստրիա և Շվեյցարիա	10
Դանիա, Իռլանդիա, Լիտվա, Սլովակիա, Ֆինլանդիա	7
Կիպրոս, Էստոնիա, Լատվիա, Լյուքսեմբուրգ, Սլովենիա	4
Մալթա	3
Ընդհանուրը	321

Եվրոպական հանձնաժողով

Եվրոպական հանձնաժողովը քաղաքականապես ամկախ մարմին է, որը ներկայացնում և պաշտպանում է Եվրոպական միության շահերը: Այս Եվրոպական ինստիտուցիոնալ համակարգի շարժիչ ուժն է: Այն ներկայացնում է օրինագծեր, քաղաքականություններ, գործողության պլաններ և պատասխանատու է Խորհրդարանի ու Խորհրդի որոշումների իրականացման համար: Ինչպես Խորհրդարանը և Խորհուրդը, այնպես էլ Եվրոպական հանձնաժողովը հիմնադիր համաձայնագրերով ստեղծվել է 50-ական թվականներին:

Դանակաժողովի անդամները, որոնք նշանակվում են իրենց երկրների և Եվրոպական խորհրդարանի կողմից իրականացնում են հանձնաժողովի աշխատանքները և ընդունում որոշումներ: Դանակաժողովի անդամները ոչ պաշտոնապես կոչվում են «հանձնակատարներ», որոնք բոլորն էլ իրենց երկրներում գրադեցրել են քաղաքական պաշտոններ, նրանցից շատերը եղել են նախարարներ, սակայն որպես Եվրոպական հանձնաժողովի անդամներ նրանք պետք է գործեն՝ ելնելով Եվրոպական միության շահերից, և չեն կարող հանձնարարականներ ստանալ իրենց ազգային կառավարություններից:

Նոր հանձնաժողովը նշանակվում է յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ, Եվրոպական խորհրդարանի ընտրություններից հետո՝ 6 անսվա ընթացքում: Ընթացակարգը հետևյալն է.

- Անդամ երկրների կառավարությունները միասին համաձայնվում են, թե ում են նշանակում որպես նոր հանձնաժողովի նախագահ:

- Անդամ երկրների կառավարությունների հետ քննարկումների արդյունքում հանձնաժողովի նախագահն ընտրում է հանձնաժողովի նյութ անդամներին:

- Այնուհետև նոր ընտրված խորհրդարանը հարցազրույցի միջոցով իր կարծիքն է հայտնում ամբողջ «կոլեգիային» /իրենք այսպես են անվանում հանձնաժողովը/:

Եթե Խորհրդարանը հաստատում է հանձնաժողովի կազմը, ապա նոր հանձնաժողովը պաշտոնապես սկսում է գործել առաջիկա հունվար ամսից:

Ներկայիս հանձնաժողովի իրավասությունը մինչև հոկտեմբերի 31-ը է, իսկ հանձնաժողովի նախագահը Ռոմանո Պրոդին է: Եվրոպական խորհրդարանը 2004 թվականի հուլիսի 22-ին Խոսե Մանուել

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ★ ★ ՔԱՂՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բարոսսոյին հաստատեց որպես Հանձնաժողովի նախագահ:

Հանձնաժողովը քաղաքականապես պատասխանատու է Խորհրդարանի առջև: Վերջինս կարող է լուծարել հանձնաժողովը՝ քվեարկության դնելով անվատահություն հայտնելու հարցը: Հանձնաժողովը մասնակցում է Խորհրդարանի բոլոր այն նստաշրջաններին, որտեղ հստակեցնում և հիմնավորում է իր քաղաքականությունը: Հանձնաժողովը պարբերաբար պատասխանում է նաև խորհրդարանականների կողմից արված գրավոր և բանավոր հարցերին:

Հանձնաժողովի ամենօրյա աշխատանքը կատարվում է վարչական աշխատողների, փորձագետների, թարգմանիչների և քարտուղարների կողմից: Աշխատակիցների թիվը մոտավորապես 24 000 է, այն մեջ է թվում, սակայն իրականում ավելի քիչ է, քան եվրոպական միջին չափի քաղաքային խորհրդի աշխատակազմի թիվն է:

Ենուու լինելով բյուրոկրատ կոչվելուց՝ այս մարդիկ եվրոպական միության անդամ բոլոր երկրների քաղաքացիներ են և նիստին աշխատում են՝ հզոր ու բարգավաճ եվրոպական միություն կառուցելու համար:

Որտե՞ղ է գտնվում Եվրոպական հանձնաժողովը

Եվրոպական հանձնաժողովի նստավայրը Բրյուսելն է, սակայն Հանձնաժողովն ունի գրասենյակներ Լյուքսեմբրուգում, ներկայացուցչություններ ԵՄ բոլոր երկրներում և պատվիրակություններ բազմաթիվ այլ երկրների մայրաքաղաքներում:

Ի՞նչ է անում Հանձնաժողովը

Եվրոպական հանձնաժողովն ունի 4 հիմնական գործառույթ

1. Խորհրդարանին և Խորհրդին ներկայացնում է օրենքների նախագծեր:
2. Կառավարում է ԵՄ քաղաքականությունը և ընդունում բյուջեն:
3. Անրապնդում է Եվրոպական իրավունքը /Արդարադատության դատարանի հետ համատեղ/:
4. Եվրոպական միությունը ներկայացնում է միջազգային մակարդակում, օրինակ՝ ԵՄ-ի և այլ երկրների հետ բանակցություններ են վարչում համաձայնագրերի կնքման համար:



1. Առաջարկում է նոր օրենսդրություն

Ըստ համաձայնագրի՝ Հանձնաժողովն ունի «նախաձեռնության իրավունք»: Այլ կերպ ասած, այն պատասխանատու է Եվրոպական նոր օրենքների նախապատրաստման համար, որն այնուհետև ներկայացնում է Խորհրդարանին և Խորհրդին: Այդ նախագծերի նպատակը պետք է լինի ոչ թե մասնավոր երկրների ու արդյունաբերողների շահերի, այլ՝ Եվրոպական միության և ԵՄ քաղաքացիների շահերի պաշտպանությունը:

Մինչ նախագիծ ներկայացնելը Հանձնաժողովը պետք է տեղյակ լինի այն բոլոր նոր ծագած խնդիրներին, որ առկա են Եվրոպայում և պետք է որոշի, թե արդյոք այդ օրենսդրությունը լավագո՞ւն ճանապարհն է գոյություն ունեցող խնդիրները վերացնելու ուղղությամբ: Այդ է պատճառը, որ Հանձնաժողովը նշտապես շփման մեջ է զտնվում իրենց շահերը հետապնդող լայն խմբերի հետ: Այն պարտավորված է խորհրդակցել խորհրդակցական երկու մարմինների հետ: Դրանք են՝ Տնտեսական և սոցիալական հանձնաժողովը (քաղկացած աշխատավորներից և առևտրական միությունների ներկայացուցիչներից) և Ոեզինների հանձնաժողովը (քաղկացած տեղական և տարածքային մարմինների ներկայացուցիչներից): Հանձնաժողովը հաշվի է առնում նաև ազգային խորհրդարանների ու կառավարությունների կարծիքները:

Հանձնաժողովը ԵՄ նակարդակով որևէ գործողություն է առաջարկում միայն այն ժամանակ, եթե խնդիրը չի կարող առավել արդյունավետորեն լուծվել ազգային, ռեգիոնալ կամ տեղական մակարդակով: Առավել ցածր նակարդակով հարցերի լուծման սկզբունքը կոչվում է «լրացման/հավելման սկզբունք»/**«subsidiarity principle»**/: Եթե, այնուամենայնիվ, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ԵՄ օրենսդրության ընդունումը, ապա պատրաստում է նախագիծ, որը վերաբերում է խնդիրին և քավարարում լայն խմբերի շահերը: Գործընթացի տեխնիկական կողմին ծանոթանալու համար հանձնաժողովը խորհրդակցում է իր տարրեր կոմիտեների և աշխատանքային խմբերի փորձագետների հետ:

2. ԵՄ քաղաքականության և բյուջեի հաստատումը

Որպես Եվրոպական միության գործադիր մարմին՝ Հանձնաժողովը պատասխանատու է ԵՄ բյուջեի կատարման, Խորհրդարանի և Խորհրդի կողմից հաստատված քաղաքականության և ծրագրերի ընդունման համար: Աշխատանքի և ծախսերի էական մասը կատարվում

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ★ ★ ՔԱՂՓԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ

է ազգային և տեղական մարմինների կողմից, սակայն Հանձնաժողովը պատասխանատվություն է կրում հետևելու այդ գործընթացին:

Հանձնաժողովի կողմից նրակցության քաղաքականության ակտիվ կառավարումը դրա օրինակներից մեկն է: Հանձնաժողովը վերահսկում է տնտեսական միավորումներին, որպեսզի համոզվի, որ անդամ երկրները չեն ֆինանսավորում իրենց արդյունաբերությունները՝ այդ ճանապարհով խաթարելով նրակցությունը:

Հանձնաժողովի կողմից իրականացվող ԵՄ ծրագրերի օրինակ են «Interreg» և «Urban» ծրագրերը /Իրոնք ստեղծում են սահմանային համագործակցություն եվրոպական շրջանների միջև, ինչն օգնում է վերականգնելու քաղաքները և քայլայված գոտիները/, ինչպես նաև «Erasmus» ծրագիրը, որն իրականացնում է ուսանողների փոխանակման ծրագրեր:

Հանձնաժողովը քննարկում է բյուջեն Առլիդտորների դատարանի «սուր աչքի» ներքո: Երկու կառույցներն ել նպատակ ունեն ապահովել ֆինանսական լավ կառավարում: Խորհրդարանը բյուջեի կատարման վերաբերյալ իր համաձայնությունը տալիս է միայն այն դեպքում, եթե բավարարվում է Առլիդտորների դատարանի տարեկան գեկույցով:

3. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԻՐԱՉՈՒՄԸ

Հանձնաժողովն ունի «Հանձայնագրերի պահապանի» դերակատարում: Սա նշանակում է, որ Հանձնաժողովը Արդարադատության դատարանի հետ պատասխանատու է ԵՄ իրավունքը անդամ բոլոր երկրներում ծշտորեն կիրառելու համար:

Եթե որևէ անդամ երկիր չի կիրառում ԵՄ իրավունքը՝ դրանով իսկ չկատարելով իրավական իր պարտավորությունները, ապա Հանձնաժողովը քայլեր է ձեռնարկում իրավիճակը շտկելու համար:

Առաջին հերթին Հանձնաժողովը սկսում է իրավական գործընթաց, որը կոչվում է «խախտելու ընթացակարգ»: Այն ներառում է անդամ երկրին պաշտոնական նամակ հղելը, որով նշվում է, որ խախտվել է ԵՄ իրավունքը, և դրվում է ժամկետ, որպեսզի կառավարությունը Հանձնաժողովին ուղարկի մանրամասն պատասխան:

Եթե ընթացակարգը չի շտկում իրավիճակը, ապա Հանձնաժողովը դիմում է Արդարադատության դատարանին, որն ունի պատժամիջոցներ կիրառելու լիազորություն: Դատարանի որոշումները պարտադիր են անդամ երկրների և ԵՎՐՈՊԱԿԱՆ կառույցների համար:

4. Միջազգային ասպարեզում Եվրոպական միության ներկայությունը

Միջազգային ասպարեզում Եվրոպական հանձնաժողովը Եվրոպական միության պաշտոնական կարևորագույն ներկայացուցիչն է: Այն հնարավորություն է ստեղծում Եվրոպական միության անդամ երկրներին խոսել «մեկ ձայնով» միջազգային ֆորումներում, ինչպիսին, օրինակ, Առևտորի համաշխարհային կազմակերպությունն է:

Հանձնաժողովը պատասխանատու է նաև Եվրոպական միության անունից միջազգային համաձայնագրերի կնքման բանակցություններ վարելու համար:

Ինչպե՞ս է գործում Հանձնաժողովը

Հանձնաժողովի նախագահն է որոշում, թե որ հանձնակատարը /Հանձնաժողովի անդամը/ պետք է պատասխանատու լինի այս կամ այն ոլորտի քաղաքականության, ինչպես նաև /անհրաժեշտության դեպքում/ Հանձնաժողովի գործունեության ժամանակահատվածում այդ պատասխանատվությունների վերաբաշխման համար: Հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի համաձայնությամբ իրավասու է պահանջել հանձնակատարի հրաժարականը:

Հանձնակատարների «կոլեգիան» հանդիպում է շաբաթը մեկ անգամ, հիմնականում՝ չորեքշաբթի օրերը, Բրյուսելում: Օրակարգում ընդգրկված յուրաքանչյուր հարց ներկայացնում է համապատասխան ոլորտի պատասխանատու հանձնակատարը, և ամբողջ հանձնաժողովը դրա վերաբերյալ ընդունում է համատեղ որոշում:

Հանձնաժողովի աշխատակազմը բաղկացած է բաժիններից, որոնք կոչվում են «Գլխավոր տնօրինություններ /DGs, Directorates-General/,» և «ծառայություններից», ինչպիսին իրավական ծառայությունն է: Յուրաքանչյուր գլխավոր տնօրինություն պատասխանատու է որոշակի ոլորտի քաղաքականության համար, որը դեկավարվում է Գլխավոր տնօրինի կողմից, և որը պատասխանատու է հանձնակատարներից մեկին:

Գլխավոր տնօրինությունները պատրաստում են Հանձնաժողովի օրինագծերը, սակայն դրանք պաշտոնական են դառնում միայն այն ժամանակ, երբ շաբաթվա նիստի ժամանակ «ընդունվում են» Հանձնաժողովի կողմից: Ընթացակարգը հետևյալն է.

Ենթադրենք, օրինակ, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում,

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ★ ՔԱՂՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

որ ԵՄ օրենսդրությունը կանխարգելի Եվրոպայի գետերի աղտոտումը: Այս կապակցությամբ բնապահպանության հարցերով Գլխավոր տնօրինությունը պետք է նախապատրաստի օրենքի նախագիծ, որը պետք է հիմնված լինի Եվրոպական արդյունաբերողների ու ֆերմերների, անդամ երկրների բնապահպանության նախարարների և բնապահպանական կազմակերպությունների հետ ակտիվ խորհրդատվության վրա:

Ներկայացված օրենսդրությունն այնուհետև պետք է քննարկվի Հանձնաժողովի բոլոր համապատասխան քաժիններում և անհրաժեշտության դեպքում ենթարկվի փոփոխությունների: Այնուհետև այն պետք է փորձարնություն անցնի Իրավական ծառայությունում և հաստատվի հանձնակատարների «կարիննետներում» /անձնական քաղաքական աշխատակազմում/:

Այն ժամանակ, երբ օրենքի նախագիծն ամբողջովին պատրաստ է, Գլխավոր քարտուղարն այն ընդգրկում է Հանձնաժողովի առաջիկա նիստի օրակարգում: Այդ նիստի ընթացքում Բնապահպանության հարցերով հանձնակատարն իր գործընկերներին պարզաբանում է օրենքի ներկայացման դրդապատճառները, այնուհետև սկսվում են քննարկումներ: Եթե ձեռք է բերվում համաձայնություն, ապա Հանձնաժողովն «ընդունում է» առաջարկված նախագիծը շաբաթվա նիստի ժամանակ, և այն հաստատման համար ուղարկվում է Խորհուրդ և Խորհրդարան: Եթե առաջարկի վերաբերյալ առկա է անհամաձայնություն, Հանձնաժողովի նախագահը հարցը դնում է քվեարկության: Եթե մեծանասնությունը կողմ է, առաջարկված նախագիծը ընդունվում է: Այնուհետև այն պետք է ունենա հանձնաժողովի բոլոր անդամների աջակցությունը:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՐՈՉՈՒՄՆԵՐԻ ԿԱյացման մեխանիզմը /հավելված 3/

Եվրոպական միությունում որոշումների կայացումը ներառում է մի քանի կառույցներ, մասնավորապես՝

- Եվրոպական հանձնաժողով,
- Եվրոպական խորհրդարան,
- Եվրոպական միության խորհուրդ:

Եվրոպական հանձնաժողովը ներկայացնում է նոր օրենսդրություն, սակայն Խորհուրդը և Խորհրդարանն են ընդունում օրենքները: Այլ կառույցներ և մարմիններ նույնպես դերակատարում ունեն:



Եվրոպական միության որոշումների կայացման կանոնակարգը և ընթացակարգը զետեղված են համաձայնագրերում: Եվրոպական յուրաքանչյուր օրենք հիմնված է համաձայնագրի հատուկ հոդվածով, և կոչվում են օրենսդրության «իրավական հիմքեր»:

Եվրոպական միության օրինասեղծ աշխատանքում գոյություն ունի երեք հիմնական ընթացակարգ:

- Համատեղ որոշումների ընթացակարգ /հավելված • 4/;
- Խորհրդակցական ընթացակարգ /հավելված • 5/;
- Համաձայնության ընթացակարգ /հավելված • 6/:

Այս ընթացակարգերի հիմնական տարրերությունը Խորհրդարանի և Խորհրդի փոխգործակցության ծնն է: Խորհրդակցական ընթացակարգի ժամանակ Խորհրդարանը միայն տալիս է իր կարծիքը, համատեղ որոշումների կայացման ընթացակարգով Խորհրդարանն իր իշխանությունը կիսում է Խորհրդի հետ: Նոր օրենքի առաջարկման դեպքում Եվրոպական հանձնաժողովը պետք է ընտրի այն ընթացակարգը, որով պետք է առաջնորդվեն: Ընտրությունը սկզբունքորեն պետք է կախված լինի առաջարկության «իրավական հիմքից»:

Ընդհանուր առնամբ, երեք ընթացակարգերը հետևյալն են:

1. Համատեղ որոշումների կայացում

Համատեղ որոշումների կայացման ընթացակարգով Խորհրդարանը և Խորհրդը կիսում են օրենսդրական իշխանությունը: Հանձնաժողովն իր առաջարկությունն ուղարկում է Խորհրդարանին և Խորհրդին: Այս կառույցներից յուրաքանչյուրը հաջորդաբար քննարկում է երկու անգամ: Եթե նրանք չեն կարողանում համաձայնության գալ առաջարկության վերաբերյալ, այն սկզբում ուղարկվում է «Հաշտեցման հանձնաժողով», որը բաղկացած է Խորհրդի և Խորհրդարանի հավասար թվով ներկայացուցիչներից: Հանձնաժողովի ներկայացուցիչները նույնականացնում են Հաշտեցման հանձնաժողովի նիստերին և աջակցում քննարկումներին: Եթե հանձնաժողովը համաձայնություն է ձեռք բերում, համաձայնեցված տեքստը երրորդ ընթերցման համար ուղարկվում է Խորհրդարան և Խորհրդ՝ որպեսզի այստեղ ընդունվի օրենքի վերջնական տարբերակը:

Համատեղ որոշումների կայացման ընթացակարգը վերաբերում է կրթության, առողջապահության, բնապահպանության, սպառողների պաշտպանության, աշխատատեղերի, մաքսային համագործակցության, տրամապորտի և այլ ոլորտներին:

★ ★ ★
★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂՓԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ
★ ★ ★

2. Խորհրդակցական ընթացակարգ

Խորհրդակցական ընթացակարգի համաձայն՝ Հանձնաժողովն իր առաջարկությունն ուղարկում է Խորհրդին և Խորհրդարանին, սակայն Խորհուրդն է պաշտոնապես խորհրդակցում խորհրդարանի և այլ մարմինների հետ, ինչպիսիք են՝ Սոցիալական և տնտեսական հանձնաժողովը և Ռեգիստրատորի հանձնաժողովը, որոնց տեսակետները Եվրոպական միության որոշումների կայացման մեխանիզմի անբաժանելի մասն են:

Որոշ դեպքերում խորհրդակցությունը պարտադիր է, քանի որ դա է պահանջում իրավական իմբռը, և առաջարկությունը չի կարող օրենք դառնալ, մինչև Խորհրդարանն իր կարծիքը չտա: Այլ դեպքերում խորհրդակցական ընթացակարգը պարտադիր չէ, և Հանձնաժողովը կարող է պարզապես առաջարկել, որ Խորհուրդը խորհրդակցի Խորհրդարանի հետ:

Բոլոր դեպքերում Խորհրդարանը կարող է.

- Հավանության արժանացմել Հանձնաժողովի առաջարկությունը,
- Մերժել այն,
- Լամ առաջարկել փոփոխություններ:

Եթե Խորհրդարանը փոփոխություններ է առաջարկում, Հանձնաժողովը կարող է դրանք հաշվի առնել: Եթե Հանձնաժողովն ընդունում է փոփոխություններից որևէ մեկը, ապա Խորհրդին պետք է ուղարկի փոփոխված առաջարկությունը: Խորհուրդն ուսումնասիրում է փոփոխված առաջարկությունը՝ ընդունելով կամ փոփոխելով այն: Այս ընթացակարգով, ինչպես մյուս ընթացակարգերում, եթե Խորհուրդը փոփոխում է Հանձնաժողովի առաջարկը, պետք է դա ամի միաձայն:

Խորհրդակցական ընթացակարգի տիրույթում գտնվող բնագավառներն են. Ուստիկանություն և դատական համագործակցություն քրեական ոլորտում, համաձայնագրերի վերանայում, ռասայական, սեռական կամ էթնիկ խորականություն, կրոնական կամ քաղաքական համոզմունք, սեռական կողմնորոշում, ԵՄ քաղաքացիություն, գյուղատնտեսություն, մուտքի թույլտվություն, ապաստան, միգրացիա, մարդկանց ազատ տեղաշարժ և այլն:

3. Համաձայնության ընթացակարգ

Համաձայնության ընթացակարգը նշանակում է, որ Խորհուրդը

պետք է հասնի Եվրոպական խորհրդարանի համաձայնությանը՝ մինչև որոշ շատ կարող որոշումների ընդունումը:

Ընթացակարգը նույնն է, ինչ որ խորհրդակցական ընթացակարգի ժամանակ, բացառությամբ, որ խորհրդարանը չի կարող փոխել առաջարկությունը և այն պետք է կամ ընդունի, կամ մերժի: Ընդունումը /«Համաձայնություն»/ պահանջում է ձայների բացարձակ մեծամասնություն:

Համաձայնության ընթացակարգի տիրույթում գտնվող ոլորտներն են՝ Եվրոպական կենտրոնական բանկին վերաբերող առանձնահատուկ խնդիրները, կենտրոնական բանկերի /Եվրոպական կենտրոնական բանկի կանոնադրությունների փոփոխությունները, կառուցվածքային ֆոնդերը և միավորված ֆոնդերը, Եվրոպական խորհրդարանի համար ընտրական միանման ընթացակարգը, միջազգային որոշ համաձայնագրերը, նոր երկրների անդամակցությունը և այլն/:

ԵՄ-ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1999 թ-ի հուլիսի 1-ին ուժի մեջ մտավ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև «Գործընկերության և հանագործակցության համաձայնագիրը», որի նպատակներն են քաղաքական կազերի զարգացման միջոցով կողմերի միջև քաղաքական երկխոսության ապահովումը, ժողովրդակարությունն ամրապնդելու, տնտեսությունը զարգացնելու, շուկայական հարաբերություններին անցումն ապահովելու նպատակով աջակցությունը, կայուն տնտեսական զարգացում ապահովելու համար կողմերի միջև առևտրին, ներդրումներին և ներդաշնակ տնտեսական կապերին նպաստելը, օրենսդրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, տեխնոլոգիական և մշակութային համագործակցության համար հիմք ապահովելը և այլն: ԳՀՀ-ն ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ-ԵՄ փոխհարաբերությունները թևակոխեցին որակական նոր փուլ:

2004 թ-ի հունիսի 17-18-ը կայացած Եվրոպական միության գագաթաժողովը որոշեց Հայաստանը, Հարավային Կովկասի մյուս երկրների հետ մեկտեղ, ընդգրկել Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) շրջանակներում:

Համաձայն վերոհիշյալ ծրագրի՝ նոր հարևան երկրները, ի խրախուսումն քաղաքական ու տնտեսական բարեփոխումների, կստանան ԵՄ հետ համագործակցելու արտոնյալ պայմաններ: Այդ երկրներին կընձեռվեն ԵՄ հետ հարաբերությունների զարգացման նոր հնարա-

★ ԵԿՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Վորություններ՝ ըստ երկրների անհատական առաջնորդացի: 2005 թ-ի մարտի 2-ին Եվրոպական հանձնաժողովը հրապարակեց Հայաստանի մասին գեկույց, ինչը ԵՀՊ-ով նախատեսված կողմերին օժանդակելու առաջին քայլն էր՝ Գործողությունների ծրագրի (ԳԾ) առաջնայնությունները և տարբեր ոլորտներում ծեռնարկելիք քայլերն ուրվագծելու համար:

Հավելված 1

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՋԻԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊՐԵՄԻ

յամսայուհիունուժ յումսանց տակը Դ յփշտամու մայուպայը

Ապրամի Սվետական Դաստիարակության Առաջնադիր


ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՒԹՅԱՆ ԵՐԵԲ Այուները

Հավելված 2

Եղու գումարով 2004 - 2009


Ըստ բարչական խթեր և եռութիւն


	Group of the European People's Party (Christian Democrats) and European Democrats PPE-DE	Socialist Group in the European Parliament PSE Եվրոպական Արդիության համակակից խորհրդական կուսակցություն և Եվրոպական դաշտային կուսակցություն	Group of the Liberals and Democrats for Europe ALDE Եվրոպայի հանճ կորուգայություն և ժողովրդական դաշտային կուսակցություն		Greens/European Free Alliance Verts/ALE Ազմաձնիութեակազմ ազան Պաշտիմական դաշտային կուսակցություն		Confederal Group of the European United Left - Nordic Green Left - EGR/NGL Եվրոպական հանճ ազան համաշխատ կուսակցություն		Union for Europe of the Nations Group UEN Խորեցուծ չմնջունաժ ամրամձելի կուսակցություն
Բնակչություն	6	7	6	2	2	2	2	3	24
Հետեւած	14	2	1	2	1	1	1	1	24
Դամական	1	5	4	1	1	1	1	1	14
Գնաճամատիա	49	23	7	13	7	7	7	7	29
Էլեկտորատ	1	3	2	1	1	1	1	1	6
Հոգածառություն	11	8			4	1			24
Խառնածառություն	24	24	2	3	1				54
Ֆինանսավորություն	17	31	11	6	3	3	3	6	78
Խոամրնիա	5	1	1	1	1	1	1	4	13
Խոալիա	24	16	12	2	7	7	4	9	78
Կառապ	3			1	2	2			6



Դավելված 4


Համարի որոշումների ընթացկարգ





ԵԱՀՆԵՐԸ ՍՈՒՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

η γενικασι η γηγενοτητασικασι ή αποταμ
η ταυθινοτητη σημασιηρη



* * * * *
**ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՐԵՎԱՆՇՈՒԹՅԱՆ
 քաղաքականություն**

<u>Լատիվիա</u>	3	1	1	4	9
<u>Լիսաբոն</u>	2	2	2	2	13
<u>Լուսաբուրգ</u>	3	1	1	6	1
<u>Հունգարիա</u>	13	9	2	24	5
<u>Ասմենիա</u>	2	3	4	27	27
<u>Հունարիա</u>	7	7	5	3	18
<u>Աստոռապ</u>	6	7	2	6	54
<u>Լիսապարագ</u>	19	8	41	10	24
<u>Ռուսաստան</u>	9	12	3	7	7
<u>Սլավոնիա</u>	4	1	2	3	14
<u>Մոլդովա</u>	3	3	1	1	14
<u>Ֆրանսիա</u>	4	3	5	1	19
<u>Համարիա</u>	5	5	1	2	19
<u>Միասան</u> <u>Բազարակորություն</u>	28	19	12	11	28
<u>Ընդհանուր</u>	268	2002	88	41	36
				27	28
					732

732 ամյաց – 2004թվականի հոկտեմբեր



Բրյուսել, 12.12.2003 թ.

Ոչ պաշտոնական թարգմանություն՝ անգլերենից

ԱՆՎՏԱՆԳ ԵՎՐՈՊԱՆ ԲԱՐՎՈՔ ԱԾԽԱՐՉՈՒՄ

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ռազմավարությունը**

★ ★ ★
★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂՓԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ
★ ★ ★

Ներածություն

Եվրոպան երթեք չի եղել այսքան բարգավաճ, անվտանգ և ազատ: 20-րդ դարի առաջին կեսին տեղի ունեցած բռնությունները ճանապարհ հարթեցին Եվրոպայի պատմության մեջ աննախադեպ կայունության և խաղաղության մի ժամանակաշրջանի համար:

Այս զարգացման գործում առաջնային տեղ է գրավում Եվրամիության (ԵՄ) ստեղծումը: Այն վերափոխել է մեր պետությունների միջև առկա հարաբերությունների որակը և մեր քաղաքացիների կյանքը: Եվրոպական պետություններին հանձնարարվել է խաղաղ ընթացք տալ վիճաբանություններին և համագործակցել համընդհանուր հաստատությունների միջոցով: Այս ժամանակահատվածում օրենքի ուժի և ժողովրդավարության աճող կարևորության հետ միասին՝ ավտորիտար վարչակարգով երկրները վերածվել են անվտանգ, կայուն և դիմամիկ ժողովրդավարական կառույցների: Այս ուղղությամբ կատարվող հետագա գործողություններն իրականություն են դարձնում միացյալ և խաղաղ մայրցամաք ունենալու երազանքը:

**Ոչ մի երկիր ի վիճակի չէ միայնակ լուծել
այսօրվա բարդ խնդիրները:**

Միացյալ Նահանգները վճռական դեր են խաղացել Եվրոպայի միավորման և անվտանգության գործում՝ մասնավորապես ՆԱՏՕ-ի միջոցով: Սարը պատերազմի ավարտին Միացյալ Նահանգները ծուռք բերեց ռազմական գերիշխող դիրք: Ինչև, ոչ մի երկիր ի վիճակի չէ միայնակ լուծել այսօրվա բարդ խնդիրները:

Եվրոպայի անվտանգությունը դեռևս սպառնալիքի տակ է: Բայկանյան հակամարտությունների պայքարը մեզ հիշեցրեց, որ մեր մայրցամաքը դեռևս գերծ չէ պատերազմներից: Վերջին տասնամյակի ընթացքում աշխարհի ոչ մի տարածաշրջան գերծ չի մնացել զինված բախումներից: Այդ բախումներն ավելի շատ ներքին բնույթ են կրել, քան` արտաքին, և զոհերի մեջ նասը տվյալ երկրի քաղաքացիներ են եղել:

Ավելի քան 450 միլիոն բնակչություն ունեցող 25 երկրներից (որոնք արտադրում են ամբողջ աշխարհի համախառն ազգային արդյունքի մեկ քառորդը) բաղկացած Եվրոպական Միությունն, անշուշտ, համաշխարհային ազդեցություն ունեցող գործիք է... այն պետք է պատրաստ լինի կիսելու համաշխարհային անվտանգության և ավելի լավ աշխարհ կառուցելու պատասխանատվությունները:

Անշուշտ, ԵՄ-ի դերը համաշխարհային բնակչության անհերթելի է, քանի որ այն բաղկացած է ավելի քան 450 միլիոն բնակչություն ունեցող 25 երկրներից, որոնք արտադրում են ամբողջ աշխարհի համախառն ազգային արդյունքի (ՀԱԱ) մեկ քառորդը, ըստ այդմ էլ նա իր տրամադրության տակ ունի գործելու լայն հնարավորություն: Վերջին տասնամյակում Եվրոպական ուժեր են տեղափոխվել այնպիսի հեռավոր երկրներ, ինչպիսիք են՝ Աֆղանստանը, Արևելյան Թիմորը և Կոնգոյի ժողովրդական Յանրապետությունը: Եվրոպական շահերի աճող ընդհանրությունը և ԵՄ-ի ներքին համերաշխությունը մեզ դարձնում են առավել վստահելի և արդյունավետ խաղաղող: Եվրոպան պետք է պատրաստ լինի կիսելու համաշխարհային անվտանգություն և ավելի լավ աշխարհ կառուցելու պատասխանատվությունները:

I. Անվտանգ միջավայր. համաշխարհային մարտահրավերները և հիմնական սպառնալիքները

Հետևառաջպատերազմյան իրողություններից մեկն էլ սահմանների աճող թափանցիկությունն է, որի դեպքում անվտանգության ներքին և արտաքին ասպեկտներն անքակտելիորեն կապված են միմյանց: Առևտրական շարժերի և ներդրումների հոսքը, տեխնոլոգիաների զարգացումն ու ժողովրդավարության տարածումն անկախություն և բարեկեցություն են բերել բազմաթիվ մարդկանց: Մյուսներն էլ գլոբալիզացիային են վերագրում կործանումն ու անարդարությունը: Այս զարգացումները նպաստել են, որպեսզի ոչ պետական կառույցները նշանակալից դեր խաղան միջազգային հարաբերություններում: Դրանք նաև մեծացրել են Եվրոպայի կախվածությունը այնպիսի փոխ-

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ★ ՔԱՂՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կապակցված և խոցելի ոլորտներում, ինչպիսիք են՝ փոխադրամիջոցները, էներգիան, տեղեկատվությունը և այլն:

1990 թ. ի վեր մոտ 4 միլիոն մարդ է մահացել պատերազմներում՝ նրանցից 90 %-ը քաղաքացիական անձինք: Անբողջ աշխարհում հակամարտությունների պատճառով ավելի քան 18 միլիոն մարդ լքել է իր տունը:

**Տարեկան 45 միլիոն մարդ է մահանում քաղցից ու
թերսնումից...**

ԶԻԱՅ-ը քայլայում է հասարակության հիմքը...

Անվտանգությունը զարգացնան նախապայմանն է:

Զարգացող երկրների մեծ մասն անասելի տառապանքներ է կրում չքավորության և հիվանդությունների պատճառով, ինչն անհապաղ անվտանգության միջոցներ ծեռնարկելու անհրաժեշտություն է ստեղծում: Գրեթե 3 միլիարդ մարդ՝ աշխարհի բնակչության կեսը՝ գոյատևում է օրական 2 եվրոյից պակաս գումարով: Անեն տարի 45 միլիոն մարդ է մահանում քաղցից և թերսնումից: Այժմ ԶԻԱՅ-ը հանդիսանում է մարդության պատճության մեջ երթիսցե եղած ամենակործանիչ համավարակ հիվանդություններից մեկը, որի պատճառով հասարակություններ են քայլայվում: Այսօր հիվանդությունները կարող են շատ արագ տարածվել՝ դառնալով համաշխարհային սպառնալիք: Ներկայումս Ենթասահարյան Աֆրիկան ավելի աղքատ է, քան տասը տարի առաջ: Շատ դեպքերում տնտեսության անկումը կապված է քաղաքական խնդիրների և գինված հակամարտությունների հետ:

Անվտանգությունը զարգացնան նախապայմանն է: Հակամարտությունը ոչ միայն քանդում է ենթակառուցվածքը՝ հասարակական ենթակառուցվածքները ներառյալ, այլ նաև քաջալերում է հանցավորությունը, խափանում հնարավոր ներդրումները և անհնարին դարձնում տնտեսության բնականոն գործունեությունը: Մի շարք երկրներ ու տարածաշրջաններ գտնվում են հակամարտության, անապահովության ու չքավորության ժամանակահատվածում:

Բնական պաշարների՝ գլխավորապես ջրի համար, մղվող պայքարը, որը հաջորդ տասնամյակների ընթացքում էլ ավելի կխորանա՝

կապված համաշխարհային ջերմացման հետ, տարբեր տարածաշրջաններում կառաջացնի խոռվություններ և միգրացիոն շարժեր:

Եվրոպային հատկապես մտահոգում է սեփական կախվածությունը եներգիայից: Եվրոպան աշխարհում նավթի ու գազի գլխավոր ներմուծողն է: Այն կազմում է ներկայիս էներգիայի սպառման 50%-ը: Մինչև 2030 թ. այն կիասնի 70%-ի: Եներգիայի գերակշիռ մասը ներմուծվում է Պարսից ծոցից, Ռուսաստանից և Արևմտյան Աֆրիկայից:

Դիմնական սպառմալիքները

Այժմ անդամ երկրների նկատմամբ ուղղված լայնածավալ ազրեսիայի առկայությունն այնքան էլ հավանական չէ: Փոխարենն այսօր Եվրոպայի առջև կանգնած են այլ որակի, ավելի քիչ տեսանելի և սակավ կանխատեսելի սպառմալիքներ:

Ահարենէզություն. ահարենէզությունը վտանգի տակ է դնում բազմաթիվ կյանքեր, բերում մեծ կորուստներ, այն փորձում է քայլայել մեր հասարակությունների շիտակությունն ու հանդուրժողականությունը, և այն աստիճանաբար ավելի մեծ ռազմավարական սպառմալիք է դառնում Եվրոպայի համար: Աստիճանաբար ահարենէչական շարժումներն ավելի ու ավելի ընդարձակ օժանդակություն են ստանում, նրանք կապված են էլեկտրոնային ցանցով և անասելի բռնություններ գործադրելով՝ ջանուս են մեծ թվով կորուստներ և ավերածություններ պատճառել:

Ահարենէզության ամենավերջին ալիքն ունի համաշխարհային բնույթ և կապված է կրոնական ուժեղ ծայրահեղությունների հետ: Դրա հիմքում ընկած են մի շարք համակցված պատճառներ, որոնք ներառում են արդիականացման գործադրած ճնշումը, մշակութային, սոցիալական և քաղաքական ճգնաժամը, արտերկրության ապրող երիտասարդների օտարությը: Այս երևույթը նույնպես մեր հասարակության կենսածկի մի մասն է կազմում:

Նմանատիպ ահարենէզության համար Եվրոպան և թիրախն է, և հիմք. Եվրոպական երկրները հանդիսացել են թիրախն և հարձակման են ենթարկվել: Ալ-Ղայեղային օժանդակող կայաններ են հայտնաբերվել Մեծ Բրիտանիայում, Իտալիայում, Գերմանիայում, Իսպանիայում և Բելգիայում: Եվրոպան պետք է անհապաղ համաձայնեցված միջոցներ ձեռնարկի:

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ★ ՔԱՂՓԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ

Զանգվածային ոչնչացման զենք վերջին անգամ օգտագործվել է «Առւմ» ահարելչական աղանդավորական կազմակերպության կողմից՝ 1995 թ. Տոկիոյի մետրոյում, որի հետևանքով զոհվել է 12 հազար մարդ, իսկ հազարավոր մարդիկ ստացել են տարբեր աստիճանի վնասվածքներ: Երկու տարի առաջ «Առւմ» սիրիյան խոցի սպորներով է ցողել Տոկիոյի փողոցներից մեկը:

Զանգվածային ոչնչացման զենքերի (ԶՈԶ) տարածումը մեր անվտանգության ուղղված հավանական ամենամեծ սպառնալիքն է: Միշագային իրավական ռեժիմն ու արտահանման վերահսկողության կարգավորումը դադարեցրել է ԶՈԶ-ի և տանող համակարգերի տարածումը: Այնուամենայնիվ, մենք այժմ մտնում ենք մի նոր և վտանգավոր ժամանակաշրջան, որտեղ մեծանում է ԶՈԶ-ով զինման մրցավագքը, հատկապես Մերձավոր Արևելքում: Կենսարանական գիտությունների ոլորտում կատարված նոր հայտնագործությունները մոտակա տարիներին կարող են ել ավելի հզորացնել կենսարանական զենքերը, մենք այլ լուրջ վտանգ են ներկայացնում քիմիական և ռադիոակտիվ նյութերով հնարավոր հարձակումները: Դրիհային տեխնոլոգիաների տարածումը մեծացնում է անկայունությունը և հարածուն ռիսկի տակ է դնում ողջ Եվրոպան:

Սակայն ամենասարսափելի սցենարներից մեկի համաձայն, ահարելչական խնդերից մեկը կարող է ԶՈԶ ձեռք բերել: Այդ դեպքում մի փոքրիկ խնճավորումը կարող է այնպիսի մեծածավալ վնաս հասցնել, որը նախկինում հասու էր միայն պետություններին և բանակներին:

Տարածաշրջանային հակամարտություններ. այնպիսի տարածաշրջանային խնդիրներ, ինչպիսիք են Քաշմիրը, Մեծ Ղերի շրջանը, Կորեական թերակղզին, ինչպես նաև Եվրոպային ավելի մոտ գտնվող Երկրների համակարգի միջև առկա, մասնավորապես Մերձավոր Արևելքում, ուղղակի կամ անուղղակի կերպով հարվածում են Եվրոպայի շահին: Գործող կամ սահեցված հակամարտությունները, որոնք գոյություն ունեն նաև մեր սահմանների մոտ, վտանգ են ներկայացնում տարածաշրջանային կայունությանը, կործանում են մարդկային կյանքեր, սոցիալական և ֆիզիկական ենթակառուցվածքներ, դրանք սպառնալիք են հանդիսանում փոքրամասնությունների, մարդու հիմնարար ազատությունների ու մարդու իրավունքների պաշտպանության համար: Դա-

Կամարտությունը կարող է հասցնել ծայրահեղականության, ահաբեկ-չության և պետության անկման, լայն հնարավորություններ ստեղծել կազմակերպված հանցավորության ածի համար։ Տարածաշրջանային անապահովությունը կարող է ավելի մեծացնել ԶՈԶ-ի պահանջը։ Երբեմն անորոշ նոր սպառնալիքներին լուծում տալու գործնական միջոցը՝ տարածաշրջանային հակամարտությունների հետ կապված ավելի հիմնարդությունը կարող է:

Պետության անկում. վատ կառավարումը՝ կորուպցիան, իշխանության չարաշահումը, անկայուն հաստատությունները, պատասխանատվության պակասը և քաղաքացիական հակամարտությունները երկիրը քայլքայում են ներսից: Որոշ դեպքերում դրանք կործանել են պետական կառուցմեր: Սովահին, Լիբերիան և Թալիբանի իշխանության տակ գտնվող Աֆղանստանը լավագուն թարմ օրինակներն են: Պետության անկումը կարող է կապված լինել ակնհայտ սպառնալիքների հետ, ինչպիսիք են կազմակերպված հանցավորությունն ու ահաբեկչությունը: Պետության անկումը շատ տագնապալի երևույթ է, որը քայլքայում է իշխանությունն ու մեծացնում տարածաշրջանային անկայունությունը:

Կազմակերպված հանցավորություն. Եվրոպան կազմակերպված հանցավորության համար հանդիսանում է լավագույն թիրախ: Մեր հասարակության գլխահան կուտակվող այս ներքին սպառնալիքն ունի միա կարևոր արտաքին կողմ՝ բնրադեղերի, կանանց, ապօրինի ներզադարձողների և գեների միջազգային բրաֆիքինզը, որոնք հանդիսանում են կազմակերպված հանցավոր խմբերի գործունեության մի զգալի մասը: Այս ամենը կարող է կապված լինել ահարեւկչության հետ:

Այսպիսի հանցավորության գործունեությունը հաճախ կապված է բոլով կամ անկումային վիճակում գտնվող պետության հետ: Թմրանյութերից ստացված եկամուտներով ֆինանսավորվել են թմրանյութ արտադրող մի քանի երկրների պետական կառույցների քայլայումը: Թաճկարժեք քարերի, անտառանյութի և զենքերի առևտորից ստացված եկամուտներով ֆինանսավորվում են աշխարհի տարրեր մասերում առկա հակամարտությունները: Այս ամենը քայլայում է երկրի իրավական ու հասարակական կյանքը: Ծայրահեղ դեպքերում կազմակերպված հանցավորությունը կարող է տիրել ամբողջ երկիրը: Եվրոպայում առկա հերոինի 90%-ը պատրաստվում է Աֆղանստանում աճող կակաչից, որտեղ թմրադեղի առևտորից ստացված գումարներով վճարում են սեփական զորերին: Թմրադեղի մեջ մասը տարածվում է բայ-

★ ★ ★ ԵՐՐՈՐԱԿԱՎԸ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՎԸ ★ ★ ՔԱՂՓԱԿԱՎՈՒԹՅՈՒՆ

Կանյան հանցավոր ցանցերի միջոցով, որոնք նաև պատասխանատու են ամբողջ աշխարհով կամանց առևտորի արդյունքում զոհ դարձած 200 000-ից 700 000 կանանց համար: Կազմակերպված հանցավորության մեկ այլ ուշագրավ տեսակ է օրավոր աճող ծովահենությունը:

Ի մի բերելով, հանգում ենք այն համոզման, որ ահարեկչությունն առավելագույն բռնություն է, որը կարող է նպաստել ԶՈՉ-ի տարածմանն ու օգտագործմանը, այն կազմակերպված հանցավորություն է, պետական համակարգի քայլայում և ուժի սեփականաշնորհում: Աշխարհի ոչ մի տարածաշրջան իրականում գերծ չի այդ ծայրահեղ սպառնալիքից:

II. Ռազմավարական նպատակներ

Մենք ապրում ենք պայծառ հեռանկարներ ունեցող մի աշխարհում, որը, սակայն իր մեջ պարփակում է շատ ավելի մեծ սպառնալիքներ, քան մենք երբկցեն տեսել ենք: Ապագան մասսամբ կախված է նաև մեր հետագա գործողություններից: Մենք երկուսի կարիքն էլ ունենք՝ մտածել համաշխարհային կտրվածքով և գործել մակարդակով: ԵՄ-ն մշակել է ռազմավարական երեք ծրագիր, որպեսզի պաշտպանի իր անվտանգությունն ու պահպանի իր արժեքները:

Սպառնալիքների չեզոքացում

ԵՄ-ը ծեռնարկել է գլխավոր սպառնալիքների վերացման միջոցառումներ:

- Սեպտեմբերի 11-ից հետո նա այնպիսի միջոցառումներ է ծեռնարկել, ինչպիսիք են Զերբարակման եվրոպական իրամանագրի հաստատումը, Ամերիկայի Միացյալ Նահանգների (ԱՄՆ) հետ իրավական փոխօգնության մասին համաձայնագործումը, որպեսզի խափանի ահարեկչության հնարավոր ֆինանսավորումը: ԵՄ-ը շարունակում է զարգացնել համագործակցությունն այս ոլորտում և ավելի մեծացնել իր պաշտպանվածությունը:
- ԵՄ-ը տարիներ շարունակ հավատարիմ է մնացել ընդեմ ԶՈՉ-ի տարածման քաղաքականությանը: Միությունը վերջերս հաստատել է գործողությունների հետագա ծրագիրը, ըստ որի նախատեսվում է ուժեղացնել Ասոնային Էներգիայի միջազգային գործակալության (ԱԵՍԳ) գործունեությունը: Այս

միջոցառումները կուժեղացնեն արտահանման, ինչպես նաև անօրինական փոխադրումների ու ապօրինի ծեղքբերումների վերահսկողությունը: ԵՄ-ը ծգտելու է հասնել բազմակողմ պայմանագրերի ռեժիմի համաշխարհային պահպանմանը, ինչպես նաև ամրապնդել պայմանագրերն ու դրանց վավերացման ապահովումը:

- ԵՄ-ն ու անդամ երկրներն իրենց մասնակցությամբ փորձում են լուծում տալ տարածաշրջանային հակամարտություններին և ոտքի կանգնեցնել քայլքայված երկրները, ինչպիսիք են՝ Բալկանները, Աֆրամատանը և Կոնգոյի ժողովրդական Յանրապետությունը: ԵՄ-ի շրջանակներում կազմակերպված հանցավորության դեմ լավագույն պայքարը կլինի Բալկաններում արդյունավետ կառավարման վերականգնումը, ժողովրդավարության խրախուսումը, ինչպես նաև կազմակերպված հանցավորության դեմ պայքարի տեղի իշխանություններին հնարավորության ընձեռումը:

Գլոբալիզացիայի դարաշրջանում հեռավոր թվացող սպառնալիքները նույնքան մտահոգության տեղիք կարող են տալ, որքան մեզ շատ մոտ գտնվողները...

Պաշտպանության առաջին գիծը հաճախ կարող է լինել

արտերկրության սպառնալիքները շարժուն են...

Յակամարտության կամ ահարեկչության կամխման դեմ ծեռնարկած միջոցառումները երբեք չի կարելի շատ վաղ համարել:

Գլոբալիզացիայի դարաշրջանում հեռավոր թվացող սպառնալիքները նույնքան մտահոգության տեղիք կարող են տալ, որքան մեզ շատ մոտ գտնվողները: Յուսիսային Կորեայի միջուկային գործունեությունը, միջուկային ռիսկը Յարավային Ասիայում և ԶՈԶ-ի տարածումը Մերձավոր Արևելքում անհանգստություն են պատճառում Եվրոպային:

Այսօր ահարեկիչներն ու ոճրագործները հնարավորություն ունեն գործելու ողջ աշխարհում: Կենտրոնական կամ Յարավարևելյան Ասիայում նրանց վարած գործունեությունը կարող է սպառնալիք հանդիսանալ Եվրոպայի երկրների կամ դրանց քաղաքացիների համար: Միևնույն ժամանակ, համաշխարհային հաղորդակցությունը մեծացնում է Եվրոպայի իրազեկության աստիճանն աշխարհում տեղի ունե-

★ ★ ★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ★ ★ ★ ★ ՔԱՂՓԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ

ցող տարածաշրջանային հակամարտությունների կամ մարդկային ողբերգությունների նասին:

Մեր ավանդական հայեցակարգն ինքնապաշտպանության վերաբերյալ՝ ներառյալ սառը պատերազմը, հիմնված է երկրի վրա հարձակման սպառնալիքների վրա: Նոր սպառնալիքների պարագայում պաշտպանության առաջին գիծը հաճախ կարող է լինել արտերկրություն: Նոր սպառնալիքները շարժուն են: Ժամանակի ընթացքում աճում է նաև ԶՈԶ-ի տարածման վտանգը, բացի այդ ահարեւէչական ցանցերը կարող են ավելի ու ավելի վտանգավոր դառնալ: Մեկ այլ սպառնալիք է ներկայացնում անկում ապրած պետությունների և կազմակերպված հանցավորության տարածման անտեսումը, որն առկա է Արևմտյան Աֆրիկայի օրինակում: Սա նշանակում է, որ մենք պետք է պատրաստ լինենք գործելու՝ նախքան ճգնաժամային իրավիճակի ստեղծումը: Դակամարտության կամ ահարեւէչության կամինման դեմ ծեռնարկված միջոցառումները երբեք չի կարելի շատ վաղ համարել:

Ի տարբերություն սառը պատերազմի ժամանակ տեսանելի ակընհայտ սպառնալիքների, այս նոր սպառնալիքներից ոչ մեկն ամբողջովին ռազմական չէ, ոչ էլ դրանք կարող են լուծվել միայն ռազմական ուժի գործադրմանը: Դրանցիցյուրաքանչյուրը պահանջում է համապարփակ մոտեցում: ԶՈԶ-ի տարածումը կարելի է վերահսկել՝ վերահսկելով արտահանումը, ինչպես նաև գործադրելով քաղաքական, տնտեսական և այլ ճնշումներ, ուր հաշվի կառնվեն նաև դրանց հիմքում ընկած քաղաքական պատճառները: Անհրեշտության հետ առնչվելիս կարող է առաջանալ հետախուզական, քաղաքական, իրավական, ռազմական և այլ միջոցների համատեղ կիրառման անհրաժեշտություն՝ կարգ ու կանոնի հաստատման և մարդասիրական օգնության ցուցաբերման և ստեղծված ճգնաժամի կարգավորման նպատակով: Տարածաշրջանային հակամարտությունները պետք է քաղաքական լուծում ստանան, իսկ հակամարտությունից հետո ընկած փուլում հնարավոր կլինի ռազմական միջամտությունն ու արդյունավետ քաղաքականությունը: Տնտեսական միջոցառումները նպաստում են վերակառուցմանը, և քաղաքական ճգնաժամի կարգավորումն օգնում է քաղաքացիական կառավարության վերականգնմանը: ԵՄ-ը հատկապես լավ է զինված այսպիսի բազմաշերտ իրավիճակներին դիմագրավելու համար:

**Անվտանգության կառուցումը մեր հարևանությամբ
Նույնիսկ գլոբալիզացիայի դարաշրջանում աշխարհագրությունը**

դեռևս կարևոր դեր ունի: Մեր սահմանների մոտ գտնվող երկրների լավ դեկավարումը բխում է Եվրոպայի շահերից: Զինված հակամարտության մեջ ներգրավված հարևանները, թույլ պետությունները, որտեղ ծաղկում է ապրում կազմակերպված հանցավորությունը, ապաֆունկցիոնալ հասարակությունները և պայքանավտանգ մարդկային զանգվածի աճը Եվրոպայի սահմանների մոտ վերջինիս համար խնդիրներ են հանդիսանում:

Ընդարձակումը չպետք է Եվրոպայում ստեղծի

նոր բաժանարար գծեր:

**Արարա-իսրայելական հակամարտությանը լուծում տալը
Եվրոպայի ռազմավարական առաջնություններից մեկն է:**

Մեզ հարող երկրների ինստեգրումն ամրապնդում է մեր անվտանգությունը, և ԵՄ-ին ավելի է նոտեցնում անհամգիստ տարածաշրջաններին: Մեր նպատակն է՝ ԵՄ-ից արևելք ընկած հատվածում և Սիծերկուական ծովի սահմաններում ստեղծել լավ կառավարվող երկրների մի շրջանակ, որոնց միջոցով կարելի է ստեղծել մոտ և կոռպերացված հարաբերություններ:

Այս ամենի կարևորությունը հիմնալի կերպով երևում է Բալկանների օրինակում: ԱՄՆ-ի, Ռուսաստանի, ՆԱՏՕ-ի և այլ միջազգային գործընկերների ջանքերի շնորհիվ տարածաշրջանում ստեղծված կայուն վիճակն այլևս չի խաթարվում լայնածավալ հակամարտությունների ալիքով: Մեր արտաքին քաղաքականության վստահելիությունը կախված է այնտեղ ունեցած մեր ծեռքբերումների համախմբումից: Եվրոպական հեռանկարն առաջարկում է ռազմավարական նպատակներ և բարեփոխումներ կատարելու ազդակներ:

Մեր շահերից չի բխում, որ այլ ընդարձակման արդյունքում Եվրոպայում ստեղծվեն նոր բաժանարար գծեր: Արևելքի մեր հարևանների հետ քաղաքական խնդիրներին լուծում տալով՝ մենք պետք է մեծացնենք քաղաքական և տնտեսական համագործակցությունից ստացված շահերը: Մենք պետք է ավելի մեծ ու աշխույժ հետաքրքրություն դրսենք Հարավային Կովկասում առկա խնդիրների նկատմամբ, որն իր ժամանակին նույնպես կլինի հարևան տարածաշրջան:

Արարա-իսրայելական հակամարտությանը լուծում տալը Եվրոպայի ռազմավարական առաջնություններից մեկն է: Առանց դրվագ

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ★ ★ ՔԱՂՓԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ

Կլինի գրադավել Մերձավոր Արևելքի այլ խնդիրներով: Այս խնդրին լուծում տալու համար ԵՄ-ը պետք է գործի դնի բոլոր հնարավոր միջոցները: Եվրոպայի կողմից վաղուց ի վեր առաջադրված «Երկու պետություն» լուծումն այժմ համընդհանուր ընդունելության է արժանացել: Այն կյանքի կոչելու համար անհրաժեշտ է միավորել ԵՄ-ի, ԱՄՆ-ի, ՄԱԿ-ի, Ռուսաստանի և տարածաշրջանի այլ երկրների համատեղ ջանքերը, սակայն շատ ավելի կարևոր է իսրայելացիների և պաղեստինցիների ցանկությունը:

Միջերկրական ծովի շրջանում դեռևս չեն լուծվել այնպիսի կարևոր խնդիրներ, ինչպիսիք են տնտեսության լացումը, հասարակական խռովությունները և հակամարտությունները: ԵՄ-ի շահերից է բխում Բարսելոնի գործընթացի շրջանակներում իր միջերկրական գործընկերների հետ ծավալել առավել արդյունավետ գործունեություն տնտեսության, անվտանգության և ճշգրիտ աշխարհի հետ ավելի լայն գործունեության հեռանկարներ:

Արդյունավետ բազմաբևեռության վրա հիմնված միջազգային կարգ

Համընդհանուր սպառնալիքներ, շուկա և լրատվամիջոցներ ունեցող այս աշխարհում մեր անվտանգությունն ու բարեկեցությունը հիմնականում կախված են արդյունավետ բազմակողմանի համակարգից: Մեր նպատակն է՝ ստեղծել ավելի ուժեղ միջազգային հասարակություն, գործող միջազգային հաստատություններ և օրենքի վրա հիմնված միջազգային կարգ:

Մեր անվտանգությունն ու բարեկեցությունը հիմնականում կախված են արդյունավետ բազմակողմանի համակարգից:
Մենք պետք է աջակցենք միջազգային իրավունքի զարգացմանը:
Միջազգային հարաբերությունների հիմնական հենքը պետք է հանդիսանա ՄԱԿ-ի կանոնադրությունը:

Մենք պետք է աջակցենք միջազգային իրավունքի զարգացմանը: Միջազգային հարաբերությունների հիմնական հենքը պետք է հանդիսանա ՄԱԿ-ի կանոնադրությունը: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդարար իր վրա է կրում միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու հիմնական պատասխանատվությունը: Եվրոպայի

խնդիրն է ուժեղացնել ՄԱԿ-ի կառույցը, որպեսզի այն կատարի իր պարտականություններն ու ծավալի արդյունավետ գործունեություն:

Մենք ցանկանում ենք, որպեսզի միջազգային կազմակերպությունները, վարչակարգերն ու պայմանագրերն արդյունավետ գործեն միջազգային խաղաղության ու անվտանգությանը սպառնացող վտանգների ժամանակ, հետևաբար դրանք պատրաստ պետք է լինեն գործել իրենց օրենքների ուժահարձան դեպքում:

Միջազգային համակարգի այնպիսի հաստատությունները, ինչպիսիք են Առևտի համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) և միջազգային ֆինանսական հաստատությունները, մեծացրել են իրենց անդամների թիվը: Չինաստանն անդամակցել է ԱՀԿ-ին, իսկ Ռուսաստանը բանակցություններ է վարում անդամակցության համար: Մեր նպատակն է՝ ընդլայնել այդպիսի կառույցների անդամակցությունը՝ միաժամանակ պահպանելով այդ կառույցների ամենաբարձր չափանիշները:

Միջազգային համակարգի հիմնական տարրերից են անդրատլանտյան հարաբերությունները, որոնք բխում են համընդհանուր շահերից և ուժեղացնում են միջազգային հանրությունը որպես մի ամբողջություն: ՆԱՏՕ-ն այս հարաբերությունների կարևոր դրսևումն է:

Տարածաշրջանային կազմակերպությունները նույնպես ամրապնդում են ընդհանուր կառավարումը: ԵՄ-ի համար առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում ԵԱՀԿ-ի ու Եվրախորհրդի կարողությունն ու արդյունավետությունը: Այլ տարածաշրջանային կազմակերպությունները, ինչպիսիք են՝ Յարավարևելյան Ասիայի պետությունների ասոցիացիան (ՀԱՍՊԱ, անգլ.՝ ASEAN), Յարավային կոնֆ. ընդհանուր շուկան (ՀԿԸԸ, անգլ.՝ MERCOSUR), Աֆրիկյան միությունը՝ մեծ աջակցություն են ցուցաբերում ավելի ճշտակատար աշխարհի ստեղծման գործում:

Օրենքի վրա հիմնված միջազգային կարգի պայմանն է, որ օրենքը զարգանում է ի պատասխան ԶՈԶ-ի տարածման, ահարեւկչության և համաշխարհային ջերմացման սպառնալիքների: Մենք պետք է խրանենք այնպիսի հաստատությունների հետագա զարգացումը, ինչպիսին է ԱՀԿ-ն և աջակցենք այնպիսի նոր կազմավորված հաստատություններին, ինչպիսին է Միջազգային քերական դատարանը (ՄՔԴ): Եվրոպայում ձեռք բերած մեր փորձը ցույց է տալիս, որ անվտանգությունը կարող է զարգանալ միայն փոխադարձ վստահության կառույցման և զինված ուժերը վերահսկող վարչակարգերի միջոցով: Այսպիսի միջո-

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ★ ★ ՔԱՂՓԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ

ցառումները կարող են նաև հանդիսանալ անվտանգությանն ու կայունությանը նպաստող կարևոր միջոցառումներ մեր հարևանությամբ և ավելի հեռու:

Միջազգային հասարակության որակը կախված է նրա հիմքը կազմող պետությունների որակից: Մեր անվտանգության լավագույն պաշտպանությունը լավ կառավարվող ժողովրդավարական պետությունների առկայությունն է: Միջազգային կարգը ուժեղացնելու լավագույն միջոցներ են հանդիսանում լավ կառավարման տարածումը, աջակցությունը հասարակական և քաղաքական բարեփոխումներին, օրենքի իշխանության հաստատումը և մարդու իրավունքների պաշտպանությունը:

Բարեփոխումների իրականացմանը նպաստող ամենաարդյունավետ միջոցներն են առևտուրն ու զարգացմանը նպաստող քաղաքականության իրականացումը: Դանդիսանալով աշխարհի պաշտոնական աջակցություն ցուցաբերող առևտրային ամենամեծ կազմակերպությունը՝ ԵՄ-ը ու նրա անդամ երկրները, նպաստավոր դիրք են բռնել այս նպատակներն իրականացնելու համար:

Աջակցության ծրագրերի, պայմանականության և ծրագրավորված առևտրական միջոցառումների իրականացման միջոցով ավելի բարձր մակարդակի կառավարմանը նպաստելը հանդիսանում է մեր քաղաքականության կարևորագույն առանձնահատկությունը, որն ապագայում պետք է ավելի անրապնդի: ԵՄ-ին և իր քաղաքացիների համար ավելի անվտանգ կլինի ապրել արդար աշխարհում, որտեղ բոլորին ընձեռնված են միևնույն հնարավորությունները:

Մի շաբաթ երկրներ չեն ցանկացել կազմել միջազգային հանրության մի մասը: Ոճանք նախընտրել են մեկուսանալ, մյուսները շարունակաբար խախտում են միջազգային նորմերը: Ցանկալի է, որ այդպիսի երկրները կրկին միանան միջազգային հանրությանը, և ԵՄ-ը պետք է պատրաստ լինի այդ հարցում ցուց տալու իր աջակցությունը: Այն երկրները, որոնք պատրաստ չեն լինի այդ քայլին, պետք է հասկանան, որ դրա համար նրանք ստիպված կլինեն վճարել՝ ընդհուպ մինչև ԵՄ-ի հետ հարաբերությունների հարցում:

III. ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԵՄ-ը որոշակի հաջողությունների է հասել համաձայնեցված արտաքին քաղաքականության իրականացման և զգնաժամային իրավիճակնե-

որ կարգավորման գործում: Մենք տեղում գործի ենք դնում հնարավոր արդյունավետ միջոցները, ինչպես երևում է Բալկանների օրինակից և ոչ միայն: Երբ որևէ աջակցություն ենք ցուցաբերում, այն հաճախատասխան է ներ ներուժին, մենք պետք է լինենք առավել ակտիվ, հետևողական և խելացի: Մենք պետք է աշխատենք մյուսների հետ:

Ավելի գործուն. Ռազմավարական նպատակներին հասնելու համար պետք է լինել ավելի գործուն: Սա ներառում է ճգնաժամի կարգավորման և հակամարտության կանխման մեր տրամադրության տակ գտնվող անհրաժեշտ միջոցները՝ քաղաքական, դիվանագիտական, ռազմական, քաղաքացիական, առևտրական և զարգացմանը նպաստող գործողությունները: Անհրաժեշտ է վարել ակտիվ քաղաքականություն՝ նոր և արագ զարգացող սպառնալիքները հետ մղելու համար: Մենք պետք է ստեղծենք այնպիսի ռազմավարական մշակույթ, որը ժամանակին, արագ և անհրաժեշտության դեպքում՝ հաստատուն քայլեր կծեռնարկի:

**Մենք պետք է ստեղծենք այնպիսի ռազմավարական մշակույթ,
որը ժամանակին, արագ և անհրաժեշտության դեպքում
հաստատուն քայլեր կծեռնարկի:**

Քաղկացած լինելով 25 անդամ երկրներից և պաշտպանության վրա ծախսելով ավելի քան 160 միլիարդ եվրո, մենք պետք է ի վհճակ լինենք իրականացնել միաժամանակ մի քանի գործողություններ: Մենք կարող ենք հատուկ արժեք ձեռք բերել՝ զարգացնելով ռազմական և քաղաքացիական հնարավորությունները ներառող գործողությունները:

ԵՄ-ը պետք է, ինչպես որ հարկն է, աջակցություն ցուցաբերի ՄԱԿ-ին՝ միջազգային խաղաղությանը և անվտանգությանը սպառնացող վտանգների ժամանակ: ԵՄ-ը պետք է ավելի սերտ համագործակցություն հաստատի ՄԱԿ-ի հետ, որպեսզի զորավիճ լինի հակամարտության մեջ հայտնված երկրներին և աջակցի նրանց կարճաժամկետ ճգնաժամային իրավիճակների կարգավորման հարցերում:

Մենք պետք է կարողանանք գործել նախքան մեզ շրջապատող երկրների վիճակը կվատթարանա, երբ ի հայտ գան ԶՈԶ-ի տարածման նշանները և երբ կառաջանան հումանիտար աղետներ: Կանխարգելմանն ուղղված գործողությունները մեզ կօգնեն խուսափել ապազյում սպառնացող շատ ավելի լուրջ խնդիրներից: ԵՄ-ը, որը մեծ պատասխանատվություն է վերցնում իր վրա և որը շատ ավելի գործուն է,

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ★ ՔԱՂՓԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ

իր ուսերի վրա կվերցնի քաղաքական մեծ ծանրություն:

Ավելի մեծ հնարավորություններ: Հատ ավելի մեծ հնարավորություններ ունեցող Եվրոպան մեր իշխանության տակ է, չնայած որ մեր իրական ներուժը հասկանալու համար ժամանակ կպահանջվի: Այդ ճանապարհին իրականացվող գործողությունները, հատկապես պաշտպանության գործակալության հիմնադրումը, մեզ ճիշտ ճանապարհի վրա է կանգնեցնում:

Պետք է օժանդակել մեր ռազմական ուժերը դարձնելու ավելի ծկուն ու շարժական, և նրանց հնարավորություն տալ միջոցներ ձեռնարկել նոր սպառնալիքներին դիմակայելու համար: Անհրաժեշտ են ավելի մեծ նյութատեխնիկական պաշարներ և այդ պաշարների առավել արդյունավետ սպառում:

Միացյալ ու համատեղ կարողությունների համակարգված գործածությունը կպահասնեցնի կրկնություններն ու հավելյալ ծախսերը և միջին ժամանակահատվածում ավելի լայն հնարավորություններ կընծեռնի:

Ռազմական ուժի կիրառումից հետո հաճախ ստեղծվում է քաղաքացիական քառսային վիճակ: Նզնաժամային և հետճանաժամային վիճակներից խուսափելու համար մենք պետք է կարողանանք գործի դնել քաղաքացիական բոլոր կարողությունները:

Դիվանագիտական հմուտ կիրառում. մենք այնպիսի համակարգի կարիք ունենք, որ միավորի անդամ երկրների և ԵՄ-ի հաստատությունների հնարավորությունները: Քեռավոր, մեզ անծանոթ խնդիրների հետ բախվելիս անհրաժեշտ է լինել ավելի ուշիմ և շփման հնարավոր եզրեր փնտրել:

Համընդիանուր սպառնալիքի գիտակցումը համատեղ գործելու լավագույն հնարավորությունն է: Դրա համար անհրաժեշտ է, որպեսզի անդամ երկրների միջև ու գործընկերների հետ բարելավվի հետախուզական տվյալների փոխանակումը:

Քանի որ մենք մեծացնում ենք մեր հնարավորությունները տարբեր ոլորտներում, ապա մենք պետք է մտածենք ավելի լայնածավալ առաքելությունների տերմիններով: Այն ներառում է համատեղ գինաթափման գործողություններ, աջակցություն երրորդ երկրներին՝ ահաբեկչության դեմ պայքարում և անվտանգության համակարգում իրականացվող բարեփոխումների գործում: Այս ամենի արդյունքը հանդես կգա որպես ինստիտուցիոնալ ավելի լայն մի կառույցի մաս:

ԵՄ-ՆԱՏՕ ժամանակավոր պայմանավորվածությունները, հատկապես «Բեռլինի գումարածը» (անգլ.՝ Berlin Plus), ավելի է մեծացնում

ԵՄ-ի գործնական հնարավորությունները և երկու կազմակերպությունների միջև ռազմավարական համագործակցության շրջանակներ է ստեղծում: Սա արտահայտվում է նոր դարի սպառնալիքներին խոչընդոտելու մեր համընդհանուր վճռականությամբ:

Գործողությունների փոխկապակցվածություն: Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության (անգլ.՝ Common Foreign and Security Policy, CFSP), Եվրոպական անվտանգության և պաշտպանության քաղաքականության (անգլ.՝ European Security and Defence Policy, ESDP) առավելությունն այն է, որ մենք ուժեղ ենք, երբ գործում ենք միասին: Վերջին տարիների ընթացքում մենք ստեղծել ենք մի շարք տարրեր միջոցներ, որոնք տարրերվում են իրենց կառուցվածքով և նպատակահարմարությամբ:

Այժմ անհրաժեշտ է միավորել այս բոլոր կառուցմերն ու հնարավորությունները՝ Եվրոպական աջակցության ծրագրերն ու Եվրոպական զարգացման հիմնադրամը (անգլ.՝ European Development Fund), անդամ երկրների ռազմական և քաղաքացիական հնարավորությունները և այլ միջոցները: Այս ամենը չի կարող ազդեցություն չունենալ մեր և երրորդ երկրների անվտանգության վրա: Անվտանգությունը զարգացման առաջին նախապայմանն է:

Դիվանագիտական քայլերը, զարգացումը, առևտուրն ու բանեցվող քաղաքականությունը պետք է բխեն միևնույն օրակարգից: Եզնաժամային իրավիճակներում միավորված ուժերի դերն անփոխարինելի է:

Ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարում վճռական դեր կարող է ունենալ արտաքին գործողությունը, արդարադատության և ներքին գործերի համակարգված քաղաքականությունը:

Խսիստ փոխկապակցված պետք է գործեն ոչ միայն ԵՄ-ի միջոցները, այլև արտաքին գործունեություն ծավալած անդամ երկրները:

Փոխկապակցված քաղաքականությունը նաև պակաս կարևոր չէ իրականացնել տարածաշրջանային նակարդակով, հատկապես հակամարտությունների հետ գործ ունենալիս: Ծագած խնդիրները շատ հազվադեպ կարող են լուծվել միայն տվյալ երկրի սահմաններում՝ առանց տարածաշրջանային աջակցության, ինչպես ցույց տվեցին Բալկանների և Արևելյան Աֆրիկայի միմյանցից տարրերվող օրինակները:

Համագործակցությունը գործընկերների հետ. շատ քիչ խնդիրներ կան, որ մենք կարող ենք ինքնուրույն լուծել: Վերոնշյալ սպառնալիքները համընդհանուր բնույթ են կրում և չեն շրջանցում մեր ամենամտ

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ★ ★ ՔԱՂՓԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ

գործընկերներից և ոչ մեկին: Միջազգային համագործակցությունն անհրաժեշտություն է դարձել: Այս խնդիրները պետք է ընթացք ստանան միջազգային կազմակերպությունների հետ բազմակողմանի համագործակցության ծավալման և գլխավոր գործիչների հետ համատեղ աշխատելու միջոցով:

**Գործելով միասին՝ ԵՄ-ու ԱՄՆ-ու ամբողջ աշխարհում
սպառնալիքներին դիմակայող հզոր ուժ են ստեղծում:**

Անդրատլանտյան հարաբերություններն անփոխարինելի են: Գործելով միասին՝ ԵՄ-ը ու ԱՄՆ-ը ամբողջ աշխարհում սպառնալիքներին դիմակայող հզոր ուժ են ստեղծում: Այս ևս մեկ պառճառ, թե ինչու ԵՄ-ը պետք է ամրապնդի իր հնարավորությունները և ընդլայնի համագործակցության շրջանակը:

Մենք դեռևս պետք է շարունակենք Ռուսաստանի հետ ավելի մոտ հարաբերություններ հաստատելու գործընթացը, որն իր ուրույն դերը կունենա մեր անվտանգության և բարգավաճման գործում: Համընդհանուր արժեքների գիտակցումը կիրանի ռազմավարական համագործակցության ծավալմանը:

Մեր պատմական, աշխարհագրական և մշակութային կապերը մեզ միավորում են աշխարհի գորեք յուրաքանչյուր հատվածի՝ Մերձավոր Արևելքի մեր հարևանների, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի, Ասիայի մեր գործընկերների հետ: Մենք հատկապես պետք է ռազմավարական համագործակցություն զարգացնենք ճապոնիայի, Չինաստանի, Կանադայի, Հնդկաստանի հետ, ինչպես նաև բոլոր նրանց, ովքեր կիսում են մեր նպատակներն ու արժեքները և պատրաստ են աջակցության ձեռք մեկնել:

Եզրակացություն

Այս աշխարհը լի է նոր վտանգներով, սակայն և նոր հնարավորություններով: ԵՄ-ը ի զորու է դիմակայել այդ սպառնալիքներին և խթանել այդ հնարավորությունների իրականացումը: Գործուն և իր մեջ մեծ հնարավորություններ ամփոփող ԵՄ-ը համաշխարհային մասշտաբով իր ազդեցությունը կունենա: Լինելով այդպիսին՝ այն ի զորու է նպաստել արդյունավետ բազմակողմանի համակարգի ստեղծմանը, որն աշխարհը կդարձնի ավելի արդար, անվտանգ և միասնական:



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՉԱԺՈՂՈՎ

Բրյուսել, 02.03.2005 թ.
«COM(2004) 373» վերջնական

Ոչ պաշտոնական թարգմանություն՝ անգլերենից

ՀԱՆՉԱԺՈՂՈՎԻ ՈՒՂԵՐՁՈ

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻԱՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
քաղաքականություն**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՌԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներածական խոսք

Եվրոպական կառույցների հետ սերտ հարաբերությունները, Եվրոպական ինտեգրումը հանդիսանում է Հայաստանի Համբավետության արտաքին քաղաքականության առաջնահերթությունների շարքում է: Այն իր ուրույն տեղը ունի նաև պետական և ազգային անվտանգության գործում:

Բնականաբար, այս կարևոր խնդրին իր մասնակցությունն ունի նաև խորհրդարանը: Եվրոպական կառույցներում, մասնավորապես՝ ԵԽՄՎ-ում, ԵՍ—Հայաստան խորհրդարանական Համագործակցության Հանձնաժողովում մեր պատվիրակություններն իրենց կարևոր դերակատարությունն ունեն երկրի արտաքին քաղաքականության Եվրոպական ուղղությունը զարգացնելու գործում:

Մեր երկիրը նոր է ընդգրկվել Եվրոպական Միության «Ընդլայնված Եվրոպա — նոր հարևաններ» ծրագրում: Այդ ծրագրի հիմնադրույթներին և զաղափարախոսությանը ծանոթանալուն անկասկած կնպաստի նրա հիմնական փաստաթղթերի հրապարակումը հայերեն լեզվով: Համոզված են, որ այս գիրքն անհրաժեշտ է ոչ միայն լայն հասարակությանը, այլև, առաջին հերթին, ակտիվ հասարակական և քաղաքական գործունեություն իրականացնող անձանց:

Հույս հայտնելով, որ նաև կարևոր նախաձեռնությունները կունենան իրենց շարումնակությունը՝ ցանկանում են իմ շնորհակալությունը հայտնել գրքի տպագրությունը կազմակերպողներին և, մասնավորապես, ՀՀ ԱԺ Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի Միջազգային կազմակերպությունների հետ տարկող աշխատանքների, ինտեգրացիոն խնդիրների և միջազգային փորձի տեղայնացման հարցերով ենթահանձնաժողովին, որն իր հնարավոր նպաստը ներդրեց գրքի հրատարակման գործում:

ՀՀ ԱԺ Արտաքին հարաբերությունների
մշտական հանձնաժողովի նախագահ
Արմեն Ռուստամյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՈՏ ԱԿՆԱՐԿ

Այս ամսվա սկզբին տեղի ունեցավ Եվրոպական միության պատմական ընդլայնումը, որը լուրջ քայլ էր Եվրոպական մայրցամաքում անվտանգության և բարեկեցության ամրապնդման ուղղությամբ: ԵՄ-ի ընդլայնումը նշանակում է նաև, որ փոխվել են Միության արտաքին սահմանները: Մենք նոր հարևաններ ենք ծեռք բերել և ավելի մոտեցել իհն հարևաններին: Այս հանգամանքներն ստեղծել են և հնարավորություններ, և մարտահրավերներ: Եվրոպական հարևանության քաղաքականությունն արձագանք է նորաստեղծ իրավիճակին: Այն նաև աջակցություն է Եվրոպական անվտանգության ռազմավարության նպատակների իրագործման ուղղված ջանքերին:

2003 թ. մարտին Հանձնաժողովը ներկայացրեց «Ընդլայնված Եվրոպա» նոր հարևանություն: Նոր շրջանակներ Արևելյան և Հարավյայն հարևանների հետ հարաբերություններում» խորագրով ուղերձը, որին նախորդել էր 2002 թ. օգոստոսին Բարձր ներկայացուցիչ պրն. Խավիեր Սոլանայի և Հանձնակատար Պատենի կողմից Խորհրդին ուղղված համատեղ նամակը:

2003 թ. հունիսին Խորհուրդը ողջունեց նշված ուղերձը՝ որպես լավ իհնք այդ պետությունների նկատմամբ մի շարք ուղրտմներում քաղաքականություն մշակելու համար, սահմանեց ընդհանուր նպատակները և սկզբունքները, և նախանշեց հնարավոր խթանները: 2003թ. հունիսին Սալոնիկի Եվրոպական խորհուրդը հաստատեց Խորհրդի եզրահանգումները և անդրադարձավ նշված քաղաքականության տարրեր տարրերի մշակման ուղղությամբ Խորհրդի և Հանձնաժողովի կողմից ապագայում իրականացվելիք աշխատանքին:

2003 թ. հուլիսին Հանձնաժողովը սեղանին դրեց «Հարևանության նոր գործիքի համար հարթվող ուղին» խորագրով ուղերձը և ստեղծեց Ընդլայնված Եվրոպայի Աշխատանքային խումբը և Ընդլայնված Եվրոպայի Միջնառաջական խումբը: 2003 թ. հուլիսներին Խորհուրդը «Իրավիրեց Հանձնաժողովին, որպեսզի վերջինս, անհրաժեշտության դեպքում՝ Բարձր ներկայացուցիչ մասնակցությամբ, հունիսյան եզրահանգումների լույսի ներքո 2004 թ. տարեսկզբին ներկայացնի համապատասխան միջոցառումների ծրագրերի վերաբերյալ մանրակրկիտ առաջարկություններ, որպեսզի հնարավոր լինի 2004 թ. հունիսի դրությամբ այս խնդրին հետագա ընթացք տալ»: Խորհուրդը նաև ողջունեց հարևանության նոր գործիքի վերաբերյալ ուղերձը: 2003 թ. հուլիսն-

★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

բերին Եվլոպական Խորհրդարքը ողջունեց տվյալ ուղղությամբ կատարված առաջընթացը և Խորհրդին ու Հանձնաժողովին կոչ արեց՝ շարունակելու աշխատանքները և ստանալու համապարփակ, հավասարակշիռ և համաչափ մոտեցում՝ ներառյալ ֆինանսական փաստաթուղթը:

Այդ ամենի հիման վրա Հանձնաժողովը մանրակրկիտ վերլուծության ենթարկեց այն բաղադրիչները, որոնք կարող են արտացոլվել տվյալ ծրագրի մեջ՝ թե՛ բովանդակության, թե՛ ընթացակարգերի առումով։ Հանձնաժողովն առաջնաբացի մասին երկու բանափոր հաշվետվություններ է ներկայացրել Խորհրդի՝ 2003 թ. հոկտեմբերին և 2004 թ. փետրվարին ու մասնակցել է Մշտական ներկայացուցիչների կոնյտեում և Խորհրդի համապատասխան աշխատանքային խմբերում անցկացված մանրակրկիտ քննարկումներին այն բաղադրիչների շուրջ, որոնք, հնարավոր են, ընդգրկվեն Արևելյան Եվրոպայի և Միջերկրածովյան տարածաշրջանի մի շարք պետությունների հետ համաձայնեցվելիք Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՊ) Միջոցառումների ծրագրում։ Նշված Միջոցառումների ծրագրերի քաղաքական համագործակցության սերտացման և Միասնական արտաքին քաղաքականության ու Միասնական անվտանգության քաղաքականության վերաբերյալ բաղադրիչները մշակվել և համաձայնեցվել են Հանձնաժողովի և Բարձր ներկայացուցիչ ծառայությունների կողմից։

Հանճնաժողովը բացատրական քննարկումներ է վարել Արևելյան Եվրոպայում և Հարավյային Միջերկրածովյան տարածաշրջանի գործընկեր պետությունների հետ¹, որոնք ունեն Գործընկերության և համագործակցության գործող համաձայնագրեր կամ Ընկերակցության («Ասոցիացման») գործող համաձայնագրեր: Նշված քննարկումների շրջանակներում նրանք հաստատել են իրենց հետաքրքրվածությունը ԵՀՔ-ով և շարադրել իրենց տեսակետները Միջոցառումների ծրագրերում գետեղվելիք առաջնայնությունների վերաբերյալ: Մտադրություն կա գործընթացն աստիճանաբար ընդլայնելու և ներառելու այլ պետություններ, որոնք ներկայումս ընդգրկված են այս նախաձեռնության մեջ, և որոնց հետ համաձայնագրերը ստորագրման փուլից կանցնեն վավերացման փուլ:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը գնահատել է այդ պետութ-

¹ Իսրայել, Յորդանան, Մոլովա, Սարոկո, Պաղեստինի հնգնավարություն, Թու-
մուն և Օլլուսին:

ՀԱՆՁԱԺՈՂՈՎԻ ՌԴԴՀ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒԴՈՒ

յուններում առկա իրավիճակը, մասնավորապես, դրանց քաղաքական և տնտեսական համակարգերը և համագործակցությունը Եվրոպական միության հետ: Սույն Ուղերձը նախատեսված է Խորհրդին և Եվրոպական խորհրդարանին ներկայացնելու այս աշխատանքի արդյունքները, և ուրվագծելու Եվրոպական հարևանության քաղաքականության իրագործման հետագա քայլերը:

Այս քաղաքականության մեկնարկից ի վեր ԵՄ-ն ընդգծել է, որ դա ԵՄ-ի և գործընկեր պետությունների միջև հարաբերությունների ամրապնդման միջոցների, որը տարբերվում է Եվրոպական միության Համաձայնագրի 49-րդ հոդվածով Եվրոպական պետություններին ընձեռված հնարավորություններից: ԵՅՔ-ի նպատակն է ԵՄ-ի 2004 թ. ընդլայնման պտուղներից օգտվելու հնարավորություն ընձեռել հարևան պետություններին՝ ամրապնդելով բոլոր շահագործի կողմերի կայունությունը, անվտանգությունը և բարեկեցությունը: Այն նախատեսված է կանխելու ընդլայնված ԵՄ-ի և վերջինիս հարևանների միջև նոր բաժանիչ գծերի առաջացումը, և ԵՄ-ի տարբեր աշխատանքներին մասնակցելու հնարավորություն ընձեռելու ընդլայնված ԵՄ-ի հարևաններին՝ քաղաքական, անվտանգության ոլորտում՝ տնտեսական և մշակութային համագործակցությունը սերտացնելու ճանապարհով:

Որպես մեթոդ՝ առաջարկվում է գործընկեր պետությունների հետ միասին մշակել որոշակի առաջնայնություններ, որոնց իրագործումն այդ պետություններին ավելի կճշգրտեցնի Եվրոպական միությանը: Առաջնայնությունները կարտացոլվեն փոխադարձարար համաձայնեցվող Միջոցառումների ծրագրերի մեջ, որոնք կրնկետ միջոցառումներ կնախատեսեն մի շարք կարևոր ոլորտներում. քաղաքական երկխոսություն և բարեփոխումներ, առևտուր և ԵՄ-ի ներքին շուկաներում աստիճանաբար մասնակցություն ձեռք բերելու համար գործընկերների նախապատրաստման միջոցառումներ, արդարադատություն և ներքին գործեր, էներգետիկա, տրանսպորտ, տեղեկատվական հասարակություն, շրջակա միջավայր, հետազոտական աշխատանքներ և նորարարություն, սոցիալական քաղաքականություն և շփումներ մարդկանց միջև:

Հարևանների հետ արտոնյալ հարաբերությունները կառուցվելու են ընդհանուր արժեքների հետամուտ լինելու փոխադարձ պատրաստակամության վեա այնպիսի սկզբունքային ոլորտներում, ինչպիսիք են՝ իրավունքի գերիշխանությունը, բարենպաստ կառավարումը, մարդու իրավունքների, ներառյալ փոքրանասնությունների իրավունքների հարգումը, բարիդրացիական հարաբերությունների և շուկայական

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ★ ★ ՔԱՂՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

տնտեսության ու կայուն զարգացման սկզբունքների խթանումը: Փորձ կարվի նաև հանձնառություններ ստանալ ԵՄ-ի արտաքին գործունեության որոշ կարևոր ոլորտներում, նաև ավորապես, պայքարն ահարեկչության և զանգվածային ոչնչացման գենքի տարածման դեմ, ինչպես նաև միջազգային իրավունքի նորմերով առաջնորդվելը և հակամարտությունների կարգավորման համանելուն ուղղված փորձերը:

Միջոցառումների ծրագրերի հիմքում դրված կլինեն որոշ ընդհանուր սկզբունքներ, սակայն՝ տարրերակմամբ, որպեսզի արտացոլվեն յուրաքանչյուր երկրի հետ ունեցած հարաբերությունների ընթացիկ վիճակը, տվյալ պետության կարիքները և կարողությունները, ինչպես նաև տվյալ պետության հետ ԵՄ-ի ունեցած ընդհանուր շահերը: Դարևանների հետ ԵՄ-ի հարաբերությունների սերտացման աստիճանը կախված կլինի նաև այն հանգամանքից, թե կողմերը որքանո՞վ են փաստացի հավատարիմ նշված ընդհանուր արժեքներին:

Համաձայնեցված առաջնայնությունների կատարման ուղղությամբ առաջընթացի մոնիթորինգ կիրականացվի Գործընկերության և համագործակցության համաձայնագրերով կամ Ընկերակցության համաձայնագրերով նախատեսված մարմինների շրջանակներում: Համաձայնագրերով պարբերաբար հաշվետվություններ կներկայացնի ձեռք բերված առաջընթացի վերաբերյալ: Այս գնահատման հիման վրա ԵՄ-Ծ գործընկեր պետությունների հետ միասին, կվերանայի Միջոցառումների ծրագրերի բովանդակությունը և կորոշի, թե ինչպես պետք է դրանք ճշգրտվեն և բարձրացվեն: Նույն մոտեցման հիման վրա կարող են նաև որոշումներ կայացվել երկկողմ հարաբերությունների զարգացման հաջորդ քայլի, ներառյալ պայմանագրային նոր կապերի հնարավորության վերաբերյալ: Դրանք կարող են արտացոլվել Եվրոպական հարևանության համաձայնագրերի տեսքով, որոնց շրջանակները կսահմանվեն՝ հաշվի առնելով Միջոցառումների ծրագրերում սահմանված առաջնայնությունների կատարման ուղղությամբ առաջընթացը:

Միջոցառումների ծրագրերը կներկայացվեն Համաձնաժողովի կողմից, ընդ որում՝ Բարձր ներկայացուցչի մասնակցությամբ այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են՝ քաղաքական համագործակցությունը և CFSP-Ծ՝ համապատասխան պետությունների հետ բացատրական քննարկումներից հետո: Առաջարկվում է, որ դրանք հաստատվեն համապատասխան Համագործակցության կամ Ընկերակցության խորհրդների կողմից: Եթե առաջարկվող Միջոցառումներից որևէ մեկի համար պահանջվեն իրավական գործողություններ կամ ֆորմալ բա-

նակցություններ, ապա Հանձնաժողովը կմերկայացնի անհրաժեշտ առաջարկությունները կամ երաշխավորությունները:

Միջոցառումների ծրագրերի հիման վրա հնարավոր կլինի ծրագրել համապատասխան պետությունների ցուցաբերվելիք աջակցությունը: Առկա առյուղներից ստացվող աջակցության ապագայում կգումարվի Եվրոպական հարևանության գործիքով նախատեսվելիք օժանդակությունը: Սույն ուղերձում քննարկման է դրվում այդ գործիքի նախնական տարրերակ՝ Ենթելով 2003 թ. հուլիսին Հանձնաժողովի ներկայացրած ուղերձից: Օժանդակության արդեն գոյություն ունեցող մեխանիզմների հիման վրա մշակվում են Հարևանության ծրագրեր: Հանձնաժողովը փորձում է հարևան պետություններին լրացնից օժանդակություն ցուցաբերել այնպիսի գործիքներով, ինչպիսիք են՝ տեխնիկական աջակցությունը և «զույգերով» աշխատանքը (“twinning”): Բացի այդ, Հանձնաժողովն իրականացնում է ԵՄ ծրագրերի և գործակալությունների ուսումնասիրություն, որում հարևան պետությունների մասնակցությունը կարող է բնել ընդլայնված ԵՄ-ի և հարևան պետությունների շահերից:

ԵՄ-ին անմիջապես հարող հարևաններից ԵՄ-ի համար կարևոր գործընկեր է Ոռևսաստանը: Ոռևսաստանը և ԵՄ-ը միասին որոշել են ավելի կատարելագործել իրենց ռազմավարական գործընկերությունը՝ ստեղծելով չորս ընդհանուր տարածքներ (“spaces”), որոնք հստակեցվել են 2003 թ. մայիսին Սամկո-Պետերբուրգի գագաթաժողովի շրջանակներում:

Բելառուսը և ԵՄ-ն ի վիճակի կլինեն պայմանագրային կապեր հաստատել այն ժամանակ, երբ Բելառուսում կայացած կլինի կառավարման ժողովրդավարական ծևը՝ ազատ և արդար ընտրությունների հիման վրա: Այդ պարագայում, հնարավոր կլինի Եվրոպական հարևանության քաղաքականության բոլոր օգուտները հասանելի դարձնել նաև Բելառուսին: Մինչ այդ, ԵՄ-ը կիրարկի քաղաքացիական հասարակությանը ցուցաբերվող օժանդակությունը բարելավելու տարրեր եղանակներ, ինչպես նկարագրվում է ստորև:

ԵՄ-ն ամհամերությամբ սպասում է, թե երբ է Լիբիան մուտք գործելու Բարսելոնի գործընթաց՝ լիովին ընդունելով Բարսելոնի «ակի»-ն (“acquis”) և լուծելով առկա երկկողմ հիմնախնդիրները: Դա ուղի կհարթի բնականոն հարաբերությունների ծնավորման համար, որպեսզի Լիբիան կարողանա օգտվել Եվրոպական հարևանության քաղաքականությունից:

Սույն ուղերձում տեղ են գտել երաշխավորություններ Եվրոպա-

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կան հարևանության քաղաքականության մեջ Հարավային Կովկասի պետությունների ընդգրկման վերաբերյալ:

Եվրոպական հարևանության քաղաքականությանը կկատարելագործվեն ռեգիոնալ և ենթառեգիոնալ համագործակցության առկա ծները, և կստեղծվեն լուրջ հիմքեր դրանց հետագա զարգացման համար: ԵՀՖ-ի շնորհիվ հնարավոր կլինի ամրապնդել կայունությունը ու անվըտանգությունը, և նպաստել հակամարտությունների լուծմանն ուղղված ջանքերին: Սույն փաստաթուղթը պարունակում է երաշխավորություններ ռեգիոնալ համագործակցության և ինտեգրման խորացման վերաբերյալ՝ դրանք դիտարկելով որպես ընդլայնված ԵՄ-ի արտաքին սահմանների մոտակայքում ծագող որոշակի խնդիրներ լուծելու ուղիներ: Ել ավելի օրգագումնելով անդրսահմանային համագործակցության տարրեր ծներ, ներգրավելով տեղական և տարածային իշխանություններին, ինչպես նաև ոչ կառավարական դերակատարներին, ԵՄ-ը և վերջինս գործընկերները կկարողանան միասին աշխատել՝ ԵՄ-ի 2004 թ. ընդլայնումից օգտվելու հնարավորություն ընծեռելու համար սահմանամերձ տարածքներին: Հարավում, մասնավորապես, ԵՀՖ-ն կիրակուսի մասնակիցներին՝ ամեն կերպ օգտվելու Եվրա-Միջերկրածովյան գործընկերության (“Բարսելոնի գործընթաց”) ընծեռած հնարավորություններից, կատարելագործելու ենթակառուցվածքների փոխկապակցվածությունը և ցանցերը, հատկապես էներգետիկայի ոլորտում, և զարգացնելու հարևանների հետ համագործակցության նոր ծներ: ԵՀՖ-ն կնպաստի ռեգիոնալ ինտեգրման հետագա սերտացմանը՝ հիմնվելով Եվրա-Միջերկրածովյան գործընկերության ծեռքբերումների վրա, հատկապես առևտորի ոլորտում: Այն կնպաստի Միջերկրական ծովի ավազանում և Մերձավոր Արևելքում Եվրոպական անվտանգության ռազմավարության նպատակների իրագործմանն ուղղված ջանքերին:

Եվրոպական հարևանության քաղաքականության տեսլականը ներառում է պետությունների որոշակի շրջան, որոնք ունեն նույն հիմնարար արժեքները և նպատակները, ինչ ԵՄ-ը, և զնալով սերտացմուն են հարաբերությունները՝ համագործակցության մակարդակից անցնելով տնտեսական և քաղաքական լուրջ ինտեգրման: Դրանից մեծ օգուտներ կատարան բոլոր մասնակիցները, քանզի կամրապնդվեն կայունությունը, անվտանգությունը և բարեկեցությունը: Միջոցառումների ծրագրերը, որոնք պետք է մշակվեն սույն Ուղերձում գետեղված

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՒՂԵՐՁ
ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԴԱՅԱՎԱՐԱԿԱՎ ՓԱՍՏԱԹՈՒԴՈ

սկզբունքների հիման վրա, առաջին լուրջ քայլն են նշված տեսլականի հրագործման ուղղությամբ: Միջոցառումների ծրագրերում կսահմանվի հաջորդ երեքից հինգ տարիների ընթացքը: Հաջորդ քայլը կլինի Եվրոպական հարևանության համաձայնագրերի բանակցումը, որոնք Միջոցառումների ծրագրերի առաջնայնությունների կատարումից հետո կզբաղեցնեն ներկա սերնդի երկողմ համաձայնագրերի տեղը: Այս ուղղությամբ կատարված առաջընթացը ԵՄ-ին և Վերջինիս գործընկերներին հնարավորություն կտա համաձայնեցնելու մոտակա տարիների հարաբերությունների հետագա սերտացման երկարաժամկետ նպատակները:

Հանձնաժողովը կոչ է անում Խորհրդին՝ դիտարկելու սույն Ուղերձում տեղ գտած մոտեցումները և հանգելու որոշ եզրակացությունների այն մասին, թե ինչպես պետք է այս նախաձեռնությունն իրականացվի՝ միևնույն ժամանակ անդրադարձալով պոտենցիալ Միջոցառումների ծրագրերի բովանդակությանը և այն պետությունների առանձնահատկություններին, որոնց հետ միասին կազմվելու են Միջոցառումների ծրագրեր՝ մտապահելով միասնական արժեքներին հավատարիմ մնալու գաղափարը: Դրա հիման վրա Հանձնաժողովը, Նախագահության և Բարձր ներկայացուցչի մասնակցությամբ, պատրաստ է ավարտին հասցնելու բացատրական քննարկումները նախանշված պետությունների հետ և ներկայացնելու Միջոցառումների ծրագրերի նախագծեր: Հանձնաժողովն առաջարկում է, որ նշված Միջոցառումների ծրագրերը հաստատվեն Համագործակցության կամ Ընկերակցության համապատասխան խորհուրդների կողմից: Բացի այդ, Հանձնաժողովը պատրաստ է սկսել նախապատրաստական աշխատանքներ սույն Ուղերձում նշված որոշ այլ պետությունների հետ, որոնց նկատմամբ տարածվում է այս նախաձեռնությունը:

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ★ ՔԱՂԱՔԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ

ՍԿԶԲՈՒԽԲՆԵՐԸ ԵՎ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Հարևանության քաղաքականություն՝ աշխարհում
Աերդաշնակորեն և արդյունավետորեն գործող Եվրոպական
միության համար

Հարևանության համապարփակ քաղաքականությունը, որում արտացոլված կլինեն Միության առկա կառուցվածքի բոլոր երեք «հենայուների» համապատասխան բաղադրիչներ, հարևան պետություններին հնարավորություն կտա՝ կայունության, անվտանգության և բարեկեցության ինստուվով օգտվելու ԵՄ-ի ընդլայնման օգուտներից: Դա արտացոլվել է Եվրոպական միության Սահմանադրական համաձայնագրի ընդունման նախապատրաստական աշխատանքների շրջանակներում: Հարևանության քաղաքականության կարևորությունն ընդգրծված է նաև Եվրոպական անվտանգության ռազմավարության մեջ, որը Եվրոպական խորհրդի կողմից հաստատվել է 2003 թ. դեկտեմբերին, և որում նշվում է, որ ԵՄ-ի խնդիրն է «առանձնահատուկ նպաստ բերել մեզ անմիջապես հարող հարևան պետություններում կայունության և բարենպաստ կառավարման ապահովմանը [և] աջակցել, որպեսզի Եվրոպական միությունից դեպի արևելք և Միջերկրական ծովի սահմանների երկայնքով բարենպաստ կերպով կառավարվող պետությունների շրջան լինի, որոնց հետ մենք կունենամք սերտ և համագործակցային հարաբերություններ»:

ԵՀՔ-ն նախատեսված է այնպես, որպեսզի ընդլայնումից հետո նոր գարկ տա ԵՄ-ի հարևանների հետ համագործակցությանը: Գործընկեր պետությունների հետ հարաբերությունները բովանդակային առումով կհարստացվեն՝ հավուր պատշաճին օգտվելով նոր անդամ պետություններում և թեկնածու պետություններում քաղաքական և տնտեսական անցման, ինչպես նաև տնտեսական զարգացման և արդիականացման գործընթացին աջակցելու ընթացքում ձեռք բերված փորձից:

ԵՀՔ-ն պետք է վերահստատի այն հանգանանքը, որ ԵՄ-ը սատար է կանգնում ռեգիստրատուրայունների կարգավորման խթանմանը: ԵՀՔ-ն նաև կարող է օգնել, որպեսզի Միությունն իրագործի իր նպատակներն Արդարադատության և Ներքին գործերի ոլորտներում, հատկապես կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի, փողերի լվացման և թրաֆիկինգի բոլոր ձևերի դեմ պայքարում, ինչպես նաև միգրացիայի հետ կապված խնդիրների առնչությամբ: ԵՄ-ի և վերջինիս գործընկերների համար կարևոր է՝ ձգտել իրենց համա-

գործակցության տարբեր ոլորտներում՝ առավելագույնի հասցնելու փոխլրացման և սիներգիայի աստիճանը:

ԵՄ-ը և Ռուսաստանը որոշել են իրենց ռազմավարական գործընկերությունը սերտացնել՝ ստեղծելով չորս ընդհանուր «տարածքներ», որոնք համաձայնեցվել են 2003 թ. նայիսին Սամկո-Պետերբուրգի գագաթնաժողովի ընթացքում²: Ռուսաստանը և ընդլայնված Եվրոպական միությունը միմյանց հարևանության մաս են կազմում: Մեր ընդհանուր շահերից է բխում՝ ԵՀՀ-ի որոշակի տարրերի հիման վրա հարստացնելու ընդհանուր տարածքների ուղղությամբ տարվող աշխատանքը, հատկապես անդրսահմանային և ենթառեգիոնալ համագործակցության ոլորտներում: ԵՄ-ին և Ռուսաստանին անհրաժեշտ է աշխատել միասին՝ որպես հարևաններ, ընդհանուր խնդիրների ուղղությամբ: Հանձնաժողովը խորհուրդ է տալիս Ռուսաստանին օժանդակություն ցուցաբերել առաջարկվող Եվրոպական հարևանության գործիքով նախատեսված ռազմավարական գործընկերության համապատասխան մասերի կատարման համար՝ ի լուրմ ներկայումս ցուցաբերվող օժանդակության տեսակների:

Ինչ վերաբերում է Միջերկրական ծովի ավազանի երկրներին, ապա ԵՀՀ-ն նպաստելու է Միջերկրական ծովի ավազանում և Մերձավոր Արևելքում Ռազմավարական գործընկերության նպատակների իրագործմանը: Միջերկրական ծովի ավազանի պետությունների հետ Ռազմավարական գործընկերությունը պետք է հիմնվի ԵՀՀ-ի իրագործման վրա: ԵՀՀ-ն իր հերթին իրագործվելու է Բարսելոնի գործընթացի և յուրաքանչյուր գործընկեր պետության հետ կնքվող Ընկերակցության համաձայնագրերի միջոցով:

ԵՀՀ-ի իրագործման շրջանակներում հույժ կարևոր է, որպեսզի կառաջըները և անդամ պետությունները գործնեն փոխհամաձայնեցված և միասնական կարգով:

² Դրամբ են՝ ընդհանուր տնտեսական տարածք (ներառյալ շրջակա միջավայրի պահպանություն և ներգետիկա), ազատության, անվտանգության և արդարադատության ընդհանուր տարածք, արտաքին անվտանգության ոլորտում համագործակցության տարածք, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքի և կրթության, ներառյալ մշակույթի ընդհանուր տարածք: Եներգետիկայի ոլորտում ԵՄ-Ռուսաստան երկխոսությունն ընդհանուր հարաբերությունների կարևոր բաղադրիչ է:

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ

Աշխարհագրական ծածկույթը

ԵՐԵ-Ն ուղղված է ԵՄ-ի ներկայիս հարևաններին և այն հարևան պետություններին, որոնք ընդլայնման արդյունքում ավելի են մոտեցել ԵՄ-ին: Եվրոպայում դա վերաբերում է Ռուսաստանին, Ուկրաինային, Բելառուսին և Մոլդովային: ԵՄ-Ը և Ռուսաստանը որոշել են էլ ավելի խորացնել իրենց ռազմավարական գործընկերությունը՝ ստեղծելով չորս ընդհանուր տարածքներ (“spaces”), որոնք հստակեցվել են 2003 թ. մայիսին Սանկտ-Պետերբուրգի գագարնաժողովի շրջանակներում³: Միջերկրական ծովի տարածաշրջանում ԵՐԵ-Ն տարածվում է ԵՄ անդամ չհանդիսացող և Եվրա-Միջերկրածովյան գործընկերության (Բարսելոնի գործընթացի) մեջ ներառված բոլոր պետությունների նկատմամբ, բացառությամբ Թուրքիայի⁴, որը զգտում է ԵՄ-ի հետ իր հարաբերությունները կազմակերպել անդամակցությամբ ճախորդող գործընթացի տեսքով: Համաձայնությունը խորհուրդ է տալիս ԵՐԵ-Ի շրջանակներում ներառել նաև Հայաստանը, Ադրբեյջանը և Վրաստանը⁵:

Հնարավոր Միջոցառումների ծրագրերում ներառման համար որոշակի բաղադրիչներ ընտրելու նպատակով սկսվել են բացատրական քննարկումներ այն գործընկերների հետ, որոնք ներկայումս ունեն գործող Գործընկերության և Ընկերակցության (համագործակցության) համաձայնագրերն⁶: Այդ պետություններում առկա ընթացիկ իրավիճակի և ԵՄ-ի հետ նրանց հարաբերությունների մասին հաշվետվությունները կցված են սույն Ուղերձին:

Մյուս հարևանների հետ Միջոցառումների ծրագրերի մշակումը պետք է սկսվի այն ժամանակ, երբ արդեն ներկայացված կլիմեն ներկայում նախապատրաստման մեջ գտնվողները: Համաձայնություն առաջարկում է 2004 թ. երկրորդ կեսից սկսել Միջերկրական ծովի տարածաշրջանի այն պետությունների հետ Միջոցառումների ծրագրեր կազմելու հնարավորության ուսումնասիրությունը, որոնք վավերացրել են Ընկերակցության համաձայնագրերը, այսինքն՝ Եգիպտոսի և Լիբանանի

³ Համենատության համար տես Համենաժողովի վերջին ուղերձը Ռուսաստանի հետ հարաբերությունների վերաբերյալ՝ COM(2004) 106, 9 2004 թ. գետրվար, ինչպես նաև Խորհրդի 2004 թ. գետրվարի 24-ի եզրակացությունը:

⁴ Աժդիր, Եգիպտոս, Խորաբել, Յորդանան, Լիբանան, Լիբիա, Մարոկկո, Սիրիա, Թուրքիա, ինչպես նաև Պաղեստինյան ինքնավարություն:

⁵ Տես սոտրը՝ 3-րդ բաժնը:

⁶ Խորաբել, Յորդանան, Մոլդովա, Մարոկկո, Պաղեստինի ինքնավարություն, Թուրքիա և Ուկրաինա:

հետ: Այս տարածաշրջանում գտնվող այլ պետությունների հետ բացատրական աշխատանքները կարող են սկիզբ առնել այն ժամանակ, երբ դրանց՝ ԵՄ-ի հետ պայմանագրային կապերի հեռանկարը, հասած կլինի նման մակարդակի: Նախագահությունը և Քարտուղարությունը լիարժեքորեն ներգրավված կլինեն այս գործընթացին, և լրացուցիչ Միջոցառումների ծրագրերի ժամկետների և բովանդակության վերաբերյալ խորհրդակցություններ կանցկացվեն Անդամ պետությունների հետ:

ԵՐԵ-Ն և ներկայումս առկա գործիքները

ԵՄ-ի և ԵՐԵ-ին մասնակից պետությունների մեջ մասի հարաբերություններն արդեն հասել են զարգացման բարձր աստիճանի: Արևելյան Եվրոպայում պայմանագրային հարաբերությունների հիմքը Գործընկերության և ընկերակցության համաձայնագրերն են: Միջերկրական ծովի տարածաշրջանում Եվրա-Միջերկրածովյան գործընկերությունը («Բարսելոնի գործընթաց») համագործակցության ռեգիստրատուրային մեջ մեջանական մեջանագրերի գաղտնությունը պահպանվում է ընկերակցության համաձայնագրերի գաղտնությունում:

Նշված համաձայնագրերը թույլ են տալիս զարգացմել համագործակցությունը և տնտեսական ինտեգրումը մի շարք տարբեր ոլորտներում: Դրանց ողջ ներուժը դեռ չի օգտագործվել: ԵՐԵ-Ն ուղի է հարթում հստակորեն սահմանված մի շարք ոլորտներում համագործակցությունը խորացնելու հանար, որը սկզբում ԵՄ-ին և Վերջինիս գործընկերներին թույլ կտա լիովին օգտվելու առկա կառույցներից: Այս առումով, Միջոցառումների ծրագրերով կսահմանվեն նոտակա տարիներին լուծվելիք հիմնական առաջնայնությունները: Առաջնաբացի սերտ մոնիթորինգ կիրականացվի համաձայնագրերի հիման վրա ստեղծված հանձնաժողովներում և ենթահանձնաժողովներում, ինչպես նաև երկխոսության համապատասխան կառույցներում: Այս առաջնայնությունների սահմանումը և կատարումը կարևոր առաջին քայլերը կլինեն Հանձնաժողովի 2003 թ. մարտի ուղերձով նախատեսված հավակնութ նպատակների իրագործման ուղղությամբ:

Համատեղ «սեփականություն»

ԵՐԵ-Ն առաջարկ է, որը ԵՄ-Ն առաջադրել է իր գործընկերներին, որին նրանք արձագանքել են զգալի հետաքրքրությամբ և ակտիվությամբ: Ծատ կարևոր է գործընթացի համատեղ «սեփականությունը»՝

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ★ ★ ՔԱՂԱՔԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր արժեքների և ընդհանուր շահերի գիտակցության հիման վրա: ԵՄ-ն չի փորձում իր գործընկերներին պարտադրել առաջնայնություններ կամ նախապայմաններ: Միջոցառումների ծրագրերի հաջողությունը կախված կլինի մի շարք առաջնահերթ խնդիրների լուծման առումով ընդհանուր շահերի հստակ գիտակցումից: Խոսք անգամ չի կարող գնալ նախապես սահմանված որոշակի առաջնայնություններ գործընկերներին պարտադրելու մասին: Դրանք սահմանվելու են փոխադարձ համաձայնությամբ և, հետևաբար, տարրեր են լինելու յուրաքանչյուր պետության համար: Նշված ծրագրերի հաստատումը գոյություն ունեցող ամենաբարձր մակարդակի համաձայնագրերով լրացնուի կշիռ կիաղորդի փոխհամաձայնեցված առաջնահերթ միջոցառումներին:

Յուրաքանչյուր գործընկեր պետության հետ ԵՄ-ի հարաբերությունների հավաքանությունները և զարգացման տեմպը կախված կլինին ընդհանուր արժեքներին այդ պետության նվիրվածության աստիճանից, ինչպես նաև փոխհամաձայնեցված առաջնայնություններ կատարելու՝ այդ պետության կամքից և կարողությունից:

Տարբերակում

Միջոցառումների ծրագրերի համար որպես ելակետ ծառայում են ընդհանուր որոշակի հիմնախնդիրներ, որոնք համահունչ են ԵՀՊ-ի նպատակներին: Դրանք ներկայացված են ստորև՝ 4-րդ բաժնում: Այնուհանդեք, Միջոցառումների ծրագրի և յուրաքանչյուր գործընկերոջ հետ համաձայնեցված առաջնայնությունների մշակումը կախված կլինի կոնկրետ այդ պետության իրավիճակի առանձնահատկություններից: Դրանք տարբերվում են, մասնավորապես, աշխարհագրական դիրքի, քաղաքական և տնտեսական իրավիճակի, Եվրոպական միության և հարևան պետությունների հետ հարաբերությունների, համապատասխան դեպքերում՝ բարեփոխումների ծրագրերի, կարիքների և կարողությունների, ինչպես նաև ԵՀՊ-ի համատեքստում՝ շահերի ընկալման առումներով: Այսպիսով, յուրաքանչյուր գործընկերոջ հետ Միջոցառումների ծրագրերը տարբերակված են լինելու:

Միևնույն ժամանակ, տարբերակումը պետք է հիմնված լինի ընդհանուր արժեքներին նվիրված լինելու վրա և համատեղելի լինի ողջամիտ ռեգիոնալ մոտեցման հետ, հատկապես այն դեպքերում, երբ ռեգիոնալ համագործակցության խորացումը կարող է ակնհայտորեն որոշակի օգուտներ տալ:

Դավեյալ արժեքը

ԵՀՔ-ն հավեյալ արժեք է ստեղծում թե՝ գործընկեր պետությունների, թե՝ ԵՄ-ի համար, որն առկա համագործակցությունից ավելի հեռուն է գնում: Դավեյալ արժեքը դրսևորվում է մի քանի առումներով:

1. ԵՀՔ-ն առաջարկում է հարևանության նկատմամբ ԵՄ-ի քաղաքականությունն առավել կատարելագործելու և նպատակապես դարձնելու միջոցներ՝ միախմբելով Միության և Անդամ պետությունների տրամադրության տակ եղած հիմնական գործիքները: Դա նպաստելու է ԵՄ-ի արտաքին քաղաքականության նպատակների հետագա խթաննանը և օժանդակությանը:
2. ԵՀՔ-ի իրագործումն իր հետ բերում է համագործակցությունից ավելի հեռում՝ դեպի զգայի չափի հնտեղում գնալու հեռանկարը, որը ներկայացված է 2003 թ. մարտի ուղերձում, ներառյալ ԵՄ-ի ներքին շուկայում գործընկեր պետությունների մասնակցության տեսքով: Ավելին, այն խուսափելու է մեկուսացման տպավորություն թղթնելուց, որը կարող էր հակառակ պարագայում ծագել ընդլայնման հետևանքով և տալու է իր ընձեռած օգուտները քաղելու հնարավորություն: ԵՀՔ-ում սահմանվելու են կարևոր ոլորտներում ԵՄ-ի քաղաքականություններին և ծրագրերին գործընկեր պետությունների մասնակցությունն աստիճանաբար ակտիվացնելու ուղիները և միջոցները:
3. ԵՀՔ-ն զարգացնելու և ավելի արդյունավետ է դարձնելու գործընկեր պետությունների հետ քաղաքական համագործակցության շրջանակները և աստիճանը:
4. ԵՀՔ-ն խրախուսելու է այն բարեփոխումները, որոնք օգուտներ կրերեն տնտեսական և սոցիալական զարգացման իմաստով: Տնտեսական օրենսդրության զուգամիտումը, գործընկեր տնտեսությունների բացումը միմյանց առջև և առևտուի արգելքների նվազեցման շարունակումը կնպաստեն ներդրումների և ածի տեմպերի ավելացմանն ու գործազրկության կրծատմանը:
5. ԵՀՔ-ն խթաններ կնախատեսի երկկողմ հարաբերություններում առկա խնդիրների լուծման համար: Խնդիրները յուրաքանչյուր պետության պարագայում տարբեր են:

★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

6. Միջոցառումների ծրագրերով նախատեսվելու են առաջնայն նույթունները և առկա համաձայնագրերի կատարման ուղղությունները: Դրանք ներառելու են համաձայնագրերով նախատեսված տարրեր ոլորտներում ԵՄ-ի և համապատասխան պետության համար կարևոր «կատարողական ցուցանիշներ»:

7. Հանձնաժողովն առաջարկելու է 2007 թ. ներդնել նոր ֆինանսական գործիք՝ Եվրոպական հարևանության գործիքը (“European Neighbourhood Instrument”), որը կանդրադառնա համագործակցության կոնկրետ ոլորտների, մասնավորապես՝ անդրսահմանային համագործակցությանը, ի լրումն առկա գործիքներով կամ դրանց փոխարեն ներդրվելիք նոր գործիքներով նախատեսվող ոլորտների: ԵՅՔ-ի բոլոր գործընկերներն իրավասու կիմեն այս գործիքի շրջանակներում ստանալու օժանդակություն: Մինչդեռ, 2004-2006 թթ. ժամանակահատվածում հարևանության ծրագրերն արժեք կհավելեն անդրսահմանային, անդրազգային և ռեգիոնալ համագործակցությանը:

8. Հանձնաժողովն առաջարկել է ներկայումս առկա կամ ապագայում նախատեսվելիք գումարների մեջությունն էապես ավելացնել նոր ֆինանսական ծրագրերի շրջանակներում՝ ԵՄ-ի կամ ԵՅՔ-ով սահմանված առաջնայնություններին հաճակունք:

9. Հանձնաժողովն ուսումնասիրում է Համայնքի որոշ ծրագրեր աստիճանաբար բացելու և մշակութային, կրթական, բնապահպանական, տեխնիկական և գիտական կապերը սերտացնելու հնարավորությունները:

10. ԵՅՔ-ը ցուցաբերելու է օժանդակություն, ներառյալ տեխնիկական աջակցություն և «զույգերով» աշխատանք այն գործընկերներին, որոնք ցանկանում են ապահովել ԵՄ-ի նորմերի և չափանիշների կատարումը:

11. Նոր պայմանագրային կապերը՝ Եվրոպական հարևանության համաձայնագրերի տեսքով, որոնց շրջանակները սահմանվելու են Հանձնաժողովի կողմից իրականացվող՝ Միջոցառումների ծրագրերով նախատեսված առաջնայնությունների կատարման ուղղությամբ արագոնթագի գնահատման հիմն մոտ:

Միասին վերցված՝ այս խթանները լուրջ հավելյալ արժեք են ստեղծում մասնակից պետությունների համար։ Երբ մոնիթորինգի

գործընթացը վկայում է սահմանված առաջնայնությունների կատարման ուղղությամբ լուրջ առաջնորդացի մասին, խթանները կարող են վերանայվել՝ նպատակ ունենալով լրացուցիչ քայլեր կատարել ներքին շուկայի և այլ կարևոր ոլորտներում ԵՄ-ի քաղաքականության հետ ինտեգրումը խորացնելու ուղղությամբ: Սա դիմանիկ գործընթաց է, որում առաջին կարևոր քայլերը Միջոցառումների ծրագրերն են:

Միջոցառումների առաջնայնությունները

Միջոցառումների ծրագրերն անդրադառնալու են երկու ընդհանուր ոլորտների. նախառաջ, հանձնառություններ կոնկրետ միջոցառումների գծով, որոնք հաստատում կամ վերահստատում են նվիրվածությունն արտաքին և անվտանգության քաղաքականության ոլորտներում փոխադարձ ընդհանրություն ներկայացնող որոշակի արժեքների և նպատակների, և երկրորդ՝ հանձնառություններն այնպիսի միջոցառումների նկատմամբ, որոնց շնորհիվ գործընկեր պետություններն ավելի կմերծենան ԵՄ-ին մի շարք առաջնահերթ ոլորտներում: Միջոցառումների առաջնայնությունները պետք է հմարավորին չափ ստույգ լինեն՝ կախված կոնկրետ խնդրի բնույթից և այդ կերպ կիանդիսանան համեմատական ցուցանիշներ, որոնց կատարումը հնարավոր կլինի մոնիտորինգի և զնահատման ենթարկել: Գործընկերները կարող են, օրինակ, տեղաշարժ կատարել ապրանքների ազատ շրջանառության ուղղությամբ՝ քայլեր ձեռնարկելով Միջոցառումների ծրագրերում նշված կոնկրետ տեխնիկական խոչընդոտները վերացնելու ուղղությամբ:

Միջոցառումների ծրագրերով նախատեսվելու են կոնկրետ միջոցառումներ սահմանափակ թվով ոլորտներում, որոնք անհրաժեշտ կլինի կատարել՝ որպես առանձնահատուկ կարևորության առաջնայնություններ, ինչպես նաև միջոցառումներ ավելի մեծ թվով ոլորտներում՝ գործող երկողմ համաձայնագրերի շրջանակների համաձայն: Տարբեր առաջնայնություններ լուծելու համար կսահմանվեն հստակ ժամկետներ:

Մոնիտորինգ

Մոնիտորինգը տեղի կունենա Գործընկերության և համագործակցության համաձայնագրերով կամ Ընկերակցության համաձայնագրերով նախատեսված մարմինների շրջանակներում: Դրանց առավելությունն այն է, որ դրանցում միասին աշխատում են գործընկեր պետությունն այն է, որ դրանցում միասին աշխատում են գործընկեր պետություններ:

★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

յունների, անդամ պետությունների, Եվրոպական համաձայնողով և խորհրդի քարտուղարության ներկայացուցիչներ: Նման միջավայրում իրականացվող մոնիթորինգը կնպաստի, որպեսզի աշխատանքները և խնդիրները դիտարկվեն որպես ընդհանուր «սեփականություն»: Այս համատեղ մոնիթորինգի իրականացման համար գործընկեր պետություններից կպահանջվեն մանրակրկիտ տեղեկություններ: Մոնիթորինգի համար առանձնապես օգտակար կլինին ենքահամաձայնողովները, որոնց ուշադրությունը կենտրոնացած կլինի կոնկրետ խնդիրների վրա, տնտեսական երկխոսության գործընթացներին գուգահեր:

Հանձնաժողովը պարբերաբար կազմելու է առաջընթացի մասին հաշվետվություններ՝ անդրադառնալով նաև լրացուցիչ ուշադրության կարիք ունեցող ոլորտներին՝ հաշվի առնելով գործընկեր պետության իշխանությունների տված գնահատականները: Միջոցառումների ծրագրերը վերանայվելու են, և դրանք հնարավոր կլինի ճգործել՝ կախված առաջնահերթ միջոցառումների կատարման ուղղությամբ փաստացի առաջընթացից: Առաջարկվում է, որպեսզի միջոցառումների ծրագրի հաստատումից երկու տարի անց Հանձնաժողովը՝ Բարձր Երկայացուցիչ մասնակցությամբ, պատրաստի «միջանկյալ» հաշվետվություն քաղաքական համագործակցությանը և CFSP-ին առնչվող խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև մեկ այլ հաշվետվություն երեք տարվա ընթացքում: Նշված հաշվետվությունների հիմնա վրա խորհուրդը կարող է որոշել յուրաքանչյուր գործընկեր պետության հետ պայմանագրային հարաբերություններում ծերնարկվելիք հետազա քայլերը: Դրանք կարող են լինել Եվրոպական հարևանության համաձայնագրերի տեսքով, որոնց շրջանակները սահմանվելու են՝ հաշվի առնելով Միջոցառումների ծրագրերում նախանշված առաջնայնությունների կատարման ուղղությամբ առաջընթացը:

ՀԱՐԵՎԱՆ ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Այս բաժնում Հանձնաժողովն անդրադառնում է ընդլայնված ԵՄ-ին նոտ գտնվող որոշ այլ պետություններում տիրող իրավիճակին:

Հարավային Կովկաս

Եվրոպական միությունը լրջորեն հետաքրքրված է Հարավային Կովկասի կայունությամբ և զարգացմանբ: Եվրոպական անվտանգության ռազմավարության մեջ, որը 2003 թ. դեկտեմբերին ընդունվել է Եվրոպական խորհրդի կողմից, Հարավային Կովկասը հստակորեն նշվում է այն ռեգիոնների շարքում, որոնց նկատմամբ ԵՄ-ը պետք է դրսնորի «ավելի լուրջ և ավելի ակտիվ հետաքրքրություն»:

Եվրոպական հանձնաժողովը, խորհրդակցելով Բարձր ներկայացուցչի հետ և հաշվի առնելով ԵՄ-ի Հատուկ ներկայացուցչի առաջարկները, ինչպես նաև Եվրոպական խորհրդարանի արտահայտած տեսակետը⁷, խորհուրդը է տալիս, որպեսզի խորհուրդը որոշում կայացնի՝ Հայաստանը, Ադրբեյջանը և Վրաստանն ընդգրկելու Եվրոպական հարևանության քաղաքականության մեջ: Այս պետություններից յուրաքանչյուրին անհրաժեշտ է զննելու հավասար հնարավորություն՝ այս շոշանակներում զարգացնելու կապերը ԵՄ-ի հետ:

ԵՄ-ն պետք է դիտարկի ապագայում այս պետությունների հետ Միջոցառումների ծրագրեր մշակելու հնարավորությունը՝ ըստ յուրաքանչյուր պետության արժանիքների: Հաշվի առնելով այս նոտեցումը՝ Հանձնաժողովը խորհրդին գեկույց է ներկայացնելու ժողովրդավարության, իրավունքի գերիշխանության և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի ամրապնդման ուղղությամբ պետություններից յուրաքանչյուրի արծանագրած առաջընթացի վերաբերյալ:

ԵՄ-ը ցանկանում է, որպեսզի ժողովրդավարության, իրավունքի գերիշխանության, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի և շուկայական տնտեսության կայացման ուղղությամբ առաջընթացի առումներով նվիրվածությունը և հանձնառությունը վերահաստատված, արժանահավատ և անխափան լինեն: Այս ընդհանուր արժեքներն ընկած են նաև Եվրոպայի խորհրդում և ԵԱՀԿ-ում Հայաստանի,

⁷ Հանձնատության համար տես խորհրդարանի 2004 թ. փետրվարի 26-ի բանաձեռ՝ «ԵՄ-ի քաղաքականությունը Հարավային Կովկասի նկատմամբ»:

★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղրբեջանի և Վրաստանի անդամակցության հիմքում: Անհրաժեշտ է ավելացնել տարածաշրջանում առկա հակամարտությունների կարգավորմանը և բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը նպաստելու ուղղությամբ ներդրվող ջանքերը: Եթեք պետություններից յուրաքանչյուրը պետք է կոնկրետ առաջընթաց քայլեր կատարի՝ յուրաքանչյուրն իր Գործընկերության և համագործակցության համաձայնագրի իրագործման ուղղությամբ հետագա առաջընթաց ապահովելու և, մասնավորապես, իրավունքի գերիշխանությունն ամրապնդելու և հակամարտությունների կարգավորումը խթանելու նպատակներով: Եթե-ում պետք է վերահստատվի ԵՄ-ի համանառությունը՝ նպաստելու այս խնդիրների լուծմանը:

ԵՄ-ի հետ համագործակցության հետագա ամրապնդմանը նախապատրաստվելու գործընթացում Հայաստանին, Աղբբեջանին և Վրաստանին օգնելու հարցում ԵՄ-ը պատրաստ է բարեփոխումների իրականացման ոլորտում օժանդակել Վստահելի, կոնկրետ և շարունակական ջանքերի իրագործմանը, հատկապես վերոհիշյալ առաջնահերթ ոլորտներում՝ այդ նպատակով ցուցաբերելով լրացուցիչ աջակցություն: Անհրաժեշտ է նաև սերտացնել համագործակցությունն էներգետիկայի ոլորտում, քանի որ Հարավային Կովկասը կարևոր ռեզֆին է թե՛ արտադրության (Կասպից ծովի ավազան), թե՛ տարանցիկ հաղորդակցության առումներով:

Fbawonlu

Ընդլայնված Եվրոպայի վերաբերյալ Հանձնաժողովի 2003 թ. մարտի Ուղերձում նշվում է, որ «ԵՄ-ը պետք է փորձի ազատ և արդար ընտրությունների համար անհրաժեշտ նախապայմաններ ստեղծելու նպատակ հետապնդող՝ չափման ենթակա աստիճանական գործընթացի մեջ ներգրավել Բելառուսը և, եթե դա կապահովվի, Բելառուսն ինտեգրել հարևանության քաղաքականության՝ չվտանգելով ընդհանուր արժեքների և ժողովրդավարական արժեքների ուղղությամբ ԵՄ-ի հանձնարարությունու»:

ԲԵԼԱԶՈՒԿԻ առնչությամբ ԵՄ-ի երկարաժամկետ նպատակն է, որպեսզի ԲԵԼԱԶՈՒԿԱ լինի ժողովրդավարական, կայուն, հուսալի և գնալով ավելի բարեկեցիկ գործընկեր, որի հետ ընդլայնված ԵՄ-ը կունենա ոչ միայն ընդհանուր սահմաններ, այլ նաև՝ ընդհանուր արժեքների հիման վրա Նարուալմած ընդհանուր օրականո:

ԵՄ-Ի ԵՐՔ-Ի ՄԻԹՈՂՆՎ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵԼՈՒ Է ԲԵՂԱՉՈՒՍՈՒՄ ԺՈՂՈՎՐԴ-

* * * * *
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՒՂՂՉՅ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԴԱՅԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂ

դավարական զարգացմանն օժանդակելու՝ իր հանձնառության պահպանումը: Բելառուսի համար հնարավոր կլինի լիարժեքորեն օգտվել ԵՀՖ-ից այն ժամանակ, երբ տեղի ունենան հիմնարար քաղաքական և տնտեսական բարեփոխումներ:

Ներկայումս, սակայն, Բելառուսում առկա է ինքնիշխանական (ավտորիտար) համակարգը: 1996 թվականից ի վեր ընտրությունները չեն համապատասխանել միջազգային ժողովրդավարական չափանիշներին, և բացակայում են ժողովրդավարական կառույցները: Նման իրավիճակում դեռևս հնարավոր չէ ԵՀՖ-ով նախատեսվող բոլոր հնարավորությունները հասանելի դարձնել Բելառուսին:

ԵՄ-ն օժանդակելու է աշնանը ժողովրդավարական խորհրդարանական ընտրությունների անցկացմանը՝ աշխատանքը համակարգելով ԵԱՀԿ-ի և Եվրոպայի խորհրդի հետ, ինչպես նաև՝ քարծրացնելով իրազեկությունն այն մասին, թե ԵՄ-ի քաղաքականությունը և աջակցությունն ինչպես կարող է օգտակար լինել Բելառուսի քաղաքացիների համար: Բացի այդ, ԵՄ-ը հաստատելու է, որ հիմնարար բարեփոխումների իրականացման պարագայում հնարավոր կղաղանա ավելի սերտ հարաբերություններ ունենալու հեռանկարը, ներայալ հարաբերությունները ԵՀՖ-ի շրջանակներում: Դա տեսանելի ազդակ կհաղորդի Բելառուսի բնակչությանը՝ նրանց ներկայացնելով քաղաքացիական հասարակությանը և ժողովրդավարացմանը, ռեգիոնալ և մարդասիրական համագործակցությանը, հարևանության ծրագրերին և սահմանամերձ շրջանների միջև ուղևորությունների հեշտացմանն օժանդակելու համար առկա հնարավորությունները:

Եթե Բելառուսում ժողովրդավարացման առումով տեղի ունենան լուրջ դրական տեղաշարժեր, ապա հնարավոր կլինի քաղաքական նակարդակով ավելի ակտիվորեն ներգրավել Բելառուսի իշխանություններին: Հնարավոր կլինի սերտացմել շփումները տեխնիկական մակարդակով պաշտոնատար անձանց միջևն և վերսկսել հանդիպումները քարծր մակարդակով, օրինակ՝ Ռեգիոնալ տնօրենների եռյակի («տրոյկա») շրջանակներում: Կողիտարկվի Բելառուսի քաղաքացիների համար ուղևորությունների հեշտացման խնդիրը՝ ԵՄ-ի աջակցության ծրագրերի միջոցով ժողովրդների միջև շփումներին օժանդակելուն զուգահեռ:

Հանձնաժողովը նաև առաջարկում է Բելառուսին՝ ԵՄ-ի աջակցությունը խորացնել քաղաքացիական հասարակության ավելի մեծ ուշադրություն դարձնելու առումով: Ավելի շատ բան կարելի է անել խորհրդի 1997 թ. Եզրակացության մեջ նշված ոլորտներում, հատկապես քաղա-

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ★ ★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

քացիական հասարակությանը, ժողովրդավարացմանը, անկախ լրատվածիցողներին, չեռնորդյան աղետից տուժած տարածքներում որոշ խնդիրների լուծմանը, մարդասիրական աջակցությանը, ինչպես նաև ռեգիոնալ համագործակցության օժանդակելու առումներով:

Բելառուսն արդեն իրավասու և մասնակցելու Հարևանության ծրագրերից երեքին (Բալթիկ ծովի ծրագիր, Լատվիա-Լիտվա-Բելառուս, Լեհաստան-Ուկրաինա-Բելառուս): Բելառուսն իրավասու կիմի նաև Եվրոպական հարևանության նոր գործիքին (ԵՀԳ կամ ENI) մասնակցելու համար:

Լիբիա

Հանձնաժողովի 2003 թ. մարտի Ուղերձում նշվում է, որ ԵՄ-ը պետք է հնարավորություններ փնտրի Լիբիան ընդգրկելու հարևանության քաղաքականության մեջ: ԵՄ-ն ներկայումս որևէ պայմանագրային հարաբերություններ Լիբիայի հետ չունի⁸: 1999 թ. ապրիլին, ՄԱԿ-ի սանկցիաների կատեցումից հետո, Լիբիան դիտորդի կարգավիճակ ձեռք բերեց Բարսելոնի գործընթացում և հրավեր ստացավ՝ դառնալու լիարժեք անդամ այն ժամանակ, երբ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի սանկցիաները վերջնականապես հանված կլինեն, և երբ Լիբիան ամբողջությամբ ընդունած կլինի Բարսելոնի «ակի»-ները («acquis»):

Վերջերս Լիբիան հայտարարել է, որ պատրաստ է գնալու Բարսելոնի գործընթացի լիարժեք անդամության: Այս դրական քայլը Լիբիայի կողմից պաշտոնական հաստատման և Բարսելոնի «ակի»-ների ընդունմանն ուղղված գործողությունների կարիք ունի: Բարսելոնի գործընթացին լիարժեք անդամության ուղղությամբ առաջընթացը հնարավոր չի լինի ուսումնասիրությունների փուլից ավելի հեռուն տանել, քանի դեռ չեն լուծվել ԵՄ-ի անդամ պետությունների հետ երկկողմ հարաբերություններում առկա խնդիրները:

Բարսելոնի գործընթացին լիարժեք անդամությունն առաջին քայլն է ԵՄ-ի հետ նոր հարաբերությունների հաստատման ուղղությամբ, որոնք կներառեն Ընկերակցության համաձայնագրի բանակցումը: Երբ դա կապահովվի, և երբ ԵՄ-ի հետ կլինեն պայմանագրային հարաբերություններ, մասնակցությունը ԵՀԳ-ին թույլ կտա ավելի սերտացնել ԵՄ-ի հարաբերությունները Լիբիայի հետ այնպես, ինչպես դա Բարսելոնի գործընթացում արվում է բոլոր պետությունների համար:

⁸ Խորհրդում ներկայում քննարկվում է ԵՄ-ի և Լիբիայի միջև Զենորսության վերաբերյալ համաձայնագրի բանակցման մանդատի հարցը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ

Նվիրվածություն ընդհանուր արժեքներին

Միությունը հիմնված է այնպիսի արժեքների վրա, ինչպիսիք են՝ հարգանքը նարդկային արժանապատվության, ազատության, ժողովրդավարության, հավասարության, իրավունքի գերիշխանության և նարդու իրավունքների նկատմամբ: Դրանք Անդամ պետությունների համար ընդհանուր արժեքներ են՝ բազմակարծության, հանրութողականության, արդարության, համերաշխության և խտրականության բացառմամբ բնութագրվող հասարակարգում: Միության նպատակն է՝ ամրապնդել խաղաղությունը, իր արժեքները և իր ժողովուրդների բարեկեցությունը: Աշխարհի հետ հարաբերություններում Միությունը ձգտում է պահպանել և տարածել այդ արժեքները:

Միության հարևանները հաստատել են իրենց հավատարմությունը մարդու հիմնարար իրավունքներին և ազատություններին՝ միանալով մի շարք բազմակողմ համաձայնագրերի, ինչպես նաև ԵՄ-ի հետ կնքելով երկկողմ համաձայնագրեր: ԵՄ-ի բոլոր հարևանները ստորագրել են մարդու իրավունքների ոլորտում ՄԱԿ-ի կոնվենցիաները: Նրանցից մի քանիսը Եվրոպայի խորհրդի⁹ և ԵԱՀԿ-ի անդամներ են, վավերացրել են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան և հանձնառություն ստանձնել՝ հետևելու համապատասխան կոնվենցիաներին և ժողովրդավարության ու մարդու իրավունքների ոլորտում բարձր չափանիշներ սահմանող մարմինների աշխատանքին, ինչպես նաև՝ ներդնելու լուրջ և իրավաբանորեն պարտադիր մեխանիզմներ, որոնք կապահովեն մարդու իրավունքների ոլորտում իրենց ստանձնած պարտավորությունների կատարումն իրենց հիմքումից: Բարսելոնի հռչակագիրը ստորագրող պետությունները հայտարարել են, ի մասնավորի, որ առաջնորդվելու են Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը և Մարդու իրավունքների համընդիհանուր հռչակագրին համապատասխան գործելու սկզբունքներով, իրենց քաղաքական համակարգերում ամրապնդելու են իրավունքի գերիշխանությունը, ժողովրդավարությունը, հարգանքը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ և երաշխավորելու են այդ իրավունքների և ազատությունների փաստացի իրավաչափ իրականացումը:

⁹ Մոլդովա, Ռուսաստան և Ուկրաինա:

★ ★ ★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գործընկեր պետությունները հանձնառություն են ստանձնել՝ պահպանելու աշխատանքի ոլորտում հիմնարար չափանիշները և նպաստելու սոցիալական հիմնարար իրավունքների իրականացմանը՝ որպես Աշխատանքի միջազգային կազմակերպության համապատասխան կոնվենցիաների մասնակիցներ: Բացի այդ, նրանք վճռական են՝ ապահովելու կայուն զարգացում, որը սահմանվել է Յոհաննեսբուրգի համաշխարհային գագարնաժողովում:

Եվրոպական հարևանության քաղաքականությամբ փորձ է արվում՝ ամրապնդելու ընդհանուր արժեքներով առաջնորդվելու հանձնառությունը: Դարևան պետությունների ստանձնած հանձնառությունների կատարման աստիճանը պրակտիկայում տարբերվում է, և անելիքներ շատ կան: Այդ հանձնառությունների արդյունավետ կատարումը գործընկերների հետ ԵՄ-ի հարաբերությունների կարևոր տարրերից է:

ԵՅՔ-ի միջոցով յուրաքանչյուր գործընկերոց հետ կապերը զարգանելու՝ ԵՄ-ի հավակնությունների մակարդակը որոշելիս հաշվի կառնվի, թե կոնկրետ գործընկերն իրականում որքանով է կիսում ընդհանուր արժեքները: Միջոցառումների ծրագրերը պարունակելու են մի շարք առաջնայնություններ, որոնց նպատակն է ամրապնդել հավատարմությունն այդ արժեքներին: Դրանցից հարկ է նշել ժողովողավարության և իրավունքի գերիշխանության ամրապնդումը, դատական համակարգի բարեփոխումները և պայքարը կոռուպցիայի ու կազմակերպված հանցավորության դեմ, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, ներառյալ լրատվամիջոցների և արտահայտվելու ազատության, փոքրամասնությունների և երեխաների իրավունքների նկատմամբ հարգանքը, գենդերային հավասարությունը, արհեստակցական միությունների իրավունքները և աշխատանքի ոլորտում այլ սկզբունքային չափանիշները, պայքարը խոշտանգումների դեմ և դաժան ու աննարդկային վերաբերմունքի կանխարգելումը, օժանդակությունը քաղաքացիական հասարակության կայացմանը և համագործակցությունը Միջազգային քրեական դատարանի հետ: Փորձ կարվի հանձնառություններ ստանալու նաև ԵՄ-ի արտաքին գործունեության որոշ կարևոր խնդիրների շուրջ, ինչպիսիք են, մասնավորապես, պայքարն ահարեկչության և զանգվածային ոչնչացման գենքների տարածման դեմ, ինչպես նաև միջազգային իրավունքով առաջնորդվելու սկզբունքը և հակամարտությունների կարգավորմանը հասնելու ջանքերը:

**Քաղաքական երկխոսության արդյունավետության
բարձրացումը**

ԵՇՔ-Ի միջոցով կողմերը կսերտացնեն և ավելի արդյունավետ կղարձնեն իրենց քաղաքական երկխոսությունը։ Դա ներառում է արտաքին և անվտանգության քաղաքականության հիմնախնդիրներ, ներառյալ ռեզֆինանս և միջազգային հիմնախնդիրներ, հակամարտությունների կանխարգելում և ճգնաժամների կառավարում, ինչպես նաև անվտանգության ընդհանուր սպառնալիքներ (օրինակ, ահաբեկչությունը և դրա խորքային պատճառները, զանգվածային ոչնչացման գենքերի տարածումը և գենքի ապօրինի արտահանումը):

Յուրաքանչյուր պետության հետ Երկխոսությունը սերտացնելու ոլորտները կնախանշվեն Միջոցառումների ծրագրերում: ԵՄ-ը և գործնկեր պետությունները պետք է նաև միասին աշխատեն արդյունավետ բազմակողմանիության («մոլուխատերալիզմ») ուղղությամբ, որպեսզի կատարելագործվի գլոբալ կառավարումը, համակարգումն անվտանգության սպառնալիքների դեմ պայքարում, և որպեսզի լուծվեն դրանց առնչվող զարգացման հիմնախնդիրները: Քաղաքական Երկխոսության համար սահմանված ֆորմատների շրջանակներում համագործակցության բարելավման, ինչպես նաև CFSF-ի և ESDP-ի գործնրացմներին, հակամարտությունների կարգավիրմանը, ճգնաժամերի կառավարմանը, տեղեկատվության փոխանակմանը, համատեղ ուսուցմանը, վարժություններին և ճգնաժամերի կառավարման ոլորտում ԵՄ-ի կողմից կատարվող աշխատանքներին գործնկեր պետությունների հնարավոր ներգրավման փորձեր իրականացնելը: Կարևոր առաջնայնություն կլինի նաև հարևանության ռեգիոնում անվտանգության և կյալունության համար ԵՄ-ի և գործնրացմների համատեղ պատասխանատվության հետազարգացումը:

Տնտեսական և սոցիալական զարգացման քաղաքականությունը

**ԵՇՔ-Ի ՀՐԴԱՆԱԿԱՆԵՐՈՒՄ ԱԽԱՉԱՐԱԿՎՈՂ ՄՈՏԵցումը Կարևոր ՄՈՏԵ-
ՍԱԿԱՆ ԱՊԳԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒնի, քանզի նախատեսում է նախապատվելի
առևտի հարաբերությունների սերտացում և ֆինանսական ու տեխնի-
կական աջակցության ավելացում։ Բացի այդ, ԵՇՔ-Ը հարևան պետութ-**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

յուններին հնարավորություն է տալիս մասնակից դաշնալու ԵՄ-ի ներքին շուկային՝ օրենսդրության և կանոնակարգման դաշտի ներդաշնակեցման, ԵՄ-ի մի շարք ծրագրերի մասնակցության և ԵՄ-ի հետ փոխկապակցվածության և ֆիզիկական կապերի բարելավման միջոցով:

Ակնկալվում է, որ այս գործընթացի տնտեսական օգուտները զգալի կլիմեն՝ ունենալով և ուղղակի, և անուղղակի դրսնորումներ։ Տնտեսական օգուտների ուղղակի դրսնորում կլիմի այն, որ առևտրի սակագնային և ոչ սակագնային խոչընորտների նվազեցման արդյունքում կրարձրանա արդյունավետությունը և, շուկայի ինտեգրման աճի շնորհիվ, բարեկեցության մակարդակը։ Այնուղղակի օգուտները, հատկանի գործընկեր պետությունների համար, ավելի մեծ են։ Հարևան պետություններին մոտեցնելով ԵՄ-ի տնտեսության մոդելին, չնայած որ դա արվելու է միջազգային լավագույն պրակտիկայի ընդունման ժամապարհով, ԵՀՔ-ն և, մասնավորապես, ներքին շուկայի նախատեսվող ընդլայնումը կրարելավեն գործընկեր պետությունների ներդրումային միջավայրը։ Դրա շնորհիվ մասնավոր հատվածով պայմանավորվող աճի համար ավելի բափանցիկ, կայուն և նպաստավոր միջավայր կծնավորվի։ Ակնկալվում է դրական ազդեցություն օտարերկրյա ուղղակի ներդրումներից ստացվող հոսքերի վրա՝ պայմանավորված քաղաքականության դաշտի ավելի նպաստավոր դաշնալով, առևտրի և գործառնությունների ծախքերի նվազեցմամբ, աշխատուժի համեմատական ծախսերի գրավչությամբ և ռիսկի կրծատմամբ։

ԵՀՔ-ն ունի ներուժ՝ բարելավելու ԵՄ-ի հարևանության տնտեսական և սոցիալական պայմանները։ Այնուհանդերձ, նշված օգուտները փաստացի ստանալու համար պահանջվում է համաձայնեցված միջոցառումների արդյունավետ իրագործում և, դրանց գուգահետո, համապատասխան քաղաքականություններ։ ԵՄ-ի հետ տնտեսական ինտեգրումնան սերտացումը, հատկապես կապիտալի շարժ ազատականացման առումով, կարող է կոնկրետ իրավիճակներում նպաստել մակրոտնտեսական և ֆինանսական անկայունությանը։ ԵՀՔ-ի իրագործման քայլերը, հետևաբար, պետք է պատշաճ հերթականությամբ կազմակերպել, համապատասխաննեցնել յուրաքանչյուր պետության իրավիճակային առանձնահատկություններին և ուղեկցել մակրոտնտեսական, սոցիալական և կառուցվածքային արդյունավետ քաղաքականությամբ։

Թե որքանով ԵՀՔ-ն կհամարվի օգտակար, կախված կլիմի կենսամակարդակի վրա ԵՀՔ-ի ազդեցությունից։ Մասնակցությունը ԵՀՔ ծրագրում պետք է ուղեկցվի աղքատությամ և անհավասարության

հաղթահարման ակտիվ քաղաքականությամբ:

Միջոցառումների ծրագրերի տնտեսական և սոցիալական բաղադրիչը պետք է համահունչ լինի գործընկեր պետությունների սեփական ռազմավարություններին: Անհրաժեշտ է սերտացնել երկխոսությունը՝ համապատասխան ենթահանձնաժողովների և տնտեսական երկխոսության միջոցով: Կարևոր կլիմի նաև ապահովել համապատասխան համակարգում Միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ: Դրանք կարող են լրաց օգուտ տալ թե՝ քաղաքականության վերաբերյալ խորհուրդներով, թե՝ ֆինանսավորմամբ:

Սոցիալական ոլորտում երկխոսության և համագործակցության սերտացումն իր հետ բերելու է որոշակի սոցիալ-տնտեսական զարգացում, գրաղվաճություն, ինչպես նաև սոցիալական քաղաքականության և կառուցվածքային բարեփոխումներ: ԵՄ-ը խրախուսելու է գործընկեր կառավարությունների ջանքերը՝ ուղղված աղքատության կրծատմանը, աշխատատեղերի ստեղծմանը, աշխատանքի բնագավառում հիմնարար չափանիշների ներդրմանը և սոցիալական երկխոսությանը, ռեգիոնների միջև տարբերությունների նվազեցմանը, աշխատանքային պայմանների բարելավմանը, սոցիալական աջակցության արդյունավետության բարձրացմանը և բարեկեցության ազգային համակարգերի բարեփոխմանը: Գաղափարն այն է, որ պետք է ծավալվի երկխոսություն՝ գրաղվաճության և սոցիալական քաղաքականության վերաբերյալ՝ նպատակ հետապնդելով վերլուծել և գնահատել իրավիճակը, բացահայտել հիմնական մարտահրավերները և նպաստել քաղաքականության շրջանակներում որոշակի արձագանքի ձևավորմանը:

Աշխատողների տեղաշարժին վերաբերող հարցերը, հատկապես աշխատանքային միգրանտների նկատմամբ հավասար վերաբերմունքի կամ ապրուստի և աշխատանքի պայմանների մասով, ինչպես նաև սոցիալական անվտանգության համակարգումը կշարունակեն ուշադրության կենտրոնում մնալ ընկերակցության և համագործակցության համաձայնագրերի շրջանակներում:

Առևտուրը և ներքին շուկան

Միջոցառումների ծրագրերով նախատեսվելու են որոշակի եղանակներ և միջոցներ՝ ապահովելու, որպեսզի ԵՄ-ը և վերջինիս գործընկերները լիարժեքորեն օգտվեն առկա Գործընկերության և Ընկերակցության (համագործակցության) համաձայնագրերում առկա առևտուրի վերաբերյալ դրույթներից: Դավուր պատշաճի հաշվի կառնվեն նաև ռեգիոնալ մա-

★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կարդակով գոյություն ունեցող նախաձեռնությունները:

Օրենսդրության և կանոնակարգման դաշտի ներդաշնակեցման փորձեր կարվեն փոխադարձաբար համաձայնեցված առաջնայնությունների հիման վրա՝ առևտիրի խթանման և տնտեսական ինտեգրման առումներով ուշադրություն դարձնելով «ակի»-ների ամենակարևոր բաղադրիչներին, հաշվի առնելով կոնկրետ գործընկեր պետության տնտեսության կառուցվածքը և ԵՄ-ի օրենսդրության հետ ներդաշնակեցման ընթացիկ մակարդակը: Գործընկերության և Ընկերակցության (համագործակցության) համաձայնագրերը պարունակում են դրույթներ տարբեր ոլորտներում օրենսդրության ներդաշնակեցման վերաբերյալ:

ԵՅՔ-ՈՎ նախատեսված է նաև, որ բացվելու են մեծ թվով շուկաներ Արևոտի համաշխարհային կազմակերպության սկզբունքներին համապատասխան: Բարեւելոնի գործընթացի համատեքստում համաձայնեցվել է ապահովագույն ազատ առևտորի տարածքը, և սկզբել է ասիմետրիկ ազատականացում: ԵՅՔ-Ծ կապահովի առևտորի ազատականացումը և ռեգիոնալ ինտեգրումը «Եվրոմեդ» գործընկերությանը զուգահեռ խորացնելու ուղիներ և միջոցներ: Ինչ վերաբերում է արևելյան հարևաններին, ապա շարունակում է առաջնահերթ մնալ Գործընկերության և համագործակցության համաձայնագրի (ԳՀՀ)` առևտորի վերաբերյալ դրույթների առավել լիարժեք կատարումը, անդամակցությունն Արևոտի համաշխարհային կազմակերպությանը (Ուկրաինայի պարագայում), կամ ԱՇԿ-ի անդամակցության համաձայնագրի լիարժեք կատարումը (Մոլդովայի պարագայում), ինչպես նաև տնտեսական բարեփոխումների շարունակումը: Այնուհետև կղիտարկվի առևտորի և տնտեսական հարաբերությունների ինտեգրումը խորացնելու հարցը, ինչպես նախատեսված է ԳՀՀ-Աերոյ:

Միջոցառումների ծրագրերով կմախստեսվեն կոնկրետ քայլեր, դրոններով կտան լիարժեքորեն օգտագործել այդ ծրագրերով նախատեսված հնարավորությունները: Այդ քայլերը կախված կլինեն յուրաքանչյուր գործընկերոց կարիքներից, կարողություններից և տնտեսական քաղաքականության առաջնայնություններից: Ստորև թնարկվող միջոցառումները կներդրվեն աստիճանաբար՝ հաշվի առնելով յուրաքանչյուր գործընկեր պետության առանձնահատկությունները:

Ինչ վերաբերում է ապրանքներին, քայլեր պետք է կատարվեն վարչական համագործակցության բարելավման և առևտրի ոչ սակագնային արգելվեների աստիճանական վերացման, ինչպես նաև համապատասխան ենթակառության պահպանի գործազնական ուղղությանը։ Կողունաբեր-

* * *
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՌԱԴԱՐԵՎՈՒԹՅՈՒՆ
ՌԱՋԱՎԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒԴՈՒ

րական ապրանքների շարժին կարելի է նպաստել՝ զուգամիտվելով Միության օրենքներին և կանոնակարգման կառուցվածքին: Դրան կարող է հավելվել Համապատասխանության գնահատման և արդյունաբերական ապրանքների ընդունանա մասին համաձայնագրերի («ՀԳԱԱՀ» կամ «ACAA») կնքումը Համայնքի և առանձին գործընկերների միջև՝ հիմք ունենալով հարևան միջերկրածովյան պետությունների նկատմամբ ընթացիկ նախաձեռնության փորձը: Օրենսդրության ներդաշնակեցումը մաքսային ոլորտում՝ կարողությունների ստեղծմանը և արդիականացմանը զուգահեռ, ներառյալ համակարգչայնացումը, նույնպես կնպաստեն առևտորի հեշտացմանը: Միջերկրածովյան գործընկերների դեպքում այդ միջոցառումները համահունչ են Պալերմոյի առաջարկություններին: Միջոցառումների ծրագրերով նախատեսվելու են նաև մաքսային ոլորտում խարդախության դեմ պայքարի և ռիսկի վրա հիմնված մաքսային հսկողության ներդրման, ինչպես նաև ապրանքների անվտանգության և ապահովության երաշխավորման միջոցառումներ:

Ինչ վերաբերում է գյուղատնտեսական ապրանքներին, ապա սանիտարական և ֆիտոսանիտարական հսկողության ոլորտում ԵՄ-ի չափանիշների ուղղությամբ զուգամիտումն էապես կնպաստի գործընկեր պետությունների և ԵՄ-ի միջև փոխադարձ առևտորի զարգացմանը: Առաջնահերթ խնդիրների շարքում հարկ է հիշատակել տեղեկատվության փոխանակումը և սերտ համագործակցությունը կենդանական ու բուսական ծագում ունեցող հիվանդությունների հսկողությամբ գրադարձող միջազգային կազմակերպությունների շրջանակներում, ինչպես նաև սամիտարակիդներիկ պայմանների բարելավումը սպառողների պաշտպանության նպատակով: Պետությունների մեջ մասին անհրաժեշտ կլինի նաև բարելավել վարչական կարողությունները՝ ապահովելու սննդամբերի անվտանգության որոշակի մակարդակ, որպեսզի դրանք կարողանան նուտք գործել ԵՄ շուկաներ:

Գործընկեր պետությունների հետ և դրանց միջև ծառայությունների ազատ առևտորի նպատակն իրագործելու համար կպահանջվի օրենսդրության հետագա ներդաշնակեցում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ ընկերությունների վերաբերյալ օրենսդրությունը, հաշվապահական հաշվառման և առւղիտի կանոնները: Ֆինանսական ծառայությունների ոլորտում առանձնահատուկ դեր կարող է ունենալ նորմատիվային կանոնակարգման համապարփակ դաշտի առկայությունը՝ վերահսկողություն իրականացնող արդյունավետ և անկախ մարմինների գոյության հետ մեկտեղ: Բիզնեսի ծնավորման և ներդր-

ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ

որմաների խթանման տեսակետից շատ կարևոր կլինի, որպեսզի այդ պետություններն ընկերություններին հնարավորություններ ընձեռեն աշխատելու հավասարության պայմաններում: Վերոհիշյալ միջոցառումների հետ մեկտեղ, Եվրոպական ֆինանսական շուկաների հասանելիությունը պետք է որ ժամանակի ընթացքում բարձրացնի գործընկերությունների ֆինանսական շուկաների կայունությունը և օգնի՝ մեծացնելու դրանց ընդհանուր տնտեսական արդյունավետությունը: Կապիտալի տեղաշարժի հետագա ազատականացումը նոր հնարավորություններ կը նձեռի:

Ներդրումային միջավայրը բարելավելու նպատակը, ներառյալ քափանցիկության, կանխատեսելիության ապահովումը և այդ պետությունների կանոնակարգման դաշտի պարզեցումը, կնպաստեն փոխսադարձ ներդրումների հեշտացմանը և ավելացմանը: Ներդրողների նկատմամբ վերաբերունքի մեջ խորականության բացառումն այս գործընթացի կարևոր նախապայմանն է: Ներդրումների հետ կապված բոլոր խնդիրների վերաբերյալ կանոնավոր երկխոսության և շահագոգիո մասնակիցների հետ խորհրդափոխանակության ակտիվացման նպատակ հետապնդող միջոցառումները կարևոր դեր կկատարեն՝ բարելավելու երկկողմ ներդրումային միջավայրը և կրօնատելու բիզնեսի զարգացման վարչական խոչընդոտները: Դատական համակարգի աշխատանքի արդյունավետության բարձրացումը նույնպես կնպաստի ներդրումային միջավայրի բարելավմանը:

Առաջի հետ կապված կարևոր ոլորտներում կանոնակարգման դաշտի ներդաշնակեցումը և գուգամիտումը տնտեսապես օգտակար կլինի թե՛ գործընկեր պետություններում բարեփոխումների, թե՛ ներդրումային միջավայրի բարելավման առօւմներով: Մասնավորապես, մտավոր սեփականության և արդյունաբերական գույքային իրավունքների արդյունավետ պաշտպանության մակարդակի բարելավումը, ինչպես նաև այդ իրավունքների արդյունավետ կատարումը, կանոնակարգման դաշտի գուգամիտմանը և պետական գնումների ոլորտում շուկայի հասանելիության բարձրացմանը զուգահեռ, հավանաբար լուրջ ազդեցություն կրողնեն տնտեսական զարգացման և ներդրումների մակարդակի վրա: Կարելի է քայլեր ծեռնարկել՝ բարձրացնելու ներդաշնակեցման աստիճանը և վիճակագրական համակարգերի կայունությունը:

Բացի այդ, գործընկերություններին պետք է խրախուսել, որպեսզի նրանք մրցակցության դաշտում ապահովեն կարգապահություն՝ ստեղծելով մողակցության ոլորտի համար պատասխանատու անկախ մարմին:

* * * * *

ՀԱՅՉԱԱԺՈՂՈՎԻ ՌԴԴՐՉ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒԴՈՒ

* * * * *

Աեր՝ օժտված համապատասխան իրավունքներով և ռեսուրսներով, ինչպես նաև պատշաճ վերապատրաստմամբ։ Ի վերջո, ներքին շուկայի հետ զուգամիտումը խորացնելու նպատակով գործընկերներին անհրաժեշտ կլինեն համադրելի մոտեցումներ և սահմանումներ, ինչպես նաև հակատրեստային օրենսդրության և պետական օգնության մասին կանոնակարգերի ներդաշնակեցում։ Այդ քայլերը օգտակար կլինեն ներպետական շուկաների համար և կինշտացնեն առևտուրը։

Յարկային համակարգի արդիականացման և քափանցիկության բարձրացման միջոցառումները, ներառյալ զուգամիտումը Եվրոպական միության տարածքում բիզնեսի հարկման վարքականոնի ուղղությամբ, ԱՀԿ-ի պահանջներին համապատասխան, ինչպես նաև երկակի հարկումից խուսափելու նպատակով կոնվենցիաների ընդունմամբ, հնարավոր կլինի բարելավել բիզնեսի միջավայրը։ Յարկային վարչարարության կատարելագործումը և հարկային մարմինների միջև համագործակցության բարելավումը նույնպես կնպաստեն շուկայական տնտեսությունների սահուն աշխատանքին։

Արդարադատություն և ներքին գործեր

ԵՅԲ-ն նպատակ է հետապնդում՝ խուսափել ընդլայնված Միության սահմանների մոտ նոր բաժանիչ գծերի առաջացումից։ Պետական կառույցների արդյունավետ գործառույթի բարելավումը, նպատակ ունենալով պահովել վարչական արդյունավետության բարձր մակարդակ, բխում է միաժամանակ և ԵՄ-ի, և գործընկեր պետությունների շահերից։ Գործընկերների առջև գնալով ավելի մեծ մարտահրավերներ են ծառանում Արդարադատության և Ներքին գործերի ոլորտներում, ներառյալ երրորդ պետություններից եկող միգրացիոն ճնշումը, մարդկանց թրաֆիկին գր և ահարենքությունը։ Ընդհանուր շահերից է բխում այս խնդիրների ուղղությամբ համատեղ աշխատանքը։ Միջոցառումների ծրագրերից յուրաքանչյուրում առաջնայնությունների սահմանումը կախված կլինի կրնկեստ այն խնդիրներից, որոնք առավել կարևոր են կոնկրետ գործընկերոց և ԵՄ-ի համար։

Յավանական է, որ Միջոցառումների ծրագրերի մեջ մասում, որպես առաջնայնություն, կահմանվի սահմանների կառավարումը, քանի որ միայն միասին աշխատելու միջոցով կարող են ԵՄ-ը և Վերջինիս հարևաններն առավել արդյունավետորեն կառավարել ընդհանուր սահմանները՝ հեշտացնելու օրինական տեղաշարժը։ Յետևարար, Միջոցա-

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ★ ★ ՔԱՂՓԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ

ռումների ծրագրերը պետք է ներառն որոշակի միջոցառումներ՝ ուղղված սահմանների կառավարման արդյունավետության բարձրացմանը, ինչպիսիք են, օրինակ, արենստավարժ, ոչ ռազմականացված սահմանապահ գործերի ստեղծումը և ուսուցանումը, ինչպես նաև ճանապարհորդական փաստաթղթերն ավելի արդյունավետ դարձնելուն ուղղված գործողությունները։ Նպատակը պետք է լինի մարդկանց տեղաշարժը հեշտացնելը՝ միևնույն ժամանակ ապահովելով անվտանգության բարձր մակարդակ, կամ բարելավելով անվտանգության մակարդակը։

Ավելին, սահմանային անցման տեղական ռեժիմի ստեղծման կանոնակարգերի վերաբերյալ Հանձնաժողովի առաջարկը ներկայունս քննարկվում է Խորհրդի կողմից և ընդունվելու դեպքում սահմանները տարածըների բնակչությանը հնարավորություն կրնձների՝ ավանդական կապեր պահպանելուն զուգահեռ խուսափել չափազանց ծանր վարչական խոչընդոտներ ստեղծնելուց։ Եվրոպական միությունը կարող է նաև անդրադառնալ վիզաների հեշտացման որոշակի հնարավորություններին։ Մի կողմից՝ վիզաների հեշտացմանը մյուս կողմը պետք է համապատասխան կերպով արձագանքի։

Բացի այդ, Միջոցառումների ծրագրերի առաջնայնությունները կարող են ներառել համագործակցություն միգրացիայի, ապաստանի, վիզայի քաղաքականության, ինչպես նաև ահաբեկչության, կազմակերպված հանցավորության, թնրադեղերի և գենքի ապօրինի տեղափոխման, փողերի լվացման և ֆինանսական ու տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի ոլորտներում։ Միջոցառումների ծրագրերով կնախատեսվեն կոնկրետ քայլեր՝ ուղղված դատական համակարգի ուժեղացմանը և ոստիկանության ու դատական մարմինների միջև համագործակցության սերտացմանը, ներառյալ ընտանեկան օրենսդրության ոլորտում, ինչպես նաև համագործակցությունը Եվրոպական Միության այնպիսի մարմինների հետ, ինչպիսիք են «ԵՎՐՈՊՈԼ»-ը և «ԵՎՐՈ-ԶԱՄՏ»-ը։ Անհրաժեշտ կլինի քավերացնել համապատասխան միջազգային կոնվենցիաները։ Միջոցառումների ծրագրերում պետք է նաև արտացոլված լինի Միության հետաքրքրությունը՝ վերադարձի («ռեադ-միսիա») համաձայնագրեր կնքելու գործընկեր պետությունների հետ։

Կապը հարևանության հետ ԵՄԵՐԳԵՏԻԿԱ

Հարևան պետությունների հետ էներգետիկայի ոլորտում մեր ռազ-

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՌԴԴՐՉ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԱ

մավարական գործընկերության սերտացումը Եվրոպական հարևանության քաղաքականության կարևոր բաղկացուցիչներից է: Դա ներառում է Էներգակիրների անվտանգությունը, ինչպես նաև Էներգետիկայի անվտանգությունը և ապահովածությունը: Եվրոպական միությունը էներգակիրների (նավք և գազ) խոշորագույն ներմուծողն է աշխարհում և երկրորդը՝ սպառման ցուցանիշով: Եվրոպական միությունը շրջապատված է նավքի և բնական գազի՝ աշխարհի կարևորագույն պաշարներով (Ռուսաստան, Կասպից ծովի ավագան, Մերձավոր Արևելք և Յուսիսային Աֆրիկա): ԵՄ-ն գնալով ավելի մեծ կախվածություն կունենա ներմուծումից, որն առկա կանխատեսումների համաձայն ներկայիս 50%-ից 2003 թ. կհասնի 70%-ի: Հարևան պետությունները կարևոր դեր են խաղում ԵՄ-ի էներգետիկայի անվտանգ մատակարարման գործում: Շատ պետություններ փորձում են իրենց համար ավելի հասանելի դարձնել ԵՄ-ի էներգետիկայի շուկաները՝ կամ որպես ներկա կամ ապագա մատակարարներ (օրինակ, Ռուսաստան, Ալժիր, Եգիպտոս, Լիբիա), կամ որպես տարանցիկ պետություններ (Ուկրաինա, Բելառուս, Մարոկկո, Թումիս): Հարավային Կովկասի պետությունները նույնպես կարևոր են այս առջնությամբ՝ հաշվի առնելով Կասպից ռեզիլիոնից և Կենտրոնական Ասիայից դեպի ԵՄ էներգակիրների մատակարարման նոր հնարավորությունները: ԵՄ-ի և Վերջինիս գործընկերների միջև էներգետիկ ցանցի կապերի բարելավումը, ինչպես նաև իրավական և կանոնակարգման դաշտի մերձեցումը, հետևաբար, բխում են փոխադարձ շահերից: Ավելին, էներգետիկայի ոլորտում համագործակցության սերտացումը բիզնեսի հնարավորություններ է ընծեռում կողմերին, և կարող է նպաստել սոցիալ-տնտեսական զարգացմանը և շրջակա միջավայրի բարելավմանը:

Միջոցառումների ծրագրերը պարունակելու են կոնկրետ քայլեր՝ բարելավելու էներգետիկայի ոլորտում երկխոսությունը և համագործակցությունը, խթանելու էներգետիկայի ոլորտում քաղաքականությունների և իրավական ու կարգավորման դաշտի հետագա աստիճանական մերձեցումը: Դա ներառելու է քաղաքականություններ՝ ուղղված էներգետիկ արդյունավետության և էներգիայի խնայողությունների բարձրացման խթանմանը, ինչպես նաև վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործմանը և համագործակցությունը էներգիայի տեխնոլոգիաների, օրինակ, մաքուր ածուխի առնչությամբ: Անհրաժեշտ է ուսումնասիրել, թե գործընկեր պետություններն ինչ հնարավորություններ ունեն՝ մասնակցելու «Էներգետիկայի խելացի ծրագրին» («Intelligent Energy Programme») և աստիճանաբար ծանոթանալու

★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ միության տարածքում գործող կանոնակարգման դաշտի պրակտիկայից և ճառացիներից:

Եներգետիկայի աճվտան և անխսափան մատակարարության ապահովելու, ինչպես եներգիայի ներքին շուկայում նաև գործընկեր պետություններին ներգրավելու տեսակետից անհրաժեշտ կլինի կատարելագործել ցանցերը և փոխկապակցվածությունը: Միջոցառումների ծրագրերի հիմքում դրված կլինեն առկա երկվողմ կամ ռեզինալ նախաձեռնությունները, ինչպիսիք են, օրինակ, ԵՄ-Ռուսաստան Եներգետիկայի ոլորտում երկխոսությունը, ՏԱՄԻՍ-ի կողմից ֆինանսավորվող «Հնագեյթ» ծրագիրը՝ կապված Կասպից ծովի ավազանի հետ (նավթանուղերի և գազանուղերի համակարգեր), Եներգետիկայի ոլորտում համագործակցությունը Եվրո-Միջերկրածովյան գործընկերության շրջանակներում (հատկապես Եվրո-Մադրե էլեկտրականության շուկայի ստեղծումը, որին կարելի է հավելել գազի շուկան, և համաձայնեցված Եվրո-Միջերկրածովյան Եներգետիկ ցանցերը), Խորայելի և Պաղեստինի հնբնավարության միջև Եներգետիկայի ոլորտում համագործակցության սերտացումը, գազի ոլորտում համագործակցության սերտացումը Մաշ-րեկ ռեզինում (այդ ամենը՝ Եվրո-Միջերկրածովյան համատեքստում), ինչպես նաև Մոլդովայի դիտորդի կարգավիճակը «Հարավ-Արևելյան Եվրոպայի Եներգիայի ռեզինալ շուկա» ծրագրում:

Տրանսպորտ

Միության և վերջինիս հարևանների միջև առևտիք և զբոսաշրջության ծավալներն ավելացնելու համար պահանջվում են տրանսպորտի արդյունավետ, բազմաձև և կայուն համակարգեր: Գործընկեր պետությունները կկարողանան լիովին օգտվել ավելի սերտ հարաբերություններից և շուկայի հասանելիության բարելավումից միայն այն դեպքում, եթե դրանց տրանսպորտային սեկտորները կարողանան սպասարկել արդի բարդ տրանսպորտային հոսքերը:

Տրանսպորտի սեկտորի կառուցվածքում գործառնական փոփոխությունները (օրինակ՝ նավահանգիստների և օդային տրանսպորտի ծառայությունների մեջ մրցակցության ձևավորումը, կանոնակարգման ժամանակակից դաշտի ստեղծումը, ցամաքային ճանապարհներով բեռնափոխադրումների աշխատանքների արդյունավետության բարձրացումը, երկաթուղու համակարգերի փոխկապակցված գործառնությունը և այլն) կարող են լուրջ ազդեցություն ունենալ տրանսպորտի

* * * * *

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՌԱԴԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ
ՌԱՋՈՂԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԱ**

* * * * *

արդյունավետության վրա: Կարևոր խնդիր է նաև գործընկեր պետությունների հետ ավիացիոն հարաբերությունների սերտացումը՝ նպատակ հետապնդելով բացել շուկաները և համագործակցել անվտանգության ու ապահովության խնդիրների շուրջ: Միջոցառումների ծրագրերը պարունակելու են կոնկրետ դրույցներ այս խնդիրների վերաբերյալ:

Ճատ կարևոր է բարելավել տրանսպորտային ֆիզիկական ցանցերը, որոնք Միությունը կապում են հարևան պետությունների հետ: Դաշվի առնելով համապատասխան ծախսերը՝ կարևոր կլիմի այդ ցանցերի համար ներդրումային ծրագրերի մշակումը սերտորեն համակարգել: Առկա նախաձեռնությունները, ինչպիսիք են, օրինակ, Համաեվրոպական տրանսպորտային ցանցի գաղափարը, Համաեվրոպական տրանսպորտի վերաբերյալ տարրեր համաժողովներ, կամ Հանձնաժողովի 2003 թ. հունիսի առաջարկները Եվրո-Միջերկրածովյան տրանսպորտային ցանցի վերաբերյալ, լուրջ հիմք են կազմում ապագա աշխատանքի համար: ЕІВ-ի կողմից ծրագրի ֆինանսավորումը կարևոր կլիմի՝ հիմնականում Միջոցառումների ծրագրերում համաձայնեցված միջնաժամկետ միջոցառումների հիման վրա: Կոնկրետ կարիքները կվերլուծվեն յուրաքանչյուր դեպքի համար առանձին:

Միջոցառումների ծրագրերը կապրունակեն նաև կոնկրետ դրույթներ՝ կամխելու տրանսպորտային ցանցերի և ծառայությունների խոցելիությունն ահարեւէչական հարձակումներից: Ամենաշատ ուշադրություն կդարձվի օդային և ծովային տրանսպորտի անվտանգության բարձրացմանը:

Ծրջակա միջավայր

Ծրջակա միջավայրի աղտոտումը սահմաններ չի ճանաչում: Այս խնդիրը կարող է լավագույնս լուծվել միջազգային, ռեգիոնալ և ազգային գործողությունների համադրման ճանապարհով: Ծրջակա միջավայրի պաշտպանության բարելավումն օգուտներ կտա քաղաքացիներին և ձեռնարկություններին թե՛ Միության ներսում, թե՛ գործընկեր պետություններում: Այն կարող է նպաստել՝ խուսափելու սուր պաշարների, օրինակ՝ ջրի շուրջ ծագող հակամարտություններից: Ծրջակա միջավայրի կառավարումը բարելավելու օգտակարությունը պարզ է, սակայն պլանավորման և ֆինանսավորման մեջ անհրաժեշտ կլիմի հաշվի առնել այն խնդիրը, որ դա և պետական, և մասնավոր հատվածների համար կարճաժամկետ և միջնաժամկետ հատվածներում լուրջ

★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական ծախսեր կառաջազնի:

Միջօցառումների ծրագրերը կնպաստեն գործընկեր պետություններում շրջակա միջավայրի արդյունավետ կառավարմանը՝ կանխելու շրջակա միջավայրի վիճակի վատքարացումը և աղտոտումը, պաշտպանելու մարդկանց առողջությունը և ավելի ողջամիտ կերպով օգտագործելու բնական պաշարները։ Առաջնայնություններ կընտրվեն այնպիսի կարևոր ոլորտներում, ինչպիսիք են՝ ջրի որակը, թափոնների կառավարումը, որի աղոտումը և պայքարն անապատացնան դեմ։ Անհրաժեշտ կլինի խորացնել ռեգիոնալ համագործակցությունը գործընկեր պետությունների միջև և մասսանել միջազգային համաձայնագրերի վավերացմանը և կատարմանը։

Տեղեկատվական հասարակություն

Տեղեկատվության և հաղորդակցության տեխնոլոգիան առանձ-նահատուկ կարևորություն ունի ժամանակակից տնտեսության և հա-սարակության զարգացման տեսակետից: Յետևաբար, շատ կարևոր է գործընկերներին օժանդակել՝ Տեղեկատվական հասարակության ընծեռած օգուտները քաղելու հարցում՝ այդ կերպ խուսափելով տեխ-նոլոգիական անջրապետից: Հարավ-միջերկրածովյան մի շարք գործըն-կեր պետություններում Տեղեկատվական հասարակությունն արդեն իսկ ծնավորվում է, հատկապես այնտեղ, որտեղ քջային հեռախոսա-կապի շուկայի ազատականացումը յուրօք զարգացումներ է ապրել:

Գիտակցելով, որ քաղաքականության բարեփոխումների հաջողությունը կապված է կոնկրետ սեկտորներում կատարվող աշխատանքների հետ, Միջոցառումների ծրագրերը նպաստելու են քաղաքականության այնպիսի միջոցառումների իրականացմանը, ինչպիսին կանոնակարգման գործառույթի ինստիտուցիոնալ տարանջատումն է գործառնական գործառույթից՝ զուգահեռաբար նպաստելով կարգավորող անկախ մարմինների կայացմանը։ Քաղաքականության մեջ դրույթներ կնախատեսվեն՝ օժանդակելու առկա օպերատորների առևտրայնացմանը նպաստելու պատրաստականություն ունեցող կառավարություններին։ Սեկտորի բարեփոխումների համատեքստում այնպիսի քայլերը, ինչպիսիք են ֆիբսված հեռախոսակապի և կատարելագործված ծառայությունների, մասնավորապես՝ ինտերնետի շուկայի բացումը, ինչպես նաև GSM-ային լրացուցիչ լիցենզիաների տրամադրման համար մրցույթների անցկացմանը և արժեք հավելող ծառայությունների

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԴԵՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԴԵՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐԵՎԱՆ

ազատականացումը, կարևոր են Տեղեկատվական հասարակության գարգաման համար: Միջոցառումների ծրագրերով կնախատեսվեն որոշակի քայլեր՝ ուղղված բիզնեսի, պետական մարմինների և քաղաքացիների կողմից օգտագործվելիք նոր տեխնոլոգիաների և էլեկտրոնային հաղորդակցության ժառայությունների խթանմանը:

Գիտահետազոտական աշխատանքներ և նորադարձություն

RTD-ի 6-րդ շրջանակային ծրագրի խնդիրներից է Եվրոպական գիտահետազոտական տարածքի բացումը գործընկեր պետությունների համար, որով էլ կապայնանավորվի հարևան պետությունների գիտական համրության ինտեգրումը: Յարևան պետություններն արդեն մասնակցում են այնպիսի առաջնահերթ ոլորտների աշխատանքին, ինչպիսիք են՝ Կյանքի գիտությունները, Էներգետիկան, տրանսպորտը, շրջակա միջավայրը, IST-ն, սննդի անվտանգությունը կամ հասարակական խնդիրները գիտելիքահեն հասարակության մեջ, ինչպես նաև ռեգուլատոր մակարդակով այդ պետությունների կարիքներին և ներուժին ուղղված միջազգային համագործակցության կոնկրետ քայլերը:

Համայնքի RTD աշխատանքներին այդ պետությունների մասնակցությունն ակտիվացնելու և տնտեսական աճի ու սոցիալական բարեկեցության ապահովման գործում նրանց ազգային գիտահետազոտական համակարգերի դերը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ կլինի օժանդակություն ցուցաբերել կառուցվածքային և ինստիտուցիոնալ կարողությունների առեղջնան աշխատանքներին: Վերջիններս կնախատեսվեն և կիրազորվեն Միջոզառումների ծրագրերի շրջանակներում:

Կապը ժողովուրդների միջև. Ծրագրեր և կառույցներ

ԵՅՔԻ հիմնական նպատակների իրագործումն ապահովելու արդյունավետ միջոց է Միության և վերջինիս հարևան ժողովուրդների միջև կապերի ստեղծումը, միմյանց մշակույթի, պատմության, վերաբերմունքի և արժեքների փոխադարձ ընկալման բարելավումը և աղավաղված պատկերացումների վերացումը: Այսպիսով, պետական մարմինների և ձեռնարկությունների միջև շփումներից զատ, ԵՅՔ-ն սատարելու է Միության և վերջինիս հարևանության միջև մշակութային, կրթական և առավել ընդհանուր հասարակական կապերի սերտացմանը:

Մարդկային ռեսուրսների զարգացումը կարևոր նախապայման է

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

այնպիսի նպատակների հասնելու համար, ինչպիսիք են՝ մրցունակության բարձրացումը, սոցիալական ընդգրկումը և ակտիվ քաղաքացիական մասնակցությունը։ Գիտելիքահեն հասարակության բացակայության խնդիրը պետք է հրատապ կերպով լուծել, որպեսզի հաղթահարվեն զարգացման մարտահրավերները մի շարք գործընկեր պետություններում, հատկապես միջերկրածովյան տարածաշրջանում, ինչպես ընդգրվել է Արարական մարդկային զարգացման 2003 թ. գեկուցի եզրակացությունների մեջ։

ԵՐԵՒՎ նաև փորձ է արվում նպաստելու հանրային առողջապահության ոլորտում միջոցառումների իրականացմանը՝ բարելավելու բնակչության ընդհանուր առողջական վիճակը և լուծելու որոշակի խնդիրներ, որոնցից կարելի է հիշատակել, օրինակ, տարափոխիկ հիվանդությունների խնդիրը։

Եվրոպական հարևանության քաղաքականությամբ նախատեսվում է, որ փոխադարձ շահերի և առկա ռեսուրսների հիման վրա Համայնքի որոշ ծրագրեր աստիճանաբար բաց կղառնան։ Ուսումնասիրվելիք ոլորտների շարքում հարկ է նշել կրթությունը, վերապատրաստումը և երիտասարդության խնդիրները, գիտահետազոտական աշխատանքը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, մշակույթը և տեսալսողական ծրագրերը։ Անհրաժեշտ է լրացուցիչ կատարելագործել «YOUTH» («Երիտասարդություն») ծրագիրը, որն արդեն իսկ նպաստում է ժողովուրդների միջև կապերի սերտացմանը և երիտասարդության խնդիրների ոլորտում քաղաքացիական հասարակության դերակատարների միջև համագործակցությանը։ «Տեմպուս» և «Երազմուս մունիդուս» ծրագրերն ուսանողների և ուսուցիչների միջև կապերը սերտացնելու հնարավորություններ են ընձեռում։ Միջոցառումների ծրագրերով կնախատեսվեն այդ ծրագրերին գործընկերների մասնակցության կոնկրետ հնարավորություններ։

Չաշվի առնելով, որ անդամ պետությունների համար նախատեսված ծրագրերում մասնակցությունը կարող է պրակտիկ դժվարությունների առջև կանգնեցնել երրորդ պետություններին, հարկ է ուսումնասիրել հատկապես գործընկեր պետությունների կարիքների լուծմանն ուղղված նպատակային ծրագրերի ստեղծման հնարավորությունը։ Հանձնաժողովը, օրինակ, առաջարկել է ստեղծել «Տեմպուս պյուս» նպատակային ծրագիրը, որն ուղղված կլինի կրթության և վերապատրաստման ոլորտներում ԵՐԵՒՎ կազմի մեջ մտնող պետությունների կարիքների բավարարմանը:¹⁰ Ուսուցման համակարգերի բարեփոխում

ները և արդիականացումը գործընկեր պետությունների տնտեսական մրցութակության և քաղաքական կայունության պարտադիր նախապայմաններ են, և այս առումով «Տեմպուս պյուս» ծրագիրը կարող է կարևոր դեր կատարել:

Մի շարք գործընկերներ հետաքրքրություն են դրսնորել՝ մասնակցելու, թերևս որպես դիտողներ, համագործակցության կամ կանոնների մշակման նպատակով անցկացվող Համայնքի որոշ ժողովների: Միջոցառումների ծրագրերով կմախստեսվեն դրոշակի հնարավորություններ՝ հաշվի առնելով իրավական և վարչական իրավիճակը:

ՈԵԳԻՌՆԱԼ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ինչպես արդեն նշվեց, ԵՀՅ-ի կիրառությունը տարբերակվելու է ըստ տարբեր գործընկեր պետությունների: Այնուհանդերձ, կարևոր է նպաստել համագործակցության սերտացմանը թե ԵՄ-ի արտաքին սահմաններից անդին, թե՝ ԵՄ-ի հարևանների միջև, հատկապես այն հարևանների, որոնք աշխարհագրական դիրքով միմյանց մոտ են գտնվում: Այդ գործընթացում անհրաժեշտ է մտապահել, որ ԵՄ-ի տարբեր հարևանների մոտ կոնկրետ հանգամանքներ տարբերվում են, և որ տարբեր է նաև մեր հարաբերությունների պատմությունը:

Արևելքում և հարավում, ինչպես նաև այդ ռեգիոններում իրագործվող կոնկրետ ծրագրերի շրջանակներում ռեգիոնալ համագործակցությանը ԵՄ-ի օժանդակությունը ստացվելու է ԵՄ-ի առկա ծրագրերից («ՏԱՄԻՄ», «Սեղա», «Ֆարե») կամ դրանց հաջորդներից, ինչպես նաև Հարևանության ծրագրերից և, ապագայում, Եվրոպական հարևանության գործիքից:

ՈԵԳԻՌՆԱԼ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆը ԵՄ-ի արևելյան սահմանների մոտ

Արևելյան Եվրոպայում ռեգիոնալ համագործակցության սերտացումը կարող է լուրջ օգուտներ տալ: Անհրաժեշտ է խրախուսել փոխադարձ հետաքրքրության և ընդհանուր կամքի դրսնորման հիման վրա Ողուաստանի Դաշնության, որպես գործընկերոց, մասնակցությունը ռեգիոնալ համագործակցությանը:

Նախաձեռնությունները պետք է կենտրոնացնել ընդհանուր մտա-

¹⁰ Համայնքի կրթության և վերապատրաստման ծրագրերի նոր սերնդի վերաբերյալ ուղղեցն, 2006 թ. հետո, սես COM(2004) 156, վերջնական, 2004 թ. մարտի 9-ի դրությամբ:

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ★ ★ ՔԱՂՓԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ

հոգություն պատճառող խնդիրների լուծմանը, որի կապակցությամբ օգտակար կարող է լինել քազմակողմանի մոտեցումը: Ինչպես ցույց է տվել աշխարհագրական այլ իրավիճակներում արձանագրված փորձը (ներառյալ Հյուսիսային տարածաչափի փորձը), ռեգիոնալ ֆորումներու կարող են շատ դեպքերում լուրջ արժեք հավելել երկրում աշխատանքներին: Համագործակցության տեսակետից առաջնահերթ հանդիսացող ոլորտները ներառում են հետևյալը.

- Տնտեսության, բիզնեսի, գրադաժության և սոցիալական քաղաքականության, առևտուրի և ենթակառուցվածքի ուղղությամբ համագործակցության ամրապնդում, ներառյալ Եվրոպական և միջազգային չափանիշների ընդունում, ԱՀԿ-ի նորմների և կանոնների արդյունավետ ներդրում և օժանդակություն ՓՄՁ-ներին՝ խթանելու ռեգիոնի պետությունների կայուն սոցիալ-տնտեսական զարգացումը, ներառյալ աղքատության կրծատումը և պայքարը սոցիալական մեկուսացման դեմ: Եներգետիկայի և տրանսպորտի (ներառյալ սահմանի հատման) ոլորտներում ռեգիոնալ նշանակություն ունեցող ենթակառուցվածքի և անվտանգության համատեղ ծրագրերը նույնպես պետք է առաջնայնություն համարվեն:
- Շրջակա միջավայր, միջուկային անվտանգություն և բնական պաշարներ: Բնապահպանական խնդիրներից շատերը, որոնք իրենց բնույթով անդրսահմանային են, կարող են լուծվել ռեգիոնալ մակարդակով: Զրի և օդի աղտոտումը, ծախսված միջուկային վառելիքի կառավարումը, բնապահպանական ստանդարտների և օրենսդրության աստիճանական ներդաշնակեցումն ընդամենը մի քանիսն են այն ընտրված ոլորտներից, որոնցում կարճաժամկետ և միջնաժամկետ հատվածներում անհրաժեշտ է կենտրոնացնել ռեգիոնալ համագործակցությունը:
- Արդարադատությունը և Ներքին գործերը, մասնավորապես՝ ռեգիոնալ համագործակցությունը սահմանների կառավարման, միգրացիայի և ապաստանի, ինչպես նաև կազմակերպված հանցավորության, մարդկանց թրաֆիկինգի, անօրինական էնիգրացիայի, ահաբեկչության, փողերի լվացման և թնդադեղերի դեմ պայքարի ոլորտներում, և ոստիկանության ու դատական մարմինների համագործակցությունը: Ռեգիոնալ համագործակցությունը և ցանցային աշխատանքն այս խնդիրների ուղղությամբ կարող է կազմակերպվել, մասնա-

* * * * *
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՌԴՐՋՎԱ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՊԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԱ

Վորապես, «Մյոդերկյոպինգի գործընթացի» շրջանակներում ձեռք բերված փորձի վրա, որում ներգրավված են Բելառուսը, Սուլդովան և Ուկրաինան, իսկ ԵՄ-ի կողմից՝ Եստոնիան, Հունգարիան, Լատվիան, Լիտվան, Լեհաստանը, Ռումինիան, Սլովակիան և Ծվենիան:

- ժողովուրդների միջև հարաբերությունների խնդիրները, ներառյալ քաղաքացիական հասարակության զարգացումը, աշխատանքները զանգվածային լրատվամիջոցների և լրագրողների փոխանակման ոլորտներում, բարենպաստ կառավարման խթանումը և նարուրության վերաբերյալ նկատմամբ հարգանքը, մասնագետների, գիտնականների և երիտասարդների փոխանակումը, այցելությունների համակարգերը, համագործակցությունը կրթության, ուսուցման, գիտության և մշակույթի ոլորտներում, «գույցերով» աշխատանքը տեղական և տարածքային կառավարման մարմինների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև։ Անհրաժեշտ է հավուր պատշաճի ուշադրություն դարձնել հանրային առողջապահության խնդիրներին և տարափոխիկ հիվանդությունների, ներառյալ ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի և պալարախտի տարածման դեմ պայքարի արդյունավետությանը։

Եվրոպայի խորհուրդը, Բալթիկ ծովի խորհուրդը, Կենտրոնական Եվրոպայի նախաձեռնությունը (CEI), Սևծովյան տնտեսական համագործակցությունը (BSEC) և Կայունության դաշինքը կարող են կարևոր դեր կատարել՝ Եվրառեգիոնների և տեղական մակարդակով անդրսահմանային համագործակցության հետ մեջկետել։

Եվրառեգիոնները ներառում են կոնկրետ համագործակցություն սահմանի այս և այն կողմում գտնվող ռեգիոնալ ու տեղական իշխանությունների միջև, որը կարող է ժամանակի ընթացքում ապահովել անդրսահմանային լուրջ և արդյունավետ կապեր։ Դրանք կարող են նպաստել ընդհանուր շահերի բավարարմանը՝ այդ կերպ ուժեղացնելով քաղաքացիական հասարակությունը և տեղական ժողովրդավարությունը՝ նիևնույն ժամանակ դրական ազդեցություն ունենալով տեղական տնտեսության վրա։

Եվրոպական միությունը չի փորձում նոր մարմիններ կամ կազմակերպություններ ստեղծել, այլ ցանկանում է օժանդակել առկա մարմիններին և խրախուսել դրանց հետագա զարգացումը։ Տեղական «սեփականության» մոտեցման ձևավորումն այն կարևորագույն դասերից է, որոնք կարելի է քաղել Հյուսիսային տարածաշափի փորձից։

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ★ ՔԱՂԱՔԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ
★ ★

Միջերկրածովյան տարածաշրջան

Եվրոպական հարևանության քաղաքականության համատեքստում ռեգիոնալ և ենթառեգիոնալ համագործակցությունը միջերկրածովյան տարածաշրջանում հիմնված կլինի Եվրո-Միջերկրածովյան գործընկերության «ակի»-ների վրա՝ լիովին արտացոլելով յուրաքանչյուր պետության կամ պետությունների խմբի համար հարմարեցված նոտեցումներ:

Եվրո-Միջերկրածովյան գործընկերությունը երկու փոխլրացնող նոտեցումներ ունի՝ երկողմ ուղղությունը և ռեգիոնալ օրակարգը:

Ռեգիոնալ օրակարգի հիմքում ընկած են Եվրո-Միջերկրածովյան Արտաքին գործերի նախարարների համաժողովների, ինչպես նաև առևտուրի, էկոնոմիկայի և ֆինանսների, էներգետիկայի, արդյունաբերության և շրջակա միջավայրի ոլորտներում ճյուղային նախարարների համաժողովների ուղենիշները և եզրակացությունները: Ռեգիոնալ օրակարգի համար օժանդակությունը ստացվում է «ՄԵԴԱ» ծրագրից՝ յուրաքանչյուր գործընկեր պետության համար ազգային կողմնորոշիչ ծրագրի և ռեգիոնալ կողմնորոշիչ ծրագրի շրջանակներում:

Հանձնաժողովը շարունակելու է օգալի ֆինանսական օժանդակություն ցուցաբերելու միջոցով խթանել գործընկերության ռեգիոնալ տարածաշակի ընդունում սահմանված քաղաքական կողմնորոշման համաձայն, միջերկրածովյան տարածաշրջանում ռեգիոնալ համագործակցության ռազմավարական առաջնայնությունները պետք է լինեն Հարավի հնտեգրումը Հարավի հետ, ինչպես նաև ենթառեգիոնալ համագործակցությունը և կանոնակարգման և օրենսդրական դաշտի ներդաշնակեցումը: Սուրբությունալ լրացուցիչ համագործակցության հնարավոր ոլորտները նախատեսվելու են երկողմ միջոցառումների ծրագրերով՝ որպես հիմք ունենալով նաև Եվրո-Միջերկրածովյան նախարարական համաժողովները: Դրանք կարող են ներառել դատական համակարգի բարեփոխումները, զանգվածային լրատվամիջոցների անկախությունը և արտահայտվելու ազատությունը, կամ կանաց համար հավասար հնարավորությունների ապահովումը: Այդ համագործակցության առաջարկները մշակվելու են միջոցառումների ծրագրերով նախատեսվող ընդհանուր նպատակների հիման վրա, որոնք կարող են ներկայացնել թվով երկու կամ ավելի հարևան պետությունների կողմից, կամ քաղաքականության կոնկրետ ոլորտում լրացուցիչ առաջնթաց կատարելու

ՀԱՆՁՎԱԺՈՂՈՎԻ ՌԻԴՐՉ ★ ★
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒՅՑԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒՅՑՈՒՆ ★ ★
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒԴՈՒՆ ★ ★

ցանկություն ունեցող պետությունների խմբի կողմից:

Ռեգիստրատուրական և ներքառազգական համար կողմնորոշչի դեր են ունենալու երկողմ միջոցառումների ծրագրերը՝ որպես հիմք ունենալով նաև «Եվրո-Մեդ»-ի նախարարական հանդիպումների արդյունքները: Միջոցառումներ կարող են իրականացվել ռեգիստրատուրական, սակայն հնարավոր է նաև անդրսահմանային համագործակցություն թվով երկու կամ ավելի հարևան պետությունների միջև, ինչպես նաև՝ համագործակցություն ընդհանուր սահման չունեցող, սակայն ընդհանուր շահեր հետապնդող պետությունների միջև: Համագործակցությունը կարող է ներառել առաջնայնություն համարվող հետևյալ ոլորտները.

Ենթակառուցվածքի փոխկապակցման ծրագրեր. աջակցություն կարող է ցուցաբերվել ցանցերի պլանավորմանը՝ հեշտացնելու առևտուրը և ավելի հասանելի դարձնելու ԵՄ-ի շուկաները: Հնարավոր տարրերակմները ներառում են օազի նոր ցանցերը և կապակցման ծրագրերը Յյուսիսային Աֆրիկայի և Եվրոպայի միջև, ինչպես նաև Էլեկտրաէներգիայի փոխկապակցումը և համագործակցությունը Մարոկոյի, Ալժիրի և Թունիսի միջև, գազանուրը Եգիպտոսից՝ Հորդանանի, Լիբանանի, Սիրիայի միջով դեպի Թուրքիա և ԵՄ, Էլեկտրաէներգիայի փոխկապակցումն Խորայելի և պաղեստինյան տարածքների միջև, ենթառեգիստրատուրական բազմած տրանսպորտային ցանցերի նախագծումը Մադրեդում և Մերձավոր Արևելքում, ներառյալ երկաթուղու և ճանապարհային ենթակառուցվածքի փոխկապակցումը և ծովային տրանսպորտը, ինչպես նաև սահմանահատումների բարելավումը և նավահանգիստների մոտակայքում կապակցվածության բարելավումը: Ավելին, կարող է ցուցաբերվել աջակցություն անվտանգության ծրագրերի իրականացմանը:

Շրջակա միջավայր. համագործակցություն կարող է իրականացվել շրջակա միջավայրի քաղաքականության խնդիրների ուղղությամբ, և միջոցառումներ կարող են ձեռնարկվել կոնկրետ խնդիրների լուծման ուղղությամբ, որոնք ավելի հեշտ է լուծել ռեգիստրատուրական կամ ենթառեգիստրատուրական մակարդակով, օրինակ՝ ծովերի աղտոտումը, ջրային պաշարների կառավարումը և արտանետումների կանխումը, կամ պայքարն անապատացման դեմ:

Արդարադատություն և Ներքին գործեր. կարևոր է բարելավել սահմանների կառավարումը, ներառյալ ծովային կարծ անցումները, համագործակցությունն իրավապահ մարմինների և կառույցների միջև, համագործակցությունը կազմակերպված և անդրսահմանային հանցա-

★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Վիրության դեմ պայքարում և քաղաքացիական ու տնտեսական իրավունքի դատական գործերում, համագործակցությունն անօրինական էմիգրացիայի դեմ պայքարում, օրինական միգրացիայի կառավարում և միգրացիոն պլանների ներդրում (օրինակ՝ Կենտրոնական Մարդերի երեք պետությունների, Լիբիայի և Եգիպտոսի հետ), համագործակցությունը թմրադեղերի շրջանառության դեմ պայքարում, թմրադեղերի շրջանառության սահմանափակումը և թմրադեղերի դեմ պայքարի ազգային ռազմավարությունների իրագործումը, համագործակցությունը հարևան պետությունների միջև մասնագիտացված և ուսուցանված մասնագետների կողմից սահմանների արդյունավետ հսկողության ոլորտում, և համագործակցություն դատական և ոստիկանության մարմինների միջև:

Արևտուր, կանոնակարգման դաշտի մերձեցում (գրգանիտում) և սոցիալ-տնտեսական զարգացում. համագործակցությունը պետք է խրանի ռեգիոնալ տնտեսական ինտեգրումը հարևան պետությունների կան այն պետությունների միջև, որոնք ցանկանում են առավել սերտորեն համագործակցել տնտեսական հարցերի առնչությամբ՝ պայմանավորված Եվրո-Միջերկրածովյան ազատ առևտուրի տարածքի վերջնական ներորմանը և ԵՄ-ի ներքին շուկայում առավել զարգացած պետությունների ակտիվացող մասնակցությամբ: Ուժիոնալ առևտուրը և ներդրումները պետք է խրախուսվեն ծագման վերաբերյալ ընդհանուր նորմերի, ծառայությունների ազատականացման, կանոնակարգման դաշտի մերձեցման և առևտուրի հեշտացման մեխանիզմների օգնությամբ, ինչպես նաև Ազադիի գործընթացին հետագա օժանդակության ցուցաբերմանը: Միջոցառումների ծրագրերը պետք է նաև խրախուսեն միջերկրածովյան պետությունների միջև ապրանքների և ծառայությունների Ազատ առևտուրի համաձայնագրերի բանակցությունների իրականացումը: Այս առումով, անհրաժեշտ է նաև խրախուսել գործընկեր պետությունների միջև կանոնակարգման դաշտի մերձեցումը: Դարկ է ներառել կայուն զարգացման մերողաբանություններ և շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրության և քաղաքականության մշակման աշխատանքներ: Անհրաժեշտ է խորացնել երկխոսությունը զբաղվածության և սոցիալական քաղաքականության շուրջ՝ նպատակ ունենալով բացահայտել հիմնական մարտահրավերները և քաղաքականության տեսքով որոշակի արձագանք տալ դրանց: Կարող է լինել համագործակցություն ստանդարտների, անասնաբուժական խնդիրների, հանրային առողջապահության և սննդի անվտանգության ոլորտներում, որը հող կարդի գյուղատնտեսության հետագա ազատականացման բանակցությունների համար: Որոշ կարևոր խնդիրներ,

ինչպիսիք են, օրինակ, տարափոխիկ հիվանդությունների դեմ պայքարը, կարող են լուծվել ենթառեգիստրացիական մակարդակով:

Կիրախուսվեն ժողովուրդների միջև կապերի սերտացման ծրագրերը, որոնց նպատակն է աջակցել քաղաքացիական հասարակության այն նախաձեռնություններին, որոնք օժանդակում են մարդու իրավունքներին և ապակենտրոնացմանը, սատարել երիտասարդական կազմակերպություններին և խթանել միջնշակութային երկխոսությունը կրթական փոխանակման և երիտասարդության փոխանակման ծրագրերի, ինչպես նաև մարդկային ռեսուրսների շարժունության և մասնագիտական որակավորման թափանցիկության ապահովման միջոցով:

ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՍՈՒԹՅԱՆԸ

ԵՀՖ-ի պետություններին ներկայում ցուցաբերվող ֆինանսա- կան օժանդակությունը

Վերջին տարիներին ԵՄ-ը լուրջ ֆինանսական օժանդակություն է ցուցաբերել Եվրոպական հարևանության քաղաքականության մեջ ընդգրկված պետություններին: Ռուսաստանին և WNSIS-ին դրամա-շնորհների տեսքով տրամադրված աջակցությունը հիմնականում ուղղողվում է «Տասիս» ծրագրի միջոցով, իսկ միջերկրածովյան պետությունների դեպքում՝ «ՄԵԴԱ» ծրագրի շրջանակներում: Այս գործիքների միջոցով ուղղողվող աջակցությունը 2000-2003 թթ. ժամանակահատվածում կազմել է 3,716.1 միլիոն եվրո (ամփոփ վերլուծությունն ըստ առանձին պետությունների ներկայացված է հավելվածում): Ժողովրդագործության և մարդու իրավունքների ներկայացված է հավելվածում): Ժողովրդագործության և մարդու իրավունքների նկատմամբ հարգաճքի և իրավունքի գերիշխանության սկզբունքները երրորդ երկրություն, ֆինանսներ է տրամադրում այդ աշխատանքների համար, հիմնականում ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների գործընկերությամբ: 2000-ից 2003 թվականներին 19.3 միլիոն եվրո է տրամադրել Ռուսաստանում և արևմտյան Նորանկախ պետություններում իրականացվող ծրագրերի, և 41.4 միլիոն եվրո՝ միջերկրածովյան պետություններում իրականացվող ծրագրերի համար:

Եվրոպական ներդրումային բանկը (ЕИԲ) վարկեր է տրամադրում միջերկրածովյան պետություններին (3,445 միլիոն եվրո 2000-2003թ.թ. ժամանակահատվածում): 2000 թվականից ի վեր վարկավորման գործառնություններն ընդարձակվել են՝ ներառելու մասնավոր հատվածի համար նախատեսված Եվրո-Միջերկրածովյան գործընկերության ծրագիրը (FEMIP): 2001 թվականից բաց է վարկ ստանալու հնարավորությունը Ռուսաստանի համար՝ կոնկրետ նպատակայնությամբ, և 100 միլիոն եվրոյի ընդհանուր առավելագույն սահմանաչափով, որն իրականացվում է Հյուսիսային տարածաշափի շրջանակներում՝ Ռուսաստանի հյուսիս-արևմտյան բնապահպանական ծրագրերի համար:

Մակրոֆինանսական աջակցություն (ՄՖԱ) է ցուցաբերվել երրորդ պետություններին, որոնց առջև ծառացած են եղել վճարային հաշ-

Վեկշոի ֆինանսավորման լուրջ խնդիրներ: Եվրոպական հարևանության քաղաքականության մեջ մտնող պետություններից 2002 թ. գործառնություններ են հաստատվել Ուկրաինայի (110 միլիոն եվրո) և Մոլդովայի (15 միլիոն եվրո) համար, որոնք, սակայն, դեռ չեն ստացվել:

2000-2003 թթ. Ժամանակահատվածում Եվրոպական միությունը 277 միլիոն Եվրոյի մարդասիրական աջակցություն է տրամադրել ԵՀՊ-ի այն պետություններին, որոնցում արտակարգ իրավիճակներ են արձանագրվել, ինչպես նաև 103.5 միլիոն Եվրո պարենային օգնության տեսքով:

Առկա գործիքների կապը քաղաքականության հետ

Եվրոպական հարևանության քաղաքականության հավակնություն-ներն իրականացնելու համար համարժեք ֆինանսական և տեխնիկական օժանդակություն է անհրաժեշտ: Դա արտացոլված է հետագա ֆինանսական հեռանկարների վերաբերյալ ։ Հանձնաժողովի առաջարկի մեջ¹¹, որտեղ այս քաղաքականությունը դասակարգվում է որպես բարձր առաջնայնություն: Հանձնաժողովն առաջարկել է, որպեսզի ներդաշնակեցված գործիքների նոր համակարգի շրջանակներում աջակցություն ցուցաբերվի երրորդ պետություններին, ներառյալ «Տասիս» և «ՄԵԴԱ» ծրագրերի մեջ ներկայում ընդգրկվածներին: Այդ գործիքները նախագծվելու են այնպես, որպեսզի աջակցեն ԵՀՊ-ի իրազորմանը, և այդ նպատակով հատկացվելու են համարժեք ֆինանսական ռեսուրսներ:

Եվրոպական հարևանության քաղաքականությունն առաջին անգամ նախատեսվել է Համձնաժողովի 2003թ. նարտի Ուղերձի մեջ և լրամշակվել 2003 թ. հուլիսի «Հարևանության նոր գործիքի համար հարթվող ուղին» անվանումը կրող Ուղերձի մեջ¹²: Հաշվի առնելով առկա իրավական և բյուջետային հարցադրումների թիվը՝ Ուղերձը նախատեսում էր երկփուլ մոտեցում: Այդ մոտեցման համաձայն, 2004-2006 թթ. ժամանակահատվածում ներդրվելու են Հարևանության ծրագրեր՝ հիմնված առկա գործիքների միջև համակարգման բարելավման սկզբունքի վրա, իսկ 2006 թ. հետո ստեղծվելու է հարևանության

¹¹ COM(2004) 101 11-ր փետրվարի, 2004 թ. «Կերտենք մեր ընդհանուր ապագան».

Ծնվածքային պահության բաղադրականության մարտահրավերները և բյուջետային միջոցները՝ 2007-2013թ.թ.»:

¹² COM(2003) 393, 1-դ հունիսի, 2003 թ.:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

նոր գործիք:

2003 թ. հուլիսի Ուղերձից հետո առկա ֆինանսական գործիքների շրջանակներում նախանշվեցին ռեսուրսներ Հարևանության ծրագրերի համար: 2004-2006 թթ. ժամանակահատվածի համար ֆինանսավորման ընդհանուր մակարդակն արտաքին աջակցության գործիքների շրջանակներում կազմում է 255 միլիոն եվրո (75 միլիոն՝ «Տասիս»-ի, 90 միլիոն՝ «Ֆարե»-ի, 45 միլիոն՝ «ՔԱՐԴՍ»-ի և 45 միլիոն՝ «ՄԵԴԱ»-ի համար): Մոտ 700 միլիոն եվրո կտրամադրվի ԵՄ համապատասխան ներքին սահմանների համար՝ «Ինտերօնգ» ծրագրի շրջանակներում:

Ֆարե-CBC կանոնակարգը փոփոխվել է 2003 թ. հոկտեմբերին՝ ընդոգրկելու Ռումինիայի և Բուլղարիայի արտաքին սահմանները: «Տասիս»-ի CBC-ի ուղենշային ծրագրությունը, որը վերաբերում է ընդլայնված ԵՄ-ի և Ռուսաստանի, Ռումինիայի, Բելառուսի և Մոլդովայի միջև սահմաններին, ընդունվել է Հանձնաժողովի կողմից 2003թ. նոյեմբերին: Ընթացակարգերի մերդաշնակեցման ուղղությամբ աշխատանքը շուտով կավարտվի: Համապատասխան սահմանների հետ կապված ծրագրերի մշակման առումով լուրջ առաջընթաց է արձանագրվել: Այդ աշխատանքը պետք է որ ավարտվի 2004 թ. հունիսին: Ստեղծվել են համատեղ կառավարման կառույցներ: Առաջարկների ստացման առաջին հրավերը կներկայացվի 2004 թ. հուլիսին:

Մինչև 2007 թ. «Տասիս»-ը և «ՄԵԴԱ»-ն մնալու են ֆինանսական աջակցության հիմնական գործիքները գործընկեր պետությունների համար: Դրանց շրջանակներում օժանդակություն կցուցաբերվի Եվրոպական հարևանության քաղաքականության և, մասնավորապես, Միջոցառումների ծրագրերի իրագործման համար: 2005-2006 թթ. համապատասխան Ազգային կողմնորոշչի ծրագրերը ճշգրտվում են՝ արտացոլելու ԵՀՊ-ի առաջնայնությունները: Առանձնակի ուշադրության կարժանանա ինստիտուցիոնալ «շինարարության» գործընթացը: ԵՄ-ի տեխնիկական աջակցության տեղեկատվության փոխանակման գրասենյակի («TAIEX») կողմից ցուցաբերվող «գույգերով» աշխատանքի հնարավորությունները և տեխնիկական աջակցությունը կընդարձակվեմ՝ ներառելու գործընկեր պետություններին:

Ուղիղության և անդրսահմանային համագործակցության համար կշարունակվի Համայնքի նպատակային աջակցության ցուցաբերումը: «ՄԵԴԱ»-ի և «Տասիս»-ի 2005-2006 թթ. Ուղիղության կողմնորոշչի ծրագրերի շրջանակներում օժանդակություն է ցուցաբերվում ԵՀՊ-ի ուղիղության տարածաշափին:

2007 թ. սկսած Եվրոպական հարևանության նոր գործիքի շրջանակներում օժանդակություն կցուցաբերվի անդրսահմանային համագործակցության, ինչպես նաև ռեգիոնալ համագործակցության ծրագրերին, որոնց մասնակցում են և ԵՄ-ի անդամ պետություններ, և գործընկեր պետություններ: Բացի այդ, ապագայի Ֆինանսական հեռանկարների վերաբերյալ Հանձնաժողովի Ուղերձում առաջարկված Տնտեսական համագործակցության և զարգացման գործիքը կընդգրկի և ռեգիոնալ, և անդրսահմանային համագործակցություն գործընկեր պետությունների միջև:

Եվրոպական ներդրումային բանկի՝ վարկեր տրամադրելու կարողությունը նույնական մեծացվել է: 2003 թ. նոյեմբերին, ԵՆԲ-ի արտաքին վարկավորման մանդատի միջանկյալ ուսումնաիրության համատեքստում, Խորհուրդն ընդունեց Հանձնաժողովի առաջարկն այն մասին, որ միջնորդական պետությունների համար վարկավորման առավելագույն սահմանաշաբթ հասցի 2 180 միլիոնի: Բացի այդ, որոշվեց նախատեսել ԵՆԲ-ի վարկավորման մանդատի պայմանական ընդարձակում, որպեսզի այն տարածվի նաև Ռուսաստանի և արևմտյան նորանկախ պետությունների նկատմամբ: Ընդարձակումը թույլ կտա ԵՆԲ-ին նախքան 2006 թ. տարեվերջ տրամադրել մինչև 500 միլիոնի վարկեր՝ առանց ճյուղային սահմանափակումների: Այս որոշումը կատարելու իրավական իիմքը ներկայումս նախապատրաստվում է: ԵՆԲ-ի հետ իրականացվում են խորհրդակցություններ՝ ապահովելու, որպեսզի ԵՆԲ-ի պետություններին օժանդակելու կարիքը համարժեքորեն արտացոլված լինի վարկավորման մանդատների հաջորդ սերնդի մեջ:

Եվրոպական հարևանության քաղաքականությունն, ընդհանրապես, և Միջոցառումների ծրագրերը, մասնավորապես, կողմնորոշիչ գործնի դեր կատարեն ֆինանսական աջակցության այլ գործիքների համար: Այնու անգամ, եթե ԵՆԲ-ի գործընկեր պետությունների հետ կրանակցեն մակրոֆինանսական աջակցության ապագա գործառնություններ և մակրոտնտեսական նպատակներ հետապնդող այլ գործառնություններ, Հանձնաժողովը գտնում է, որ պայմանների հիմքում պետք է դրված լինեն Միջոցառումների ծրագրերի տնտեսական առաջնայնությունները և աշխատանքները՝ այդ աջակցությունը ծառայեցնելով որպես լրացուցիչ խթան քաղաքական և տնտեսական բարեփոխումների իրագործման համար:

ԺՄԵԵՆ-ի ծրագրերի կազմում նույնական համահումչ կլինի քաղաքականության նպատակներին՝ միևնույն ժամանակ օժանդակելով քա-

★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դաքաղիական հասարակությանն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ ժողովրդավարությունը, իրավունքի գերիշխանությունը, մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները։ Աշխատանքներ են ընթանում՝ ուսումնասիրելու 2005 թվականից սկսած ռեգիոնալ կտրվածքով օժանդակություն ցուցաբերելու հնարավորությունները։

Ծրագրերի համակարգումը բարելավելու համար խորհրդափոխանակություն է ընթանում նաև Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի և միջազգային ֆինանսական այլ կազմակերպությունների հետ:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՆԴԻԿԱՏՈՐՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

2007-2013 թթ. ժամանակաշրջանի ֆինանսական հեռանկարի վերաբերյալ իր առաջարկի մեջ Հանձնաժողովը՝ Եվրոպական հարևանության նոր գործիքը (ԵՀԳ), ներառել է այն վեց ֆինանսական գործիքների շարքում, որոնք պետք է արտադրին հարաբերությունների ոլորտում աշխատեն 2006 թվականից հետո:

Եվրոպական հարկանության գործիքը լրացնելու է առկա ֆինանսական գործիքների կամ դրանց փոխարեն ներդրվող նոր գործիքների շրջանակներում ցուցաբերվող աջակցությունը, և միտված է լինելու ուղղակիորեն անդրասահմանային համագործակցությանը և հարակից աշխատանքների իրականացմանը: Հանձնաժողովը մտադիր է ֆինանսական գործիքների վերաբերյալ իր առաջարկների փարեթում ընդգրկել կանոնակարգի նախագիծ, որը կգործի ֆինանսական ապագա ժամանակաշրջանում:

2003 թ. հուլիսի Ուղերձի մեջ նշվում են երեք այլընտրանքներ, որոնք պետք է դիտարկվեն Նոր Հարևանության գործիքի մշակման տեսակետից:

- Ա. Ներկայում առկա համագործակցության գործիքներից որևէ մեկի բովանդակության և աշխարհագրական ծածկույթի ընդլայնում,

Բ. Միասնական նոր կանոնակարգի ստեղծում, որով ճախտեսվելու է Հարևանության գործիքը, որով ֆինանսավորվելու են աշխատանքներ և Միության ներսում, և Միությունից դուրս,

Գ. Արդեն առկա գործիքների միջև համակարգման ուղղությամբ ինտերակտ նախադասական աշխատանքներ:



Ուսումնասիրելով տարբերակներ՝ Հանձնաժողովը հանգել է այն եզրակացության, որ «Ա» տարբերակը ոչ ամբողջությամբ կլուծի այն-պիսի ֆինանսական գործիք ունենալու խնդիրը, որի շրջանակներում արտաքին քաղաքականության նպատակները կհամադրվեն սոցիալական և տնտեսական միախմբվածության սկզբունքին: Հանձնաժողովը նաև եզրակացրել է, որ ֆինանսական տարբեր գործիքների միջև հնարավոր համակարգման աստիճանը ցանկացած դեպքում ենթակա է դրոշակի սահմանափակումների (տարբերակ «Գ»):

Ենտևարար, «Բ» տարբերակը լավագույնն է համապատասխանում առաջարկվող գործիքի բնույթին, և այն հնարավոր կլինի արդյունավետորեն իրագործել՝ հաղթահարելով համակարգման խնդիրները: Բացի այդ, չնայած որ ԵՀԳ-ն նախատեսում է և ներքին, և արտաքին աշխատանքներ, Հանձնաժողովն առաջարկում է օգտագործել բյուջեի մեկ բաժին՝ գործիքի ողջ գումարը ստանալու համար օգտագործելով առաջարկվող նոր Ֆինանսական ծրագրի՝ միախմբվածության և արտաքին քաղաքականության վերնագրերը: Գործիքը կաշխատի կառավարման միասնական մեխանիզմով և միասնական ընթացակարգերով:

Հրավական հիմքերը

Ներկայում չկան ԵՄ-ի ներսում տնտեսական և սոցիալական միախմբվածությունն արտաքին քաղաքականության հետ համադրող՝ երկակի բնույթ ունեցող գործիքի վերաբերյալ համապատասխան իրավական նախադեպեր, որոնք ԵՄ-ի արտաքին սահմանի այս և այն կողմերում հավասարազոր իրավաբանական ուժ կունենային: Հանձնաժողովը գտնում է, որ TEC-ի 181a հոդվածը կարող է որպես պատշաճ իրավական հիմք ծառայել նոր Հարևանության գործիքի համար, քանի որ այն հարևան պետությունների նկատմամբ ԵՄ-ի քաղաքականության կարևոր գործիք կլինի: Հաշվի առնելով, որ այդ հոդվածը վերաբերում է երրորդ պետությունների հետ համագործակցությանը, այն պետք է որ թույլ տա ֆինանսավորել այնպիսի աշխատանքներ, որոնք բնույթով համատեղ են, և որոնց մեջ ներգրավված են շահառուներ և անդամ պետություններից, և գործընկեր պետություններից: Աշխատանքների արդյունքում ստացվող օգուտները շոշափելի կլինեն իրավասու տարածքներում՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք դրանք գտնվում են Միության սահմաններից ներս, թե՝ դուրս: Գործիքի հիմքում դրվագ կլինեն անդրսահմանային առկա ծրագրերի այնպիսի սկզբունք-

★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աեր, ինչպիսիք են՝ գործընկերությունը, աշխատանքը բազմամյա ծրագրերի միջոցով և համաֆինանսավորումը:

Աշխարհագործական ծածկություն

2003 թ. հուլիսի Ուղերձի հիման վրա ԵՀԳ-ն տարածվելու է, մի կողմից, ԵՄ-ի Անդամ պետությունների, իսկ մյուս կողմից, Եվրոպական հարևանության քաղաքականության գործընկեր պետությունների միջև առկա բոլոր սահմանների նկատմամբ։ Այն նաև օժանդակելու է անդրսահմանային համագործակցությանը, որին մասնակցում են շահառուներ առնվազն մեկ Անդամ պետությունից և մեկ գործընկեր պետությունից, և գրադարձնելու է առկա ներքին և արտաքին անդրսահմանային ծրագրերի տեղն Անդամ պետություններում և գործընկեր պետությունների այն ռեգիոններում, որոնք սահմանակից կինեն ԵՄ-ի ապագա արտաքին սահմանին։

Հաշվի առնելով այն փաստը, որ ԵՀԳ-ն, որպես գործիք, նախատեսված է լինելու այնպես, որպեսզի դրանում հաշվի առնվեն հատկապես ԵՄ-ի արտաքին սահմաններից անդին իրականացվող համագործակցության առանձնահատկությունները, համապատասխան կանոնակարգի մշակման ժամանակ կարելի է անդրադառնալ թեկնածու պետությունների և թեկնածությանը նախորդող փուլում գտնվող պետությունների նկատմամբ ԵՀԳ-ի աշխարհագրական ծածկության տարածելու հարցին:

Հարևանության նոր գործիքի հիմնական բաղադրիչները

ԵՀԳ-ի հիմքում դրված է լինելու 2004-2006 թթ. Քարևանության ծրագրեր ստեղծելու ընթացքում ծեռք բերված փորձը: ԵՀԳ-ն միտված է լինելու 2003 թ. հուլիսյան Ուղերձի մեջ մատնանշված չորս հիմնական նախատեսված հրապունակություններում:

- Ընդհանուր սահմանների երկու կողմերում գտնվող ռեզիլիաներում կայուն զարգացման խթանում,
 - Միասին աշխատանք համատեղ միջոցառումների շրջանակմերում՝ լուծելու ընդհանուր խնդիրներ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ շրջակա միջավայրի պահպանությունը, հանրային առողջապահությունը և կազմակերպված հանցավորության սանկերությունները և այլարոր որա բնակչությունը.

- Համատեղ միջոցառումների շրջանակներում արդյունավետ և ապահով ընդհանուր սահմանների երաշխավորում,
- ժողովուրդների միջև կապերի սերտացնան նպատակ հետապնդող տեղական անդրսահմանային միջոցառումների խթանում:

Այս շրջանակներում կարևոր է ապահովել, որպեսզի գործընկեր պետությունների առաջնայնությունները բավարար չափով հաշվի առնելու՝ առաջնորդվելով գործընկերության ոգով: Դա հատկապես վերաբերում է միջերկրածովյան տարածաշրջանին, որտեղ առաջնայնությունները սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել Ընկերակցության համաձայնագրերի շրջանակներում և Բարսելոնի գործընթացի մաս կազմող Եվրո-Միջերկրածովյան նախարարական համաժողովների ընթացքում սահմանված ռազմավարական նույնացումները:

Այս կապակցությամբ, Եվրոպական հարևանության գործիքով ֆինանսավորվելու են համատեղ ծրագրեր, որոնք առաջարկվել են ԵՄ անդամ պետություններում և գործընկեր պետություններում աշխատող գործընկերների կողմից և նրանց համար: Որպես այդպիսին, այն լրացնելու է առկա արտաքին և ներքին ֆինանսավորման գործիքները, որոնք կարող են աշխատել Միության սահմաններից միայն ներս կամ միայն դուրս:

ԵՎՐՈ-Մ աշխատելու է ֆինանսավորման երկու առանձին պատուհանների միջոցով:

Առաջին պատուհանի շրջանակներում օժանդակություն է ցուցաբերվելու անդրսահմանային համագործակցությանը: Իրավասու լինելու համար պետք է գտնվել բոլոր ցամաքային և ծովային սահմաններից ներս¹³: Ծրագրերը իմմանականում լինելու են երկկողմ, չնայած որ բազմակողմ ծրագրեր կարող են ստեղծվել ծովային սահմանահատումների այն կետերում, որոնց հեռու գտնվելու և այլ գործոնների պատճառով հնարավոր չէ արդյունավետ երկկողմ անդրսահմանային համագործակցություն ծավալել: Բազմամյա ծրագրեր կստեղծվեն միասնական սահմանների կամ սահմանների խմբերի համար, որոնք կնախագծվեն սահմանի երկու կողմերում գտնվող շահառու պետությունների մասնակից պատուհանի շրջանակներում և նաև միասնական սահմանների կամ սահմանների խմբերի համար:

¹³ «Առաջին պատուհանի» շրջանակներում համագործակցությունը, որպես կանոն, տեղի է ունենում «NUTS III» մակարդակով, բազմությամբ բազմակողմ ծովային ծրագրերի, որոնց դեպքում պետք է բույլատել համագործակցությունը «NUTS II» մակարդակով:

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ★ ★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

յուններում աշխատող համապատասխան գործընկերների կողմից: Կառավարման գործառույթը Հանձնաժողովի կողմից կապատվիրավի համատեղ կառավարման կամ այլ պատշաճ մեխանիզմների միջոցով աշխատող կառավարչական որևէ մարմնի: Ծրագրերի ընտրությունը և իրագործումը կատարվի համատեղ կառույցների միջոցով, որոնցում ներկայացված կլինեն ԵՄ-ի անդամ պետությունների և գործընկեր պետությունների ազգային, ռեգիոնալ և տեղական իշխանությունները:

Երկրորդ պատուհանն ապահովելու է առավել ճկուն օժանդակություն ԵՄ-ի Անդամ պետությունները և գործընկեր պետությունները ներկայացնող դերակատարների և շահառուների ներգրավմանը առավել լայն անդրազգային համագործակցություն իրականացնելու համար: Համագործակցությունը հիմնականում ուղղված կլինի որոշակի թեմատիկ ոլորտների, որոնք սահմանվելու են կանոնակարգի մեջ՝ որպես հիմք ընդունելով այնպիսի ոլորտներում բացահայտված ընդհանուր մարտահրավերներ, ինչպիսիք են՝ շրջակա միջավայրի պահպանությունը, Էներգետիկ, հեռահաղորդակցության և տրանսպորտային ցանցերի մեջ ինտեգրումը, հանրային առողջապահությունը և կազմակերպված հանցավորության կամխարգելումն ու պայքարը դրա դեմ: Հանձնաժողովը նաև հնարավորություն կունենա բացահայտելու, ընտրելու և ֆինանսավորման ներկայացնելու որոշակի տեխնիկական և քաղաքական կարևորություն ունեցող ծրագրեր: Իրավասու լինելու պահանջին կիամապատասխանի ԵՄ-ի անդամ պետությունների ողջ տարածքը և գործընկեր պետությունների տարածքի համապատասխան հատվածները: Ծրագրերի մշակման աշխատանքը կենտրոնացված կլինի Հանձնաժողովում: Իրագործումը նույնպես կենտրոնացված կլինի, չնայած որ հնարավոր կլինի նաև անուղղակի կառավարման տարրերակի քննարկումը, որի դեպքում կառավարումը պատվիրակված կլինի արտաքին մարմինների, ինչպիսիք են, օրինակ, գործադիր կառույցները:

Բյուջեն

Հանձնաժողովը նտարի է առաջարկել, որպեսզի գործիքին հատկացվող տարեկան գումարը գգալիրեն ավելացվի՝ 2004-2006 թթ. ժամանակահատվածում Հարևանության ծրագրերին հատկացված գումարների համեմատ:

Երկու պատուհանների միջև ֆինանսավորման բաշխման խնդիր:

* * *
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՌԴԴՐՉ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՈՎԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒԴՈ

ոը կորոշվի հետագա փուլում՝ հաշվի առնելով համագործակցության երկու տեսակների հարաբերական կարևորությունը, տարբեր սահման-ների առանձնահատկությունները, աշխարհագրական տարածքների միջև ֆինանսավորման բաշխումը պատշաճ կերպով հավասարակշռելու ցանկալիությունը և իրազրուցման ու կառավարման մեջ Հանձնաժողովի ուղղակի ներգրավումը սահմանափակելու անհրաժեշտությունը։ Միջոցների կլանման խոչընդոտները վերացնելու և բարձր արդյունքները համարժեքորեն գնահատելու նպատակով որոշակի դրույթներ կնախատեսվեն՝ թույլատրելու միջոցների վերաբաշխում մեկ պատուհանից մյուսը, կամ մեկ պատուհանի շրջանակներում՝ ծրագրերի և նախագծերի միջև։

Արաջին պատուհանի շրջանակներում տրվող ֆինանսական հատկացումները կորոշվեն ըստ ծրագրի, մեկ սահմանի կամ սահմանների որոշակի խմբի համար՝ օրենկուի չափորոշիչների հիման վրա։ Այդ հատկացումները կատարելիս հաշվի կառնվեն նաև սահմանների առանձնահատկությունները, ինչպես նաև ֆինանսավորումը «կլանելու» կարողությունը և ներուժը։

ԵԶՐԱԿԱՆԳՈՒՄՆԵՐ

Հանձնաժողովը դիմում է Խորհրդին, որպեսզի վերջինս հաստատի սույն Ուղերձում տեղ գտած կողմնորոշումները և եզրահանգումներ կատարի սույն նախաձեռնության իրականացման եղանակների վերաբերյալ՝ անդրադառնալով հնարավոր միջոցառումների ծրագրերի բովանդակության խնդրին և այն հարցին, թե որ պետությունների հետ պետք է դրանք կնքվեն՝ չնորանալով ընդհանուր արժեքներին հավատարիմ ննալու գաղափարը։

Այդ սկզբունքի հիման վրա Նախագահության և Բարձր ներկայացուցչի հետ միհասին կապեր կիաստավուն համապատասխան գործընկեր պետությունների հետ՝ նպատակ հետապնդելով նրանց հետ միհասին վերջնական տեսքի բերել Միջոցառումների ծրագրերը նախքան 2004 թ. հուլիսի ավարտը։ Անդամ պետություններն այդ քննարկումների ընթացքի վերաբերյալ լիարժեքորեն կտեղեկացվեն։

Հանձնաժողովն առաջարկում է, որպեսզի Ընկերակցության և Համագործակցության համապատասխան խորհրդներին կոչ արվի՝ հաստատելու Միջոցառումների ծրագրերը։

Միջոցառումների ծրագրերի կատարման մոնիթորինգը տեղի կու-

★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Անհա Ընկերակցության կամ Գործընկերության և համագործակցության համապատասխան համաձայնագրերի կառույցների շրջանակներում:

Մոնիթորինգային գործընթացի արդյունքների գնահատման և գործընկերների տրամադրած տեղեկությունների վերլուծության հիման վրա Հանձնաժողովը, քաղաքական հանագործակցության և CFSP-ի հետ կապված հարցերում Բարձր Ներկայացուցչի մասնակցությամբ, կներկայացնի երկու տարիների ընթացքում արձանագրված միջանկյալ առաջընթացի հաշվետվություն, ինչպես նաև մեկ այլ հաշվետվություն՝ յուրաքանչյուր Միջոցառումների ծրագրի պաշտոնական հաստատումից երեք տարի հետո:

Հանճնաժողովը Խորհրդին կներկայացնի համապատասխան առաջարկ սույն Ուղերձում քննարկված Եվրոպական հարևանության գործիքի ստեղծման վերաբերյալ: Այդ գործիքի ուժի մեջ մտնելուն նախորդող ժամանակահատվածում ԵՄ-ը շարունակելու է առկա ֆինանսական գործիքների շրջանակներում Հարևանության ծրագրեր մշակել գործնկեր պետությունների հետ:

Սույն Ուղերձում տեղ գտած կողմանորոշիչ սկզբունքների հիման
վրա Հանձնաժողովը խթանելու և ռեգիոնալ և ենթառեգիոնալ համա-
գործակցությունը՝ գործնկեր պետությունների մեջորավաճար:

Հավելված

«ՄԵԴԱ»-ի և «ՏԱՄԻՒ»-ի աջակցությունը ԵՀԾ-ի գործընկեր պետություններին 2000-2003 թթ. ժամանակահատվածում

<u>Պետություն</u>	Գումար 2002-2003 թթ. (միլիոն եվրո)
Պետություններ, որտեղ «ՏԱՄԻՄ»-ն աշխատում է	
Ռուսաստան	599.6
Ուկրաինա	435.6
Մոլդովա	46
Բելառուս	10
Մի քանի պետություններում իրականացվող ծրագրեր	241
Ընդամենը «ՏԱՄԻՄ»	1332.2
«ՄԵԴԱ» ծրագրում ներգրավված պետություններ	
Ալժիր	181.8
Եգիպտոս	194.5
Հորդանան	169.4
Լիբանան	55.7
Մարոկկո	525.3
Սիրիա	82.7
Թունիս	306.6
Արևմտյան ափ և Գազայի հատված	277.8
Ուգանդական ծրագրեր	590.1
Ընդամենը «ՄԵԴԱ»	2383.9
Ընդամենը ԵՀԾ-ի գործընկեր պետություններ	3716.1

ရန်ပါ ဘဏ္ဍာဂျာ





Բրյուսել, 29.09.2004 թ.
«COM (2004) 628» վերջնական

Ոչ պաշտոնական թարգմանություն՝ անզլերենից

ԱՌԱՋԱՐԿ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՃՐՈՒ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻԱՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ և ԳՈՐԾԵՄԿԵՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԻՔ ՍՏԵՂԾՈՂ ԳԼԽԱՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ՈՒՎԱԳՁԵԼՈՒ
ԻԱՄԱՐ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Ներածություն

Նոր կառուցվածքը, որն առաջարկվել է ֆինանսական գործիքների համար, որոնք պետք է գործն 2007-2013 թթ. նոր հեռանկարում, և այս առաջարկին հանդեցնող պատճառները բացատրված էին Հանձնաժողովի կողմից Խորհրդին ու Պառլամենտին ներկայացրած ֆինանսական հեռանկարներին վերաբերող հաղորդագրություններում¹: Ներածական հաղորդագրությունը, որ ներկայացնում է «Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք» (ԵՀԳԳ) վերաբերյալ Կարգը, ինչպես նաև արտաքին հարաբերությունների մյուս երեք գործիքները, տակա են լրացուցիչ ու ավելի մանրամասն տեղեկություն գործիքի հիմնական բնորոշ գծերի վերաբերյալ: Հաշվի առնելով դա՝ այս բացատրագիրը զիխավորապես կենտրոնանում է Կարգի հիմնական հոդվածները բացատրելու և մեկնարաննելու վրա:

ԵՀԳԳ-ն կփոխարինի շահագրգիռ երկրներն ընդգրկող աշխարհագրական ու թեմատիկ ծրագրերին: Ներքին քաղաքականության արտաքին ասպեկտները, որոնք ներկայումս ընդգրկված են հատուկ գործիքի մեջ, կամ կուղղորդվեն դեպի մեկ ու մի քանի երկիր ներգրավող ծրագրերի կողմը, կամ, հարկ եղած դեպքում, կկիրարկվեն որոշակի թեմատիկ ծրագրերի միջոցով:

ԵՀԳԳ-ի յուրահատուկ և նորարարական հատկանշական գիծը նրա միջպետական համագործակցության բաղադրիչն է: Համաձայն այս բաղադրիչի ԵՀԳԳ-ն կֆինանսավորի «համատեղ ծրագրեր», որոնք միավորում են ընդհանուր սահման ունեցող անդամ պետությունների ու գործընկեր երկրների տարածաշրջանները: Սա կիանգեցնի գործընթացների արմատական պարզեցմանը և արդյունավետության զգալի բարձրացմանը: Այն կօգտագործի մի մոտեցում, որը հիմնականում ծևավորված է այնպիսի «Կառուցվածքային հիմնադրամների» սկզբունքով, ինչպիսիք են՝ բազմամյա ծրագրավորումը, գործընկերությունը և համաֆինանսավորումը, որոնք ընդունվել են արտաքին հարաբերությունների յուրահատկությունները հաշվի առնելու համար: ԵՀԳԳ-ի միջպետական համագործակցության բաղադրիչը կֆինանսավորվի համատեղ Տարածաշրջանային զարգացման եվրոպական հիմնադրամի (ԵՏԶՀ) կողմից: Մաս III-ն ընդգրկում է որոշ դրույթներ, որոնք հատուկ

¹ COM(2004) 101 of February 2004 և COM(2004) 487 of 14 July 2004.

* * * * *

ԱՐԱՋԱԿԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՃՈՒ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ ՍՏԵՂԾՈՂ
ԳԼԽԱԿՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ՈՒՐՎԱԳԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

* * * * *

ստեղծված են հենց միայն այս բաղադրիչի համար: Այս դրույթները համատեղվի են այս նմանատիպ դրույթների հետ, որոնք հաստատվել են միջառետական համագործակցության համար՝ համապատասխան Կառուցվածքային հիմնադրամների կարգի շրջանակներում:

ՄԵԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ Առանձին դրույթների վերաբերյալ

Մաս I. Նպատակներ և սկզբունքներ

Յոդված 1. Հարցի էությունն ու գործունեության շրջանակը

Յոդված 1-ը սահմանում է օգնության մասշտաբը՝ անդրադառնով նրան, որ կարևոր է ստեղծել բարեկեցության ու սերտ համագործակցության տարածք, որը կրնագրի Եվրոպական միությունը և հարևան երկրներին, ինչպես որ ճանաչված է Սահմանադրության մեջ:

Գործիքի մեջ ընդգրկված գործնկեր երկրների ցուցակը տրված է Յավելված 1-ում: Այս ցուցակը ներառում է այն հարևան երկրներին, որոնք ներկայում չունեն միանալու հեռանկար, և որոնց համար նախատեսված է Եվրոպական հարևանության քաղաքականությունը (ԵՀՔ): Նախապես այս ցուցակը սահմանափակվում էր չորս Արևմտյան ՆԱՊ և Միջերկրականի ավազանի տասը երկրներով, սակայն այն ընդլայնվել է Բրյուսելի 2004 թ. հունիսի 17-18-ի Եվրոպական խորհրդի հետո, որպեսզի իր մեջ առնի նաև Յարավային Կովկասի երեք պետությունները (Յայաստան, Ադրբեյջան, Վրաստան):

ԵՅՔ-ն ընդգրկում է Ռուսաստանը, քանի որ Եվրոպական միությունը և Ռուսաստանը որոշել են զարգացնել իրենց ռազմավարական գործընկերությունը՝ ավելի շուտ ստեղծելով «չորս ընդհանուր տարածքներ», ինչի վերաբերյալ համաձայնության են եկել 2003 թ. մայիսին Սանկտ-Պետերբուրգում տեղի ունեցած գագաթնաժողովում, քան Եվրոպական հարևանության քաղաքականությամբ հաստատված շրջանակներում: Գործիքի անունից գործընկերության հիշատակումն ընդգծում է դրա յուրահատկությունը: Միացման հեռանկար ունեցող երկրներին, ինչպիսիք են Թուրքիան կամ Արևմտյան Բալկանների երկրները, ցուցաբերվող օգնությունն ընդգրկվում է մեկ ուրիշ՝ առանձին՝ Միացմանը նախորդող գործիքի մեջ:

«Բարիդրացիության» տարածքի ստեղծումը պահանջում է միջոցներ գործընկեր երկրների ու անդամ պետությունների միջև միջառետական համագործակցությունը խթանելու համար, որպեսզի խթանվի

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

սահմանակից տարածաշրջանների միջև ինտեգրացված տարածաշրջանային զարգացումը և խույս տրվի նոր բաժանարար սահմանագերի ստեղծումից: Որպեսզի հնարավոր լինի միջազնական համագործակցությունը արդյունավետորեն ու գործնականորեն խթանել և համատեղ ծրագրերը ֆինանսավորել, հոդված 1-ը օգնության կարգի մեջ առաջին անգամ սահմանում է, որ օգնություն կարող է կիրառվել անդամ պետությունների ու գործընկեր երկրների ընդհանուր բարորության օգտին: Սա հաճեցնում է ներկա իրավիճակի արձատական պարզեցմանը, երբ ԵՄ սահմաններից դուրս գտնվող երկրների հետ համագործակցությանը խանգարում են տարբեր կանոններով գործող ներքին ու արտաքին ֆոնդավորման գործիքների միջև հակասական կետերով:

Վերջապես հոդված 1-ը անդրադառնում է Միության հիմնարար արժեքներին, որոնք Միության հարևանները ԵՄ-ի հետ իրենց երկկողմանի համաձայնագրերում և մի շարք բազմակողմանի կոնվենցիաներում ու այլ գործիքներում պարտավորվել են պահպանել: Ինչ վերաբերում է նրան, թե հարևան երկրներն ինչ աստիճաններով են կատարում այս պարտավորությունները, ապա կարևոր է, որ Միության արտաքին գործունեությունը զգտի խթանել համաձայնեցում ավելի շուտ գիծողության երկխոսության և համագործակցության միջոցով: Ծայրահեղ դեպքերում Միությունը կարող է դիմել օգնության լրիվ կամ մասնակի դադարեցման համար՝ համաձայն հոդված 29-ում նշավորած գործիքների:

Հոդված 2. Օգնության մասշտաբը

Հոդված 2-ը շարադրում է օգնության հիմնական նպատակները և կապ է ստեղծում այս նպատակների ու հարևան երկրների հետ գոյություն ունեցող համաձայնությունների միջև։ Սա արտացոլում է գործիքի քաղաքականությամբ առաջնորդվող բնույթը և այն կարևորությունը, որը տրվում է այս համաձայնագրերի իրականացմանն օժանդակելուն։ Ինչևէ, այս կապը հակված չէ բացառելու այնպիսի երկրներին օգնություն տրամադրելու հնարավորությունը, ինչպիսիք են՝ Բելառուսը կամ Լիբիան, որտեղ նույնիսկ պայմանագրային հիմքի բացակայության պայմաններում, հավանաբար, օգնությունը օգտակար կարող է լինել՝ հետապնդելու համար ԵՄ քաղաքականության նպատակները։

* * * * *
ԱՐԱՋԱՐԿ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՃՈՒ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ ՍՏԵՂԾՈՂ
ԳԼԽԱՎՈՐ ՐԴՈՒՅԹՆԵՐՆ ՈՒՐՎԱԳԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ
* * * * *

Յոդված 2-ը նաև տալիս է, հիմնականում բացատրական պատճառներով, այն նպատակների ցուցակը, որոնք կարելի է հետապնդել սույն Կարգի շրջանակներում: Այս ցուցակը, որն անընդհատ լրացվում է, Եվրոպական հարևանության քաղաքականությանը բնորոշ նպատակների հետ միասին, իր մեջ պարունակում է նաև ավելի պայմանական՝ զարգացման նպատակներ: Սա արտացոլում է հարևան երկրների իրականությունը, որոնց մի մասը զարգացող երկրներ են: Որևէ կոնկրետ երկրում հետապնդվող նպատակների ընտրությունը կատարվի այդ երկրի ռազմավարությունն ու բազմամյա ծրագրերը հաստատելիս:

Յոդված 3. Քաղաքականության շրջանակներ

Յոդված 3-ն ընդգծում է ԵՀՔԳ-ի՝ որպես քաղաքականությամբ առաջնորդվող գործիքի, Էլուրյունը: Օգնություն ծրագրավորելու ընդգրկուն քաղաքականության հիմքը պետք է դրվի՝ հաշվի առնելով գոյություն ունեցող համաձայնագրերը: Հանձնաժողովի հաղորդումներում և խորհրդի եզրակացություններում, որոնք ձևակերպում են Միության ընդհանուր ռազմավարությունը հարևան երկրների նկատմամբ: Վերջերս դա արվել է 2004 թ. մայիսի² Հանձնաժողովի ստացած հաղորդագրության մեջ, որին հետևել են 2004 թ. հունիսին խորհրդի արած եզրակացությունները³, և որին էլ կարող է հետևել Եվրոպական պառլամենտի վավերացումը: Այն դեպքերում, երբ դրանք գործում են, Եվրոպական հարևանության քաղաքականության Գործողության պլանները, որոնք մշակվել են խորհրդի մասնակցությամբ և հավանություն են ստացել ԵՄ-ի ու գործընկեր երկրի միջև երկարողմանի համաձայնություններով ստեղծված համատեղ Ընկերության/Գործընկերության և համագործակցության խորհուրդների կողմից, տալիս են այն հիմնական փաստաթուղթը, որից հետազյում մշակվում են օգնություն տրամադրելու առաջնահերթությունները: Գործունեության այս պլաններն ընդգրկում են առաջնահերթությունների այնպիսի համակարգ, որի իրագործումը գործընկեր երկրներին կմուտեցնի Եվրոպական միությանը: Ռուսաստանի դեպքում առաջնահերթությունները սահմանվում են Գործընկերության և համագործակցության խորհրդի հավանությանն արժանացած չորս ընդհանուր տա-

² The “European Neighbourhood Policy Strategy Paper”.

³ General Affairs Council of 14 June 2004.

* * * * * **ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ**

Պաճքների ճանապարհային քարտեզների լուսի ներքո⁴:

Համաձայնագրերի և/կամ ԵՀՊ գործողության պլանների բացակայության դեպքում է օգնություն կարելի է ցուցաբերել, մասնավորապես, միջային համագործակցության համար, իսկ եթե հարմար է, ապա հարկ է հետապնդել համապատասխան Հանձնաժողովի հաղորդագրությամբ սահմանված ԵՄ քաղաքականության նպատակները:

Հոդված 4. Կոմպլեմենտարություն, գործընկերություն և համատեղ ֆինանսավորում

Հոդված 4-ն ուրվագծում է հետևյալ գլխավոր սկզբունքները սույն Կարգի կիրառման համար, մասնավորապես:

- օգնությունը լրացնում է ազգային միջոցառումները, որոնք ուղղված են համատեղ հաջողությունների խթանմանը և ազդեցության աճրապնդմանը,
- օգնությունը կսահմանվի Հանձնաժողովի և օգնություն ստացողների միջև համագործակցության միջոցով, և օգնության պլանավորումը կիրականացվի հարկ եղած դեպքերում ներգրավելով կենտրոնական, տարածաշրջանային ու սոցիալական գործընկերների,
- օգնությունը համատեղ կֆինանսավորվի, որպեսզի խթանվի սեփականությունը և առավելագույնս մեծանա դրա արդյունավետությունը:

Այս սկզբունքները կիրառվում են նաև ԵՄ համախմբվածության քաղաքականության համատեքստում և արտացոլում են գործիքի երկակի էռությունը (արտաքին քաղաքականություն և տնտեսական ու սոցիալական համախմբվածություն), երբ հարցը վերաբերվում է գործընկեր երկրների ու անդամ պետությունների միջև Միջային համագործակցության ֆինանսավորմանը:

⁴ Մրանք են. ընդհանուր տնտեսական տարածքը (ներառելով և հատուկ ուշադրություն դարձնելով շրջակա միջավայրին ու ներգետիկային), ազատության, անվտանգության ու արդարադատության ընդհանուր տարածքը, արտաքին անվտանգության բնագավառում համագործակցության տարածքը, ինչպես նաև հետազոտությունների ու կրթության տարածքը՝ ներառյալ մշակութային հարցերը:

* * * * *
ԱՊԱԶԱՐԿ ԵՎՐՈՊԱԿԱԾ ՊԱԼԱՍԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՃՈՒ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ
ԵՎՐՈՊԱԿԱԾ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ ՍՏԵՂՋՈՂ
ԳԼԽԱՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ՈՒՐՎԱԳԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հոդված 5. Հարակցություն, մրցունակություն և համակարգում

Հոդված 5-ը ապահովում է, որ օգնությունը հետևողական լինի Համայնքի քաղաքականությունը և այն համաձայնագրերն իրականացնելիս, որոնց ստորագրող կողմ են համդիսանում Սիությունը և գործընկեր երկրները: Այն նաև ընդգծում է համայնքի, անդամ պետությունների և այլ դոնորների միջև համաձայնեցումը՝ ըստ ԵԽՀ-ի պայմանագրի հոդված 180-ի, և ինչպես որ բազմից նշվել է Հանձնաժողովի հաղորդագրություններում ու խորհրդի եզրակացություններում:

Մաս II. Ծրագրավորում և կապիտալի բաշխում

Հոդված 6. Ծրագրերի տեսակները

Հոդված 6-ը նկարագրում է այն ծրագրերի տեսակները, որոնց միջոցով օգնությունը կտրվի համաձայն սույն Կարգի, մասնավորապես մեկ երկիր/մի քանի երկրներ ընդգրկող ծրագրերի և մի քանի երկրների միջև համագործակցության ծրագրերի:

Մեկ երկիր և մի քանի երկրներին առնչվող ծրագրերն ընդգրկում են օգնություն, որն այս գործիքի համաձայն տրվում է մեկ երկիր (ազգային ծրագրի) կամ մի խումբ երկրների (տարածքային կամ ենթատարածքային ծրագրեր): Դրանք սովորաբար ունենում են բազմաթիվ առաջնահերթություններ: Թեմատիկ ծրագրերը սովորաբար ուղղված են տեսանելի ու հասկանալի առումով որևէ խիստ կարևոր գլոբալ խնդրի կամ, եթե հարմար է, ներքին քաղաքականությունների արտաքին արտացոլմանը: Սա հատկապես կարևոր է, քանի որ արտաքին հարաբերությունների ոլորտում գործող ֆինանսական գործիքների պարզեցումը նշանակում է, որ այնպիսի թեմատիկ գործիքներ, ինչպիսիք են՝ LIFE երրորդ երկրները կամ TEMPUS կղադարեն գոյություն ունենալ, քանի որ կկորցնեն իրենց առանձին իրավական հիմնավորումները:

ԵՄ-ի անդամ պետությունների նախընտրելի սահմանակից տարածըները կը նշգրկվեն այս Կարգով սահմանված միջաետական համագործակցության ծրագրերի մեջ: Հնարավոր կլինի նաև անդամ պետություններին միավորել թեմատիկ և/կամ մի քանի երկրներ ընդգրկող ծրագրերի մեջ տարածաշրջանային համագործակցության միջոցով: Սրա հիման վրա միայն մեկ ֆինանսական գործիքը՝ ԵՀԳԳ-ն կարողանա ֆինանսավորել գործընկեր երկրներից ու անդամ պետություն-

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Անդրադաստիճանության մեջ պահպանական գործությունները կազմության մասին օրենքում առաջարկված են:

Հոդված 7. Ծրագրավորում և ֆոնդերի բաշխում

Հողված 3-ում նկարագրված քաղաքականության շրջանակներին անդրադառնալով՝ բազմամյա հատկանշական ծրագրեր պարունակող ռազմավարական փաստաթղթերը կիաստատեն օգնության համար անհրաժեշտ առաջնահերթությունները և կսահմանեն բազմամյա ֆինանսական բաշխումը ծրագրերում։ Դրանք կընդունվեն Հանձնաժողովի կողմից՝ նեկավարող հանձնաժողովի կարծիքը ստանալուց հետո։ Մեկ և մի քանի երկրներ ընդգրկող ծրագրերի ֆինանսական բաշխումները կարտացոլեն ոչ միայն շահագրգիռ երկրների եռթյունն ու կառավարման կարողությունը, այլև նրանց շահագրգությանը եվրոպական միության հետ գործնկերության մեջ։

Միջպետական համգործակցության ռազմավարության առնչվող փաստաթղթերը հիմնականում նպատակ ունեն ստեղծել Երկրների միջև «համատեղ» ծրագրեր, դրանց աշխարհագրական ընդգրկման և դրանց բաշխման ցուցակներ: Դրանց նախագծերը կազմվեմ՝ նկատի ունենալով, որ անհրաժեշտ է հաշվի առնել ծրագրի վրա հենված լինելու, միջին տևողություն ունենալու և ներքնից վերև կառավարելու մնացումը, ինչը հանգեցնում է Սաս III-ում տեղ գտած «համատեղ ծրագրերին»: Տարածաշրջանային զարգացման եվրոպական հիմնադրամը կնպաստի Երկրների միջև համգործակցության ծրագրերի համաձայն սույն Կարգի դրույթների:

Մաս III. Միջակետական համագործակցություն

Հոդված 8. Աշխարհագրական առումով ընտրվելու իրավունք

Հողված 8-ը սահմանում է այն չափամիջները, որոնց միջոցով որոշվում են անդամ պետությունների և գործընկեր երկրների տարածքային միավորումները, որոնք կընդգրկվեն միջանուական համագործակցության ծրագրերի մեջ: Սա ներառում է բոլոր NUTS-III մակարդակի տարածքները ցամաքային սահմանների ու հասուլ նշանակության ծովային անգումների երկայնքով, և բոլոր NUTS-II ծովեզրյա տարածքները,

* * * * *

ԱՐԱՋԱՐԿ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱԼԱՍՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՃՈՒ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ ՍՏԵՂԾՈՂ
ԳԼԽԱՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ՈՒՐՎԱԳԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

որոնք նայում են ընդհանուր ծովային ավագանին: Սահմանակից տարածքները նույնպես կարող են նշավորվել համագործակցելու համար:

Հոդված 9. Ծրագրավորում

Հոդված 9-ը ներառում է հատուկ դրույթներ, որոնք հիմնում են անդամ պետությունների ու գործընկերների նախնանտրելի տարածքները միավորող համատեղ ծրագրեր: Այս ծրագրերը սովորաբար պետք է լինեն երկկողմանի՝ ցանքաքային սահմանների ու հատուկ նշանակության ծովային անցումների տարածքների դեպքում: Մի հատուկ կետ (պարագրաֆ 3) է ընդգրկվել, որը հնարավորություն է տալիս Կարգի շրջանակների մեջ չնտնող երկրներին, մասնավորապես Թուրքիային, մասնակցելու բազմակողմանի ծովեգոյա ծրագրերի:

Միացյալ ծրագրերն ընդունվում են Հանձնաժողովի կողմից: Այս ծրագրերի ընդունումից հետո շահագրգիռ անդամ պետությունները և գործընկերներն ընտրում են այն նախագծերը, որոնք ստանում են համայնքի աջակցությունը:

Պարագրաֆ 7-ն ունի երաշխիքային դրույթ, որը բացարիկ համագանձներում թույլ է տալիս, որ անդամ պետությունների սահմանային տարածաշրջանները ստանան օժանդակություն, նույնիսկ այն դեպքում, եթե չի կարող հիմնվել միացյալ ծրագիր: Այս կետն ապահովում է անվտանգության այնպիսի ցանց, որը հնարավոր է դարձնում հիմնել միացյալ ծրագիր Եվրոպական միության և որևէ գործընկեր երկրի միջև, նույնիսկ, եթե նրանց հարաբերություններում առաջացել է այնպիսի լուրջ ճգնաժամ, որն անհնար է դարձնում համատեղ ծրագրի հիմնումը:

Հոդված 10. Կառավարում

Հոդված 10-ն ապահովում է, որ միջամտական ծրագրերը կառավարվեն համապատասխան անդամ պետությունների ու գործընկեր երկրների կողմից միասին՝ համատեղ կառավարող մարմնի միջոցով, որը կառավարում է համատեղ և տեղակայված է որևէ անդամ պետությունում: Թույլ տալով, որ կիրառնան պարտավորությունները լիազորվեն օժանդակություն ստացող անդամ պետության վրա՝ այս կառավարման մեթոդը համատեղելի է դառնում ծրագրի վրա հիմնված, բազմանյա, ներքին վերև կառավարելու մոտեցման հետ, ինչը բնորոշում է միջամտական համագործակցության ծրագրերին:

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ★ ★ ՔԱՂՓԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ

Համատեղ կառավարող մարմինն իր մոտ ընդունող անդամ պետությունը պատասխանատու է Հանձնաժողովի առջև ծրագրի շրջանակներում գործողությունների ֆինանսավորման կանոնավորության համար, ինչպես որ արվում է Կառուցվածքային հիմնադրամների կիրառման դեպքում: Այս դրույթը հաշվի է առնում այն փաստը, որ անդամ պետություններն ավելի մեծ փորձ ունեն ԵՄ կապիտալը տնօրինելու հարցում, քան գործնկեր երկրները, ինչպես նաև այն, որ դրա նատակարարումն ու ֆինանսական վերահսկման գործընթացները հարմարեցված են ԵՄ օրենսդրությանը:

Ինչևէ, հնարավոր է համատեղ կառավարման մարմինը տեղակայել որևէ գործընկեր երկրում՝ հետևելով Հանձնաժողովի որոշմանը, որը հաստատում է, որ համատեղ կառավարման մարմինը տեղակայվի գործընկեր երկրում, որպեսզի համայնքի կապիտալը տնօրինվի լրիվ ապակենտրոնացված ձևով:

Հոդված 11. Կիրարկման կանոններ

Հոդված 11-ը լիազորում է Հանձնաժողովին ընդունել կիրարկման կանոններ այս բաղադրիչի համար: Այս կանոններն ընդունվում են Հանձնաժողովի կողմից՝ կառավարման գործընթացի շրջանակներում կոմիտեի կարծիքը ստանալուց հետո:

Մաս III. Կիրարկում

Հոդված 12. Գործողության ծրագրերի ընդունում

Հոդված 12-ն ապահովում է, որ Հանձնաժողովի ֆինանսավորմանն առնչվող որոշումներն ունենան ամենամյա ծրագրերի գործունեության տեսք երկրների կամ տարածաշրջանների համար: Սա արտացոլում է Հանձնաժողովի վերջին կարգում⁵ վերջերս մտցված նոր սկզբունքները: Քանի որ Հանձնաժողովի ընդունած որոշումները համընկնում են անդամ պետությունների կողմից հավանության արժանացած փաստաթղթերի հետ, գործողության այս ծրագրերը ենթակա չեն կոմիտեի գործընթացին: Հանձնաժողովն ուղարկում է գործողության ծրագրերը անդամ պետություններին ի գիտություն՝ որոշում կայացնելուց հետո մեկ ամսվա ընթացքում: Գործողության ծրագրերը հանգեցնում են գործնկեր երկրների հետ ֆինանսավորման համա-

⁵ Ինչպես որ արվել է MEDA և SASSIUS կարգերում:

* * * * *
ԱՐԱՋԱՐԿ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՃՈՒ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ ՍՏԵՂԾՈՂ
ԳԼԽԱՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՈՒՐՎԱԳԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ծայնագրերի ստորագրման, մասնավորապես աշխարհագրական ծրագրերի շրջանակներում: Բացառապես հոդված 12-ն է ապահովում այնպիսի միջոցառումների ընդունում, որոնք չկան գործողության ծրագրերում՝ համաձայն նույն կանոնների ու գործընթացների, որոնք որ կիրառվում են գործողության ծրագրերում: Այս դրույթը կարող է օգտակար լինել, եթե Հանձնաժողովը կարիք ունենա կատարել արագ ֆինանսավորում՝ հակառակ նրան, որ գործողության ծրագիրը դեռ ամբողջովին չի ավարտվել:

Հոդված 13. Ռազմավարական փաստաթղթերում կամ ցուցանիշ հանդիսացող բազմամյա ծրագրերում չնախատեսված առանձնահատուկ միջոցառումների ընդունումը

Հոդված 13-ն ապահովում է, չնախատեսված անհրաժեշտության կամ հաճամանքների դեպքում, ընդունել ռազմավարական փաստաթղթերում կամ բազմամյա յուրահատուկ ծրագրերում չնախատեսված հատուկ միջոցառումներ: Այս դրույթը մեծացնում է արագ արձագանք տալու համայնքի կարողությունը և մտցնում է ճկունություն, որն անհրաժեշտ է համայնքի արտաքին օժանդակության արդյունավետ կիրառման համար՝ հատկապես արտակարգ իրավիճակներում: Քանի որ այս դրույթը կայացվում են անդամ պետությունների կողմից հավանություն ստացած բազմամյա ծրագրերի շրջանակներից դուրս, մինչև 15 միլիոն եվրո գումարին վերաբերող դրույթը կատարվում են կոմիտեի ենթակայության տակ: Համապատասխանարար, ռազմավարական փաստաթղթերում կամ բազմամյա յուրահատուկ ծրագրերում չնախատեսված հատուկ միջոցառումներն ընդունվում են Հանձնաժողովի կողմից՝ համաձայն 1999/468/ԵԽ դրոշման հոդված 3-ի սահմանած ընթացակարգի, այսինքն՝ անդամ պետությունների Ներկայացուցիչներից կազմված ու Հանձնաժողովի Ներկայացուցիչ կողմից գլխավորած խորհրդատվական կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո (կոմիտեն ստեղծվում է սույն կարգի հոդված 26-ի) համաձայն: Կոմիտեն դրույթը կ կայացնում հատուկ միջոցառումների վերաբերյալ, իսկ Հանձնաժողովը հնարավորինս հաշվի է առնում կոմիտեի դրույթը և տեղեկացնում կոմիտեին, թե ինչ ծևով է այդ կարծիքը հաշվի առնվել: Հանձնաժողովը կարող է հատուկ միջոցառումները հարմարեցնել նույն գործընթացով: Կոմիտեի դրույթը, ինչև, անհրաժեշտ չէ հոդված 13(4)-ում նշված ոչ կարևոր փոփոխությունների դեպքում:

★ ★ ★
★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂՓԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ
★ ★ ★

Յողված 14. Ընտրվելու իրավունք

Յողված 14-ը թվարկում է այն միավորները, մարմինները և հաստատությունները, որոնք ունեն ընտրվելու իրավունք՝ համաձայն սույն Կարգի: Ընթացիկ պրակտիկային զուգահեռ այն ապահովում է ընտրվելու իրավունք ունենալու լայն հանարավորություններ: Եվրոպական միության հաստատություններն ու գործակալությունները նույնպես ունեն ընտրվելու իրավունք: Ինչ վերաբերում է Համայնքային դրամաշնորհների համար ընտրվելու իրավունք ունենալուն, ապա հողված 14-ը պետք է դիտարկվի հողված 21-ի լույսի ներքո, որը սահմանում է հասարակական մատակարարման ու դրամաշնորհների գործընթացներին մասնակցության կանոնները:

Յողված 15. Միջոցառումների տեսակները,

Յողված 16. Օժանդակության միջոցառումներ

Ներկայում կիրառվող գործունեության տեսակի հիման վրա հողված 15-ը սահմանում է այն միջոցառումների տեսակների անընդհատ լրացվող ցուցակը, որոնք կարող են ֆինանսավորվել սույն Կարգի համաձայն:

Յողված 16-ը թույլ է տալիս Համայնքին ֆինանսավորել Կարգի կիրառման համար անհրաժեշտ աջակցության բոլոր միջոցառումները: Եթե այս աջակցության միջոցառումներն ուղղակիորեն չեն ֆինանսավորվում բազմամյա ծրագրերի ու գործունեության ծրագրերի շրջանակներում, ապա հողված 16(2)-ն ապահովում է, որ դրանք ընդունվեն նույն ձևով, ինչպես որ ընդունվում են ռազմավարական փաստաթթերում և բազմամյա յուրահատուկ ծրագրերում չնախատեսված հատուկ միջոցառումները (տե՛ս հողված 13):

Յողված 17. Համաֆինանսավորում,

Յողված 18. Կառավարման գործընթացներ

Ներկայում կիրառվող գործունեության և համագործակցության միջոցառումների ավելի լավ համակարգում ապահովելու դոմորների ձգտման հետ միասին՝ հողված 17-ը հաստատում է, որ ֆինանսավորված միջոցառումները կարող են համաֆինանսավորվել (զուգահեռաբար կամ համատեղ): Պարագրաֆ 3-ը պայման է դնում, որ նման դեպքերում պետք է Հանձնաժողովը անդամ պետություններից (և,

* * * * *

**ԱՐԱԶԱՐԿ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱԼԱՍՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՃՈՒ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ ՍՏԵՂԾՈՂ
ԳԼԽԱՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ՈՒՐՎԱԳԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

* * * * *

մասնավորապես, դրանց հասարակական ու ենթապետական գործակալություններից), ցանկացած այլ դոնոր երկրներից և միջազգային ու տարածաշրջանային կազմակերպություններից ստանա ու տնօրինի կապիտալը: Այս դրույթը Հանձնաժողովին հավասար պայմանների մեջ է բնում այլ դրսորմերի հետ:

Հոդված 18-ը թույլ է տալիս, որ Հանձնաժողովը կիրարի միջոցառումներ համաձայն սույն Կարգի՝ օգտագործելով ֆինանսական Կարգով սահմանված կառավարման մեթոդները: Համաձայն ֆինանսական Կարգի հոդված 54(2)-ի՝ սահմանվում են բյուջեի իրագործման համար անհրաժեշտ հանձնարարականներով անդամ պետություններուն ազգային մարմիններին լիազորելու չափանիշները: Այն նաև սահմանում է, թե ինչ պայմաններուն ապակենտրոնացված կառավարման դեպքում օժանդակություն ստացող երկրները կարող են կիրառել նաև կարարման իրենց սեփական գործընթացները:

Հոդված 19. Բյուջենտային պարտավորություններ

Հոդված 19-ը պայման է դնում, որ բյուջենտային պարտավորությունները կատարվեն Հանձնաժողովի կողմից ընդունած որոշումների հիման վրա՝ համաձայն միջավետական համագործակցության ծրագրերի (հոդված 9), գործունեության ծրագրերի (հոդված 12), ռազմավարական փաստաթորերում և բազմամյա յուրահատուկ ծրագրերում չնախատեսված միջոցառումների (հոդված 13) և օժանդակության միջոցառումների (հոդված 16): Սա թույլ է տալիս (պարագան 2), որ բյուջենտային պարտավորությունները բաժանվեն տարեկան վճարումների, որոնք կատարվում են մի քանի տարում համաձայն ֆինանսական Կարգի հոդված 76-ի, ինչը տալիս է սրա հնարավորությունը, եթե, իհարկե, դա սահմանված է հիմնարար փաստաթղթում: Այս դրույթը հատկապես կիրառելի է համագործակցության ծրագրերի դեպքում:

Տարանջատված պարտավորություններ կիրառելու հնարավորությունը (պարագան 2) նախատեսված է միջավետական համագործակցության ծրագրերի համար: Սա կարևոր է այն պատճառով, որ կիաստավի պարզ ու նախօրոք որոշված ֆինանսական հիմք 2007-13 թթ. ողջ ժամանակաշրջանի համար և կստեղծվեն պայմաններ բազմամյա ծրագրերի վրա հիմնված նոտեցման արդյունավետ իրագործման համար: Այս փուլում չի նախատեսվում տարանջատված պարտավորություններ կիրառել մեկ երկիր, մի քանի երկիր ընդգրկող կամ թեմատիկ ծրագրերի համար:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդված 20. Համայնքի ֆինանսական շահերի պաշտպանությունը

Հոդված 20-ը կանխորշում է Համայնքի ֆինանսական շահերը պաշտպանելու և հատկապես իրազործված գործունեության անհրաժեշտ ստուգումներ անցկացնելը հնարավոր դարձնելու համար ճախատեսված վիճակառությունները:

Հոդված 21. Մասնակցություն տեսնդերմերին և պայմանագրերին

Հոդված 21-ը սահմանում է կանոններ սույն Կարգի կիրառման նպատակների համար անհրաժեշտ հասարակական մատակարարման ու դրամաշնորհային գործընթացներին մասնակցելու համար: Այս փուլում նախատեսված դրույթները համապատասխանում են Համայնքի օժանդակությանը⁶ առնչվող Եվրոպական պառալմենտի և Խորհրդի Կարգի Վերաբերյալ այն առաջարկներին, որոնք նախատեսված են համայնքի օգնության հիմնական գործիքները փոփոխելու համար՝ հաշվի առնելով հետազյում տրամադրվելիք օգնությունը: Նկատենք, որ հոդված 21-ը բույլ է տալիս մատակարարման ու դրամաշնորհային գործընթացներին մասնակցել այն եղողորդ երկրների ֆիզիկական ու իրավաբանական անձանց, որոնք բացում են իրենց սեփական հասարակական մատակարարման ու դրամաշնորհային ծրագրերը ԵՄ անդամ պետությունների համար:

Հոդված 21-ը կարող է փոփոխվել Խորհրդի և Եվրոպական պառլամենտի կողմից՝ այդ Կարգի քննությունից ստացված եզրակացությունների լույսի ներքո:

Հոդված 22. Նախաֆինանսավորում, Հոդված 23. Եվրոպական ներդրումային բանկին կամ այլ ֆինանսական միջնորդներին մատչելի ռազմական գործություններ

Յողված 22-ը սահմանում է, որ նախագինանսավորման արդյունքում ստաված շահութեա պետք է պահմի Վերօնական Վճարումից:

Հոդված 23-ը մատնանշում է, թե հատկապես ինչպիսի նախապատրաստական աշխատանք պետք է կատարի Հանձնաժողովը ամեն դեպք առանձին բննելիս, եթե այն որոշում է ֆոնդերո մատերի

⁶ COM(2004) 313 of 26 April 2004.

* * * * *

ԱՌԱՋԱՐԿ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՃՈՒ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ ՍՏԵՂԾՈՂ
ԳԼԽԱՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐՈՒ ՈՒՐՎԱԳԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ
Դարձնել Եվրոպական ներդրումային բանկի կամ այլ ֆինանսական
միջնորդների համար:

* * * * *

Հոդված 24. Գնահատում

Հոդված 24-ը պարտավորեցնում է Հանձնաժողովին կանոնավորացն գնահատական տալ աշխարհագրական և թեմատիկ քաղաքականության ու ծրագրերի վերաբերյալ և հատվածային քաղաքականության ու ծրագրավորման արդյունավետության վերաբերյալ:

Մաս IV. Եզրափակիչ դրույթներ

Հոդված 25. Ամենամյա գեկույց

2001թ. սկսած կիրառվող որոշումներին զուգահեռ, ցանկանալով պարզեցնել ու նպատակահարմար դարձնել խորհրդին և Պառլամենտին ուղղված գեկույցների թիվը, հոդված 25-ը պահպանում է ստատուս քվո և սահմանում է, որ Հանձնաժողովը տարեկան գեկույցներ ներկայացնի խորհրդին ու Եվրոպական պառլամենտին: Զեկույցը պետք է պարունակի արտաքին հարաբերությունների զանազան գործիքների շրջանակներում ցուցաբերված ողջ օգնությունը: Այս կազմվում է 2001 թ. սկսած կիրառվող փորձի և, հատկապես, գեկույցի ծնի ու եռթյան վերաբերյալ ամեն տարի խորհրդի ու Եվրոպական պառլամենտի կատարած մեկնաբանությունների լույսի ներքո:

Հոդված 26. Կոմիտեն

Հոդված 26-ը հիմնում է անդամ պետությունների ներկայացուցիչների կոմիտեն: Կոմիտեի արտոնությունների մանրամասների համար տես հոդված 7-ի, 12-ի և 13-ի բացատրությունները:

Հոդված 27. Սույն Կարգի շրջանակներին չհամապատասխանող երրորդ երկրի մասնակցությունը

Համայնքի օգնության արդյունավետությունը մեծացնելու և ծրագրերը բազմաթիվ գործիքների միջև բաժանելուց խուսափելու համար հոդված 27-ն ընդլայնում է սույն Կարգի շրջանակներում ընտրվելու իրավունքը, որպեսզի ընդգրկվեն անդրծովվան երկրներ, որոնք ունեն Միավորմանը նախորդող գործիքի մեջ ընտրվելու իրավունք, և այն երկրները, որոնք իրավունք ունեն ընտրվելու զարգացման և համագործակցության համար ֆինանսավորման գործիքի շրջանակներում: Այս

★ ★ ★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ★ ★ ՔԱՂՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

դրույթը կկիրառվի, երբ ընդունված նախագիծը կամ ծրագիրն ունենացլուալ, տարածաշրջանային կամ միջազգական բնույթ:

Յողված 28. Օգնության դադարեցում

Յողված 28-ը սահմանում է այն գործընթացները, որոնք կիրառելի են Մաս I-ում բնարկված սկզբունքները խախտելու դեպքում: Այն կիրավում է, երբ գործընկեր երկրի հետ գործընկերության ու համագործակցության համաձայնագիր չկա, կամ երբ նման համաձայնագիրը չի նախատեսում օգնության դադարեցում:

Յողված 29. Ֆինանսական համակարգին ուղղվող գումար

Յողված 29-ը սահմանում է Կարգի կիրառման համար ֆինանսական համակարգին ուղղվող գումարի չափը:

Յողված 30. Վերանայում

Յողված 30-ը բույլ է տալիս, որ Կարգը վերանայվի Յանձնաժողովի արած առաջարկի հիման վրա:

Յողված 31. Նախորդ կարգերի չեղյալ հայտարարում

Յողված 31-ը չեղյալ է հայտարարում ՏԱՍԻՒ, MEDA և մյուս կարգերը:

Յողված 32. Ուժի մեջ մտնելը

Նախատեսվում է, որ սույն Կարգն ուժի մեջ կմտնի Պաշտոնական ամսագրում (Official Journal) տպագրվելուց քանի օր հետո, սակայն կամ կիրառվել միայն 2007 թ. հունվարի 1-ից: Սրա պատճառն այն է, որ չեղյալ հայտարարված կարգերը դեռ անհրաժեշտ են մինչև ընթացիկ ֆինանսական հեռանկարի ավարտը, սակայն նոր Կարգը կարող է միևնույն ժամանակ արդեն իրավաբանական հիմք ծառայել կիրառման կանոնների նախագծման ու ընդունման համար, ինչը պետք է արվի հնարավորինս շուտ:

* * * * *
ԱՐԱՋԱՐԿ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՃՈՒ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ
ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ ՍՏԵՂԾՈՂ
ԳԼԽԱԿՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ՈՒՐՎԱԳԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ
* * * * *

ԵՎՐՈՊԱԿԱՍ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՄԻՌՈՒԹՅԱՆ

ԽՈՐՃՈՒՐԴԸ

Հաշվի առնելով Եվրոպական համայնքը իիմնադրող Պայմանագիրը, և հատկապես հոդվածներ 179-ը և 181 ա-ն,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացած առաջարկը⁷,

գործելով Պայմանագրի հոդված 251-ում ուրվագծված գործընթացի համաձայն,

հաշվի առնելով, որ

- (1) նոր կառուցվածք է առաջարկվում նոր օգնություն պլանավորելու և ցուցաբերելու համար, որպեսզի համայնքի արտաքին օգնությունն ավելի արդյունավետ դրանա, խորհրդի Կարգը (EC) ստեղծում է Միավորմանը նախորդող գործիքը (ՄՆԳ) համայնքի կողմից թեկնածու կամ հավակնորդ երկրներին⁸ օգնության համար: Խորհրդի և Եվրոպական պառամենտի Կարգը (EC) ստեղծում է ֆինանսական գործիք համագործակցության զարգացման համար⁹: Սույն Կարգը երրորդ գլխավոր գործիքն է, որն ուղղակի օժանդակություն է ապահովում Եվրոպական միության արտաքին քաղաքականության համար:
- (2) Եվրոպական խորհրդողը, 2002 թ. դեկտեմբերի 12-ին և 13-ին կուտենհագենում հանդիպելով, հաստատեց, որ Եվրոպական միության ընդլայնումն իրենից կարևոր հնարավորություն է ներկայացնում հարևան երկրների հետ հարաբերությունները զարգացնելու համար՝ հիմնվելով նոյն քաղաքական ու տնտեսական արժեքների վրա, նաև հաստատեց, որ Միությունը պնդում է, թե հարկ է խուսափել Եվրոպան բաժանող սահմանագծերից ու նպաստել կայունության ու բարեկեցությանը Միության սահմաններից թե՛ դուրս, թե՛ ներս:
- (3) Եվրոպական խորհրդողը, 2004 թ. հունիսի 17-ին և 18-ին Բրյուսելում կրկնեց, որ ինքը մեծ նշանակություն է տալիս այս հարևանների հետ համագործակցության ամրապնդմանը՝ հենվելով գործընկերության ու համատեղ սեփականատիրության վրա և դեմոկրատիայի ու մարդու իրավունքները հարգելու համատեղ արժեքների վրա:
- (4) Եվրոպական միության և դրա հարևանների միջև արտոնյալ

★ ★ ★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ★ ՔԱՂՓԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ

- հարաբերությունները կկառուցվեն ընդհանուր արժեքներին նվիրվածության հիման վրա, որոնք ներառում են դեմոկրատիան, օրենքի գերակյալությունը, արդար կառավարումն ու մարդու իրավունքների պաշտպանությունը, և շուկայական տնտեսության սկզբունքները, ազատ առևտուրը, շարունակական զարգացումն ու աղքատության նվազեցումը:
- (5) Արևելյան Եվրոպայում և Հարավյախին Կովկասում Գործընկերության և համագործակցության համաձայնագրերը հիմք են ապահովում պայմանագրային հարաբերությունների համար: Միջերկրականի ավագանում Եվրոպայի ու Միջերկրականի ավագանի Գործընկերության համաձայնագրերը («Բարսելոնի գործընթաց») ապահովում են տարածաշրջանային կառույց համագործակցության համար, որը լրացվում է Միավորնան համաձայնագրերի ցանցով:
- (6) Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում Եվրոպական միության ու գործընկեր երկրների կողմից համատեղ սահմանվում են մի շարք առաջնահերթություններ, որոնց լրացնում են մի շարք համատեղ ընդունված Գործողության պլաններ: Դրանք ընդգրկում են որոշակի գործողությունների կարևոր ոլորտներ՝ ներառյալ քաղաքական երկխոսությունը և բարեփոխումները, առևտուրն ու տնտեսական բարեփոխումները, անվերապահ սոցիալ-տնտեսական զարգացումը, հետազոտություններն ու նորարարությունը և ժողովուրդների միջև շփումը: Այս առաջնահերթությունների իրագործման ուղղությամբ կատարված առաջնմարդացը կնպաստի Գործընկերության և համագործակցության ու Միավորնան համաձայնագրերի ողջ ներուժը հրականացնելուն:
- (7) Ընդհանուր արժեքներին ու սկզբունքներին գործընկեր երկրների նվիրված մնալուն և գործողության ծրագրերի իրականացնանն ուղղված նրանց ջանքերին օժանդակելու համար համայնքը պետք է պատրաստ լինի օգնելու այս երկրներին և օժանդակի նրանց միջև, ինչպես նաև նրանց ու անդամ պետությունների միջև համագործակցության՝ նպատակ ունենալով ստեղծել համատեղ կայունության, անվտանգության և բարեկեցության գոտի, որտեղ կտիրի նշանակալից համագործակցություն և քաղաքական ինտեգրացիա:
- (8) Կարևոր է, որ Եվրոպական հարևանության քաղաքականության ստեղծած կառույցի շրջանակներում զարգացող հարևան

ԱՐԱՋԱԿԱՎԱՐԻ ԵՎ ՊՐՈՊԱԿԱՎԱՐԻ ՊԱՏՈՎԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՃՈՒԻ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ
ԵՎ ՊՐՈՊԱԿԱՎԱՐԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ ՍՏԵՂՈՇՈՂ
ԳԼԽԱՎՈՐ ՐԴՈՒՅԹԱՆԵՐՆ ՈՒՐՎԱԳԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Երկրներին ցուցաբերվելիք օժանդակությունը կապակցված լինի Համայնքի զարգացման քաղաքականության նպատակների ու սկզբունքների հետ, ինչպես որ ուրվագծված է 2000 թ. նոյեմբերի 10-ին Խորհրդի և Հանճնաժողովի Եվրոպական համայնքի զարգացման քաղաքականության վերաբերյալ արած Համատեղ հայտարարության մեջ:

- (9) Եվրոպական միությունը և Ռուսաստանը որոշել են իրենց ռազմավարական գործընկերությունը զարգացնել չորս ընդհանուր գոտիներ ստեղծելու միջոցով, իսկ համայնքի օգնությունը կօգտագործվի՝ օժանդակելու համար այս գործընկերությանը և խթանելու համար միջավայրական համագործակցությունը Ռուսաստանի ու Եվրոպական միության հարևանների միջև իր եղած սահմաններում:
- (10) Միջերկրականի ավագանի գործընկերների համար օգնությունն ու համագործակցությունը կիրականացվեն 1995 թ. նոյեմբերի 28-ին Բարսելոնի հայտարարությամբ ստեղծված Եվրոպայի ու Միջերկրականի ավագանի միջև Գործընկերության շրջանակներում, և նկատի կառնվի դրա համատեքստում ձեռք բերված համաձայնությունը, որը վերաբերում է ապրանքների շրջանառության համար ազատ առևտորի գոտու ստեղծնանը և լիբերալիզմացիայի գործընթաց սկսելուն:
- (11) Կարևոր է խթանել համագործակցությունը թե՛ Եվրոպական միության արտաքին սահմաններում, թե՛ գործընկերների միջև, հատկապես այն երկրների միջև, որոնք մոտ են տեղադրված իրար:
- (12) Նոր բաժանարար սահմանագծեր ստեղծելու խուսափելու համար հատկապես կարևոր է վերանայել Եվրոպական միության արտաքին սահմանների մոտ գտնվող երկրների միջև արդյունավետ միջավայրական համագործակցության խոչընդոտությունը: Միջավայրական համագործակցությունը պետք է նպաստի հարևան սահմանակից տարածաշրջանների միջև հաստատուն տարածաշրջանային զարգացմանը և համաշափ ինտեգրացիային համայնքի ողջ տարածքում և հարևան երկրների հետ: Այս նպատակին ամենից լավ կարելի է հասնել՝ միավորելով արտաքին քաղաքականության նպատակները կայուն տնտեսական ու սոցիալական միասնության հետ:
- (13) Երենց նպատակներին հասնելու ճանապարհին գտվող հարևան

* * * * *
* ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
* ՔԱՂԱՔԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ
* * *

Երկրներին օգնելու համար, և նրանց ու անդամ պետությունների միջև համագործակցությունը խթանելու համար ցանկալի է ստեղծել միասնական քաղաքականության գործիք, որը կփոխարինի գոյություն ունեցող մի շարք այլ գործիքների և կապահովի հստակությունն ու կապարեցմի օգնության ծրագրավորումն ու կառավարումը:

- (14) Այս գործիքը նաև կօժանդակի գործընկեր Երկրների ու անդամ պետությունների միջև սահմանային համագործակցությանը՝ բերելով զգալի արդյունավետ եկամուտ ու գործելով միասնական կառավարման մեխանիզմի շրջանակներում և ունենալով գործընթացների մեկ միասնական ամբողջություն։ Այս կառուցվի 2004-2006 թթ. ընկած ժամանակահատվածում Հարևանության ծրագրերի կիրառման արդյունքում ձեռք բերված փորձի հիման վրա և կգործի այնպիսի սկզբունքներով, ինչպիսիք են՝ բազմամյա ծրագրավորումը, գործընկերությունը և համաֆինանսավորումը։
- (15) Սույն Կարգը 2007-2013 թթ. ժամանակաշրջանի համար սահմանում է ֆինանսական կառուցվածքը, որն իրենից ներկայացնում է համակարգին ուղղվող գլխավոր գումարը բյուջետային նարմնի համար՝ համաձայն Եվրոպական պաշտամնութի, Խորհրդի և Հանձնաժողովի միջև 1999 թ. մայիսի 6-ին կնքած բյուջետային կարգի և բյուջետային գործընթացների բարելավման առնչվող Միջազգային համաձայնագրի կետ 33-ի։
- (16) Սույն Կարգի կիրառման համար անհրաժեշտ միջոցներն այնպիսի միջոցներ են, որոնք ընդունվում են՝ համաձայն Հանձնաժողովին լիազորված կիրառման իշխանության իրականացման համար գործընթացներ սահմանող Խորհրդի 1999 թ. հունիսի 28-ի 1999/468 Որոշման⁷։
- (17) Կառավարման գործընթացը կիրառելի է, եթե սահմանվում են կիրառման կանոնները, որոնք դեկավարելու են միջպետական համագործակցությունը, ինչպես նաև ընդունվում են ռազմավարական նկատառումներ ու ընդգրկում նպատակներ սահմանող փաստաթղթեր, որոնք Համայնքի օգնությունն ուղղորդում են դեպի որևէ երկիր, տարածաշրջան կամ դեպի որևէ հատուկ թեմատիկ խնդիր։ Որևէ կրնկրեալ դեպքի համար միջոցները, որոնք հիմք չունեն ռազմավարական փաստաթղթե-

* * * * *

**ԱՌԱՋԱՐԿ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՃՈՒ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ ՍՏԵՂՈՇՈՂ
ԳԼԽԱՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ՈՒՐՎԱԳԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

* * * * *

րում և որոնց արժեքը գերազանցում է հաստատված սահմանը, կարող են հանձնաժողովի կողմից ընդունվել թույլատրելի դեպքերում օգտագործելով խորհրդատվական գործնթաց:

- (18) Առաջարկված նպատակները պետք է խթանեն սերտ համագործակցությունը և Եվրոպական միության ու հարևան երկրների միջև տնտեսական ինտեգրացիայի առաջընթացին:
- (19) Սույն Կարգն անհրաժեշտ է դարձնում չեղյալ հայտարարել 1992 թ. հունիսի 29-ի ֆինանսական ու տեխնիկական համագործակցության վերաբերյալ Համաձայնությունների կիրառման առնչվող (EEC) № 1762/92 (MEDA) Կարգը, որը Համայնքը կնքել է Միջերկրականի ավագանի ոչ անդամ երկրների հետ⁸, 1962 թ. հունիսի 23-ին (MEDA) Եվրոպայի և Միջերկրականի ավագանի երկրների միջև գործընկերության շրջանակներում տնտեսական ու սոցիալական կառույցների բարեփոխումներին ուղղեցող ֆինանսական և տեխնիկական միջոցառումների վերաբերյալ (EC) № 1488/96 Կարգը⁹, Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում գործընկեր երկրներին օգնության ցուցաբերմանն առնչվող 1999 թ. (TACIS) դեկտեմբերի 29-ի Խորհրդի 99/2000 Կարգը¹⁰ (EC, Euratom), և Արևմտյան Եվրոպայի ու Գազայի տարածքի հետ ֆինանսական և տեխնիկական համագործակցությանն առնչվող Խորհրդի № 1734/94 Կարգը¹¹ (EC):

⁸ OJ L 181, 1.7.1992, p.1.

⁹ OJ L 189,30.7.1996, p. 1. Regulation as last amended by Regulaiton (EC) № 2698/2000 (OJ L 311, 12.12.2000,p. 1).

¹⁰ OJ L 12, 18.1.2000, p. 1.

¹¹ OJ L 182, 16.7.1994, P [...] Regulation last amended (EC) № 669/2004 (OJ L 105, 14.4.2004, p.1).

★ ★ ★
★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂՓԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ
★ ★ ★

ՄԱՍ

ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Հոդված 1

Հարցի էռլեյունն ու գործունեության շրջանակը

- (1) Այս որոշումը ստեղծում է Հարևանության և Գործընկերության գործիք՝ ապահովելու համար օժանդակություն (ստորև՝ «Համայնքային օժանդակություն») տարածաշրջանի բարգավաճման և բարիդրացիության զարգացման համար, ներգրավելով Եվրոպական միությունը և հավելված 1-ում նշված երկրները (ստորև՝ «Գործընկեր Երկրներ»):
- (2) Համայնքային օժանդակությունը կօգտագործվի ի շահ գործընկեր Երկրների: Համայնքային օժանդակությունը կարող է ծառայել անդամ պետությունների և գործընկեր Երկրների ընդհանուր շահին՝ նպատակ հետապնդելով զարգացնել միջպետական և միջտարածաշրջային համագործակցությունն ինչպես սահմանված է հոդված 16-ում:
- (3) Միությունը իիմնված է մարդու արժանապատվության, ազատության, ժողովրդավարության, հավասարության, օրենքի գերակայության և մարդու իրավունքները հարգելու արժեքների վրա և փորձում է Երկխոսության ու համագործակցության միջոցով առաջ քաշել այս արժեքների նկատմամբ հավատարիմ մնալու սկզբունքը գործընկեր Երկրներում:

Հոդված 2

Օժանդակության շրջանակը

- (1) Հարևանության և գործընկերության գործիքի համաձայն իրականացվող համայնքային օժանդակությունը կզարգացնի անուր համագործակցություն և ուժեղացող տնտեսական ինտեգրացիա Եվրոպական միության և գործընկեր Երկրների միջև և, մասնավորապես, գործընկերության ու համագործակցության պայմանագրերի, հաղորդակցության պայմանագրերի կամ այլ գործող և ապագա պայմանագրերի իրականացումը: Համայնքային օժանդակությունը կօգտագործվի ապահովելու համար այն միջոցները, որոնք հետամուտ են հետևյալ մեկ կամ ավելի նպատակներին:
- (2)

* * * * *
ԱՐԱՋԱՐԿ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՃՈՒ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ ՍՏԵՂԾՈՂ
ԳԼԽԱՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ՈՒՐՎԱԳԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ
* * * * *

- (ա) աջակցել քաղաքական երկխոսությանը և բարեփոխումներին,
- (բ) աջակցել օրենսդրական և կանոնակարգային համապատասխանեցմանն առնչություն ունեցող բոլոր ոլորտներում և, մասնավորապես, խթանելու ներքին շուկայում գործընկեր երկրների աճող մասնակցությանն ու առևտուի հնտենսիվացմանը,
- (գ) ուժեղացմել ազգային ինստիտուտները և մարմինները, որոնք պատասխանատու են քաղաքականության կատարելագործման և արդյունավետ իրագործման համար այն տարածքներում, որոնք ներառված են հաղորդակցության պայմանագրերում, գործընկերության և համագործակցության պայմանագրերում և այլ ապագա համանման պայմանագրերում,
- (դ) աջակցել հաստատուն զարգացմանը,
- (ե) աջակցել շրջակա միջավայրի պաշտպանությանը և բնական ռեսուրսների ծիշտ դեկավարմանը,
- (զ) օժանդակել աղքատության կրծատմանն ուղղված քաղաքականությանը,
- (է) օգնել հասարակական զարգացմանը և գենդերային հավասարությանը, զբաղվածությանը և սոցիալական պաշտպանվածությանը՝ ներառյալ հասարակական երկխոսությունները կարևորող քաղաքականությունը և հարգանքն արիենտակցական միությունների իրավունքների ու աշխատանքային բուն չափորոշիչների նկատմամբ,
- (ը) օգնել առողջապահությունը, կրթությունը և ուսուցումը զարգացմելու քաղաքականությանը,
- (թ) զարգացմել և պաշտպանել նարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները և օժանդակել ժողովրդավարության գործընթացին՝ ներառյալ ընտրական դիտումները և աջակցությունը,
- (ժ) խթանել քաղաքացիական հասարակության զարգացմանը;
- (ի) օժանդակել շուկայական տնտեսության զարգացմանը՝ ներառյալ մասնավոր սեկտորին օժանդակելու համար միջոցառումները, խթանուսել ներդրումները և կատարելագործել գլոբալ առևտությը,

★ ★ ★
★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ
★ ★ ★

- (լ) զարգացնել էներգետիկայի, հեռահաղորդակցման և տրանսպորտի սեկուլյար համագործակցությունը՝ ներառյալ փոխադարձ կապերի, ցանցերի և դրանց աշխատանքների, միջազգային տրանսպորտի և էներգետիկայի աշխատանքների, վերականգնվող էներգիայի աղբյուրների, էներգիայի արդյունավետության և մաքուր տրանսպորտի անվտանգությունն ու ապահովությունը,
- (իս) օժանդակություն ցուցաբերել այն գործողություններին, որոնք ուղղված են բնակչության համար սննդի ապահովության բարձրացմանը, մասնավորապես, սանհիտարական և ֆիտոսանիտարական ոլորտում,
- (օ) երաշխավորել սահմանների արդյունավետ և անվտանգ դեկավարումը,
- (զ) զարգացնել համագործակցությունը արդարադատության և ներքին գործերի ոլորտում՝ ներառյալ խնդիրներ, ինչպիսիք են՝ ապատարանը և միջորացիան, պայքարն ահարեկչության և կազմակերպված հանցագործության դեմ և դրանց կանխումը՝ ներառյալ դրանց ֆինանսավորումը, փողերի լվացումը և հարկերի շրջանցումը,
այն հարցում, որ Միության ընդայնումը չպետք է հանգեցնի 25 անդամից բաղկացած ԵՄ-ի արտաքին սահմանների մոտ նոր բաժանարար սահմանագծերի առաջացմանը: Եվրոպական հարևանության քաղաքականությունը մտածվել էր որպես ուղի այս հարցին պատասխանելու համար և Արևելքում ու Հարավում մեր հարևանների հետ առավել սերտ հարաբերություններ հաստատելու համար: Հանձնաժողովը ներկայացրել է «Եվրոպական հարևանության քաղաքականության վերաբերյալ ռազմավարական փաստարուր»¹⁵ (ԵՀՔ), որը մանրանանում է, թե ինչպես Միությունը կշարունակի խթանել կայունությունը, անվտանգությունը և բարեկեցությունն իր սահմաններից դուրս՝ Ռուսաստանի, Արևմտյան PIS-ի, Հարավային Կովկասի և Հարավային Սիծերկրականի ավազանի երկրների հետ: Տարածաշրջանային և միջազետական համագործակցությունը պետք է ուժեղացվի:

ԵՀՔ-ն ընդգրկում է ոլորտների լայն շրջանակ՝ քաղաքական երկխոսություն և բարեփոխումներ, առևտուր, ներքին շուկայում մասնաբաժին աստիճանաբար ձեռք բերելու համար գործընկերներին պատրաստող միջոցառումներ, արդարադատության և ներքին գործեր, եներգետիկայի, տրանսպորտի, հասարակության տեղեկատվության, շրջակա միջավայրի և հետազոտության նորարարության, սոցիալական քաղաքականության և ժողովուրդների միջև անմիջական շփումներ՝ ներառյալ համայնքի որոշակի ծրագրեր սկսելը, և միջազետական ու տարածաշրջանային համագործակցություն:

ԵՀՔ-ը նպատակ ունի զարգացնել Միավորման համաձայնագրերի ու Գործընկերության և համագործակցության համաձայնագրերի ողջ ներուժը, որոնք շարունակում են կազմել ԵՄ-ի և շահագրգիռ հարևան երկրների միջև հարաբերությունների պայմանագրային հիմքը:

ԵՀՔ-ի հիմնական գործողության գործիքներն են գործընկեր երկրների հետ գործառնության պլանների մշակումը: Գործառնության պլանները սահմանում են քաղաքական ու տնտեսական բարեփոխումների և բոլոր պատշաճ ոլորտներում անուր համագործակցության համար առաջնահերթ միջոցառումները: Դրանք խիստ կարևոր կլինեն որևէ երկրի համար համայնքի յուրահատուկ օժանդակություն ծրագրավորելու համար:

¹⁵ Եվրոպական հարևանության քաղաքականության վերաբերյալ ռազմավարական Փաստարուր COM(2004) [նաև առանձին բացատրագի՞՞ղ]:

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ★ ★ ՔԱՂՓԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ

Դեմոկրատիայի և օրենքի գերակայության համախմբումն ու զարգացումը, և մարդու իրավունքների ու իիմնարար ազատությունների հարգելով կազմում են Եվրոպական միության արտաքին քաղաքականության գլխավոր նպատակները։ Սույն Կարգի և դրա աշխարհագրական ընդգրկման շրջանակներում Եվրոպական հանայնքը նպաստում է մարդու իրավունքներն ու իիմնարար ազատությունները հարգող դեմոկրատական պրոցեսներին օժանդակող և ուժեղացնող գործողությունների ներդրմանը՝ անհրաժեշտության դեպքում նաև ընտրություններին հսկելու և օգնելու միջոցով՝ զարգացնելով ու միավորելով օրենքի գերակայությունը և լավ կառավարումը։

Առաջարկված Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքը (ԵՀ ԳԳ) այն իիմնական գործիքն է, որն օգնում է ԵՀ-ը կիրարկմանը և հատկապես ուշադրություն է դարձնում ԵՀ-ը Գործողության պլանների կիրարկման վրա։ Դրա լիազորությունների շրջանակի մեջ մտնում են այնպիսի նպատակներին օժանդակելը, ինչպիսիք են՝ հաստատում զարգացումը կամ աղքատության դեմ պայքարը, ինչը ներառում է մասնակցությունը ԵՄ-ի ներքին շուկային։ Իրավական հարմարեցումը, կարգավորող համապատասխանեցումը և ինստիտուտների կառուցումը աջակցություն են ստանում այնպիսի մեխանիզմների միջոցով, ինչպիսիք են՝ փորձի փոխանակումը և անդամ պետությունների հետ երկարաժամկետ երկպողմանի պայմանավորվածությունները։

ԵՀ-ը նպաստում է համայնքի օգնության հաջորդական ու տեսանելի լինելուն և պարզեցնում է բաշխման մեխանիզմները։ Գործիքի յուրահատուկ և նորարարական գիծը դրա միջանական համագործակցության բաղադրիչն է։ Դամաձայն այս բաղադրիչի ԵՀ-ը ն ֆինանսավորում է «համատեղ ծրագրեր», որոնք միավորում են ընդհանուր սահման ունեցող տարածաշրջաններ անդամ պետություններից և գործընկեր երկրներից։ Գործիքն արմատապես պարզեցնում է գործընթացները և զգալիորեն արդյունավետ է դարձնում եկամուտը։ Այն օգտագործում է «կառուցվածքային կապիտալի» մոտեցում՝ հիմնված բազմամյա ծրագրավորման, գործընկերության և համաֆինանսավորման վրա։ ԵՀ-ը միջանական համագործակցության բաղադրիչը ֆինանսավորվում է Տարածաշրջանային զարգացման Եվրոպական հիմնադրամի կողմից (ՏՀԵՀ)։

ԵՄ-ն և Ռուսաստանը որոշել են իրենց հարաբերությունները զարգացնել ավելի շատ չորս ընդհանուր ոլորտների վրա հիմնված ռազմավարական գործընկերության շրջանակներում, քան Եվրոպական

* * * * *

ԱՐԱՋԱՐԿ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՃՈՒ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ ՍՏԵՂԾՈՂ
ԳԼԽԱՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՈՒՐՎԱԳԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

* * * * *

հարևանության քաղաքականության շրջանակներում: Ինչևէ, այս շրջանակներում քննարկված հարցերը շատ նման են նրանց, որոնք կան ԵՀՖ-ի համատեքստում: Այս պատճառով ԵՀՖ-ն կընդգրկի նաև համայնքի օգնությունը Ռուսաստանին:

Գործողության պլանների պարտավորություններին համապատասխանելու և այսպիսով ԵՄ-ի հետ ավելի առաջադեմ հարաբերություններ հաստատելու գործնկեր երկրների կարողությունը հանդիսանում է առաջարկված մուտեցման հաջորդության հիմնական ցուցանիշը: Արդեն գործող (Ենթակոմիտեներ և այլն) ինստիտուցիոնալ կառուցվածքի միջոցով Գործողության պլանների իրականացման առաջընթացի վերաբերյալ հանձնաժողովի պարբերական գեկույցներն ապահովում են մշտական տեղեկատվություն:

5.1.2. և 5.1.3 Նախնական և վերջնական գնահատում

ա) Խաղաղության խմբի աշխատանքը

Հանձնաժողովը 2003 թ. երկրորդ կեսին իրականացրեց ֆինանսական հեռանկարների համար իր առաջարկմերը պատրաստելու համատեքստում Եվրոպական համայնքի արտաքին գործիքների ողջ բազմազանության բարձր մակարդակի լայնամասշտար վերանայում: Հանձնաժողովը հիմնեց «Խաղաղության խումբը», որին հանձնարարվում էր դեկավարել արտաքին հարաբերությունների համար ապագա նախապատվությունների և այս նախապատվություններին ծառայելու համար անհրաժեշտ գործիքների սահմանումը: Այս խումբը գործում էր թե՝ արտաքին հարաբերությունների կոմիսարների, թե՝ ծառայությունների մակարդակում: Այն կանոնավորապես հավաքվում էր 2003 թ. ապրիլից մինչև դեկտեմբեր և զարգացնում այն սկզբունքները, որոնք սահմանված էին «մեր ընդհանուր ապագան կառուցելու, քաղաքականության հիմնահարցերը և հաղորդակցության բյուջետային միջոցները»¹⁶ հաղորդագրության մեջ: Նպատակներն ու գործիքները Եվրոպական միության արժեքների ու շահերի հետ հավասարեցնելու անհրաժեշտությունը բնորոշվում է որպես հիմնավորապես կարևոր:

Մասնավորապես, «Խաղաղության խումբն» ընդգծում է, որ Եվրոպական միության արժեքները, աչքի ընկնելով իրենց դեմոկրատական ավանդույթով, սոցիալական մոդելով և ինտեգրացիայի փորձով,

¹⁶ COM(2004) 101 du 10 février 2004.

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ★ ★ ՔԱՂՓԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ

ընդգրկում են մարդու արժանապատվությունը, օրենքի գերակայությունը, մարդու իրավունքները, համախմբվածությունը, սեռերի միջև հավասարությունը, Միացյալ ազգերի բազմակողմ համակարգին հավատարմությունը և օժանդակությունը տարածաշրջանայնությանը բազմակողմ տնտեսական համակարգի ներսում, որպես զարգացնան ու համախմբվածության ուժի: Այս շեշտում է, որ իր շահերը Եվրոպական միությանը տանում են դեպի հաստատուն զարգացման վրա հիմնված միջազգային ածի օժանդակմանը: Այս ձևով այն երաշխավորում է իր համար ավելի շատ ելքեր ու որակյալ աշխատանքներ մրցակցային, բաց և կարգավորվող շուկաներում: Վերջապես, «Խաղաղության խումբը» խորհուրդ տվեց, որ Եվրոպական միությունն իր արժեքներն ու շահերն առաջ տանի՝ գործելով միաժամանակ թե՛ որպես մայրցամաքային ուժ, թե՛ որպես գլոբալ տնտեսական ու քաղաքական խաղացող:

Ինչ վերաբերում է համայնքային գործիքներին, «Խաղաղության խումբը» ընդունեց, որ Եվրոպական միության համագործակցության և օգնության քաղաքականությունը 50 տարվա հաջորդական կուտակման հետևանք է, որի արդյունքն է օգնության գործիքների բազմապատկումը և օգնության տնօրինման տարանջատումը թե՛ ծրագրավորման, թե՛ կիրարկման գործառնությունների առումով (նույնիսկ, եթե վերջին ժամանակների քաղաքականության և կառուցվածքային բարեփոխումներն օգնել են լավացնել Եվրոպական միության համագործակցության և օգնության քաղաքականության հաջորդականությունն ու հետևողականությունը):

«Խաղաղության խումբը» առաջարկեց, որ Եվրոպական միության արտաքին օգնության կառույցը ռացիոնալիզացվի և պարզեցվի իրավական հիմքերի թվի, ֆինանսական սահմանների թվի, և ծրագրերի թվի կրծատման միջոցով: Ավելի մանրամասն այն խորհուրդ տվեց, որ.

- գոյություն ունեցող օգնության ծրագրերի (EDF, ALA, MEDA, ՏԱՄԻՍ, CARDS և այլն) բարդ կառույցը, որոնք ընդգրկում են միջամտությունների (խաղաղարարության և հետճնաժամանյին գործողություններ, վերականգնում, տնտեսական բարեփոխումներ, ճախագծեր, մարդու իրավունքների ծրագրեր, բյուջետային օժանդակություն) լայն շրջանակ, պետք է զգալիորեն համակարգվի,

- Եվրոպական համայնքի և անդամ պետությունների քաղաքականություններն ու կիրարկումը պետք է հմապատասխանեցվեն:

* * * * *

ԱՐԱՋԱՐԿ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱԼԱՍՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՃՈՒ ԿԱՐԳԻ ՅԱՄԱ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ ՍՏԵՂԾՈՂ
ԳԼԽԱՎՈՐ ՐԴՈՒՅԹԱՆԵՐՆ ՈՒՐՎԱԳԾԵԼՈՒ ՅԱՄԱ

* * * * *

Բացի այդ՝ «Խաղաղության խումբն» ընդգծեց հետևյալ կետերը.

- Գործընկեր երկրների ու տարածաշրջանների հետ սեփականության և գործընկերության սկզբունքների վրա հիմնված մեծ աշխարհագրական ծրագրերը և Համայնքի կողմից քաղաքականության նախաձեռնություններ առաջ քաշող թեմատիկ ծրագրերը պետք է շարունակեն օժանդակություն ստանալ,
- Կամոնավոր ստուգման ենթակա ռազմավարական փաստաթղթերը ճիշտ գործիքն են՝ ապահովելու համընդհանուր քաղաքականության հաջորդականությունը և հետապնդելու տարրերը շրջաններում արտաքին քաղաքականության նպատակները, ինչպես նաև ներքին քաղաքականության արտաքին բնագավառներում,
- Ուսուուրսները պետք է գործընկեր երկրների միջև բաշխվեն համաձայն ակնկալվող և գնահատված գործերի, իսկ ռազմավարության փաստաթղթերի պրոցեսը, որին օժանդակում են ավելի ուժեղ վերլուծական ունակությունները, պետք է համադրի նպատակներն ու ծեռքբերումները,
- Գործերի վրա հիմնված բաշխումները չեն նշանակում աճող պայմանականություն ավանդական իմաստով, և քաղաքական պայմանականություն ունեցող հարցին պետք է մոտենալ զգուշավոր ձևով՝ հիմնվելով փորձից քաղված դասերի վրա,
- Զնայած ամեն մի և յուրաքանչյուր դեպքում սա չէ լուծումը, սակայն արդյունքների, մասնավորապես գործընկեր երկրներում քաղաքական ու տնտեսական բարեփոխումների մեջ շահագրգռություն ստիպում է Հանձնաժողովին, եթե հնարավոր է, առաջարկել հետագա ֆինանսական ու տեխնիկական օգնությունը նախագծերից տանել դեպի հատվածային ծրագրեր, բյուջետային օժանդակություն և մակրոտնտեսական ֆինանսական օգնություն, որը հեշտացնում է թե՛ գործընկեր երկրի կողմից վերցնելու գործընթացը, քանի որ կիրավուն են սեփական բյուջետային գործընթացները, թե՛ դոնորների համակարգումը, ինչպես նաև պարտավորեցնում է արագ կատարել վճարում:

★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն առաջարկը հաշվի է առնում նաև զարգացման աշխատանքների Վերաբերյալ զգալի գրականությունը, այլ միջազգային և երկկողմանի դոնորների գործունեությունը, ինչպես նաև 2000 թ. մայիսին Հանձնաժողովի կողմից սկսած արտաքին օգնության ղեկավարման բարեփոխման սկզբունքներն ու նպատակները:

բ) Հարևան երկրներում գործող գոյություն ունեցող գործիքների գնահատում. Աերածնություն

ԵՇՔԳ-Ն քաղաքականությամբ առաջնորդվող գործիք է, որն ավելի է միասնականացնում ԵՇՔ-ի մեջ ընդգրկված բոլոր երկրներին ցուցաբերվող համայնքի օգնության բաշխումը: Այն կփոխարինի ՏԱՄԻՄ, MEDA և մի շարք այլ թեմատիկ ծրագրերի: Այն նաև կփոխարինի ՏԱՄԻՄ-ի ու MEDA-ի, ինչպես նաև Interregի կողմից ֆինանսավորվող միջազգային համագործակցության ծրագրերի:

Այս բոլոր գործիքները կիրառվել են որոշ ժամանակ, որի ընթացքում հիականագելի է անհատանա զարդարականությունը:

Ինչ Վերաբերում է MEDA II-ին, ապա զնահատման ու կատարելագործման այս շարունակական պրոցեսը զագարնակետին կհասնի ընդհանուր գլխավոր գնահատման մեջ, որը կվերանայի Խորհուրդը 2006թ.: Դրա արդյունքը մեծ ներդրում կլինի Վերջնական զնահատման մեջ իրեն հաջորդող գործիքի համար:

Ինչ վերաբերում է ՏԱՄԻՒ-ին, ապա մշակվել է առաջարկ 2005-2006 թթ. ժամանակահատվածի համար վերանայել ներկայումս գործող կարգը: Այս առաջարկը նաև հիմնված է որոշակի վերջնական գնահատման վրա:

Միջպետական համագործակցությունը Ենթակա է եղել զգալի միաժամանակյա և նախկին հետզգահատնան աշխատանքի, որն ուրվագծել է այն դժվարությունները, որ տարբեր բյուջետային սահմանագծերը և տարբեր ծրագրային ու կիրարկող կառույցներն են առաջացրել։ Միության արտաքին սահմանների երկու կողմերում գործող իշխապես համատեղ նախագծերի ֆինանսավորման հարցում։

Այս գնահատման աշխատանքից ստացված տվյալների ամփոփումը տրված է ստորև: Այս համատեքստում առնված դասերն օգտագործվել են ԵՀՊԳ գողակարող մշակելի իս:

զ) ՏԱՐԻՒ

Մանրամասն վերջնական գնահատում էր իրականացվել ՏԱՍԻՒ-ի 2005-2006 թ. համար վերանայված կազմի վերաբերյալ: Այն

* * * * *

ԱՐԱՋԱՐԿ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱԼԱՍՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՃՈՒ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ ՍՏԵՂԾՈՂ
ԳԼԽԱՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ՈՒՐՎԱԳԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

* * * * *

ընդգրկվում էր բաժնետերերի կողմից մանրամասն խորհրդատվություն և սովորած դասերի վերջնական գնահատում:

Գնահատումը ցույց տվեց, որ ընդհանուր առնամբ ՏԱՄԻՍ-ի մոտեցման հարմարությունը ժամանակի ընթացքում նվազել է: 1990-ականների սկզբում, նախնական ձևավորման ժամանակ, ՏԱՄԻՍ-ը շատ ճիշտ գտավ, որ անհրաժեշտ է օժանդակել դեմոկրատական ու տնտեսական անցմանը: Բոլորովին վերջերս գործընկեր երկրների մոտ ի հայտ են գալիս բավականին տարրեր արդյունքներ աճի, աղքատության վերացման, դեմոկրատիայի և հավանական բարեփոխումների առումով: Այս ածող տարամիտության պայմաններում տեխնիկական օգնության վրա կենտրոնացած դիտվում է որպես պակաս կարևոր:

Չնայած ձեռք են բերվել նկատելի արդյունքներ, ՏԱՄԻՍ-ը մշտապես դժվարություններ է ունեցել գործընկեր երկրների կողմից բավարար համատեղ սեփականություն պահպելիս: Այն ընդամենը միջին ազդեցություն է ունեցել համընդհանուր բարեփոխումների վրա: Գործընթացները քննադատվել են որպես ծանր և դանդաղ, դրանով իսկ խոչընդոտ դնելով հաշվետու լինելու և ճկունության, տեխնիկական օգնության հիմնական տարրերի ճանապարհին:

Գնահատումը տվել է հանձնարարականների ցուցակ, որն ընդգրկում է՝ ավելի մեծ տարրերակնան միջոցով օգնության ծրագրերը երկրի պահանջներին հարմարեցնելու, աղքատության վերացմանն օժանդակելու, կարողությունների զարգացմանն ու օրենքի գերակայության ավելի մեծ ուշադրություն դարձնելու ունակության կատարելագործումը, և այն, որ պայմանականությունը պետք է կապված լինի շարունակական բարեփոխումներ անելու ջանքերի հետ, պետք է կատարելագործել ֆինանսավորումը և համակարգումը interreg-ի ու Phare ՄՊՀ-ի հետ, կատարելագործել կիրարկման ինստիտուցիոնալ կառույցի արդյունավետությունը և փորձից սովորելու ու դասեր տալու կարողությունը:

η) MEDA

Ներկայում գործող MEDA կարգը սահմանում է, որ գնահատում կատարվի մինչև 2005 թ. դեկտեմբերի 31-ը: Այս գնահատումը կտա ԵՀՔԳ-ի շրջանակներում օգնության ծրագրավորումն ու բաշխումը կատարելագործելու հետագա տարրեր: Միևնույն ժամանակ գյություն ունի գնահատման շարունակական ծրագիր, որի հանձնարարականները հոդ են նախապատրաստում վերջնական գնահատման համար:

★ ★ ★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ★ ★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բոլորովին վերջերս գնահատում կատարվեց 2003/04 թթ. ընդգրկելով յոր MEDA գործընկերների հետ տնտեսական համագործակցությունը. Ալժիր, Եգիպտոս, Հրոդանան, Լիբանան, Մարոկկո, Սիրիա և Թունիս: Յիմնական հանձնարարականներն էին.

- **Ռազմավարական մակարդակում.** Ծարունակել և կատարելագործել երկրի մակարդակում որոշակի ռազմավարության նախագծման (նաև կամոնավոր թարմացման) սահմանված կարգը: Օգնել գործընկեր երկրներին սահմանելու իրենց ուժի և թույլ տեղերը՝ կապված սոցիալական ու տնտեսական զարգացման հետ, և նախագծելու իրենց սեփական ռազմավարություններն ու ծրագրերը, որպեսզի նախապատրաստվի Եվրոպայի ու Միջերկրականի ավագանի միջև Ազատ առևտրի գոտու հիմնադրումը:
- **Ծրագրավորման մակարդակում.** Կապակցել Կառուցվածքային կանոնավորող գործիքները և տեխնիկական օգնության նախագծերը: Զարգացնել լրացուցիչ միջոցներ տարածաշրջանային ծրագրերի և Ենթի վարկային գործունեության միջոցով: Ընդունել բազմակողմանի մոտեցում SME-ների ֆինանսավորման վերաբերյալ: Նորաստեղծ Եվրոպայի ու Միջերկրականի ավագանի ներդրումային և գործընկերության գործիքը (ԵՄՆԳԳ) շատ կարևոր քայլ է այս ուղղությամբ: Ավելի շատ ուշադրություն դարձնել առևտրի ու արտաքին տնտեսական հարաբերությունների ուժեղացմանը:
- **Կիրարկման մակարդակում.** Ընդհանուր առմամբ «ապակենտրոնացման» գործընթացը պետք է նպաստի նախագծերի ավելի արդյունավետ տնօրինելուն: Նախագծերի պատրաստումն ու վերահսկողությունը պետք է ուժեղացվեն: Պայմաններին բավարարելու դեպքում դեկավարման համար ողջ պատասխանատվությունը պետք է դրվի տեղական խորհրդատվական հնարավորություններին օժանդակելու հարցը:

Ե) Միջպետական համագործակցություն (ՄՊՀ)

ԵՀՊԳ-ի ՄՊՀ բաղադրիչը հիմնվում է Phare, ՏԱՄԻՄ և interreg-ի շրջանակներում միջպետական համագործակցությանն օժանդակելու փորձի վրա: Ակտելով «Նոր հարևանության գործիքի» վերաբերյալ հա-

* * * * *

ԱՐԱՋԱՐԿ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱԼԼԱՍԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՃՈՒ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱԽՎԱՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ ՍՏԵՂԾՈՂ
ԳԼԽԱՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՈՒՐՎԱԳԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

* * * * *

ղորդագրությունից՝ ներկա առաջարկին հանգեցնող բնարկումները շատ են հենվում այս ընթացիկ ծրագրերից սերտած դասերի վրա: Ուստի, չնայած վերջնական պաշտոնական գնահատում դեռ չի արվել, այն բոլոր կետերը, որոնք պետք է ընդգրկվեն նման գնահատման մեջ՝ համաձայն ֆինանսական կարգի և դրա կիրարկման կանոններում եղած սահմանման, դիտարկվել են բնարկման փուլում: Հանդիպումներ էին անցկացվում գնահատողների ու փորձագետների հետ, և տեղեկություն է ստացվել 3Կ-ներից:

Interreg II-ը (1994-99 թթ.) վերջերս ենթարկվեց DG Regio-ի (2003 թ. դեկտեմբեր) կողմից լիազորված նախնական գնահատման: Արդյունքներն ընդհանուր առմամբ բավարար են՝ իր բոլոր ճյուղերում ծրագրերի առաջ բերած ընդարձակ ավելացված արժեքով: Նշված թերություններից էին անդամ պետությունների կողմից ծրագրերի դեկավարումը և գործող միջազետական համագործակցությունը հաստատող դժվարությունները: Այս հիմնահարցերը պահանջում են հասուլ ուշադրություն, երբ խնդիրը հասնում է ԵՀՔԳ-ի նման նոր գործիքի կիրարկմանը և «համագործակցության մշակույթի» զարգացմանը սահմանային տարածաշրջաններում, որտեղ նոր անդամ պետություններն ունեն ՄՊՀ սահմանափակ փորձ, իսկ գործընկեր երկրներն ամենափակ այդ փորձը չունեն:

ՄՊՀ ծրագրերը նույնպես անցյալում առւիճիտ են ենթարկվել Առողջապահության դատարանի կողմից: Առողջապահության դատարանը նշել է ՄՊՀ այն նախագծերի համար խիստ անհրաժեշտ համակարգման նեխանգմների բացակայությունը, որոնք կապված են տարրեր գործիքների շրջանակներում ֆինանսավորման հետ, ինչպիսիք են՝ interreg, Phare և ՏԱՄԻՍ-ը: Այս խնդիրը նույնպես սահմանվել է Հանձնաժողովի գնահատականներում և դրան անդրադառնալը ԵՀՔԳ-ի հիմնական նպատակներից մեկն է: Ինչ վերաբերում է Phare ՄՊՀ-ին, ապա նախագծերի ընտրության, տենդերի, պայմանագիր կնքելու և վերահսկելու համար Phare և կառուցվածքային կապիտալի կանոնները դարձան խոչընդոտ միջազետական համատեղ նախագծերի համար: ԵՀՔԳ-ն, որպես համատեղ սեփականությունն ընգգող միասնական գործիք, պետք է հաղթահարի համատեղ ծրագրերի ու նախագծերի խոչընդոտները:

ԵՀՔԳ-ի համար ընդունելի այլ դիտարկումները նշում էին, որ երկրների միջև կապիտալի բաշխումը համապատասխան ձևով չէր հաշվի առնում դրանց կլամելու կարողությունները: Կասկածի տակ

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՎՆ ★ ★ ՔԱՂՓԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ

առնվեցին նաև կապիտալի բաժանումն ավելի մեծ կամ փոքր նախագծերի միջն ու դրանց միջաբետական նշանակությունը: Մեկ այլ դիտարկում վերաբերում էր երկարատև մատակարարնան գործընթացների և նպաստ ստացող երկրներում մաքսային խոչընդոտների վերացման պատճառով նախագծերի կիրարկման ձգձգումներին:

Վերը նշված զնահատման տարրեր աշխատանքների արդյունք հանդիսացող դիտարկումներն ու հանձնարարականները հաշվի են առնվել առաջարկված ԵՀԶԳ սույն կարգի նախագիծը կազմելիս:

գ) Եզրակացություններ. Համայնքի միջամտության լրացուցիչ արժեքը

Գործուն օժանդակություն է անհրաժեշտ խրախուսելու համար խաղաղ, կայուն, դեմոկրատական ու բարգավաճող հարևանությանը: Այս նոր քաղաքականությամբ առաջնորդվող գործիքը հատուկ ստեղծվել է այդ նպատակով:

Գոյություն ունի նաև ճեղքվածք քաղաքականության ձգտումների աստիճանի և ներկայումս Համայնքի ու անդամ պետությունների կողմից դրան բաշխված ռեսուլումների միջն, ինչը պետք է հաղթահարվի: Համայնքի օգնությունը շարունակում է մնալ նպաստ ստացողների ակընկալումներից ցածր, իսկ երկողմանի օգնության ծրագրերի հիմնական մասը փոքր է:

ՍՊՀ-ի հարցում ԵՀԶԳ լրացուցիչ արժեքը նախ և առաջ պարունակում է յուրահատուկ հարցերի քննարկում, որոնք կապված են ազգային սահմանների ու միջազգային բնույթ ունեցող հիմնահարցերի հետ, որոնք այլապես չեն քննարկվի: ԵՀԶԳ-ն կունենա ֆինանսական լծակի արդյունք ԵՄ հարևան երկրների/տարածաշրջանների համար՝ համադրելով ազգային համաֆինանսավորումը ԵՄ կապիտալի հետ: Վերջապես ԵՀԶԳ կիրարկումը թույլ կտա հաստատել հուսալի ֆինանսական տնօրինում և ճիշտ գործողություններ ծրագրավորման ու նախագծերի ուրվագծման, դեկավարման, կիրարկման, ֆինանսական վերահսկման, ստուգման ու զնահատման առունու:

* * * * *
ԱՐԱՋԱՐԿ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱԼԱՍՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՃՈՒ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ ՍՏԵՂՈՂ
ԳԼԽԱՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ՈՒՐՎԱԳԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

5.2. Նախատեսված գործողություն և բյուջետային միջամտութ- յան պատրաստություններ

Գործընկերության և համագործակցության համաձայնագրերն ու Սիավորնան համաձայնագրերն ապահովում են ընդհանուր քաղաքականության կառույց համայնքի օգնության համար: Որտեղ դրանք գոյություն ունեն ԵՄ-ի և յուրաքանչյուր գործընկեր երկրի կողմից ուրվագծված համատեղ համաձայնություն ստացած գործողության պլանները սահմանում են վերջ նկարագրված ոլորտներում գործողությունների նախապատվությունները:

Այդ շրջանակներում նախատեսվում է, որ գործիքը կնպաստի ամուր համագործակցությանը և առաջընթացին, տնտեսական ինտեգրացիային ԵՄ և գործընկեր երկրների միջև: Այդ համատեքստում իրավական ու կարգավորող համապատասխանեցմանն օժանդակելը խրախուսելու համար առաջընթաց մասնակցությունը ներքին շուկայում և առևտորի աշխատացումը հանդիսանում են գործիքի կարևոր ռազմավարական նպատակ:

Մինչ ԵՀՖ-ն ապահովում է քաղաքականության հատուկ կենտրոնացում, օգնության դրույթը հաշվի կառնի համայնքի զարգացման քաղաքականության սկզբունքներն ու նպատակները այն գործընկեր երկրների համար, որոնք զարգացող երկրներ են:

Արանձին գործողություններն ու միջոցառումները, հատուկ նպատակներն ու դրանց ծեռքբերումը գնահատող համապատասխան չափանիշները կսահմանվեն երկրի ռազմավարական փաստաթղթերում և Ազգային հատկանշական ծրագրերում: Մրանք մշակվում են գործողությունների պլանների և որևէ տվյալ երկրի իրավիճակի ու կարիքների, նրա գործողությունների խորը վերլուծության և ստանձնած պարտավորությունների կիրառման ողջ ընթացքի, ինչպես նաև մեր երկկողմանի հարաբերությունների ծգտումների մակարդակի, ինչպես, օրինակ, համատեղ արժեքների, իսկապես իրականացման հիման վրա:

Ակնկալվում է, որ տարբեր նպատակների միջև համակցումը խիստ բազմազան կլիմի՝ հաշվի առնելով շահագրգիռ 17 երկրներից յուրաքանչյուրի բնորոշ իրավիճակը: Եթե օգնությունն Ուկրաինային կամ համագործակցությունը Ուսւաստանի ու Խորայելի հետ կարող է կենտրոնանալ հիմնականում իրավական ու կարգավորող համապատասխանեցման վրա, ապա օգնությունը Մոլդովային, Աղրբեջանին կամ Եգիպտոսին պետք է շարունակեն ունենալ կարևոր բաղադրիչ,

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ★ ՔԱՂՓԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ

որը կենտրոնանում է աղքատության վերացման ու զարգացման ավելի ավանդական նպատակների վրա: Միաժամանակ աշխարհագրական, տնտեսական, սոցիալական ու մշակութային յուրահատկությունները, որ ունեն գործիքի մեջ մտնող երկու հիմնական «տարածաշրջանային» խնբերը (Միջերկրականի ավագանի երկրները՝ մի կողմից և Ռուսաստանը, մյուս կողմից՝ ԱԱՎՊ ու Հարավային Կովկասը) պետք է հավասարապես արտացոլվեն հետապնդվելիք նպատակների և այն միջոցառումների մեջ, որոնք պետք է ֆինանսավորվեն:

ԵՐԳԳ-Ը կունենա մի բնորոշ բաղադրիչ, որն ընդգրկում է միջպետական համագործակցությունը անդամ պետությունների և գործընկեր երկրների միջև: Այս բաղադրիչը հիմնականում կիարմարեցվի ԵՄ և անդամ պետությունների սահմանային տարածաշրջանների կայուն տնտեսական, սոցիալական և էկոլոգիական զարգացմանն օժանդակելուն: Այս բաղադրիչը կիրառվում է բազմամյա ծրագրերի միջոցով, որոնք մշակվում են սահմանների երկու կողմերից նպաստ ստացող երկրների գործընկերության միջոցով և հավանություն են ստանում հանձնաժողովից: Բացի այդ, հնարավոր լինի անդամ պետություններին միացնել մի քանի երկիր ընդգրկող կամ թեմատիկ ծրագրերին միջտարածաշրջանային համագործակցության միջոցով, որն ուղղված է ԵՄ և դրա հարևանների համար ընդհանուր գլոբալ խնդիրներին:

ԵՐԳԳ-Ը նաև կընդգրկի ներքին քաղաքականության արտաքին ասպեկտները, որոնք ներկա ֆինանսական հեռանկարում քննարկվում են հատուկ իրավական գործիքների շրջանակներում: Սա թույլ կտա, որ թեմատիկ գործողություններն ուղղորդվեն դեպի որևէ երկիր ընդգրկող և տարածաշրջանային ծրագրեր, որոնք հնարավորություն են ստեղծում ավելի լավ համակարգման ու համատեղ հաջողության հասնելու հարցում: Կարգը նաև հնարավորություն է տալիս ստեղծել թեմատիկ ծրագրեր, երբ դա հարմար է համարվում արդյունավետության, ներգործող կամ տեսանելի լինելու պատճառով: Սա ընտրելու հնարավորություն է, որին պետք է ծգտել այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են՝ մարդու իրավունքները, միգրացիայի կառավարումը, շրջակա միջավայրը կամ ուսանողների շարժումնակությունն ու համագործակցությունը բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև:

Ինչ վերաբերում է դեմոկրատացման և օրենքի գերակայության խթանմանը, նաև մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները հարգելու խթանմանը, ապա սույն կարգի նպատակները հե-

* * * * *

ԱՌԱՋԱՐԿ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՃՈՒ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ ՍՏԵՂԾՈՂ
ԳԼԽԱՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ՈՒՐՎԱԳԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

* * * * *

տապնդելու համար համայնքի օժանդակությունը ստացող թեմատիկ ծրագիրը կարող է ներառել.

- տեղական և ԵՄ ոչ պետական ու քաղաքացիական հասարակության վրա հիմնված կազմակերպությունների հարցին առնչվող գլոբալ, տարածաշրջանային և մի երկիր ընդգրկող նախագծեր ու ծրագրեր,
- համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ դեմոկրատացման և մարդու իրավունքների բնագավառում:

Միգրացիայի կառավարման բնագավառում թեմատիկ ծրագիրը, որը գործում է ի լրումն որևէ երկրի և տարածաշրջանի ծրագրերի շրջանակում օժանդակություն ստացող միջոցառումների, կարող է կենտրոնանալ.

- օրինական ներգաղթի բնագավառում երրորդ երկրի օրենսդրության ստեղծման վրա,
- օրինական միգրացիայի զարգացման վրա,
- օրինական միգրացիայի բնագավառում օրենսդրության և պետական պրակտիկայի զարգացման վրա՝ կապված միջազգային պաշտպանության հետ,
- շահագործություն երրորդ երկրներում անօրինական միգրացիայի, ներառյալ մարդկային էակների առևտորի և միգրանտների մաքսանենգության դեմ պայքարի բնագավառներում արդյունավետ և նախապաշտպանական քաղաքականության գործադրման և համապատասխան օրենսդրության ստեղծման վրա:

Յուրաքանչյուր միջոցառման համար պետք է ձևավորվի համապատասխան ցուցիչ: Արդեն ծեռք բերված լայն փորձն օգտակար կլինի, օրինակ, ինչպես որ կա interreg-ի համար DGREGIO-ի ձևակերպած ցուցիչների վերաբերյալ աշխատանքային փաստաթղթում: Դրանք կընդգրկեն այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են՝ համաֆինանսավորումը, արդյունքի բազմապատկումը, գիտելիքի փոխանցումը, կարողության ստեղծումը:

Նպատակակետ հանդիսացող բնակչությունը ԵՀԲԳ-ն ուղղված է 17 երկրների ավելի քան 400 միլիոն բնակչությանը: Ուսւսաստանը և

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ★ ★ ՔԱՂՓԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ

Արևմտյան ՆԱՊ ունեցած ամբողջ բնակչությունը կազմում է 208 միլիոն մարդ, Հարավային Կովկասի (Վրաստան, Հայաստան, Աղրբեջան) բնակչությունը 16 միլիոն է, իսկ Հարավային Միջերկրականի ավագանինը (Սիրիա, Լիբանան, Իսրայել, Պաղեստինի Ինքնավարություն, Հորդանան, Եգիպտոս, Ալժիր, Թունիս, Լիբիա և Մարոկկո)` 176 միլիոն:

Դաշվարկված է, որ անդամ պետություններուն և գործընկեր երկրություններուն մոտ 65 միլիոն մարդ կշահի երկողմանի միջավետական համագործակցության ծրագրից, իսկ ավելի քան 176 միլիոն մարդ կընդգրկվի բազմակողմ ծովեզրյա ծրագրերի մեջ:

Դանագործակցության նպատակների բազմազանությունը, որոնք կապված են նոր և մեծ օգտումներ ունեցող քաղաքականությանն օժանդակելու անհրաժեշտության հետ, ինչպես նաև անդամ պետությունների հետ թեմատիկ գործողություններին ու միջավետական համագործակցությանն օժանդակող գործիքի մասշտարն ընդլայնելու հետ, արդարացնում է ռեսուրսների գգալի աճը, ինչը նախատեսվում է ԵՎԳ-ով հետագա ֆինանսական հեռանկարում:

5.3. Կիրարկման մեթոդները

Ծրագրերը կարող են կիրարկվել հանձնաժողովի կողմից ուղղակի կենտրոնացված դեկավարմամբ՝ գլխավոր վարչությունից և/կամ համապատասխան պարտականություններ ստացած պատվիրակությունների միջոցով՝ օգտագործելով թե՝ օրենքով սահմանված, թե՝ ժամանակավոր աշխատակազմ։ Դանք կարող են կիրարկվել նաև ապակենտրոնացված դեկավարման ներքո նպաստ ստացող երկրի կողմից և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ դեկավարման ներքո։ Կարգը նաև հնարավորություն է տալիս ծրագրի կիրարկել ազգային պետական սեկտորի նարմինների, կամ մասնավոր օրենքով դեկավարվող պետական առաքելություն ունեցող մարմինների, կամ ծրագրի կիրարկման գործադիր գործակալության անուղղակի կենտրոնացված դեկավարման ձևով։

Միջավետական համագործակցության ծրագրերը սովորաբար կիրարկվեն համատեղ դեկավարման միջոցով, իսկ դեկավար մարմինը տեղակայված կլինի որևէ անդամ պետությունում։

* * * * *
 ԱՐԱՋԱՐԿ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԱՍՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՃՈՒ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ
 ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ ՍՏԵՂԾՈՂ
 ԳԼԽԱՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ՈՒՐՎԱԳԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԴԵՅՑՈՒԹՅՈՒՆ

- 6.1. Ընդհանուր ֆինանսական ազդեցություն մաս Բ-ի վրա (ողջ ծրագրի ընթացքում) (ներկա գներ)
 6.1.1 Ֆինանսական միջամտություն

Պարտավորություններ € միլիոն (մինչև երեք տասնորդական)

Բաշխում	2007	2008	2009	2010	2011	2012	2013	Ընդամենը
Օգնություն եւ հարևան երկրներին	1.376	1.506	1.802	2.000	2.229	2.536	2.883	14.332

* Տարածաշրջանային զարգացման եվրոպական հիմնադրամի ներդրումը սույն կարգի դրույթներով ղեկավարվող միջպետական համագործակցության ծրագրերի մեջ, որը նախապես ընդգրկվել էր ֆինանսական հեռանկարի Գլուխ 1թ-ի մեջ, պետք է ավելացվի այս գումարին՝ բյուջեն նախապատրաստելու պահին: Կառուցվածքային կապիտալի կարգը սահմանում էր տարեկան € 233 միլիոն նախահաշվային գումար (2004 թ. գներով), որպես Տարածաշրջանային զարգացման եվրոպական հիմնադրամի կողմից արված ներդրում անդամ պետությունների և այն համապատասխան հարևան երկրների միջև միջապետական համագործակցության համար, որոնք ընդգրկված են ԵՀՔ և Միավորմանը նախորդող գործիքի (ՄՍԳ) մեջ: Այս ներդրումը կիրականացվի համաձայն ԵՀՔ կարգով սահմանված կանոնների: Միաժամանակ ՄՍԳ և ԵՀՔ պայման են դնում, որ իրենց աջակցությունը անդամ պետությունների հետ Միջապետական համագործակցությունը պետք է առնվազն համարժեք լինի ԵՏՁՀ-ի կողմից տրվածին:

Այն փաստը, որ դեռևս հայտնի չէ ԵՏՁՀ ներդրման բաշխումը ԵՀՔ մեջ ընդգրկված սահմանների և ՄՍԳ մեջ ընդգրկված սահմանների միջև, դժվարացնում է սույն կարգի շրջանակներում ՄՊՀ-ին տրված ընդհանուր գումարի նախահաշիվ տալը:

★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

6.1.2. Տեխնիկական և վարչական օգնություն, օժանդակության ծախսեր և Դ ծախսեր

Պարտավորություններ € միլիոն (մինչև երեք տասնորդական)

Բաշխում	2007	2008	2009	2010	2011	2012	2013	Ընդամենը
Օգնություն ԵՄ հարևան երկրներին	57	63	75	83	93	106	120	597

7. ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ և ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽԱԾԵՐԻ ՎՐԱ

7.1 Ազդեցությունը մարդկային ռեսուրսների վրա

Պաշտոնների տեսակները	Գործողության դեկավարման համար նշանակվելիք աշխատակազմը՝ օգտագործելով գոյություն ունեցող և/կամ լրացուցիչ ռեսուրսներ		Ընդամենը	Գործողությունից բխող հանձնարարությունների նկարգործումը
	Մշտական պաշտոնների թիվը	Ժամանակավոր պաշտոնների թիվը		
Պաշտոնյաներ կամ ժամանակավոր աշխատակազմ	ԲՈ. 192 Del: 141		333	

ԱՌԱՋԱՐԿ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՃՈՒ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ ՍՏԵՂԾՈՂ
ԳԼԽԱՎՈՐ ՋՐՈՒՅԹՆԵՐՆ ՈՒՐՎԱԳԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Այլ մարդկային ռեսուրսներ		ԲՈ. END: AUX: INT: <u>Ex BA-lines:</u> ATA: <u>Պատվիրա-</u> <u>կություններ.</u> <u>Ex: BA-lines</u> ALAT/AL: Ind.Expert:	3 9 2 87 338 84	
Ընդամենը			856	

7.2 Ընդհանուր ֆինանսական ազդեցություն մարդկային ռեսուրսների վրա (2004 թ. գներ)

Մարդկային ռեսուրսների տեսակները	Գումարը (€)	Հաշվարկման մեթոդը
<u>Պաշտոնյաներ+ժամանակավոր աշխատակազմ</u> ԲՈ <u>Պատվիրակություններ.</u>	20 736 000 27 376 278	€ 192x 108 000 € 141x 194 158
<u>ԲՈ.</u> END AUX INT <u>Ex BA-lines</u> ATA <u>Պատվիրակություններ.</u> <u>Ex BA-lines</u> ALAT/AL Անհատ. Փորձագետներ.	133 632 510 840 126 192 5 015 202 25 853 620 15 540 000	€ 3x 44 544 € 9x 56 760 € 2x 63 096 € 87x 57 646 € 338x 76 490 € 84x 185 000
Ընդամենը	95 291 764	

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

7.3 Գործողություններ բխող այլ վարչական ծախսերը (2004 թ. գներ)

Բյուջեի սահմանագիծը (համարը և անվանումը)	Գումարը €	Հաշվարկման մեթոդը
Ընդհանուր բաշխում (Սաս Ա7)		
A0701 - Ներկայացուցչու- թյուններ	933.800	667 ներկայաց. x 1.400
A07030 - Ժողովներ	100.000	Եվրո յուր. ներկայաց.
A07031 - Պարտադիր կոմիտեներ	500.000	100 ժողով x 1.000 Եվրո
A07032 - Ոչ պարտադիր կոմիտեներ	0	յուր. ժողովին
A07040 - Կոնֆերանսներ	300.000	2 x/ամիսը x 10 ամիս = 20
A0705 - Ուսումնասիրություններ և խորհրդատվություններ		ժողով տարեկան x 25.000
Այլ ծախսներ (նշել)	200.000	Եվրո յուր. ժողովին
	0	
Տեղեկատվության համակար- գեր (A-5001/A-4300)	200.000	
Այլ ծախսներ - Սաս Ա (նշել)	0	
Ընդհամենը	2.233.800	

Գումարները կազմում են ընդհանուր ծախսերը տասներկու անսունա համար:

(2004թ. զներ)

I.	Տարեկան ամբողջ ($7.2 + 7.3$)	€ 97 525 564
II.	Գործողության տևողությունը	7տարի
III.	Գործողության ամբողջ արժեքը (I x II)	€ 682 678 948

- Մարդկային և վարչական ռեսուրսների պահանջը ներառված է դեկավարող DG-ին տրված բյուջեի մեջ տարեկան բաշխման գործնթացի շրջանակներում:

* * * * *

ԱՐԱՋԱՐՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՃՐՈՒ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ ՍՏԵՂԾՈՂ
ԳԼԽԱՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ՈՒՐՎԱԳԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

* * * * *

- Պաշտոնների բաշխումը կախված կլինի հաջորդ հանձնաժողովի ներքին կազմավորումից և ծառայությունների միջև պաշտոնների հնարավոր վերաբաշխումից՝ համաձայն նոր ֆինանսական հեռանկարների:

8 ՎԵՐԱՐՍՎԿՈՒՄ ԵՎ ԳՆՎԱՑՏՈՒՄ

8.1 Վերահսկման նախապատրաստում

Հանձնաժողովը կվերահսկի իր արտաքին համագործակցության առաջընթացը բոլոր մակարդակներում, ներդրում (հատկապես ֆինանսական ներհոսք (պարտավորություններ, պայմանագրեր և վճարումներ), գործողություններ / արտադրանք (նախագծի և ծրագրի գործարկում, ներքին վերահսկողություն, որն իրականացվում է տեղում հանձնաժողովի պատվիրակությունների կողմից), առաջընթաց արդյունքներ (արտաքին արդյունքներին ուղղված վերահսկում (ԱՈՒՎ¹⁷⁾) և ազդեցություն (հազարամյակի զարգացման նպատակները վերահսկվում են գործընկերների կողմից համատեղ):

Բոլոր երկրներն ընդգրկող և տարածաշրջանային բազմամյա հատկանշական ծրագիրը կներառի համագործակցության յուրաքանչյուր բնագավառի համար բնորոշ նպատակներ ու ակնկալվող արդյունքներ և սահմանափակ թվով կարևոր վերջնական ցուցիչներ՝ կապված տնտեսական ու աղքատության իրավիճակի հետ: Այս ցուցիչները պետք է կապված լինեն այն զարգացումների հետ, որոնք չափելի են կարճ, միջին ժամկետում: Եթե գործում է Աղքատության վերացման ռազմավարական փաստաթուղթ, ապա ցուցիչները պետք է համապատասխանեն այդ շրջանակներում սահմանվածներին:

Գործընկեր երկրների ու տարածաշրջանների համար երկա-

¹⁷ Արդյունքներին ուղղված վերահսկման համակարգը (ԱՈՒՎ) հնարավորություն է տալիս արագ գնահատել ցանկացած նախագծի կամ ծրագրի ընթացքը, ինչպես նաև դրա ավելի լայն կիրառումը և Հանձնաժողովին նշտապես տալիս է անկախ խորհուրդ իր նախագծերի փաթեթի վերաբերյալ: Համակարգը սկզբնապես ստեղծվել ու փորձարկվել է 2000/2001 թթ.: Նախքան դեպի Հանձնաժողովի արտաքին համագործակցության բոլոր ոլորտները տարածվելը 2002 թ.: Մշտապես մեկ մոտեցում ունենալու ապահովում է, որպեսզի Հանձնաժողովը ունենա համեմատական տվյալներ այն բոլոր ոլորտների վերաբերյալ, որտեղ այն մատուցում է օգնություն:

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ★ ★ ՔԱՂՓԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ

րաժանկետ օգնության ծրագրավորումն իրականացվում է Երկրի ու տարածաշրջանի ռազմավարական փաստաթղթերի նախապատրաստման շրջանակներում (մինչև 7 տարի): Այս Երկրի ռազմավարությունները նաև ընդգրկվում են աշխատանքային պլան կամ ազգային/տարածաշրջանային հատկանշական ծրագիր, որի վերաբերյալ համաձայնության են եկել համայնքը և շահագրգիռ գործընկեր Երկրի/տարածաշրջանը:

Ցաջորդական ծրագրավորման սկզբունքի համաձայն նախատեսված է ստուգման գործընթաց, որն ընդգրկում է ամենամյա ստուգումներ, միջանկյալ ստուգումներ և, անհրաժեշտություն լինելիս, կոնկրետ դեպքի համար ստուգումներ: Ստուգումների այս մեխանիզմն ապահովում է ճկունություն, որն անհրաժեշտ է, որպեսզի գործողությունները մշտական համապատասխանեցվեն գործընկեր Երկրի/տարածաշրջանի տնտեսական իրավիճակում, նախապատվություններում և նպատակներում ի հայտ եկող փոփոխությունների հետ:

Ստուգումները հատկապես ուշադրություն են դարձնում օգնության ֆինանսական իրականացման ընթացքում ձեռք բերված առաջնարացի վրա, ինչպես նաև համատեքստի զարգացման վրա՝ աղքատության վերացման, տնտեսական գործունեության և օժանդակության ստուգման հատվածների տեսանկյունից: Միջամտության նորացված կարուցվածքները և կարևոր հատվածների ցուցիչների աղյուսակները կցվում են ստուգման փաստաթղթերին, որպեսզի հեշտանա գնահատումը ստուգման ժամանակ: Մասնավորապես, միջանկյալ ստուգումները կարող են հանգեցնել ռազմավարության փոփոխության, ինչպես նաև Երկրում/տարածաշրջանում բաշխման փոփոխության՝ առկա կարիքների և գործունեության լույսի ներքո:

Թենատիկ ռազմավարության փաստաթղթերը կընդգրկեն ցուցիչների ցուցակ, որը թույլ կտա ձեռքի տակ եղած տեղեկության հիման վրա վերահսկել գլորալ իրավիճակը՝ կապված առանձնահատուկ թեմայի հետ:

Ամենամյա գործողության ծրագրերը կընդգրկեն տեղեկություն գործունեության ցուցիչների վերաբերյալ, որոնց պետք է վերահսկել՝ հանձնաժողովի կողմից ֆինանսավորված միջոցառումները կիրարկելիս:

Հանձնաժողովի կողմից ընդունվելու համար գործընկերների կողմից պատրաստվելիք միջանական համագործակցության ծրագրերը հատուկ ուշադրություն կդարձնեն այն ցուցիչների սահմանման վրա, որոնք գտնվում են առաջնահերթությունների ու միջոցառումների

ԱՌԱՋԱԿԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԱՍՏԵՏԻ ԵՎ ԽՈՐՃՈՒ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՐԵՎԱՆԻԹՅԱԼ ԵՎ ԳՈՐԾՎԿԵՐՈՒԹՅԱԼ ԳՈՐԾԻՔ ՍՏԵՂՈՇԻ
ԳԼԽԱԿՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ՈՒՎԱԳԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ
մակարդակում և վերահսկման հաճար անհրաժեշտ ինստիտուցիոնալ
նախապատրաստությունների կատարելագործման վրա:

8.2 Պլանավորման գնահատման համար նախապատրաստում և ժամանակացույց

Ներկա գործող կանոնները կիրառելիս և նախատեսված գործողությունների լայն շրջանակի տեսակետից մշակվել է զնահատման համակարգ, որն ընդգրկում է միջանտության տարրեր մակարդակներու ու գործիքների տեսակներ:

Նշանակալից է, որ ֆինանսական կարգավորումը, ինչպես նաև ներքին վերահսկման չափանիշները պահանջում են բոլոր (մեծածավալ) գործողությունների գնահատում: Սա վերածվում է առանձին գործողությունների (օր.՝ զարգացման նախագծերի), ծրագրերի (օր.՝ երկրի ռազմավարությունների) և քաղաքականության հատվածների կամ թեմաների (օր.՝ տրանսպորտի կամ գեներային հիմնահարցերի) գնահատման: Գնահատումները նաև անհրաժեշտ են ու շարունակական ավելի լայն իրավական այնպիսի պարտավորությունների դեպքում, ինչպիսիք են երեք Հ-երը (հաջորդականություն, համապատասխանություն, համակարգում):

Գործնական տեսակետից վերոհիշյալ պարտավորությունները կկազմեն տարեկան գնահատման ծրագիր, որն ընդհանուր առնամբ ընդգրկում է հետևյալը. 30 երկրների ռազմավարական գնահատումներ (մոտավորապես Երկրի 120 մեծածավալ ռազմավարական փաստաթղթ-թերն ընդգրկում էին ավելի քան 4 տարվա շրջան), տարածաշրջանային ու ենթատարածաշրջանային 4 գնահատումներ, թենաների ու հատվածների 4 գնահատումներ և 4 համատեղ գնահատումներ: Դաշվարկված է նաև, որ մոտ 300 նախագիծ ու այլ գործողություն է գնահատվում ամեն տարի¹⁸:

Այս աշխատանքները կլրացվեն տվյալների բազաների, մետա-վերլուծությունների, մեթոդաբանության և ուսուցման վերաբերյալ հա-մապատասխան աշխատանքներով:

¹⁸ Ήμη ψηφιακού πολιτισμού με την αποτέλεσμα την ανάπτυξη της γνώσης και την ανάπτυξη της οικονομίας στην περιοχή.

★ ★ ★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ★ ՔԱՂՓԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ

9. Խարդախության դեմ ուղղված միջոցառումներ

Համայնքի ֆինանսական շահերի պաշտպանությունը և պայքարն ընդունված խարդախության ու կանոնների խախտման, կազմում են սույն կարգի անբաժանելի մասը:

Պայմանագրի ու վճարումների վարչական վերահսկումը կլինի օգտառու երկրներում Ե-ի պատվիրակությունների պարտականությունը:

Սույն կարգի համաձայն ֆինանսավորված գործողություններից յուրաքանչյուրը կվերահսկվի պատվիրակությունների կողմից նախագծի բոլոր փուլերում: Վերահսկումը հաշվի կառնի պայմանագրային պարտավորությունները, ինչպես նաև արժեք/շահույթ վերլուծության սկզբունքներն ու հուսալի ֆինանսական տնօրինումը և փոխգործողությունների հրականությունն ու կանոնավորությունը:

Համատեղ տնօրինման շրջանակներում գործող Միջազետական համագործակցության ծրագրերի դեպքում այն անդամ պետությունը, որտեղ տեղակայված է միացյալ դեկավարման մարմնը, պատասխանատու է հուսալի ֆինանսական տնօրինման և փոխգործողությունների հրավականության ու կանոնավորության համար:

Ավելին, ցանկացած համաձայնագիր կամ պայմանագիր, որ կնքվել է սույն կարգի համաձայն, հատկապես կապահովի ծախսերի վերահսկումը, որոնք տրվում են նախագծերի/ծրագրերի շրջանակներում և գործողությունների պատշաճ կիրարկումը, ինչպես նաև ֆինանսական հսկողությունը հանձնաժողովի կողմից՝ ներառյալ խարդախության դեմ պայքարի Եվրոպական գրասենյակը (ԽՊԵԳ) և Առողջապահության դատարանի կողմից առողջապահությունը, եթե անհրաժեշտ է՝ տեղում: Նրանք կլիազորեն Հանձնաժողովին (ԽՊԵԳ) իրականացնելու տեղում ստուգումներ և զննումներ՝ համաձայն 1996 թ. նոյեմբերի 11-ի Խորհրդի Կարգի (Euratom, EC) N 2185/96, որն առնչվում է Հանձնաժողովի կողմից տեղում իրականացրած ստուգումներին և զննումներին, որոնք ուղղված են խախտումներից և անկանոնություններից Եվրոպական համայնքի ֆինանսական շահերը պաշտպանելուն:

Հատուկ ուշադրություն կդարձվի ծախսերի բնույթին (ծախսերի հրավականություն), բյուջեն հաշվի առնելուն (իրական ծախսեր) և օժանդակող տեղեկության ու համապատասխան փաստաթղթերի (ծախսերի ապացույց) հաստատմանը:



Բրյուսել, 09.12.2004
«COM (2004) 795» վերջնական

Ոչ պաշտոնական թարգմանություն՝ անզլերենից

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԽՈՐՅՈՂԻՆ ՏՐՎՈՂ ՀԱՂՈՐԴՎԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱ-
ԿԱՆՈՒԹՅԱՆ (ԵՀՖ) ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ
ՇՈՒՐՃ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն

2004 թվականի մայիսին ԵՀՅ Ռազմավարության փաստաթուղթը (1) հիմք հանդիսացավ Եվրոպական հարևանության քաղաքականության ծրագրի շրջանակներում Հանձնաժողովի կողմից հետագա տարիներին աշխատանքներ վարելու համար: Ռազմավարության փաստաթորթի համար հիմք հանդիսացան ավելի քան մեկ տարի տևած ինտենսիվ աշխատանքները, որոնք հաջորդեցին Հանձնաժողովի՝ «Ընդլայնված Եվրոպա - Նոր հարևանություն»: Նոր նախագիծ մեր արևելյան և հարավային հարևանների հետ հարաբերությունների համար» (2) հաղորդագրությանը: Խորհրդակցությունները տեղի էին ունենում ԵՄ անդամ երկրների, Գլխավոր քարտուղարի/Բարձրագույն ներկայացուցի (ԳԲ/ԲՆ), ինչպես նաև գործընկեր երկրների մասնակցությամբ: 2004 թվականի Ռազմավարության փաստաթուղթը հստակեցրեց այն նպատակները, սկզբունքները, աշխարհագրական ուղղվածությունը և մեթոդները, որոնք կիրառվելու էին ԵՀՅ-ի գործադրման համար: Խորհուրդը «ողջունեց Հանձնաժողովի առաջարկը հաստատել ԵՀՅ-ը հարևան հետաքրքրված երկրների հետ համաձայնեցված գործողությունների ծրագրերի մշակման միջոցով» (3):

Այդ պահից ի վեր Հանձնաժողովը գործողությունների ծրագրերի նախնական տարրերակների շուրջ խորհրդակցություններ է անցկացրել, և վերջիններիս արդյունքները ներկայում փոխանցում է Խորհրդին՝ հավանության արժանանալու և հետագայում Ասոցիացիոն կամ Համագործակցության խորհուրդների կողմից բոլոր հետաքրքրված գործընկերների մասնակցությամբ հաստատվելու համար:

Այս հաղորդագրության նպատակն է՝ ներառել գործողությունների ծրագրերը ԵՀՅ-ի քաղաքականության շրջանակներում, հատկապես Ռուսական ազգային ներկայական քաղաքական զարգացումների կոնտեքստում:

2. ԵՀՅ-ի հիմնական առանձնահատկությունները

ԵՀՅ-ն առաջարկում է ԵՄ-ի և իր գործընկերների միջև հարաբերություններն ամրապնելու միջոցներ, որոնք տարբերվում են ԵՄ անդամ երկրներին Եվրոպական միության վերաբերյալ պայմանագրի 49 հոդվածով հասանելի հնարավորություններից: Այն հասցեարված է ԵՄ-ի այն հարևան գործընկերներին, որոնք մերգրավված չեն ԵՄ-ին անդամակցման կամ նախանդամակցման գործընթացներում:

ԵՀՅ-ի նպատակն է՝ հարևան երկրների հետ կիսել ԵՄ-ի ընդլայն-

ՀԱՅՉԵՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԽՈՐՃՐԴԻՆ ՏՐՎՈՇ ՀԱՅՈՐԴԱՎՐՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ (ԵՐԵ) ԾՐԱԳԻՌ
ՇՐՋԱՆԱԿԱՆԵՐՈՒՄ ԼԱՍԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ
ՇՈՒՐՅ ՀԱՅՉԵՆԱԺՈՂՈՎԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱԿԻՆ

ման օգուտները՝ անրապնդելով համընդիանուր կայունությունը, անվտանգությունը և բարօրությունը: ԵՄ-ի հետ այս երկրների անհամենատ ավելի սերտ հարաբերությունների մեջ ներգրավումը կարող է ստեղծել «զննվերների օլակ» և խցանել նոր բաժանարար գծերի առաջացումը: Այն հնարավորություն է զննելում երկրներին մասնակցելու ԵՄ-ի տարրեր տեսակի գործունեություններին՝ քաղաքական, անվտանգության, տնտեսական, ինչպես նաև մշակութային և ուսումնական խնդիրների շուրջ ավելի խորը համագործակցության միջոցով: Գործընկերների հետ այս խորը կապի միջոցով ԵՄ-ը նպատակ ունի խրախուսելու վերջնմներիս նպատակառությունը դեպի այնպիսի ընդհանուր արժեքներ, ինչպիսիք են՝ օրենքի գերակայությունը, արդյունավետ կառավարումը, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը և հարևանական լավ հարաբերությունների զարգացումը:

ԵՅՔ-Ծ հետազայտմ կինտենսիվացնի գործընկեր երկրների հետ համագործակցությունն այլ հարցերի լայն շրջանակներում՝ ներառյալ քաղաքական երկխոսությունն ու համագործակցությունը, առևտուրը, ներքին շուկայի քաղաքականությունը, էներգիան, տրամսպորտը, տեղեկատվական համայնքը, շրջակա միջավայրը, հետազոտությունները, նորամուծությունները, սոցիալական քաղաքականությունը և միջմարդկային շփումները:

ԵՇՔ-Ն ամբողջապես համապատասխանում է Եվրոպական անվտանգության ռազմավարության նպատակներին (ընդունված Եվրոպական խորհրդի կողմից 2003 թվականի դեկտեմբերին), որոնք են՝ «կատարել հատուկ ներդրում մեր անմիջական հարևանության շրջան-ներում կայունության և արդյունավետ կառավարման գործին (և) Եվրոպական Միությունից դեպի արևելք և Միջերկրական ծովի ափամերձ շրջաններում նպաստել արդյունավետ կառավարվող երկրների շղթայի ստեղծմանը, որոնց հետ մենք կարող ենք ունենալ բարեկամական և համագործակցական հարաբերություններ»:

ԵՇՔ-Ը նաև արդեքավոր լրացում է Բարսեղոնի գործընթացին այն առումով, որ յուրաքանչյուր գործընկերոջը կթույլատրի զարգացնել ավելի սերտ կապեր ԵՄ-ի հետ՝ հիմնված նրա հատուկ կարիքների և հիմնառավողությունների վրա:

3. Գործողությունների ծրագրեր

Գործողությունների ծրագրերը վերը նշված նպատակների իրականացման սկզբնական քայլեր են հանդիսանում: Խորհրդի եղանակա-

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ★ ★ ՔԱՂԱՔԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ

ցուքյունների հետ միասին գործողությունների ծրագրերի ներկայիս առաջարկները հետևյալն են. (4) «միասնական համաձայնության գալ հետաքրքրված հարևան երկների հետ: Դրանք պետք է լինեն առնը-վազն երեք տարվա տևողությամբ և երկարագելի՝ երկկողմանի համա-ձայնությամբ: Նման գործողությունների ծրագրերը պետք է հիմնված լինեն համընդհանուր սկզբունքների վրա, սակայն և համապատաս-խանաբար տարրերակվեն՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հարևանի առանձնահատկությունները, ազգային բարեփոխումների գործընթաց-ները և ԵՄ-ի հետ հարաբերությունները: Գործողությունների ծրագրերը պետք է լինեն բազմակողմանի, բայց միևնույն ժամանակ հստակորեն տարրորշեն հենակետային նախապատվությունները և առաջարկեն բարեփոխումների համար իրական դրագայունաբարներ: Գործողութ-յունների ծրագրերը հնարավորության շրջանակներում նաև պետք է ստանձնեն տարածաշրջանային համագործակցության դերը»:

Առաջարկված Գործողությունների ծրագրերից առաջինները մշակվել են այն գործընկերների հետ, որոնց հետ ԵՄ-ն ունի գործող ասոցիացիոն կամ համագործակցության պայմանագրեր. Յորդանան, Մոլդովա, Մարոկկո, Թուրքիա, Ուկրաինա, Իսրայել և Պաղեստինի հնք-նավարություն: Գործողությունների ծրագրերի շուրջ աշխատանքն սկսելուց առաջ Յանձնաժողովը պատրաստեց երկրների վերաբերյալ գենուցյներ, որոնց միջոցով յուրաքանչյուր երկրի համար հստակեցվեցին իրենց նախապատվությունները: 2004 թվականի ընթացքում Յանձ-նաժողովը վերը նշված գործընկերների հետ վարել է հետազոտական քննարկումներ՝ ԵՄ անդամ երկրների մասնակցությամբ: Փոփոխվող նախագահությունը, Խորհրդի քարտուղարությունը և ԳՔ/ԲՆ Սոլանայի ներկայացուցիչները նասնակցել են գործընկերների հետ տեղի ունեցած բոլոր քննարկումներին:

ԵՅՔ-ի յուրաքանչյուր գործընկերոջ հետ հարաբերությունների արդյունավետությունը և նպատակավայրեցության աստիճանը տարրեր են՝ արտացոլելով համընդհանուր արժեքների արդյունավետ կիսման աստիճանը, յուրաքանչյուր երկրի հետ եղած հարաբերությունների վիճակը, վերջինիս կարիքները և կարողությունները, ինչպես նաև ընդհանուր հետաքրքրությունները: Մանրամասն համաձայնեցված Գործողությունների ծրագրերը ներառում են մի շարք նախապատվություններ, որոնց նպատակն է անրապնդել նվիրվածությունն այս արժեք-ների նկատմամբ: Դրանց շարքին են դասվում ժողովրդավարության և օդենքի գերակայության անդամությը, մարդու իրավունքների և հիմ-

* ԿԱՆՉԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԽՈՐՃՐԴԻՆ ՏՐՎՈՂ ԿԱՌՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎՐՈՊԱԿԱԼ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՎՈՒԹՅԱՆ (ԵՐՖ) ԾՐԱԳՐԻ ★
ՇՐՋԱՍԱԿՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ★
ՇՈՒՐՅ ՀԱՆՉԱԺՈՂՈՎԻ Առաջարկությունների ՄԱՍԻՆ ★

նարար ազատությունների նկատմամբ հարգանքը՝ ներառյալ ԶԼՄ-ների և խոսքի ազատությունը, փոքրամամությունների իրավունքները և քաղաքացիական հասարակության զարգացման օժանդակությունը։ Պարտավորվածությունները նաև կապված են ԵՄ-ի արտաքին քաղաքականության կարևոր ասպեկտների հետ, ներառյալ՝ ահարենքության և զանգվածային ոչնչացման գենքերի (ՉՈԶ) տարածման դեմ պայքարությունը, ինչպես նաև հակամարտությունների լուծմանը հասնելու ջանքերը։ Գործողությունների ծրագրերը պետք է բերեն մերձսահմանային համագործակցության։ Այստեղ հաշվի կառնվի կառուցողական քաղաքականության ոլորտում ծեռօթ բերված փորձը։

Անհատական նախապատվությունները Գործողությունների ծրագրում նպատակ ունեն լինելու և պատվախնդիր, և իրական, և ծնակերպված հնարավորինս ճշգրիտ ու հստակ, որպեսզի հնարավոր լինի հետևել և վերահսկել երկու կողմերի վերցրած պարտավորությունների կատարումը։

Հանձնաժողովը տեղեկատվական կարգով Գործողությունների ծրագրերի նախագիծը կուղարկի Եվրոպական խորհրդարան, ինչպես նաև Եվրոպական տնտեսական, սոցիալական և տարածաշրջանային հանձնաժողովներ։

Յուրաքանչյուր գործընկեր երկրի հետ աշխատանքի իրավական իիմք է հանդիսանում ուժի մեջ մտած Ասոցիացիոն կամ Գործընկերության և համագործակցության պայմանագրերը։ ԵՄ անդամ երկրների կողմից հավանություն տալու դեպքում Գործողությունների ծրագրը կհաստատվի Ասոցիացիոն կամ Գործընկերության և համագործակցության համապատասխան խորհուրդների կողմից։ Սա ստանում է Հանձնաժողովի առաջարկության տեսք և դրվում խորհրդի քննարկմանը, որտեղ պարզվում է, թե ինչ դեր է ունենալու Եվրոպական համայնքը և իր անդամ երկրները համապատասխան Ասոցիացիոն կամ Գործընկերության և համագործակցության խորհրդում։ Որպես հետևանք նախատեսվում է համապատասխան Գործողությունների ծրագրերի կիրառման հետ կապված առաջարկությունների ընդունումը։

Դիմանից հետո, այս պայմանագրերով հիմնված համատեղ մարմինները (Ասոցիացիոն կամ Համագործակցության խորհուրդները, հանձնաժողովները և ենթահանձնաժողովները) կզբաղվեն աշխատանքի կատարմամբ և Գործողությունների ծրագրերի կատարման վերահսկմանը։ Համաձայնեցված նպատակների գործում առաջընթացը կվերահսկվի համապատասխան Ասոցիացիոն կամ Գործընկերական

★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

և համագործակցական խորհուրդների կողմից նշանակված մարմինների կողմից: Խորհուրդներում կներառվեն գործընկեր երկրների, ԵՄ անդամ երկրների, Եվրոպական հանձնաժողովի և Խորհրդի քարտուղարության ներկայացուցիչներ: Պայմանագրով նախատեսված կառույցները և, հատկապես, ենթահանձնաժողովները կըննվեն, որպեսզի հաստատվի Գործողությունների ծրագրերով նախատեսված բոլոր նախապատվություններն արդյոք համապատասխանաբա՞ր են արտահայտված:

Հանձնաժողովը ժամանակ առ ժամանակ կպատրաստի առաջնաբացի և հետագա ջանքեր պահանջող ոլորտների վերաբերյալ գեկույցներ: Ձեկույցի պատրաստման համար Հանձնաժողովը տեղեկատվություն ստանալու նպատակով կղիմի գործընկեր Երկրներին, պատրաստվող գեկույցի համար հիմք վերցնելով այլ միջազգային կազմակերպությունների (ԵԽ, ԵԱՀԿ-ը, ՄԱԿ-ի կառույցներ և միջազգային ֆինանսական ինստիտուտներ) հետազոտությունների արդյունքները: Այս գործողությունների ծրագրերի մեջ ներառված երկրների առաջնաբացի վերաբերյալ գեկույցների առաջին շարքը Հանձնաժողովը նպատակադրված է ներկայացնելու 2006 թվականի ընթացքում, իսկ երկրորդ շարքը՝ 2007 թվականին: Ինչ վերաբերում է ԵՀԿ-ի նախնական ժամանակաշրջաններին, ապա Հանձնաժողովը խնդրելու է ԳԲ/ԲՍ-ի աջակցությունն այն հարցերում, որոնք վերաբերում են քաղաքական երկխոսությանն ու համագործակցությանը և Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականությանը (CFSP):

Յուրաքանչյուր գործընկերոց հետ ԵՄ-ի պայմանագրային կապերի հետագա զարգացմանը վերաբերող ցանկացած առաջարկ կատարվի այս գեկուցների եզրակացությունների հիման վրա: Յանձնաժողովն առաջարկել է, որ կախված նախնական Գործողությունների ծրագրերի կատարման հաջողության աստիճանից՝ յուրաքանչյուր գործընկերոցը կառաջարկվեն նոր և ավելի լայն պայմանագրային շղթանակներ ԵՄ-ի հետ իր հարաբերություններում՝ Եվրոպական հարևանության պայմանագրերի ծնուզ:

Գործողությունների ծրագրերի նախապատվությունների իրագործումը կիմանասավորվի գործոն «Մեղա» և «Տասիմ» ծրագրերով։ Ակսած մյուս ֆինանսական շրջանից Հանձնաժողովն առաջարկել է նոր «առաջադրված քաղաքականություն»՝ Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքը (ԵՀՊԳ), որը կինտրունանա ԵՀ-ի Գործողությունների ծրագրերի ֆինանսավորման վրա։

ՀԱՅՉԱՎԱՐՈՂՈՎԻ ԿՈՐՄԻՑ ԽՈՐՃՈՒԽԻ ՏՐՎՈՇ ՀԱՅՈՐԴԱՎՐՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ (ԵՐ) ԾՐՄԳՈՒ
ԾՐՁԱՆԱԿԱՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ
ՀՈՒՐՑ ՀԱՅՉԱՎԱՐՈՂՈՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱԿԱՆԻ

4. Ներկա քաղաքական կոնտեքստում

Ուկրաինան այս գործընկերների շարքում է, որոնց հետ 2004 թվականի ընթացքում քննարկվել է Գործողությունների ծրագրերի նախագիծը: Հանձնաժողովն այդ Գործողությունների ծրագիրը ներկայացրել էր Ուկրաինայի համար, որպես երկրի ապագա զարգացման հետ վերջինիս ունեցած կապի ցուցադրություն: Հանձնաժողովը խորհրդին առաջարկում է փոխանցել այս Գործողությունների ծրագիրը ԵՄ-Ուկրաինա Համագործակցական խորհուրդ՝ վերջինիս կողմից դրա հաստատման համար, այն պահից հետո, եթե Ուկրաինայում տեղի ունեցող զարգացումները թույլ տան իրականացնել առաջարկված նիշոցները: Սա ներառում է ազատ և արդար նախագահական ընտրությունների անցկացում համաձայն ԵԱՀԿ-ի չափանիշների:

5. Ապագա Գործողությունների ծրագրերը

Հանձնաժողովի առաջարկից հետո Ընդհանուր գործերի և արտաքին հարաբերությունների խորհուրդը (GAER Council) 2004 թվականի հունիսի 14-ին որոշել է ներառել Հայաստանը, Վրաստանը և Աղրբեջանը ԵՐՔ ծրագրի շրջանակներում: Սա մատնանշում է մի կարևոր քայլ առաջ ԵՄ-ի Հարավային Կովկասի տարածաշրջանի հետ կապ հաստատելու գործում: Որոշումը զգալիորեն կայուն գործընկերության հեռանը-կարներ է բացում: Որպես առաջին քայլ, Հանձնաժողովը Երկրների վերաբերյալ գեկույցներ կպատրաստի 2005 թվականի մարտին Եվրոպական խորհրդին ներկայացնելու համար: Այս գեկույցները նաև խորհրդատվության համար հիմք կիանդիսանան, թե արդյոք անհրաժեշտ է պատրաստել գործնական ծրագրեր այս երկրների հետ:

Ավելին, ԵՄ-ի Եգիպտոսի և Լիբանանի հետ գործող Ասոցիացիոն պայմանագրի համաձայն՝ Հանձնաժողովն այս երկու երկրներին ամբողջությամբ կներգրավի ԵՀՊ-ի մեջ, և արդեն սկսել է Գործողությունների ծրագրերի նախապատրաստումը։ Այս երկրների համար նույնպես Հանձնաժողովը պատրաստում է Երկրի վերաբերյալ գեկույց, որոնք ժամանակին կներկայացվեն Եվրոպական խորհրդին 2005 թվականի մարտին։ Սա կօգնի առանձնացնել այն առաջնային ոլորտները, որոնց վրա կարող են կենտրոնանալ Եգիպտոսի և Լիբանանի Գործողությունների ծրագրերը։

Եվրոպական հարևանության քաղաքականության ծրագիրը բաց է

★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԵԼԱԶՈՒՍԻ և ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎԻ ավագանի բոլոր երկրների համար, ներառյալ Լիբիան՝ սկսած այն պահից, երբ վերջիններս բավարարեն ընդունան պայմաններին:

- (1) COM (2004) 373 final, 12.5.2004
 - (2) COM (2003) 104 final, 11.3.2003
 - (3) GAER Council conclusions of 14 June 2004
 - (4) GAER Councils of 16 June 2003 and of 14 June 2004



Բրյուսել, 02.03.2005 թ.
COM(2005) 72 վերջնական

Ոչ պաշտոնական թարգմանություն՝ անգլերենից

ՀԱՌՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՑ ԽՈՐՃՐԴԻՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻԱՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ քաղաքականություն

**Առաջարկություններ Հայաստանի, Ադրբեյչանի,
Վրաստանի, Եգիպտոսի և Լիբանանի համար**

★ ★ ★
★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
★ ★ ★

1. Ներածություն և ամփոփում

2004 թ. մայիսի Եվրոպական Հանձնաժողովի Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) ռազմավարական փաստաթուղթը¹, ինչպես հաստատվել է Խորհրդի կողմից 2004 թ. հունիսին², իհմ-նադրում է առաջիկա տարիների ԵՀՔ գործառույթները՝ սահմանելով ԵՀՔ նպատակներն ու սկզբունքները, աշխարհագրական շրջանակն ու կիրառվող մեթոդները: Սա գուգորովվել է Խորայելի, Ջորդանանի, Մոլդովայի, Մարոկկոյի, Պաղեստինի Ինքնավարության, Թունիսի և Ուկրաինայի վերաբերյալ գեկույցներով և 2004 թ. դեկտեմբերին դրան հաջորդեց այդ երկրների գործողությունների առաջարկությունների Հանձնաժողովի Հաղորդագրությունը³: Այս գործողությունների ծրագրերը խորհրդի կողմից ընդունվեցին և ներկայում գտվում են գործընկեր երկրների կողմից հաստատման գործընթացում:

Հանձնաժողովի ռազմավարական փաստաթորի իհման վրա 2004 թ. հունիսին Խորհրդություն որոշեց Հայաստանին, Ադրբեյջանին և Վրաստանին ներառել ԵՀՔ-ի մեջ՝ բացելով նշանակալիորեն հզրացված գործընկերության հեռանկարներն ու այսպիսով կարևոր քայլ կատարելով Հարավային Կովկասում ԵՄ-ի ներգրավվածության ուղղությամբ: Հանձնաժողովի ծառայությունները գեկույցներ են պատրաստել այս երկրների վերաբերյալ, որոնք համապարփակ ծնով ներկայացնում են իրավիճակը:

Եզրակացություն և շուտով Լիբանանի հետ Ընկերակցության Համաձայնագրի⁴ մուտքալուս ուժի մեջ մտնելու հետ մեկտեղ, Հանձնաժողովի ծառայությունները գեկույցներ են պատրաստել այս երկու երկրների վերաբերյալ: Այս գեկույցները համապարփակ ներկայացնում են տվյալ երկրներում քաղաքական և տնտեսական իրավիճակները:

Սույն հաղորդագրությունը ներկայացնում է իհմագործ երկների գեկույցների առանցքային տարրերը՝ կատարված Հանձնաժողովի ծառայությունների կողմից, որոնց աջակցել է քաղաքական համագործակցության և CFSP հարցերով գերագույն հանձնակատարը ու առաջարկություններ է ներկայացնում գործողությունների ծրագրերի համար:

¹ COM (2004) 373 final of 12.05.2004.

² Council Conclusions, GAERC 14 June 2004; Presidency Conclusions, European Council 17-18 June 2004.

³ COM(2004) 795 final of 9 December 2004.

⁴ The Interim Agreement with Lebanon entered into force in March 2003.

2. Երկրի գնահատումներ

Հարավային Կովկաս

Հայաստան

Հայաստանի անկախացմանը հաջորդող տարիների ընթացքում ԵՄ–Հայաստան հարաբերությունները կենտրոնացած էին Խորհրդային Միության և Լեռնային Ղարաբաղում Աղրբեջանի հետ հակամարտության արդյունքում ծանր մարդասիրական իրավիճակի լուծնան վրա: Դեպի ժողովրդավարություն և շուկայական տնտեսություն անցում կատարելու հիմքերը դնելու համար որոշ քայլեր ձեռնարկվեցին: 1999 թ. Գործընկերության և Համագործակցության Համաձայնագրի (PCA) ուժի մեջ մտնելուց հետո, ԵՄ–Հայաստան հարաբերություններում առաջ եկավ մի կարևոր փուլ:

Վերջին տարիներին Հայաստանը լավ մակրոտնտեսական կատարողականի է հասել՝ տպավորիչ տնտեսական աճի տեսմակերով: Ցուցանիշներ կան, որոնք ցույց են տալիս, որ սա սկսում է որոշ ազդեցություններ ունենալ Հայաստանում աղքատության բարձր մակարդակի վրա: 2003 թ. ԱՀԿ-ում Հայաստանի անդամակցությունը ցույց է տալիս, որ վերջինս առաջընթաց է գրանցել հիմնական շուկայական բարեփոխումների ուղղությամբ: Առաջընթաց է գրանցվել նաև ԵՄ-ի հետ Հայաստանի օրենսդրության համադրման առումով: Հակակոռուպցիոն ռազմավարության ընդունումն ու հակակոռուպցիոն խորհրդի հիմնումը կարևոր քայլեր են:

Սակայն Հայաստանի համար լուրջ մարտահրավերներ են մնում, մասնավորապես, ժողովրդավարության և մարդու իրավունքների բնագավառում և Եվրախորհրդի ու ԵԱՀԿ-ի անդամակցության պարտավորությունների կատարման ոլորտում: Ընտրական համակարգում նկատելի բարելավումներ են պահանջվում, որպեսզի կյանքի կոչվեն 2003 թ. նախագահական և խորհրդարանային ընտրություններին հաջորդած ODIHR առաջարկությունները:

Օրենքի գերակայության և իրավապահապահության ոլորտներում պետք է ուժեղացնել հարգանքը մարդու իրավունքների հանդեպ: Նկատելի փոփոխություններ են պահանջվում քաղաքացիական հասարակության զարգացման համար՝ ներառյալ մամուլի ազատության երաշխիքները: Մակրոտնտեսական ոլորտում հարգանքն օրենքի գերակայության հանդեպ էական է գործարար և ներդրումային միջավայրը բարելավելու համար: Հարկային և մաքսային համակարգում

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ★ ՔԱՂՓԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ

բարելավումները կարևոր կլինեն, որովհետև դրանով մեծ հարված կհասցվի կոռուպցիային: Այքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրականացումը կայուն տնտեսական աճի զարգացման և աղքատության ու եկամուտների անհավասարության նվազեցման ջանքերի կենտրոնական առանցքն է:

Եներգետիկայի ոլորտի հետագա վերակառուցումները նույնպես անհրաժեշտ են՝ ներառյալ Մեծամորի ատոմակայակի կանգնեցումը:

Դայաստանի քաղաքական և տնտեսական կյանքում գեղիշխող ոլորտն է Աղրեջանի հետ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը: Միայն այս հակամարտության խաղաղ, ազնիվ և տևական լուծումը Դայաստանի հնարավորություն կտա զարգացմել իր ներուժը:

Դայաստանի կառավարությունը հայտարարել է այս նարտահրավերներին անդրադառնալու, ԵՄ-ի հետ իր հարաբերությունները զարգացնելու և եվրոպական կառույցներում հետագայում ինտեգրվելու իր հաստատակամությունը: Դետևաբար Դանձնաժողովն այն կարծիքին է, որ իհմք ընդունելով Դայաստանի կառավարության ստանձնած պարտավորությունները, ԵՄ և Դայաստանի միջև հարաբերությունների ուժեղացման և անհրաժեշտ բարեփոխումների իրականացման խթանման համար կարելի է օգտագործել ԵՀՊ գործողությունների ծրագիրը: Գործողությունների ծրագրի հիմնական նպատակները պետք է ներառն՝ օրենքի գերակայության, ժողովրդավարական կառույցների և տարակարծությունների (օրինակ՝ ԵԽ/ԵԱՀԿ առաջարկություններին համահունչ ընտրական օրենսդրության բարեփոխումներ և ժողովրդավարական ընտրությունների անցկացում, սահմանադրական բարեփոխումներ՝ հաշվի առնելով ԵԽ առաջարկությունները, տեղական ինքնակառավարման բարեփոխումները) ամրապնդում, նարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հանդեպ հարգանքի ուժեղացում՝ մասնավորապես խոսքի ազատության և հավաքների ազատության հետ կապված, բարելավումներ գործարար միջավայրում, ինչպես նաև պետական հատվածի արդիականացում, կոռուպցիայի և կեղծիքների դեմ արդյունավետ պայքար, հարկային և նաքային վարչարարությունների բարեփոխումներ և ԵՄ ստանդարտներին համահունչ օրենսդրություն, աղքատության հաղթահարման, կայուն զարգացման և բնապահպանական խնդիրների առաջընթաց, Մեծամորի ատոմակայակի կանգնեցում, առաջընթաց՝ հակամարտությունների կարգավորման և ուժեղացված տարածաշրջանային համագործակցության ուղղությամբ:

Ողջամիտ մակրոտնտեսական քաղաքականություններ են պահանջվում գործողությունների ծրագրի արդյունավետ իրականացմանն աջակցելու համար:

Հաշվի առնելով ներկայիս քաղաքական, տնտեսական և ինստիտուցիոնալ համատեքստը, ինչպես նկարագրված է Երկրի գեկուցում, որպես սկզբնակետ Հայաստանի գործողությունների ծրագիրը պետք է տրամադրի ուժեղացված երկխոսություն, աջակցություն շուկայական տնտեսության բարեփոփոխմներին, որն աստիճանաբար կիանցեցնի ԵՄ ներքին շուկայի ինտեգրմանը, լրացուցիչ աջակցություն հակամարտության գոտիների տնտեսական վերականգնմանը՝ հակամարտությունների կարգավորման համատեքստում, մեծացված ֆինանսական աջակցություն՝ ներառյալ մինչև 2007 թ. Հայաստանում EIB մանդատի ընդլայնում, ուժեղացված աջակցություն տարածաշրջանային համագործակցությանը, արդարադատության և ներքին գործերի բնագավառում հզորացված համագործակցություն՝ ըստ հնարավորի ներառելով վիզայի համագործակցություն/վերընդունում համաձայնագրի երկխոսության ստեղծումը, Էներգետիկ, էլեկտրոնային հաղորդակցության և տրամապորտի, շրջակա միջավայրի և հանրային առողջապահության բնագավառներում համագործակցության ուժեղացում, ինչպես նաև գիտության և տեխնոլոգիայի բնագավառում ուժեղացված համագործակցություն, մարդ-մարդուն կապերի ուժեղացում, մասնավորապես Լեռնային Ղարաբաղի հակամարտության համատեքստում և հաշվի պետք է առնվեն գործողությունների ծրագրի իրականացման առաջընթացը՝ PCA ավարտից հետո դրա հավանական, նոր, ուժեղացված համաձայնագրի կնքման համար:

Աղրբեջան

Աղրբեջանի անկախացմանը հաջորդող առաջին տարիներին ԵՄ-Աղրբեջան հարաբերությունները կենտրոնացան Խորհրդային Միության փլուզմանը հաջորդող և Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղում հակամարտության և անկայուն ներքին իրավիճակի արդյունք հանդիսացող բարդ մարդասիրական իրավիճակի լուծնան վրա: Որոշ քայլեր ձեռնարկվեցին դեպի ժողովրդավարություն և շուկայական տնտեսություն անցում կատարելու համար: 1999 թ. Գործընկերության և Համագործակցությանը համաձայնագրի (PCA) ուժի մեջ մտնելուց հետո ԵՄ-Աղրբեջան հարաբերություններում առաջ եկավ մի կարևոր փուլ, որը, մասնավորապես, պարբերական երխոսություն ապահովեց: Վեր-

★ ★ ★ ԵՐՐՈՅԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ★ ★ ՔԱՂՓԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ

չին տարիներին ԵՄ և Աղրբեջանի միջև հարաբերությունները կայուն զարգանում են: Այսօրվա երկխոսությունն ավելի շատ կենտրոնացած և համագործակցությունը ուժեղացված է, մասնավորապես Էներգետիկայի և տրանսպորտի ոլորտներուն:

Աղրբեջանի առջև ծառացած գերինայիրը մնում է օրենքի գերակայության, ժողովրդական հավասարակշռությունների (ներառյալ ազատ և արդար ընտրությունները), կոռուպցիայի և կեղծիքների դեմ պայքարի և մարդու իրավունքների պաշտպանության ուժեղացման կարիքը, որպես Եվրախորհրդի և ԵԱՀԿ անդամի պարտավորություններ:

Տնտեսական բնագավառում ներդրումների միջավայրի և տնտեսական գործունեության բազմազանության բարելավումը կայուն աճի առանձքային գործոն կլինի: Աղրատության հաղթահարման և տնտեսական զարգացման պետական ծրագրի արդյունավետ իրականացումը Աղրբեջանի առջև ծառացած որոշ կառուցվածքային տնտեսական մարտահրավերների լուծման շրջանակ կտրամադրի: Ի լրումն այս քաղաքական և տնտեսական մարտահրավերների, Լեռնային Դարաբաղի հակամարտության լուծումը Աղրբեջանի և տարածաշրջանի զարգացման համար մի լուրջ խոչընդոտ կվերացնի: Աղրբեջանի կառավարությունը հայտարարել է այս մարտահրավերներին անդրադառնալու, ԵՄ-ի հետ հարաբերությունները զարգացնելու և Եվրոպական կառուցներում ավելի ինտեգրվելու իր հաստատակամությունը: Հետևաբար, հանձնաժողովն այն կարծիքն է, որ Աղրբեջանի կառավարության պարտավորությունների հիման վրա ԵՀՇ գործողությունների ծրագրը կարող է օգտագործվել ԵՄ-ի և Աղրբեջանի միջև հարաբերությունների հետագա ամրապնդման և անհրաժեշտ բարեփոխումների իրականացման խթանման համար:

Գործողությունների ծրագրի հիմնական նպատակները պետք է ներառն՝ օրենքի գերակայության, ժողովրդավարական կառույցների և բազմակարծության (իշխանության թերի բարելավված տարանջատում, տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումները) ուժեղացում և ընտրական օրենսդրության ու գործընթացների հզորացում, որպեսզի ամրապնդեն ընտրական ստանդարտները, օրենքի գերակայության բնագավառում արդյունավետ բարեփոխումների իրականացում (դատահրավական համակարգ, իրավապահ մարմիններ), մարդու իրավունքների և մանուլի ազատության և անկախության ուժեղացված պաշտպանությունը, ընդհանուր տնտեսական համակարգի հավասարակշռված զարգացման ուղղությամբ մեծացված ջանքեր, բարելավումների գործարար միջավայրում, ինչպես նաև պետական

հատվածի արդիականացում, միջազգային և ԵՄ ստանդարտներին համահունչ հարկային և մաքսային վարչարարության և օրենսդրության բարեփոխումներ, կոռուպցիայի և կեղծիքների դեմ արդյունավետ պայքար, նավթային եկամուտների և սեփականաշնորհման գործընթացի կառավարման մեծացված թափանցիկություն, առաջընթաց աղքատության հաղթահարման գործընթացում, կայուն զարգացում և շրջակա միջավայրի պահպանություն, անդամակցում ԱՀԿ-ին, առաջընթաց հակամարտությունների կարգավորման և ուժեղացված տարածաշրջանային համագործակցության ուղղությամբ:

Գործողությունների արդյունավետ իրականացմանն աջակցելու համար ողջամիտ մակրոտնտեսական քաղաքականություններ պետք է իրականացվեն: Դաշվի առնելով ներկա քաղաքական, տնտեսական և ինստիտուցիոնալ համատեքստը, ինչպես նկարագրված է Երկրի գեկույցում, որպես սկզբնակետ՝ Աղրբեջանի գործողությունների ծրագիրը պետք է ապահովի ուժեղացված քաղաքական երկխոսություն, PCA հետագա իրականացում, աջակցություն շուկայական տնտեսության բարեփոխումներին, որն աստիճանաբար կիանգեցնի ԵՄ-ի ներքին շուկայի ինտեգրմանը, հետագա աջակցություն հակամարտությունների գոտիների տնտեսական վերականգնմանը՝ հակամարտությունների կարգավորման համատեքստում, մեծացված ֆինանսական աջակցություն՝ ներառյալ մինչև 2007 թ. Աղրբեջանում ԵԻԲ մանդատի ընդլայնում ուժեղացված ֆինանսական աջակցություն, ուժեղացված աջակցություն տարածաշրջանային համագործակցությանը, արդարադատության և ներքին գործերի բնագավառում հզրացված համագործակցություն՝ ըստ հնարավորի ներառելով վիզայի համագործակցություն/վերընդունում համաձայնագրի երկխոսության ստեղծումը, էներգետիկ, էլեկտրոնային հաղորդակցության և տրանսպորտի, շրջակա միջավայրի և հանրային առողջապահության բնագավառներում համագործակցության ուժեղացում, ինչպես նաև գիտության և տեխնոլոգիայի բնագավառում ուժեղացված համագործակցություն, մարդը-մարդուն կապերի ուժեղացում, մասնավորապես Լեռնային Ղարաբաղի հակամարտության համատեքստում և հաշվի պետք է առնվեն գործողությունների ծրագրի իրականացման առաջընթացը՝ PCA ավարտից հետո դրա հավանական նոր ուժեղացված համաձայնագրի կնքման համար:

Հանձնաժողովը մտադրված է Աղրբեջանում պատվիրակություն բացել 2005 թ. ընթացքում:

★ ★ ★
★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
★ ★

Վիաստան

1991 թ. Վրաստանի անկախացումից հետո ԵՄ—Վրաստան հարաբերությունները կենտրոնացած են Եղել Խորհրդային Սփորթյան փլուզմանն ու Վրաստանի ներքին հակամարտությունների արդյունքում ի հայտ եկած ծանր մարդասիրական իրավիճակի կարգավորմանը: Որոշ քայլեր են ձեռնարկվել նաև ժողովրդավարության և շուկայական տնտեսության հիմքերը դնելու համար: 1999 թ. Գործընկերության և Հանագործակցության Համաձայնագրի ուժի մեջ մտնելը մի կարևոր քայլեր ԵՄ—Վրաստան հարաբերություններում՝ հնարավորություն ընծեռելով պարբերական քաղաքական երկխոսության համար: Իր 2003 թ. վերանայված երկիր ռազմավարության փաստաթղթում Հանձնաժողովն անբավարար առաջընթաց գրանցեց դեպի ժողովրդավարություն և շուկայական տնտեսություն. «Վրաստանի քաղաքական իրավիճակում գերիշխում է լայնատարած աղքատությունը, պետական կառավարման լուրջ պրոբլեմները և թույլ օրենքի գերակայությունը՝ ներառյալ կոռուպցիայի բարձր մակարդակը, Ռուսաստանի հետ լարված հարաբերությունները և ներքին հակամարտությունները, մասնավորապես՝ առանձնացած Արխագիշայի և Յարավային Օսերիայի համբաւետությունները, ինչպես նաև արտաքին պարտքի բարձր մակարդակը»:

ԵՄ-ն և միջազգային լայն հանրությունը ողջունեց 2003 թ. նոյեմբերի «Վարդերի հեղափոխությունը»: Դրան հաջորդած համեմատաբար ազատ և արդար նախագահական և խորհրդարանական ընտրությունները և բարեփոխումների ժավալուն ծրագրի սկսումը դրական քայլեր են: Զեռքբերումների շարքում են՝ 1) պայքարը կոռուպցիայի որոշ տեսակների դեմ, 2) հարկային հավաքագրումների բարելավումը, 3) աշխատավարձերի և կենսաթոշակների ժամանակին վճարումները, 4) պայքարը մաքսանենգության դեմ, 5) լավ մակրոտնտեսական կատարողականը, 6) Աջարիայի վերինտեգրումը Վրաստաճի տնտեսական, սոցիալական և վարչական համակարգում, 7) դրոնորմների նորացված վստահություն Վրաստաճի հանդեպ (դոնորների հաջող խորհրդաժողովը Բրյուսելում 2004 թ. հունիսին):

Վրաստանի առջև ծառացած գերիխնդիրը օրենքի գերակայության ուժեղացումն է՝ Անթառյալ պետական ծառայության բարեփոխումները և դատաիրավական համակարգի բարեփոխումները։ Վրաստանում ժողովրդավարության հավասարակշռությունների ուժեղացումը, Եվրախորհրդի և ԵԱՀԿ անդամակցության պարտավորությունների շրջանակներում, նույնական է օրենքի գերակայության հանդեպ հաղողան-

քի ծևավորման համար: Այս ոլորտի զարգացումները պետք է օգնեն ամրապնդելու օրենքի վրա հիմնված շրջանակներում կոռուպցիայի դեմ Վրաստանի պայքարը:

Տնտեսական ոլորտում ներդրումային միջավայրի հետագա բարելավումները համեմիսանալու են կայուն տնտեսական աճի առանցքային գործոնը: Տնտեսական զարգացման և աղքատության նվազեցման ծրագրի արդյունավետ իրականացումը Վրաստանի առջև ծառացած կառուցվածքային տնտեսական մարտահրավերների լուծման առանցքային միջոցները կլինեն: ԵՄ-Վրաստան հարաբերությունների առումով դեռ շատ բան կա անելու PCA իրականացման բնագավառում: Ուստատանի հետ հարաբերությունների բարելավումն ու ներքին հակամարտությունների խաղաղ կարգավորումը նույնպես կարևոր գործոն կլինեն Վրաստանի երկարաժամկետ անվտանգության և բարգավաճման կառուցման համար: Վրաստանի կառավարությունը ստանձնել է այս մարտահրավերներին անդրադարձալու, ԵՄ-ի հետ հարաբերությունները զարգացնելու և Եվրոպական կառույցներում ավելի ինտեգրվելու պարտավորությունը: Յետևարար, Յանձնաժողովն այն կարծիքին է, որ Վրաստանի կառավարության ստանձնած պարտավորությունների հիմնան վրա, ԵԿ գործողությունների ծրագիրը կարելի է օգտագործել ԵՄ և Վրաստանի միջև հարաբերությունների հետագա ուժեղացման և անհրաժեշտ բարեփոխումների իրականացման խթանման համար: Գործողությունների ծրագրի առանցքային նպատակները պետք է ներառեն հարգանքը օրենքի գերակայության հանդեպ (դատահրավական համակարգի, իրավապահ մարմինների, ուղղիչ համակարգի բարեփոխումներ) և մարդու իրավունքների ուժեղացված պաշտպանությունը, ժողովրդավարական կառույցների և տարակարծության ուժեղացում (խորհրդարանի բարեփոխումներ, ԶԼՍ-ների անկախության հզորացում, տեղական ինքնակառավարման մարմինների բարեփոխումներ, ընտրական բարեփոխումներ), գործարար միջավայրի բարելավումներ, ինչպես նաև պետական հատվածի արդիականացում, հարկային և մաքսային վարչարարությունների բարեփոխումներ՝ միջազգային և ԵՄ ստանդարտներին համահումը և կոռուպցիայի ու կենցիքների դեմ արդյունավետ պայքար, սեփականաշնորհման թափանցիկ գործընթաց, առաջընթաց աղքատության հաղթահարման, կայուն զարգացման, շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտներում, առաջընթաց հակամարտությունների կարգավորման և ուժեղացված տարածաշրջանային համագործակության ոլորտներում: Ողջամիտ մակրոտնտեսական քաղա-

★ ★ ★
★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
★ ★

քականությունները պետք է շարունակվեն, որպեսզի աջակցեն գործողությունների ծրագրի արդյունավետ իրականացնանք: Դաշվի առնելով ներկա քաղաքական, տնտեսական և ինստիտուցիոնալ համատեքստը, ինչպես նկարագրված է Երկրի գենույցում, որպես սկզբնակետ՝ Վրաստանի գործողությունների ծրագիրը պետք է ապահովի ուժեղացված քաղաքական երկխոսություն, PCA հետազարա իրականացում, աջակցություն շուկայական տնտեսության բարեփոխումներին, որն աստիճանաբար կհանդեցնի ԵՄ-ի ներքին շուկայի ինտեգրմանը, հետագա աջակցություն հականարտությունների գոտիների տնտեսական վերականգնմանը՝ հականարտությունների կարգավորման համատեքստում, մեծացված ֆինանսական աջակցություն՝ ներառյալ մինչև 2007 թ. Աղբեջանում ԵԻԲ մանդատի ընդլայնում, ուժեղացված ֆինանսական աջակցություն, ուժեղացված աջակցություն տարածաշրջանային համագործակցությանը, արդարադատության և ներքին գործերի բնագավառում հզորացված համագործակցություն՝ ըստ հնարավորի ներառելով վիզայի համագործակցություն/Վերընդունում համաձայնագրի երկխոսության ստեղծումը, ներգետիկ, էկուտրոնային հաղորդակցության և տրանսպորտի, շրջակա միջավայրի, ծովային և ծկնային հարցերի և հանրային առողջապահության բնագավառներում համագործակցության ուժեղացում, ինչպես նաև գիտության և տեխնոլոգիայի բնագավառում ուժեղացված համագործակցություն, մարդա-մարդուն կապերի ուժեղացում, մասնավորապես կրթության և վերապատրաստման ու երիտասարդների հարցերի բնագավառում և հաշվի պետք է առնվեն գործողությունների ծրագրի իրականացման առաջընթացը՝ PCA ավարտից հետո դրա հավանական նոր ուժեղացված համաձայնագրի կնքման համար:

Եգիպտոս և Լիբանան

2004 թ. հունիսին Խորհրդը հրավիրեց Համձնաժողովին, SG/HR աջակցությամբ, քաղաքական համագործակցության և CFSP Վերաբերող հարցերի կապակցությամբ սկսել գործողությունների ծրագրի նախապատճառատությունները Միջերկրական այն երկրների հետ, որոնց ընկերակցության համաձայնագրերը ԵՄ-ի հետ վավերացվել են այդ երկրների կողմից: Որպես գործողությունների ծրագրի նախապատճառատման մաս, Համձնաժողովը պատրաստեց Եգիպտոսի և Լիբանանի այս գեկույցները⁵: Երկու երկրների համար էլ ընկերակցության հա-

⁵ Ref SEC XXX and XXX

մածայնագրերի իրականացումը երկողմանի հարաբերությունների առաջնային նպատակն է: ԵՇՔ առաջ է անցնում այս առաջարկությունից, որպեսզի ավելի սերտ հարաբերություններ առաջարկի՝ ներառյալ տնտեսական ինտեգրացման նկատելի աստիճան և քաղաքական համագործակցության խորացում: Երկրի գեկույցի բովանդակության հիմնա վրա Հանձնաժողովը, նախագահության և գերագույն հանձնակատարի հետ սերտ համագործակցությամբ, ըստ անհրաժեշտության, հնարավորինս շուտ ֆորմալ խորհրդակցություններ կազմի եղիպոտուի և Լիբանանի հետ՝ ուղղված համապարփակ և հավասարակշռված գործողությունների ծրագրի կնքմանը: Գործողությունների ծրագրի առանցքային առաջնահերթությունները կներառեն երկու լայն ոլորտներ. առաջին՝ կոմկրետ գործողությունների հանդեպ ստանձնած պարտավորություններ, որոնք ուժեղացնում են ընդհանուր արժեքների միասնականությունը այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ հարգանքը միջազգային պարտավորությունների հանդեպ, ժողովրդավարությունն ու օրենքի գերակայությունը՝ ներառյալ ժողովրդավարական ընտրությունների անցկացում, արդարադատության և մարդու իրավունքների ու արտաքին անվտանգության քաղաքականության հանդեպ որոշ պարտավորությունները, երկրորդ՝ պարտավորություններ այն գործողությունների հանդեպ, որոնք այս գործընկեր երկրներին ավելի կմոտեցնեն ԵՄ-ին մի շարք առաջնահերթ բնագավառներում, ինչպիսիք են՝ տնտեսական և սոցիալական զարգացման քաղաքականությունը (ներառյալ աղքատության նվազեցումն ու կայուն զարգացումը), առևտուրն ու ներքին շուկան (ներառյալ այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են էներգետիկան, տրանսպորտը, շրջակա միջավայրը, ծովային և ծննդյան հարցերը, տեղեկատվական հասարակությունը, հետազոտություններն ու նորամուծությունները, արդարադատությունն ու ներքին գործերը և մարդբ-մարդուն կապերը):

Գործողությունների առաջնահերթությունները կլիմեն հնարավորինս կոմկրետ, կախված տվյալ հարցից, և, այսպիսով, հենանիշներ կսահմանեն, որոնց կարելի է մոնիթորինգի ենթարկել և զնահատել: Գործողությունների ծրագիրը կսահմանի սահմանափակ քանակությամբ ոլորտները, որոնց պետք է հասցեագրել առանձնահատուկ կարևորությամբ, ինչպես նաև ավելի լայն ոլորտի գործողություններ, որոնք համապատասխանում են գործող երկողմանի համաձայնագրերի ծավալին: Այս տարբեր առաջնահերթություններին անդրադառնալու համար հստակ ժամանակահատվածներ կահմանվեն:

★ ԵՎՐՈՓԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

3. Եզրակացություններ և առաջարկություններ

Հարավային Կովկասի պետությունների հաշվետվությունները նշում են. Հայաստանում, Աղրբեջանում և Վրաստանում շարունակական բարեփոխումների և մի շաք առանցքային ոլորտներում առաջնաթագի անհրաժեշտություն կա: Հանձնաժողովը համարում է, որ գործողությունների ծրագիրը օգտակար գործիք կլինի, որով ԵՄ կարող է ավելի հզորացնել իր հարաբերությունները այս երկրների հետ և ակտիվ խրախուսել պահանջվող փոփոխությունները: Ենունաբար, Հանձնաժողովն առաջարկում է, որ Խորհրդողը հավանության արժանացնի այստեղ առաջարկվող ընդհանուր ուղղությունները և համաձայնի, որ աշխատանք պետք է սկսվի այս երկրներից յուրաքանչյուրի համար գործողությունների ծրագիր նախապատրաստելուն, այն իհմքի վրա, որը Հանձնաժողովը, Նախագահության և, ըստ անհրաժեշտության, Գերագույն հանձնակատարի հետ սերտ համագործակցությամբ, կապ կհաստատի համապատասխան գործընկեր երկրների հետ: Այս գործողությունների ծրագրի աշխատանքը պետք է անմիջապես սկսվի: Հանձնաժողովն ընդգծում է, որ գործողությունների ծրագրերը պետք է պատրաստված լինեն ըստ յուրաքանչյուր երկիրի կարիքների և յուրաքանչյուր երկրի հանդեպ վերաբերմունքը պետք է լինի ըստ վերջինիս անհատական արժանիքների: Անդամ երկրներին ամբողջովին կտեղեկացվի այս խորհրդակցությունների զարգացման վերաբերյալ:

Եզիստոսի և Լիբանանի երկրների գեկույցների հիմնան վրա Յանձնաժողովը կսկսի գործողությունների ծրագրեր նախապատրաստել յուրաքանչյուրի հետ: Առաջարկվում է հնարավորինս շուտ սկսել այս Գործողությունների ծրագրի խորհրդակցությունները: Լիբանանի կառավարության հրաժարականում և մայիսին նախատեսված ընտրություններով՝ իրավիճակի զարգացումները ազդեցություն կունենան խորհրդակցությունների ազդեցության վրա: Նպատակն է՝ հասմել հավասարակշռված գործողությունների ծրագրի յուրաքանչյուր երկրի համար՝ ներառելով նույն ընդհանուր ոլորտները, ինչ որ նախկին գործընկերների պարագայում *mutatis mutandis*, օրինակ՝ քաղաքական (ներառյալ հարգանք միջազգային պարտավորությունների և ժողովրդավարության ու օրենքի գերակայության հանդեպ) և տնտեսական ոլորտները՝ ներառյալ կայուն զարգացումն ու ոլորտային առանձնահատկությունները (ներքին շուկա և արևորի հետ կապված)

հարցեր, արդարադատություն և ներքին գործեր, շրջակա միջավայրի խնդիրներ, մարդու-մարդուն կապեր): Այս խորհրդատվությունների վերաբերյալ անդամ պետությունները ընթացքում կտեղեկացվեն:

Գործողությունների ծրագրերի ընդունումից հետո այս բոլոր հինգ երկրների, ինչպես նաև ԵՎ այլ պետությունների համապատասխան ընկերակցության կամ համագործակցության խորհուրդները կիրավիրվեն գործողությունների ծրագրերին աջակցելու համար: Գործողությունների ծրագրերը պետք է երեքից հինգ տարի տևողություն ունենան և գործողությունների ծրագրերի իրականացման մոնիթորինգը պետք է տեղի ունենա համապատասխան ընկերակցության կամ համագործակցության համաձայնագրի հաստատություններում: Այս մոնիթորինգի գործընթացի և գործընկերների կողմից տրամադրված տեղեկատվության արդյունքների գնահատման հիման վրա Հանձնաժողովը, քաղաքական համագործակցության և CFSP հետ կապված հարցերի Գերազույն հանձնակատարի աջակցությամբ, կներկայացնի երկու տարվա ընթացքում ձեռք բերված առաջընթացի միջնաժամկետ ուսումնասիրությունն ու յուրաքանչյուր գործողությունների ծրագրի ֆորմալ հաստատումից երեք տարվա ընթացքում մեկ այլ լրացուցիչ ուսումնասիրություն:





Բրյուսել

«SEC (2005) 285/3»

Ոչ պաշտոնական թարգմանություն՝ անգլերենից

ՀԱՆՁՆՎՃՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՆՔՎՅԻՒՆ ՀԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԿՐԻ ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆ

★ ԵՎՐՈՓԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒՅԹՈՒՆ

2004 թ. մայիսի 1-ին Եվրամիությունն ընդլայնվեց՝ ընդունելով տասը նոր անդամ պետությունների: Դա փոփոխություններ մտցրեց ԵՄ-ի քաղաքական աշխարհագրությունում՝ նոր հնարավորություններ ընձեռելով միության և արևմուտքում ու արևելքում գտնվող իր հարևանների միջև գոյություն ունեցող հարաբերությունների խորացման համար: Միությունը հաստատակամ է հետազայում զարգացնելով իր հարևանների հետ փոխադարձ գործընկերությունը՝ խրանելով անվտանգությունը, ինչպես նաև կայունությունն ու բարգավաճումը: ԵՄ-ի արտաքին սահմանները չեն դառնա տարանջատող նոր գծեր, այլ ուժեղացված համագործակցության կենտրոնացում:

Եվրոպական հարևանության քաղաքականությունը (ԵՀՔ) հավակնորդ նպատակներ է սահմանում հարևան երկրների հետ համագործակցելու համար՝ իիմք ընդունելով ընդհանուր արժեքների, առանցքային արտաքին քաղաքականության նպատակների, տնտեսական և ինստիտուցիոնալ բարեփոխումների հանդեպ պարտավորությունները։ Գործընկեր երկրները հրավիրված են ավելի սերտ քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերություններ հաստատել ԵՄ-ի հետ, որպեսզի հզորացվի միջազգային համագործակցությունն ու ընդհանուր պատասխանատվություն ստեղծվի հականարտությունների կանխարգելման և կարգավորման համար։ Միությունն առաջարկում է իր ներքին շուկայում և հետագա տնտեսական ինտեգրացիայում մասնակցելու հեռանկար։ Այս գործընթացի արագությունն ու լարվածությունը կախված կիմեն յուրաքանչյուր երկրի այս ծավալուն օրակարգում ընդգրկված լինելու կամքից և կարողությունից։ Քաղաքականությունը կառուցվում է արդեն գոյություն ունեցող համագործակցության շրջանակների վրա։

Համաձայն հանձնաժողովի առաջարկությունների՝ 2004 թ. հունիսի 14-ին Խորհուրդը որոշեց հնարավորություն առաջարկել Հայաստանին, Աղբեջանին և Վրաստանին մասնակցել Եվրոպական հարևանության քաղաքականության մեջ, ի շարս այլոց հայտարարելով, որ «Սա նշանակալից քայլ է տարածաշրջանում միտրյան ներգրավվածության ուղղությամբ։ Յուրաքանչյուր երկրի կտրվի նույն հնարավորությունները ԵՄ-ի հետ կապերը զարգացնելու համար, ներառյալ գործողությունների ժրագրի միջոցով և կդատվի ԵՀԶ-ի ընդհանուր քաղաքականության հետ համահում։ անհատանան աղքամիքների հիման վեա։

Խորհուրդը իրավիրել է նաև հանձնաժողովին և SG/HR, քաղաքական համագործակցության և CFSP հետ կապված հարցերի մասին գեկույց ներկայացնել յուրաքանչյուր երկրի քաղաքական և տնտեսական բարեփոխումների վերաբերյալ կատարած առաջընթացի մասին»:

Այս գեկույցում¹ հանձնաժողովը գնահատում է Հայաստանի և ԵՄ-ի միջև երկկողմանի հարաբերությունները: Այն արտացոլում է գործընկերության և համագործակցության շրջանակներում կատարված առաջնքացը և նկարագրում այս գործընկերության համար կոնկրետ հետաքրքրություն ներկայացնող բնագավառների ներկայիս իրավիճակը. արժեքների վրա հիմնված քաղաքական հաստատությունների զարգացումը՝ ժողովրդավարություն, օրենքի գերակայություն, մարդու իրավունքներ, որոնք սահմանված են համաձայնագրում, տարածաշրջանային կայունություն և համագործակցություն արդարադատության և ներքին գործերի հարցում ու տնտեսական և սոցիալական բարեփոխումներ, որոնք զարգացման և արդիականացման, առևտուի հետագա ազատականացման և ներքին շուկայում աստիճանական մասնակցության համար նոր հնարավորություններ կստեղծեն: Զեկույցը հանձնաժողովին առաջարկություններ է ներկայացնում միացյալ ԵՀՊ գործողությունների ծրագրի մշակման համար և ծառայում է, որպես Հայաստանի հետ Միության հարաբերությունների հետագա առաջընթացը գնահատելու հիմք:

1.1. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ և ՀԱՅԱՍՏԱՆԻ միջև հարաբերությունները

ԵՄ–Հայաստան Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը (ԳՀՀ) կնքվեց 1996 թ., ուժի մեջ մտավ 1999 թ. և համարված է ԵՄ–Հայաստան հարաբերությունների իրավական հիմքը: Հարգանքը ժողովրդավարության, միջազգային իրավունքի սկզբունքների, մարդու իրավունքների և շուկայական տնտեսության սկզբունքների հանդեպ հանդիսանում են այն էական տարրերը, որոնց վրա հիմնված է ԵՄ–Հայաստան գործընկերությունը: ԳՀՀ-ը համագործակցության այլ բնագավառներ է սահմանում քաղաքական երկխոսության, առևտուի, ներդրումների, տնտեսական, օրենսդրական և մշակութային համագոր-

¹ Հիմնականում սրանք վերաբերում են մինչև 2004 թ. դեկտեմբերի 31-ի միջոցառումներն ու զարգացումները:

★ ★ ★
★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
★ ★

ծակցության համար: Այս երկխոսությունը կառուցվում է միջազգային խաղաղության և անվտանգության, ինչպես նաև վեճերի խաղաղ կարգավորման խրանման միացյալ պարտավորությունների վրա: ԳԵՂ-ի միջոցով, որը վերացնում է նաև առևտրային քվիտաները և հնարավորություններ է ընձեռությ նտավոր, արդյունաբերական և առևտրային իրավունքի պաշտպանության համար, կողմերը համաձայնվել են միմյանց տալ Ամենանպաստավոր պետության (MFN/ԱՊ) կարգավիճակ և Քայաստանն օգտվում է ԵՄ-ի Նախապատվությունների ընդհանրացված համակարգից (GSP/ՆԸՀ):

ԳՐՅԵՒՄ Հ շրջանակներում ստեղծված տարրեր միացյալ հաստատությունները (Համագործակցության խորհուրդ, Համագործակցության կոմիտե, Առևտության և Տնտեսական և Համապատասխան իրավական գործերի ենթահանձնաժողով, ինչպես նաև Խորհրդարանական համագործակցության կոմիտե) սահուն կերպով են գործել և ապահովել են պարբերական քաղաքական երկխոսություն։ Համագործակցության խորհուրդը տարեկան ժողովներ է գումարել 1999 թ.: Վերջինը եղել է Բրյուսելում, 2004 թ. սեպտեմբերին։

Գլխավոր Գործերի խորհրդում 2001 թ. փետրվարին ԵՄ-ը հաս-
տատեց Հարավային Կովկասի տարածաշրջանում ավելի ակտիվ քա-
ղաքական դեր խաղալու իր կամեցողությունը և իր մտադրությունը
լրացուցիչ եղանակներ որոնելու, որոնք կիսրանեն տարածաշրջանում
հակամարտությունների կանխարգելման ու կարգավորման ջանքերը
և մասնակցելու հետհակամարտային վերականգնմանը: 2001 թ. հոկ-
տեմբերի 30-ի իրենց միացյալ հաղորդագրության մեջ Հայաստանի,
ինչպես նաև Վրաստանի և Ադրբեյջանի Արտաքին գործերի նախարար-
ները ողջունեցին տարածաշրջանում ԵՄ-ի ավելի ակտիվ դերակատար-
ման պարտավորությունը՝ երեք երկրների հետ համագործակցության
խորհրդի կապակցությամբ:

Արդեն շատ տարիներ Մեծամորի Միջուկային ատոմակայանի (MNPP/ՄՍԱ) հարցը ԵՄ-Նյայաստան երկողմանի օրակարգում կարևոր խնդիր է: ՄՍԱ-ի վաղ փակումը սահմանվել է որպես ԵՄ-ի առանցքային նպատակ՝ խորհրդային ժամանակահատվածում կառուցված առաջին սերնդի այսպիսի կայանների հանդեպ ընդհանուր քաղաքականության գծով: 2001 թ. ԵՀ-ն առաջարկեց դունորների խորհրդաժողով կազմակերպել, որպեսզի ստեղծվի մի հիմնադրամ՝ ֆինանսավորելու այլընտրանքային էներգետիկայի կարողությունն ու ներդնելու մինչև 100 միլիոն եվրո, եթե նշյալի Մեծամորի փակման կոնկրետ ամսաթիվ: Առավելագույն

յալ ոչ մի համաձայնություն չի գտնվել ԵՄ-Հայաստան երկխոսության մեջ: Հայաստանը նշել է ԵՄ-ին, որ Էներգետիկայի կարողությունները պետք է հաշվի առնի Հայաստանի ապագա ակնկալվող Էներգետիկ կարիքները, Էներգետիկ անվտանգության հզորացման կարիքը և ՄՄԱ-ի փակման ազդեցության հաշվանցումը էլեկտրալներգիայի սակագների վրա: ԵՄ-ը նշել է, որ այն հաշվի կառնի այս դիրքորոշումը՝ դիտարկելով ԵՀԿով Հայաստանի առջև բացվող օգուտները:

2003 թ. հուլիսին ԵՄ խորհուրդը դեսպան Շեյկի Թալվիրեին նշանակեց Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչ: Հայաստանը ողջունեց այս նշանակումը: Ի շարու այլոց, նրա մանդատի մեջ են մտնում աջակցություն խորհրդին Հարավային Կովկասի հանդեպ համապարփակ քաղաքականության մշակման, հակամարտությունների կանխարգելման աջակցություն տրամադրելու և տարածաշրջանում հակամարտությունների կարգավորման համապարփակ քաղաքականություն մշակելու համար: Նա պարբերաբար այցելել է Հայաստան և առանձնահատուկ ուշադրություն է դարձրել Լեռնային Պարաբաղի հակամարտությանը, ուր նա այցելեց 2004 թ. հուլիսին: ԵՄՆ-ն մշտական կապի մեջ է տարածաշրջանի երկրների, ինչպես նաև Ռուսաստանի, Թուրքիայի և ԱՄՆ-ի հետ: Իր վերընտրվելուց հետո նախագահ Քոչարյանը այցելեց Բյույունել 2003 թ. դեկտեմբերին և արտահայտեց Հայաստանի պատրաստակամությունը խորացնելու համագործակցությունը ԵՄ-ի հետ՝ ներառյալ գիտության և հետազոտությունների բնագավառում: Նա նշեց նաև Հայաստանի մտադրությունը ԵՀ-ի հակադեմիֆինագային կարգավորման շրջանակներում «շուկայական տնտեսության կարգավիճակ» ստանալու Հայաստանի մտադրության նասին:

2004 թ. ապրիլի 29-ին Հայաստանի կառավարությունը որոշում ընդունեց «Գործընկերության և համագործակցության համաձայնագրի իրականացման ազգային ծրագիր մշակելու համար...»: Որոշմամբ ստեղծվում է համակարգող խորհուրդ և սահմանվում է հանձնաժողովին աջակցելու ԵՀ-ի կողմից ֆինանսավորվող Հայաստան-Եվրոպա քաղաքականության և իրավական խորհրդատվության կենտրոնի դերը: ԵՀ-ն լրացրացիչ տեխնիկական աջակցություն է տրամադրում՝ օժանդակելու մինչև 2005 թ. հունվեմբերը Հայաստանի ազգային ծրագիրը նախապատրաստելու համար:

2004 թ. հունիսի 14-ի խորհրդի որոշմամբ Եվրոպական հարևանության քաղաքականության մեջ Հայաստանի (Աղրբեջանի և Վրաստանի հետ միասին) ընդգրկման առաջարկությունը նշանակալից քայլ

★ ★ ★
★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
★ ★

Է ԵՍ և Հայաստան հարաբերություններում: Հայաստանը ողջունել է իր ընդգրկումը և իր պատրաստակամությունն է հայտնել ամբողջովին ուսումնափրել դրանով բացվող հնարավորությունները: Այս որոշումից հետո Հայաստան, Աղրբեջան և Վրաստան այցելեց հանձնակատար Պոտոչնիկը և նախազահ Պրոդիհն՝ համապատասխանաբար 2004 թ. հուլիսին և սեպտեմբերին:

2004 թ. սեպտեմբերին Հայաստանը և Եվրոպական համաժողովը համաձայնագիր ստորագրեցին, ըստ որի ԵԿ գրասենյակը երևանում դարձավ պատփիռակություն:

1.2. Համայնքային աջակցություն

1991 թ.ի վեր ԵՀ-ի աջակցությունը Հայաստանին կազմել է ավելի քան 380 միլիոն եվրո: Մարդասիրական աջակցությունը (հիմնականում ԵՀՄ և Եվրոպական գյուղատնտեսական երաշխիքի և ուղղորդման հիմնադրամի միջոցով EAGGF) կազմել է մոտ 120 միլիոն եվրո և նպաստել է 1990-ականների կեսերի չափազանց խստ մարդասիրական իրավիճակի նեղմացմանը: TACIS-ի ազգային հատկացումները և Պարենի ապահովության ծրագիրը յուրաքանչյուրը ներկայացնում են մոտ 100 միլիոն եվրո: Հայաստանի անկախությունից ի վեր TACIS ծրագիրը նպաստել է անցմանը շուկայական տնտեսության՝ հիմնականում իրավական և կարգավորիչ դաշտերում, Հայաստանի օրենսդրությունը ԵՄ-ի հետ մերձեցնելու և Հայաստանի ԱՀԿ-ի անդամակցությանը աջակցության միջոցով: TACIS-ը նպաստել է նաև Հայաստանի տնտեսական վերականգնման՝ նաև ապահովության և միջին ու փոքր ձեռնարկություններին աջակցության միջոցով: Գյուղատնտեսական բանկը՝ ֆինանսավորված TACIS և EAGGF պարենի աջակցության համաֆինանսավորման միջոցների հաշվին, բարձր է գնահատվել և նպաստել է գյուղատնտեսական արտադրության բարելավումներին: TACIS-ը աջակցել է նաև միջուկային անվտանգությանը:

2001 թ. դեկտեմբերին Երևանի ռազմավարական փաստաթղթի հաստատումից հետո TACIS-ի աջակցությունը Հայաստանին 2002-2006 թթ. ժամանակահատվածում կենտրոնանում է ինսիրտուցիոնալ, իրավական և վարչական, ինչպես նաև անցումային փուլի սոցիալական հետևանքների աջակցության վրա: TACIS-ը էական աջակցություն է տրամադրում 2003 թ. հաստատված Հայաստանի Աղքատության հաղթահաման ռազմավարական ծովագի հրականացմանը: 2002-2003 թթ.

գործողությունների ծրագիրը (10 միլիոն եվրո) ներկայումս գտնվում է իրականացման փուլում: Կերպերս հաստատվել է 2004-2005 թթ. գործողությունների ծրագիրը (նույնպես 10 միլիոն եվրո):

Պարենային անվտանգության ծրագիրը (ՊԱԾ) զգալի բյուջետային աջակցություն է դրամադրել Հայաստանի կարևոր գյուղատնտեսական, սոցիալական հատվածներին և այսպիսով՝ կարևոր դերակատարում է ունեցել Հայաստանում աղքատության հաղթահարման գործում՝ հիմնականում ընտանեկան նպաստների և երեխաների հոգածության իր աջակցության միջոցով: Բյուջետային և տեխնիկական աջակցության միջոցով (TACIS տեխնիկական աջակցության հետ միասին) ՊԱԾ-ը հնարավոր է դարձրել հողային բարեփոխումների և պետական ֆինանսական կառավարման բնագավառում նկատելի բարեփոխումները: ՊԱԾ-ի իրականացումը շատ հաջողված է եղել և նույնպիսի լրացրւիչ աջակցություն է նախատեսվում 2005-2006 թթ. համար (21 միլիոն եվրո): Հիմնականում Հայաստանի աղքատության հաղթահարման ռազմավարության իրականացման համար:

1998 թ. դեկտեմբերին Հայաստանը փակեց համայնքի հանդեպ իր մնացած պարտքը: Երկիրն օգտվեց նաև նոր Սակորֆինանսական աջակցության 28 միլիոն եվրո փոխառության և 30 միլիոն եվրո ընդհանուր դրամաշնորհի փարեթից, որը վճարվեց 1999-2005 թթ. ժամանակահատվածում, որպես մակրոտնտեսական կատարողականի և կառուցվածքային բարեփոխումների արդյունք: ԱՄՀ-ի կողմից աջակցվող տնտեսական ծրագրի համատեքստում այս աջակցությունը նպաստել է Հայաստանի արտաքին պարտքի կենսունակությանը:

ԵՎ Ժողովրդավարության և Մարդու իրավունքների եվրոպական նախաձեռնության (EIDHR) ծրագիրն սկսեց իր գործունեությունը 2003 թ. Հայաստանում աջակցելով ՀԿ-ներին՝ նպատակ ունենալով խթանել և պաշտպանել մարդու իրավունքները և ժողովրդավարությունը, ինչպես նաև հակամարտությունների կանխարգելումն ու կարգավորումը:

1991 թ. ի վեր ԵՎ-ի ընդհանուր դրամաշնորհները Հայաստանին (ի լրումն ստորև բերված թվերի՝ Հայաստանն օգտվել է նաև Tacis տարածաշրջանային դրամաշնորհների ծրագրից):

1991 թ. սկսած ԵՄ ընդհանուր դրամաշնորհները Հայաստանին (ի լրումն ստորև բերված թվերի՝ Հայաստանն օգտվում է Tacis տարածաշրջանային ծրագրի դրամաշնորհից):

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂՖԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

	1991- 1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002- 2003	2004- 2006	Ընդհա- նուր (միլ. եվրո)
Tacis ազգային հանկա- ցումներ	28.90	-	6.00	14.00	-	10.00	-	10.00	-	10.00	20.00	98.90
Միջուկային ամփուսա- գություն	-	-	-	10.00	1.00	-	-	11.00	-	-	7-	29.00
Մարդասի- րական	10.40	19.90	23.96	4.97	1.96	1.60	2.30	1.10	2.10	0.5	-	68.79
EAGGF	-	-	34.00	13.20	-	-	-	3.00	-	-	-	50.20
FSP	-	-	-	13.00	6.00	12.00	10.00	10.00	10.00	20.30	21.00	102.30
Մակորֆի- նանսական աջակցութ- յուն (Վճարված)	-	5.70	-	-	-	8.00	4.00	-	-	11.00	7.00	35.70
Ռուսական ֆինանսա- կան ճգնա- ժամիագեն- ցության օգնություն	-	-	-	-	-	-	1.50	-	-	-	-	1.50
Ընդհանուր (միլ. եվրո)	38.30	25.60	63.96	55.17	8.96	31.60	17.80	35.10	12.10	41.80	55.00	386.39

2. Քաղաքական խնդիրներ

2.1. Ժողովրդավարություն և օրենքի գերակայություն

Հայաստանը նախագահական պետություն է՝ հիմնված իշխանության տարանջատման վրա: Նրա սահմանադրությունն ընդունվել է 1995 թ.: Նախագահը պետության ղեկավարն է: Նա ընտրվում է ուղղակի քվեով, ինչն տարի ժամանակով և կարող է պաշտոնավարել միայն երկու անընդմեջ նախագահական ժամանակատվածք: Նա նշանակում և ազատում է վարչապետին և կառավարության այլ անդամներին՝ վարչապետի առաջարկությամբ: Հայաստանն ունի միապալատ խորհրդարան՝

Ազգային ժողովը, որը բաղկացած է 131 անդամից, որոնք ընտրվում են 4 տարի ժամանակահատվածով, որոնցից 75-ը ընտրվում են համանական, կուսակցական ցուցակներով, իսկ մնացած 56-ը՝ մեծամասնական համակարգով։ Նախագահը կարող է ցուլ Ազգային ժողովը, բացառությամբ իր պաշտոնավարման վերջին վեց ամիսների ընթացքում։ Խորհրդարանական ընտրություններից հետո կառավարության ծրագիրը ներկայացվում է Ազգային ժողովին և կարող է արժանանալ անվստահության քվե։ Վերջին նախագահական ընտրությունները տեղի են ունեցել 2003թ. մարտին, իսկ խորհրդարանական ընտրությունները՝ նոյն տարվա մայիսին։ Նախագահական ընտրություններում Նախագահ Քոչարյանը վերընտրվեց երկրորդ (և վերջնական) 5-ամյա պաշտոնավարությամ՝ ձայների 67.52% մեծամասնությամբ։ Խորհրդարանական ընտրություններից հետո նախագահ Քոչարյանը խնդրեց վարչապետ Անդրանիկ Մարգարյանին կառավարություն ծևավորել՝ հիմնվելով երեք կուսակցությունների կողայիշեալի վրա (Հանրապետական կուսակցություն, Օրինաց Երկիր և Յայ հեղափոխական դաշնակցություն)։

Խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ իր վերջնական գեկույցում ԵԱՀԿ/ODIHR հայտարարեց 2003 թ. նախագահական ընտրությունների բարելավում, քարոզարշավի և ԶԼՄ-ների աշխատանքի առումով, բայց բազմաթիվ կարևոր ոլորտներում չէր համապատասխանում Ժողովրդավարական ընտրությունների միջազգային ստանդարտներին, մասնավորապես քվեների հաշվաման և հաշվարկման գործում։ Երկու ընտրությունների վերաբերյալ երկու գեկույցներում էլ մանրամասն առաջարկություններ են ներկայացվել՝ ներառյալ օրենսդրական դաշտի փոփոխությունները, հիմնականում ընտրական օրենսգիրը և բարելավումներ ընտրական վարչարարությունում։ Նախագահական ընտրություններում պարտված թեկնածուն բողոքարկեց քվեարկության երկրորդ փուլի արդյունքները։ Սահմանադրական դատարանը չմերժեց նրա փաստարկները, բայց ընտրության արդյունքները անվավեր չհամարեց։ Դատարանն առաջարկեց, որ նորընտիր Ազգային ժողովը և Նախագահը մեկ տարվա ընթացքում «վստահության հանրաքվե» անցկացնեն, բայց վերջինն փոխեց իր դիրքորոշումը։ Իր կողմից կառավարությունն այսպիսի հանրաքվեն համարեց Սահմանադրությամբ չնախատեսված։ 2004 թ. ապրիլին, քանի որ մոտենում էր դատարանի «Վերջնաժամկետը», ընդդիմությունը ցույցեր կազմակերպեց՝ կոչ անելով հանրաքվե։ Տույցերի ընթացքում բազմաթիվ վարչական ծերակալություններ կատարվեցին վարչապետի առաջարկությամբ, մի քա-

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ★ ՔԱՂԱՔԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ

Նի քաղաքական կուսակցությունների գրասենյակներ խուզարկման ենթարկվեցին և տեղի ունեցան հարձակումներ լրագրողների վրա: Այս միջադեպերի արդյունքում Հայաստանի խորհրդարանական ընդունությունը խորհրդարանի նիստերը մասնակիորեն բոյկոտեց: Սա խթանեց Սահմանադրության և ընտրական օրենսգրքի վերանայման աշխատանքը: ԵՄ Հարավային Կովկասի հատուկ ներկայացուցիչը և այլ միջազգային մարմններ կոչ արեցին ընդունությանը վերսկսել երկխոսությունը իշխանությունների հետ և ամբողջովին մասնակցել խորհրդարանի աշխատանքներին:

Մարդու իրավունքներին, նախագահ–կառավարություն հարաբերություններին, դատապահական համակարգի անկախությանը և տեղական ինքնակառավարման մարմններին վերաբերող հարցերին անդրադարձող սահմանադրական փոփոխությունների հանրաքվե տեղի ունեցավ, բայց ցածր մասնակցության պատճառով դրանք չանցան: Ներկայումս սահմանադրական դատարանում բնագույն են սահմանադրական բարեփոխումների տարրեր նախագծեր, որոնք կարևոր են մի շարք առանձքային օրենքների իրականացման համար: Եվրախորհուրդը խնդրել է, որ այդ փոփոխությունները ներկայացվեն Վենետիկի հանձնաժողովի փորձագիտական գնահատմանը:

Հայաստանը բաժանված է 11 մարզերի, որոնցից յուրաքանչյուրը ղեկավարվում է կենտրոնական կառավարության կողմից նշանակված մարզպետի կողմից: Երևանը կազմում է մարզերից մեկը: Քաղաքապետին նշանակում է հանրապետության նախագահը: Յուրաքանչյուր մարզ բաժանված է գյուղական և քաղաքային համայնքների: 2002 թ. ընդունվեց «Տեղական ինքնակառավարման մասին օրենքը»: Նույն տարում Հայաստանը վավերացրեց տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան: 2003 թ. Եվրախորհրդի գեկույցում ներառված էր, որ տեղական ինքնակառավարումը մնում է շատ թույլ և որ եվրոպական խարտիայի շատ տարրեր մնում են չիրականացված: Պահանջվում է լրացուցիչ կրթություն և վերապատրաստում:

1995 թ. սահմանադրության ընդունումից հետո նոր դատաիրավական համակարգն ուժի մեջ մտավ 1999 թ.: Դատապահական կառուցվածքը հիմնված է առաջին ատյանի տարածքային դատարանների և քրեական, քաղաքացիական, տնտեսական ու գինվորական հարցերով վերաբնիշ դատարանների, ինչպես նաև Սահմանադրական Դատարանի վրա: Նոր քրեական օրենսգիրը ընդունվեց 2003 թ. և ներկայումս աշխատանքներ են ընթանում քրեական դատավարությունների

օրենսգրքի բարեփոխումների ուղղությամբ: Դատավորների կարգավիճակի, դատադրավական համակարգի և արդարադատության խորհրդի վերաբերյալ օրենքների նախագծերը պետք է հետևեն Սահմանադրության վերանայմանը:

ԴԿ-ները նշանադրություն են արտահայտել դատադրավական մարմնի անկախության, դատավարությանը նախորդող երկարատև կալանքների, կողմնակալության, անարդյունավետության և կոռուպցիայի առումով: Եվրախորհրդին անդամակցության Հայաստանի պարտավորություններից դատադրավական համակարգի բարեփոխումների ընդունումն ու իրականացումը դեռ պետք է կատարվեն: Ներկայումս Նախագահը հանդիսանում է դատադրավական մարմնի անկախության երաշխավորը, նախագահում է արդարադատության խորհրդը և նշանակում է գլխավոր դատախազին:

Քաղաքացիական ծառայության մասին օրենքն ընդունվեց 2001 թ.: Օրենսդրության իրականացումն ու կիրառումը դեռ մնում են թույլ և կոռուպցիան համընդիանուր պրոբլեմ է:

Մարդու իրավունքների պաշտպանի (Օմբուդսմեն) մասին օրենքը, որը կոչված է պաշտպանել մարդու իրավունքները և կենտրոնական ու տեղական ինքնակառավարման մարդիների և դրանց պաշտոնյաների կողմից հիմնարար ազատությունների ուսուահրումները, ընդունվեց 2003 թ. և Սահմանադրության վերանայման ընթացքի պատճառով ներկայում սահմանում է, որ Նախագահը և ոչ թե Ազգային ժողովն է նշանակում Օմբուդսմենին: Եվրախորհրդության հորդորել է Հայաստանի իշխանություններին Օմբուդսմենին օժտելու անհրաժեշտ անկախությամբ:

Կոռուպցիան լուրջ մտահոգություն է մնում: 2004 թ. “Transparency International”-ի Կոռուպցիայի ընկալման ինդեքսը Հայաստանին դասակարգեց 82-րդ տեղում, որը նշանակում է, որ գոյություն ունի կոռուպցիայի ընկալման բարձր մակարդակ: Հայաստանը ստորագրել և վավերացրել է Եվրախորհրդի Կոռուպցիայի քրեական և քաղաքացիական իրավունքի կոնվենցիաները, բայց չի ստորագրել ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան: 2003 թ. ընդունվեցին Հակակոռուպցիոն ռազմավարությունն ու Գործողությունների ծրագիրը և Հայաստանն անդամակցեց Եվրախորհրդի կոռուպցիայի դեմ պետությունների խմբին (GRECO): Քրեական օրենսգրքով սահմանված են մի շարք դրույթներ, որոնք քրեականացնում են կոռուպցիան, չնայած որ այս սահմանումների շրջանակը ամբողջովին չի համապատասխանում միջազգային ստանդարտներին: 2004 թ. հունիսին Նախագահը հրամանագիր ստո-

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ★ ★ ՔԱՂՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

րագրեց, որով ստեղծեց կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը՝ վարչապետի նախագահությամբ: Այն պետք է վերահսկի ռազմավարության իրականացումը: 2004 թ. հունիսին ՏՀԶԿ-ի Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի իրավական և ինստիտուցիոնալ դաշտի ուսումնասիրության գեկույցը նշել է, որ կաշառակերության և կոռուպցիայի հետ կապված օրինախախումների քրեական հետապնդումն ու պատժումը չափից բույլ են՝ կոռուպցիայի ներկայացված մակարդակի համատեքստում:

2.2. Մարդու իրավունքներ և հիմնարար ազատություններ

Հայաստանը վավերացրել է ՄԱԿ-ի մարդու իրավունքների հիմնական կոնվենցիաները, բացառությամբ՝ Քաղաքացիական և Քաղաքական իրավունքների միջազգային համաձայնագրի երկրորդ լրացուցիչ արձանագրությունը, Կանանց դեմ բոլոր տեսակի խսդականությունների վերացման կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը և Տանջանքի և այլ դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերնումների կամ պատժի կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը: 2004 թ. այն վավերացրել է Երեխայի իրավունքների կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունները: Այն վավերացրել է աշխատանքի հիմնական ստանդարտների վերաբերյալ ԱՀՀ-ի ութ կոնվենցիաներից Երեքը (կուլեկտիվ բանակցություններ, պարտադրված աշխատանք և հավասար վարձատրություն): Հայաստանն անդամակցեց Եվրախորհրդին (ԵԽ) 2001թ.: Այն կատարել է իր գրեթե բոլոր պարտավորությունները՝ կապված Եվրախորհրդի կոնվենցիաների վավերացման հետ: Սակայն 2003 թ. ընտրությունները և 2004 թ. ապրիլի ինքաբերը մարդու իրավունքների բնագավառում մատնանշում են կարևոր խնդիրների առկայությունը:

Խոսքի ազատության առումով ԶԼՍ-ների, տեղեկատվության ազատության, ռադիոյի ու հեռուստատեսության հեռարձակման մասին օրենքներն ընդունվեցին 2003 թ.: Քրեական օրենսգրքի փոփոխությունները կատարվել են 2004 թ. հուլիսին՝ մասնավորապես ապաքրեականացնելով զրպարտանքն ու վարկաբեկումը: Եվրախորհրդը և ԵԱՀԿ իրենց վերապահումներն են արտահայտել նոր դրույթների առունուվ, որոնք թվում են, որ ավելի մեծ պաշտպանություն են տալիս պետական պաշտոնյաներին, քան քաղաքացիներին: Լուրջ մտահոգություններ կան՝ կապված ԶԼՍ-ների անկախության հետ, քանի որ պետական և մասնավոր հեռարձակողների երկու կարգավորիչ մարմինների

անդամները նշանակվում են Նախագահի կողմից: Մտահոգությունները են արտահայտվել նաև որոշ հեռարձակման լիցենզիաների շնորհման առումով:

Կրոնական ազատությունների առանձին Եհովայի վկաները պետական գրանցում ստացան 2004 թ. հոկտեմբերին՝ իրականացնելով Եվրախորհրդի պարտավորությունները։ Սակայն այս գրանցումը մերժվել է Հայ Առաքելական Եկեղեցու Գերագույն հոգևոր խորհրդի կողմէց։

Հավաքների ազատության առումնով 2004 թ. մայիսին ուժի մեջ մտավ «Հանրահավաքների, ժողովների, երթերի և ցուցերի մասին» օրենքը: Նկարագրելով այն որպես մի քայլ առաջ, քայլ Հայաստանի միջազգային պարտավորությունների հետ ոչ համահումն՝ Եվրախորհրդարանը 9 առաջարկություններ արեց, ինչպես և ԵԱՀԿ-ն: Սահմանադրությամբ պաշտպանված է **միավորումների ազատությունը: Սակայն այս իրավունքի իրականացման համար միավորումների մասին ոչ մի օրենք չի ընդունվել: Ըստ Եվրախորհրդի, ԿՎ-ները սահմանափակվում են իշխանությունների կողմից: Միավորումների ազատության առումնով Սահմանադրությունը աշխատավորներին ապահովում է արիեսակցական միություններ ձևավորելու և դրանց միանալու, ինչպես նաև գործադրություններ կազմակերպելու իրավումը: Գործնականում բարձր գործադրության և «տևագործության տմտեսության պատճառով աշխատանքային կազմակերպությունները մնում են թույլ և կոլեկտիվ բանակցությունները չեն կիրարվում: Միություններն ազատ են միջազգային կազմակերպություններին անդամակցելու համար, սակայն առ այսօր ոչ մեկը դա չի արել:**

Վարչական կալվանքին վերաբերող դրույթները, որոնք հնարավորություն են տալիս առանց փաստաբանի մինչև 15 օր կալվանքը, լայնամասշտար կերպով քննադատվել են քաղաքացիական հասարակության կողմից: Միջազգային հանրությունը Հայաստանին կոչ է արել առաջիկայում սրան վեր դնել:

Տաճախնքի և անճարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամխարգելման (CPT) եվրոպական հանձնախումբը Հայաստան այցելեց 2002 թ.: 2004 թ. իր հրապարակված հաշվետվության մեջ այն եզրակացրեց, որ «Հայաստանում ոստիկանության կողմից իրենց ազատությունից զրկված անձինք ենթարկվում են վատ վերաբերմունքի արժանանալու ռիսկին»: Համաձայն CPT 2001 թ. բանտային համակարգի՝ պատասխանատվությունը Ներքին գործերի նախարարությունից արդարադատության նախարարությանը փոխանցելը դրական քայլ է եղել, բայց ազատազրկման պայմանները շարունակում են խոցուկ

★ ★ ★
★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
★ ★

մնալ: Եթևելով ուղղիչ հաճակարգի բարեփոխումների CPT առաջարկների՝ 2004 թ. հուլիսին ստեղծվեց ուղղիչ հաստատությունների մոնիթորինգի քաղաքացիական հասարակության խորհուրդ:

2003 թ. սեպտեմբերին Հայաստանը վավերացրել է **մահապատճի** վերացմանը վերաբերող Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 6 արձանագրությունը (բայց չի ստորագրել թիվ 13 արձանագրությունը) և 2004 թ. Եվրոպական սոցիալական խառնիան:

1999 թ. Հայաստանը ստորագրել է **Միջազգային քրեական դատարանի** Հռոմի կանոնադրությունը: Սակայն Սահմանադրական Դատարանը բացասական կարծիք արտահայտեց ազգային օրենսդրության հետ Հռոմի կանոնադրության համատեղելիության վերաբերյալ, այսպիսով կանխարգելելով վավերացումը՝ կախված Սահմանադրության վերանայն հետ:

1998 թ. Հայաստանը վավերացրեց Ազգային փոքրամասնություն-ների կոնվենցիան: Համաձայն Եվրախորհրդի առ այսօր ոչ բավարար ուշադրություն և միջոցներ են հատկացվել փոքրամասնությունների լեզվական և մշակութային ժառանգութեան խթանման համար:

2.3. Արտաքին հարաբերություններ (ընդհանուր)

Հայաստանը համուշանում է ԱՄԿ-ի, Եվրախորհրդի, Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ), Սևան տնտեսական համագործակցության (BSEC), ինչպես նաև ԱՄՆ-ի, Համաշխարհային բանկի, Եվրոպանի և ԱՐԿ-ի անդամ։ Այս համուշանում է նաև ՆԱՏՕ-ի

Եվրոպական համագործակցության խորհրդի անդամ և մասնակցում է Գործընկերություն հանուն խաղաղության ծրագրին։ Վերջին այն դիտողի կարգավիճակ է ստացել “Organisation Internationale de la Francophonie” կազմակերպությունում և Արաբական պետությունների լիգայում։

Հայաստանի տարածաշրջանային աշխարհաքաղաքական իրավիճակը բարդ է: Այն ցանաքով շրջապատված երկիր է, որի սահմաններն արևմուտքից Թուրքիայի և արևելքից Աղբյուզանի հետ փակ են, որի հիմնական պատճառը Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն է: Հայաստանի արտաքին քաղաքականությունը հիմնված է «քազմակողմ կոնվեննուտարության» հետևելու վրա, երբ Երկիրը փորձում է լավ հայրենություններ պաշտպանել ԵՄ-ի, Ռուսաստանի և ԱՍՍ-ի հետ: Նրա հարաբերությունները հարևանների հետ պայմանագրոված են Աղբյուզանի հետ Լեռնային Ղարաբաղի հակամարտությամբ (տես 2.4):

ՈՒՍՏԱՍՏԱՆԾ պահանդարար եղել է Հայաստանի ամենակարևոր դաշնակիցը: Հայաստանը հանդիսանում է Անկախ պետությունների համագործակցության անդամ և միացել է Կոլեկտիվ անվտանգության համաձայնագրին: ՈՒՍՏԱՍՏԱՆԾ մշտական ռազմական ներկայություն ունի Երևանում և Գյումրիում և ապահովում է Հայաստան-Թուրքիա և Հայաստան-Իրան սահմանների, ինչպես նաև Երևանի միջազգային օդանավակայանի սահմանապահ ուժերի մեջ նասր: ՈՒՍՏԱՍՏԱՆԾ Հայաստանում ունի նաև գգալի տնտեսական դերակատարում: Իր մեծածավալ է ներգետիկ պարտքերը մարելու համար Հայաստանն իր էներգետիկ ենթակառուցվածքների մեջ նաև վաճառեց ՈՒՍՏԱՍՏԱՆԻ և 2003 թ. ստորագրեց հիմն տարվա (Երկարածզման ենթակա) համաձայնագիր, որով ՈՒՍՏԱՍՏԱՆԾ պետական «ՌԱԶՈ ԵՄԵ» ընկերությանը փոխանցեց Մեծամորի Կտորմակայանի ֆինանսական կառավարումը:

Ուսաստանի մեկ միջնականոց հայկական սփյուռքի դրամական փոխանցումները առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում աղքատ գյուղական բնականիշների համար:

Հայաստանն օգտվում է մեկ շնչին ընկնող ԱՄՆ աջակցության ամենաբարձր մակարդակներից՝ Ֆինանսավորելով կարևոր կապիտալ ծախսերի ծրագրերը, իհմնականում ենթակառուցվածքը՝ ի լրումն էական դրամական փոխանցումների: Հայաստանը վերջերս որակավորվեց Հազարամյակի մարտահրավերների հաշվի միջոցով ԱՄՆ-ից լրացուցիչ Ֆինանսավորում ստանալու համար և ներկայումս մշակում է իր առաջարկությունները:

Հայաստանի ռոդունեց 2004 թ. մայիսին ԵՄ ընդլայնումը և իր

★ ★ ★
★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
★ ★

Ընդգրկումը Եվրոպական հարևանության քաղաքականությունում 2004 թ. հունիսին: Ծնորհիվ Ֆրանսիայի հայ համայնքի Էական թվակազմի, Հայաստանը լավ հարաբերություններ է պահպանում Վերջինիս հետ և կարևոր առևտորային հարաբերություններ ունի Հունաստանի հետ:

Հյուսվառում գտնվող Վրաստանը եղել է Հայաստանի հիմնական ճանապարհը և երկաթուղային մուտքը դեպի արտաքին աշխարհ։ Ծեվարդնաձեի ժամանակաշրջանում համագործակությունը Վրաստանի հետ եղել է դժվար և ավելի է բարդացել նկատելի հայ փոքրանանության առկայությանը, որը գտնվում է ծայրատիճան աղքատ տարածքում և տնտեսապես զրեթե ամբողջովին կախված է Ախալքալաքի ռուսական ռազմական բազայից, որը Վրաստանը կոչ է անում համել իր երկրից՝ համաձայն 1999 թ. ԵԱՀԿ Ստամբուլի գագաթաժողովի։

Հայաստանը մեծ զանքեր է գործադրել Իրավի (որպես այլընտրանքային տրամսպորտային ճանապարհ և և եներգետիկայի այլընտրանքային աղբյուր) հետ իր հարաբերությունները զարգացնելու նպատակով։ Հայաստանի ցամաքային առևտորի 20%-ն այժմ անցնում է Իրանի սահմանով։ 2004 թ. մայիսին Հայաստանն ու Իրանը երկու պետությունների միջև զարգատարի կառուցման համաձայնագիր ստորագրեցին։ Համագործակցություն կա նաև Արաքս գետի վրա հիդրոէներգետիկ էներգիայի ընազավառում։

Հայաստանի հարաբերությունները Թուրքիայի հետ առանձնահատուկ բարդ են՝ պայմանավորված 1915 թ. Հայոց Մեծ Եղեռնի հետ կապված տարբեր պետությունների մեջնաբանությունների կապակցությամբ։ Լեռնային Ղարաբաղի պատերազմից սկսած թուրք-հայկական սահմանը մնում է փակ և դիվանագիտական հարաբերություններ չեն ընթանում։ Վերջերս որոշ կապեր են եղել Արտաքին գործերի նախարարների միջև և Հայաստանի խորհրդականների մի խումբ այցելեց Թուրքիա։ Երկու պետությունների միջև մնում են որոշ չլուծված հարցեր, որոնց պետք է անդրադառնալ փոխադարձ հարաբերությունների բարելավման տեսանկյունից։

Հայաստանը հանդիսանում է ՄԱԿ-ի Փոքր սպառազինությունների ապօրինի առևտորի կանխարգելման, պայքարի և վերացման ծրագրի (UNPoA) բոլոր բնագավառների անդամ: Չնայած, որ այն շատ է ազդվել ցամաքային ականներից, առանց հիւսալի թվերի, սակայն այն դեռ չի անդամակցել հակահետիստնային ականների օգտագործման, պահուստավորման, արտադրության և փոխանցման ու դրանց վերացման 1997 թ. Օտտավայի կոնվենցիային՝ մասնակիորեն տարածաշրջանային

Խնդիրների պատճառով:

Հայաստանը Սովորական սպառագինությունների կոնվենցիայի (CCW) անդամ չէ, բայց նշել է, որ դիտարկում է ցանքքային ականներին վերաբերող թիվ 2 արձանագրությանը միանալու հարցը:

Ի պատասխան 2001 թ. սեպտեմբերի 11-ի դեպքերի ԱՄՆ ռազմական աջակցությունը վերսկսվել է, բայց ընդհանուր առմամբ Հայաստանը փոքր նշանակության դերակատարում է ունեցել ահարեկչության դեմ պայքարում: Հաշվի են առնվել հարաբերությունները Ռուսաստանի և Իրանի հետ, Իրաքում և ընդհանուր առմամբ Միջին Արևելքում հայկական համայնքները և այն փաստը, որ Երևանը գտնվում է Բաղդադից ընդամենը 750 կմ հեռու: Հայաստանը նվիրված է միջազգային շրջանակներում ահարեկչության դեմ պայքարին և գտնվում է ահարեկչության դեմ պայքարի իր ներքին օրենսդրությունը միջազգային ստանդարտների հետ համապատասխանեցմելու գործընթացում: Եվրախորհրդին է ներկայացվել ահարեկչության դեմ պայքարի օրենքի նախագիծը:

2.4. Տարածքային հակամարտություններ և այլ հակամարտություններ/վեճեր

Եթիկ լարվածությունը Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ մեծացվ 1988-1991 թթ-ին: 1991 թ. Խորհրդային Միության վիլուգումից հետո Հայաստանի և Աղրբեջանի միջև այդ տարածաշրջանի հարցի շուրջ պատերազմ սկսվեց: 1994 թ. պատերազմից հետո երկու երկրները համաձայնվեցին զինադադարի, որը հանդիսացավ ավելի քան 30,000 մարդու մահվան և երկու կողմից բազմաթիվ փախստականների ի հայտ գալու պատճառ: Աղրբեջանի փախստականների և Հայաստանից, Լեռնային Ղարաբաղից, կից օկուպացված տարածքներից ներքին տեղահանված մարդկանց (IDPs) քանակը գնահատվում է 800,000 և Աղրբեջանից հայ փախստականների քանակը՝ 300,000: Աղրբեջանի տարածքի որոշ հատվածներ մնում են Հայաստանի գրանցման/օկուպացման ներքո: Չնայած 1994 թ-ից գործում է զինադադար, ամեն տարի բազմաթիվ միջադեպեր են գրանցվում «կոնտակտային գծի» երկայնքով: Միայն 2004 թ-ի ընթացքում գրանցվել է ավելի քան 30 մահացու դեպք:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության արդյունքում Աղրբեջանը չի ցանկանում Հայաստանի հետ ոչ մի տեսակ համագործակցության գնալ՝ երկկողմանի կամ միջազգային կազմակերպությունների

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

շրջանակում: Ընդհանուր առմամբ Հարավային Կովկասում շատ քիչ տարածաշրջանային համագործակցություն կա:

1992 թ. ի վեր Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ) եղել է միջնորդային ջանքերի առաջնահերթ ֆորումը՝ ղեկավարվող ԵԱՀԿ անդամների խմբով, Մինսկի խումբը, որը հաճախեկավարվում է Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի կողմից: Հայաստանի և Աղրբեջանի նախագահների միջև երկխոսության արդյունքում 2001 թ. բարձրաստիճան համբիպում տեղի ունեցավ ԱՄՆ-ում, որը փակուղուց հուրս չբերեց իրավիճակը:

2003 թ. երկու երկրներում ընտրություններից հետո երկխոսությունը վերսկսվեց: Հայաստանի և Աղրբեջանի Արտաքին գործերի նախարարները պարբերաբար համբիպում էին այսպես կոչված Պրահային գործնքացի համատեքստում: Նախագահներ Ռոբերտ Քոչարյանն ու Իլհամ Ալիևը երկարաժամկետ կազմում էին աշխատավոր համագործությունը ունեցան 2004 թ. սեպտեմբերին՝ Աստանայում (Ղազախստան) ԱՊՀ գագաթաժողովի շրջանակներում: Մինսկի խմբի համանախագահները շարունակում են աշակցություն տրամադրել կողմերին իրենց երկխոսությունում: Եվրամիությունը, ներառյալ Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչը, շարունակում է ամուր քաղաքական աջակցություն ցույց տալ ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդական ջանքերին:

2.5. Արդարադատություն և ներքին գործեր

1988 թ. Հայաստանի երկրաշրջը, Խորհրդային Միության փլուզմանը հաջորդած տնտեսական հետևանքները և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը խթան հանդիսացան մեծածավալ արտագաղթի համար և Հայաստանի բնակչությունը վերջին 10-15 տարիների ընթացքում նվազեց մոտ 1 միլիոնով և ներկայումս կազմում է մոտավորապես 3 միլիոն: Արտագաղթի առօլով Հայաստանից հիմնականում գնում են Արևմտյան Եվրոպա և ավելի քիչ դա օգտագործում են որպես տարանցիկ գոտի:

Հայաստանում հաշվարկված մոտ 251,000 փախստականների մեծ մասը էթնիկ հայեր են՝ տեղահանված հարևան երկրներից, հակամարտությունների պատճառով, ներառյալ Լեռնային Ղարաբաղը, Չեչնիան և Արցախիան: 1993 թ. Հայաստանը միացավ 1951 թ. Փախստականների կարգավիճակի մնակի կոնվենցիային և դրա արձանագրությանը: 1999 թ. Փախստականների մասին օրենքը սահմանում է Հայաստանում

ապաստանի ընդհանուր շրջանակները: Սույն օրենքի փոփոխությունները, որոնք ուժի մեջ են մտել 2004 թ. ապրիլին այն ավելի է հաճապատասխանեցրել միջազգային ստանդարտներին: Չնայած փախստականներին այս օրենքով տրվում են հատուկ հիմնարար սոցիալական և տնտեսական իրավունքներ, սակայն իրենց ինտեգրացիան դեռ խնդրահարույց է մնում: Դայաստանը վերընդունան համաձայնագրեր ունի իշարս այլոց՝ Լիտվայի և Ռուսաստանի հետ:

Ոստիկանական ուժը մնում է Ներքին գործերի նախարարության պատասխանատվությունը: Այն նվազող բյուջե ունի և դրան պակասում են ժամանակակից սարքավորումներ: Ոստիկանական բարեփոխումները (մասնավորապես մասնագիտական վերապատրաստումը հետաքրննչական ժամանակակից մեթոդներում) սահմանվել են որպես առաջնահերթություն՝ մասնավորապես Տանջանքի կանխարգելման Եվրախորհրդի Հանձնաժողովի կողմից: ԵԱՀԿ-ն նախատեսում է աջակցության ծրագիր Հայաստանի ոստիկանության համար՝ ուղղված ոստիկանության և հասարակության միջև կստահության ձևավորման ու համայնքահեն ոստիկանական մողելի մշակման աջակցման:

Միջազգային դատակրավական համագործակցության առումով Հայաստանը վավերացրել է 1957 թ. Արտաքսման Եվրոպական կոնվենցիան և 1959 թ. Քրեական գործերով փոխադարձ օգնության Եվրոպական կոնվենցիան, ինչպես նաև դրա 1978 թ. Լրացուցիչ արձանագրությունը: Այն չի ստորագրել Քրեական գործերով փոխադարձ օգնության երկրորդ արձանագրությունը և չի հանդիսանում 1980 թ. Երեխաների արևանազման Հաազայի կոնվենցիայի անդամ:

Հայաստանը հանդիսանում է սեռական շահագործման համար կանանց և աղջկների թրաֆիկինգի սկզբնական և տարանցիկ երկիր, իիմնականում դեպի Միացյալ Արաբական Էմիրություններ և Թուրքիա, ինչպես նաև Ռուսաստան և Եվրոպական երկրներ: Թրաֆիկինգը Ռուսաստան, Թուրքիա և ԱՍՀ աշխատանքային շահագործման համար գնալով լուրջ խնդիր է դառնում: 2003 թ. Քրեական օրենսգիրքը քրեականացրեց անձանց թրաֆիկինգը և 2004 թ. հունվարին Հայաստանի կառավարությունը ընդունեց մարդկանց թրաֆիկինգի կանխարգելման գործողությունների ծրագիր:

Հայաստանը թմրանյութերի արտադրության խոշոր երկիր չէ և ներքին չարաշահման մակարդակը համեմատաբար ցածր է: Խղճուկ ենթակառուցվածքը Հայաստանին դարձնում է թրաֆիկինգի երկրորդական ուղի: Հայաստանը սպոռազու է թմրանյութերի վերաբերյալ

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՍ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ★ ★ ՔԱՂՓԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿ-ի կոնվենցիաները (1961 թ., 1971 թ. և 1988 թ.) և 2003 թ. ընդունեց «Թմրանյութերի և հոգենետ նյութերի մասին» օրենքը: ԵՄ-ը ֆինանսավորում է SCAD (Թմրանյութերի Հարավային Կովկասի գործողությունների ծրագրը)՝ հերոինի ճանապարհին գտնվող երեք տարածաշրջանյին ծրագրերից մեկը:

2003 թ. Հայաստանը վավերացրեց Միջազգային կազմակերպված հանցագործության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան և մարդկանց թրափիկների և միգրանտների մաքսանենգության հետ կապված դրա արձանագրությունները: Այն չի ստորագրել Հրազենի ապօրինի արտադրության և Թրափիկների դեմ պայքարի արձանագրությունը:

Հայաստանի տնտեսությունը դեռ մեծապես կանխիկի վրա է հիմնված, բայց գործազրկության բարձր մակարդակը, ցածր աշխատավարձերը, կոռուպցիան և մեծածավալ ստվերային տնտեսությունը նպաստում են փողերի լվացման հանդեպ դրա խոցելիությանը: Խաղատները տարածվում են: Երևանի անմիջական հարևանությամբ կա 30 խաղատուն: 2003 թ. ի վեր առաջընթաց է գրանցվել օրենսդրությունը և կառուցվածքային կարողությունները միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու համար, մասնավորապես առևտրային բանկային գործունեության վերահսկման առունուկ: 2003 թ. Հայաստանը վավերացրեց ԵԽ Հանցագործության, Եկամուտների լվացման, խուզարկման, առգրավման և բռնագրավման կոնվենցիան: Հայաստանը հանդիսանում է նաև Եվրախորհրդի փողերի լվացման դեմ պայքարի միջոցառումների գնահատման փորձագետների ընտրյալ հանձնաժողովի (MONEYVAL) անդամ: Քրեական օրենսգիրքը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքը և Կենտրոնական բանկի կանոնակարգերը պարունակում են դրույթներ, որոնք արգելում են փողերի լվացումը և պահանջում են, որ ֆինանսական հաստատությունները ստուգումներ իրականացնեն որոշակի շեմքից բարձր ավանդների հանդեպ: Ակնկալվում է, որ 2005 թ. սկզբին կընդունվի «Փողերի լվացման դեմ պայքարի և ահարեւէզության ֆինանսավորման կանխարգելման մասին» օրենքի նախագիրը, որով սահմանվում է ֆինանսական հետախուզության բաժնի ստեղծումը:

3. Տնտեսական և սոցիալական իրավավիճակը

3.1. Մակրոտնտեսական և սոցիալական ակնարկ

3.1.1. Վերջին տնտեսական զարգացումները և ակնարկը

Հայաստանը փոքր քաց տնտեսություն է մոտ 3 միլիոն բնակչությամբ: Անվանական ՀՆԱ-ի մակարդակը 2003 թ. կազմել է 2.8 միլիարդ ԱՄՆ դոլար: Մեկ շնչին ընկնող 950 ԱՄՆ դոլար (3,770 ԱՄՆ դոլար գնողականության առումով) ԶԻՆ-ի գործակցով՝ Հայաստանը մտնում է միջինից ցածր եկամտի երկրների խմբի մեջ: Իրական ՀՆԱ-ի աճը արագացել է 1999 թ. ի վեր՝ հասնելով ռեկորդային 13.9% 2003 թվականին: ՀՆԱ-ի կառուցվածքը փոխվեց, քանի որ շինարարությունն ու առևտուրը վերականգնվեցին, որոնք աջակցում էին դրամական և այլ մասնավոր փոխանցումներով, մինչդեռ օյլուտանտնեսությունը նվազեց համեմատական պայմաններով (քայլ ունի կազմում է ՀՆԱ-ի 21.5%՝ արդյունաբերության հավասար): Արդյունաբերական արտադրանքն օժանդակվում է հանքային, մետալուրգիական, արդամանդագործության և սննդավերամշակման ոլորտներում նոր ներդրումներով: Շարունակվող հզոր տնտեսական աճի հետ մեկտեղ, ակնկալվում է, որ 2005 թ. Հայաստանը կհասնի անցումային փուլին նախորդող (1990 թ.) իրական ՀՆԱ-ի մակարդակին:

Զբասաշրջությունն ու տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները կառավարության կողմից սահմանվել են որպես պոտենցիալ նոր աճի ոլորտներ, բայց էական նոր ներդրումներ դեռ պետք է կատարվեն:

Ըստիանուր Երկկողմանի առևտորի ամբողջական օգուտներ դեռ ձեռք չեն բերվել: Աղբբեջանի և Թուրքիայի հետ փակ սահմանները, ինչպես նաև տրանսպորտի և հաղորդակցման խղճուկ ենթակառուցվածքներն այս ցանաքով շրջապատված երկրի տնտեսական զարգացման համար լուրջ խոչընդոտներ են: Համաձայն Համաշխարհային Բանկի գնահատականների այս սահմանափակումները ուղղակի (փոխադրման ոչ նորմալ բարձր գներ) կամ անուղղակի (օտարերկրյա ուղղակի ներդրումների համար ընկալված բարձր ռիսկայնություն) 2003 թ. ՀՆԱ-ին պատճառեցին 10-18%-ի վնաս: 2004 թ. իր առևտորյան դեֆիցիտի ֆինանսավորման համար Հայաստանը շարունակեց հույս դնել արտաքին աջակցության և աշխատողների դրամական փոխանցումների վրա: 1999-2002 թթ. սպառղական գների սղաճը պահպել է Հայաստանի կենտրոնական բանկի (ՀԿԲ) թիրախային 3%-ից ցածը:

★ ԵԿՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ. Հայաստան – ընտրված տնտեսական գուցանիշներ՝ 2000-2004 թ.

	2000	2001	2002	2003	2004*
Իրական ՀՆԱ աճ (%)	6.0	9.6	13.2	13.9	10.1
Անվանական GDP (միլիարդ դրամ)	1.031	1.176	1.363	1.623	1.970
Սպառողական գների սղած (%), ժամանակահատվածի միջինը)	-0.8	3.1	1.1	4.7	7.0
Գործազրկության մակարդակ (գրանցված)	11.7	10.4	10.8	10.1	9.4
Աղքատության աստիճան (բնակչության %)	չկա50.9	49.7	42.9	43.0	
Ֆիսկալ հաշվեկշիռ (ՀՆԱ %, կանխիկի բազա)	-4.6	-4.0	-2.6	-1.5	-1.3
Լայն գումարներ (% Վճար)	38.6	4.3	34.0	10.4	15.0
Ավրանքների և ծառայությունների արտահանում (ՀՆԱ %)	23.3	25.5	29.4	32.2	29.0
Ավրանքների և ծառայությունների արտահանում (ՀՆԱ %)	50.5	46.1	46.6	50.1	44.3
Ընթացիկ հաշվապահական հաշվեկշիռ (ՀՆԱ %)	-14.5	-9.5	-6.2	-6.8	-5.6
Համախառն միջազգային պահուստներ (արտահանման ամիսներ)	3.8	3.6	3.7	4.0	3.7
Արտաքին պետական պարտք (ՀՆԱ %)	45.0	43.2	44.0	38.3	31.3
Արտաքին պարտքի սպասարկում (արտահանման %)	10.8	9.7	9.5	7.2	6.8
Ներքին պետական պարտք (ՀՆԱ %)	չկա	2.1	2.6	2.6	2.4

Աղյուսակներ՝ ԱՄՀ, Եվրոպական

* Կանոնադրություն

Սակայն 2003 թ. վերջում տարեկան սղածի մակարդակը նեճացել է մինչև 8.6%՝ հիմնականում ցորենի ներնուժման բարձր գների պատճառով։ Սղածի ճնշումը շարունակվեց 2004 թ., և նորից հիմնականում սննդի գների և որոշ սակագների ամելացման միջոցով։

3.1.2. Ֆիսկալ կառավարում, դրամական և փոխանակման կուրսի բաղադրականություն

Ընդհանուր ֆիսկալ հաշվեկշիռը քայլապես 1990-ականների վերջերին՝ 1999 թ. հասնելով 7.2%, բայց դրանից հետո 2000-2003 թթ. նվազեցվել է 2%: Միաժամանակ ծախսային ապառքները վճարվել են: Էներգետիկ, ինչպես նաև ջրանատակարարնան և ռողոգնան ոլորտներում կվազի ֆիսկալ դեֆիցիտը նույնպես նվազեցվել է 73Ա-ի մոտ 0.4 %: Հարկային և մաքսային կարչարարության մշտական թուլութ-

յան պատճառով փաստացի և պոտենցիալ հավաքագրումներում մեծ ճեղվածք է մնում: ՀՆԱ-ի տոկոսի համեմատությամբ հարկային եկամուտները համեմատաբար ցածր են, ՀՆԱ-ի 15%-ից ցածր և չնայած հզոր տնտեսական աճի՝ հարկային հավաքագրումները ՀՆԱ-ի համեմատությամբ 2003 թ. փաստացիորեն նվազել են մինչև 14.1%: Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում (ԱՀՌԾ) կառավարությունը հարկային հավաքագրումները նախատեսել է ՀՆԱ-ի 16.2% մակարդակ մինչև 2006 թ. (տես 3.3):

Լավ առաջընթաց է գրանցվել Միջնաժամկետ ծախսային ծրագրի ուղղությամբ, բայց ԵՀ-ի կողմից կատարված վերջին ուսումնասիրությունները կառավարությանը քաջալերում են շարունակել ամրող բյուջետային համակարգի բարեփոխումները (ալանավորում, բյուջետավորում, հաշվապահություն, գանձապետական կառավարում և ներքին ու արտաքին առողջականությունը): Վերջին ֆիսկալ ապակենտրոնացման բարեփոխումները պետք է զգուշորեն գնահատվեն ֆիսկալ հաշվետվողականության առումով, որպեսզի ապահովեն դրա հաջող իրականացումը:

ՀԿԲ-ն ներկայում իրականացնում է ողջամիտ դրամական քաղաքականություն: 1993 թ. Հայաստանը ներդրեց իր ազգային արժույթը՝ դրամը, որին բույլ տրվեց լողալ՝ ՀԿԲ-ի նվազագույն միջամտությամբ: Դրամն աստիճանաբար արժեքագրվեց և անվակական, և արդյունավետ առումով մինչև 2004 թ., երբ հակադարձ միտում գրանցվեց՝ պայմանավորված փոխանցումների ուժեղ ներհոսքով: Ընթացիկ միջազգային գործադրությունի հանդեպ փոխանակման ոչ մի սահմանափակում չի կիրառվում: ԱՍՀ-ն և ԵՀ-ն գտնել են, որ հզոր կառավարման ապահովման երաշխիքներն ընդհանուր առնամբ պատշաճ են ՀԿԲ-ում:

3.1.3. Արտաքին իրավիճակը

Վերջին տասը տարիների ընթացքում Հայաստանի առևտրային հոսքերի պոտոգրեսիվ վերուղղվածություն է նկատվել, քանզի ԱՊՀ երկրների արտահանման և ներմուծման բաժինը նվազել է համապատասխանաբար 19 և 24 տոկոսների 2003 թ. (81 և 66 տոկոսներից 1993 թ.): Հայաստանը մեծապես կախված է սմնյամբերքի, ինչպես նաև էներգիայի մերմուծումից և, հետևաբար, ունի մեծ առևտրային դեֆիցիտ, որը, սակայն, 1990-ականների վերջերի 30%-ից նվազել է մինչև 20%-ից պակաս 2003 թ.:

1998 թ. Ռուսական ֆինանսական ճգնաժամի ժամանակ ընթա-

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ցիկ հաշվի դեֆիցիտը հասավ ՀՆԱ-ի 21%, բայց հետագայում նվազեց մինչև մոտ 7% (2003 թ.): Առևտրային դեֆիցիտը նաևնակիորեն հաշվանցվում է դրամական փոխանցումների և արտաքին աջակցության միջոցով: Դրամական և մասնավոր փոխանցումները Հայաստանում պահանջարկի աջակցնան էական գործոններ են՝ կազմելով միջինը ՀՆԱ-ի մոտ 11% վերջին տարիներին: Ներսում ադամանդների մշակումը դարձել է առևտրային հոսքերի նկատելի ոլորտ (և արտահանման, և ներմուծման համար): Տնտեսության երկարաժամկետ արտաքին կենսունակությունը հզորացնելու համար արտահանման ավելի մեծ դիվերսիֆիկացիա կապահանջվի: ՀԿԲ-ի համախառն միջազգային պահուստները հարմար մակարդակի վրա են՝ ներմուծումների մոտ չորս ամսվա չափով:

2003 թ. Ռուսաստանի հետ պարտքի նվազեցման համաձայնագրերի կնքումից հետո Հայաստանի արտաքին պարտքը դարձել է ավելի կառավարելի: Պետական և պետության կողմից երաշխավորված արտաքին պարտքը ընդհանուր առմամբ կազմել է 1.1 միլիարդ դոլար 2004 թ. վերջում (ՀՆԱ-ի 31%, 1999 թ. 46%-ից նվազեցված): Ավելին, պարտքի պահուստը կազմված է հիմնականում բազմակողմանի աղբյուրներից ստացված արտոնյալ պայմաններով փոխառություններից (90%):

3.1.4. Սոցիալական իրավիճակը և մարդկային զարգացման քաղաքականությունները

Տնտեսական աճն սկսել է ազդեցություն ունենալ աղքատության ցուցանիշների վրա: Աղքատության գծից ներքև ապրող բնակչության համամասնությունը 1998/1999 թթ. 56%-ից նվազեց մինչև 49% 2001/2002 թթ. և ծայրահետ աղքատության բաժինը 26%-ից մինչև 17%: 2003 թ. մատչելի տվյալները մատնանշում են, որ աղքատության նվազեցման դրական միտումը շարունակվել է: Մարզային անհավասարությունները ընդլայնվել են, սակայն, քանի որ կենսամակարդակի բարձրացումը կենտրոնացված է մայրաքաղաքում, ապա այլ մարզերը հիմնականում են են մնում: Բնակչության մոտ 5%-ը դեռ բնակվում է ժամանակավոր կացարաններում (փախստականներ և 1988 թ. երկրաշարժի տուժածներ): Չնայած 2000 թ. ի վեր տնտեսական աճին՝ գործազրկության մակարդակը բարձր է: Պաշտոնապես գրանցված գործազրկությունը մոտ 10% է, բայց տնային տնտեսությունների հետազոտությունները մատնանշում են, որ գործազրկության մակարդա-

կը 25-30% է՝ իհմնականում կենտրոնացված գյուղական վայրերում:

Համաձայն Համաշխարհային բանկի գնահատականների, հավանական է, որ Հայաստանը գենդերային և կրթական հարցերով բավարարի Հազարամյակի զարգացման նպատակներին, բավարարի աղքատության նվազեցման, վարակային հիվանդությունների և շրջակա միջավայրի կենսունակության հարցերին, բայց հավանական չէ, որ կրավարարի մանկական մահացության և մայրական առողջության հարցերին: Հայաստանը համենատարար լավ է համենատպում 1990թ. Եկանտի նույն մակարդակն ունեցող ոչ-անցումային երկրների հետ և, հետևաբար, ՀՁՆ-ի առումով առաջնային մարտուհրավերն է՝ վերականգնել հիմնական առողջապահական և կրթական ծառայություններն այսօրվա տնտեսական միջավայրում:

Ընդհանուր զբաղվածության մոտ 70%-ը պատկանում է ինքնագրաղաքությանը՝ փոքր ձեռնարկություններ և գյուղատնտեսություն (իհմնականում ոչ ֆորմալ տնտեսություն): Գնահատվել է, որ ոչ ֆորմալ տնտեսությունը կազմում է համախառն ազգային արտադրանքի մոտ 46%-ը: Եկամտի անհավասարությունների մակարդակները համեմատարար բարձր են, չնայած որ անկման միտում ունեն 1990-ականների վերջից, ինչպես չափվում է ԶԻՆ-ի գործակցով (0.434^* 2003 թ.): Սպառողական հետազոտությունների հիման վրա ԶԻՆ-ի ավելի ցածր գործակից (ավելի ցածր անհավասարություն) է գնահատվել (0.27^* 2002 թ., շատքեր թիվ ամփոփող սկսած 1998/99 թ.):

1990-ականների սկզբի արտագաղթը արմատապես փոխեց Հայաստանի ժողովրդագրական և աշխատուժի իրավիճակը: Մոտ մեկ միլիոն մարդ կամ բնակչության մոտ 25%-ը հեռացան Երկրից: Նպաստելով Հայաստանուն սպառմանը մասնավոր դրամական փոխանցումների միջոցով՝ արտագաղթի արդյունքուն մեծացավ բնակչության տառիքը, գեներային անհավասարակշռությունը և որակյալ աշխատուժի կորուստը: Տեղի ունեցավ ծննդիլության կտրուկ նվազում 1989 թ. 1000 բնակչի հաշվով 21.6-ից մինչև 10.1 2002 թ., մինչդեռ նույն ժամանակահատվածում մահացության աստիճանը մեծացավ 1000 բնակչի հաշվով 6.5-ից՝ 8: Բնակչության մոտ երկու երրորդն ապրում է քաղաքային վայրերում: Միայն մայրաքաղաք Երևանուն բնակչում է ընդհանուր բնակչության մոտ մեկ երրորդ:

2003 թ. օգոստոսին Հայաստանն ընդունեց Աղքատության հաղթական ռազմավարական ծրագիրը (ԱՐԾԾ), որը հիմնված է միջնաժամկետ հատվածում հրական ՀՆԱ-ի 6% աճի ենթադրության վրա:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Վերահատկացման վրա կենտրոնացման հիմնական հարցերի պատճառով ռազմավարությունը անդրադառնում է ապագա տնտեսական աճի կենսունակության և ռեսուրսների վրա՝ բավականին ընդհանուր մակարդակով: Նոր փոքր և միջին ձեռնարկությունները հանդիսանում են աղքատության նվազեցման թիրախների առանցքը: Միևնույն ժամանակ պետական հատվածի շարունակվող արդիականացումը պետք է բոլոր քաղաքացիներին ավելի լավ մատչելիության հնարավորություն տա: ՀՆԱ-ի համեմատությամբ կառավարության ընդհանուր ծախսերն անկնան միտում ունեն (19% 2003 թ.), քանի որ եկամտի պոտենցիալը չի հրականացվել, չնայած, որ ԱՀՌՓ-ն նախատեսում է տարեկան 14% աճ 2004-2015 թթ. ժամանակահատվածում:

Սոցիալական փոխանցումները կազմում են ՀՆԱ-ի ընդամենը 4.5%-ը: Կենսաթոշակների ներկայիս մակարդակը նվազագույն ապրուստի մակարդակից ցածր է: ԴԿԲ-ը նախնական առաջարկություններ է ներկայացրել Հայաստանի կենսաթոշակային համակարգի բարեփոխումների համար, բայց լայնածավալ առողջ տնտեսական աճ կպահանջվի կենսունակ հենքի վրա Հայաստանում սոցիալական պաշտպանության համակարգի զարգացման համար:

Առողջապահության և կրթության պետական ծախսերը վերջին տարիներին մնացել են ցածր մակարդակների վրա (համապատասխանաբար ՀՆԱ-ի մոտ 1.2 և 2.2% 2002 թ.): Թերֆինանսավորման պատճառով ֆիզիկական ենթակառուցվածքների քայլայումը կրթական ոլորտում ակնհայտ է եղել: ԱՀՌՓ-ն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում կրթության որակի ապահովման վրա, որպեսզի ավելի լավ բավարարվեն գործատումների պահանջները: Առողջապահության ոլորտում զնահատվում է, որ մասնավոր ֆինանսավորումը (հիմնականում ոչ ֆորմալ վճարումներ) կազմում է ընդհանուր առողջապահական ֆինանսավորման երկուերրորդը: Առողջապահական համակարգը ապակենտրոնացվել է և ավելի շատ պատասխանատվություն է տրվել ֆինանսների կառավարման համար: ԱՀՌՓ-ն առողջապահական ոլորտը սահմանել է որպես հիմնական առաջնահերթություն և 2004-2007 թթ. համար պետական ֆինանսավորման էական աճ է նախատեսում՝ նպատակ ունենալով հասնել ՀՆԱ-ի 2.5%-ին մինչև 2015 թ-ը:

3.1.5. Կայուն զարգացում

Կայուն զարգացման հետ կապված ներկայումս մշակվում են Կայուն զարգացման ազգային հայեցակարգային փաստաթուղթը և

Կազմավարությունը: Հաշվի առնվող իիմնական տարրերն են՝ հողի և անտառի քայլայումը, ջրային պաշարների և աղբի կառավարումը, Սևանա լճի մակարդակի վերականգնումը, կենսաբազմազանությունը, Լեռնային գտտիները, ինչպես նաև կրթությունն ու հասարակական իրավեկությունը: 2002 թ. կառավարությունն ատեղծեց Կայուն զարգացման ազգային խորհուրդ, որի խնդիրն է հզորացնել կայուն զարգացման միջնորդային համագործակցությունը և խթանել տարրեր ոլորտների քաղաքականություններում բնապահպանական դիտարկումների իմտեգրացիան: Խորհուրդը քաղկացած է տարրեր նախարարությունների և գերատեսչությունների, Ազգային ժողովի, ՇԿ-ների, Երիտասարդական և գործարար ոլորտի ներկայացուցիչներից:

3.2. Կառուցվածքային բարեփոխումներ և առաջընթաց դեպի գրքող և նորակցային շուկայական տնտեսություն

3.2.1. სამოქანის მასშტაბები

ՀՆԱ-ի մոտ 75%-ը արտադրվում է մասնավոր հատվածի կողմից: Գործարար կենսունակ պետական ձեռնարկությունները (ՊԶ-ներ) հիմնականում արդեն սեփականաշնորհվել են (մոտ 7230 փոքր ձեռնարկություններ և մոտ 1890 միջին և մեծ ձեռնարկություններ 2004թ. կեսի դրությամբ): Յետևարար կառավարությունը նույնպես սկսել է ուշադրություն դարձնել այն ոչ կենսունակ ՊԶ-ների օտարման գործընթացին, որոնք դեռ չեն սեփականաշնորհվել: Յաշվի առնելով ոչ նպաստավոր աշխարհագրական վիճակը, տեղական շուկայի փոքր ծավալը և գործարար կլիմայի հետ կապված ջնկալված ռիսկերը՝ Քայաստանը դանդաղ առաջընթաց է կատարել մճացյալ պետական ձեռնարկությունների համար ռազմավարական ներդրողներ ներգրավելու համար, որոնք ենթակա են սեփականաշնորհման:

Հողային բարեփոխումներն իրականացվեցին անցումային վաղ փուլում և 1994 թ. դրույթամբ գյուղատնտեսական հողի մոտ 90%-ը սեփականաշնորհվեց: Մասնավոր գյուղացիական տնտեսությունները փոքրածավալ են (հիմնականում սեփական սպառման գյուղատնտեսություն) և գործող հողի շուկայի, ինչպես նաև գյուղատնտեսական ապրանքների մեծածախ շուկայական ենթակառուցվածքի բացակայությունը սահմանափակում են ոլորտի հետազա զարգացումը:

Տակապին վերջերս մասնավոր օպերատորին հանձնվեցին էներ-

★ ★ ★
★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
★ ★

գետիկ ոլրոտի ըԾԿերությունները և դրա արդյունքում ոլրոտը կայունացավ՝ հիմնականուն ավելի լավ հավաքագրումների արդյունքում։ Հավաքագրումների մակարդակը հասավ մոտ 100% 2003 թ. և էլեկտրականության տեխնիկական և այլ կորուստները նկատելի հորեն նվազել են։ Շուկայի փրա հիմնված գործող էներգետիկ ոլրոտն ապագայում ավելի կուտեղացվի աննիջական պայմանագրման և միակ գնողի մեխանիզմի արդյունավետ ապամոնտաժման միջոցով։ Հայաստանի արտաքին պարտքի հաշվանցման արդյունքում էներգաարտադրության բնագավառում ռուսական օպերատորներին մեծ դեր է տրվել։

Գնային ազատականացման առունելի թայատանն արածանցիկ արդյունաբերական տնտեսությունների նակարդակին է հասել՝ ունենալով կառավարվող գների միայն փոքր ծավալ, իիմնականում բնական մենաշաշորհներում։ Կառավարվող գները կազմում են սպառողական գնային ինդեքսի մոտ 8%-ը։ Կոնունալ ծառայությունների կարգավորման հանձնաժողովը է ստեղծվել Եներգետիկայի, հեռախաղորդակցության և ջրային ոլորտների համար։ Ավելի արդյունավետ գործելու համար հանձնաժողովը լրացնեցի հզորացումից ավելի կօգտվի։ Զրի և ոռօգման սակագների աստիճանական ավելացումները ծախսածակնան համար ներկայում ընթացքի մեջ են այս ոլորտներում, որոնք եական են գյուղատնտեսական արտադրության համար և երկար ժամանակ տուժել են ներդրումների բացակայությունից։ 2003 թ. ԱՀԿ-ին անդամակցելուց հետո թայատանը պարտավորություն ստանձնեց մինչև 2009 թ. գյուղատնտեսական արտադրանքի վրա կիրառել ԱՀԿ-ը։

3.2.2. Կարգավորիչ դաշտ և մասնավոր հատվածի զարգացում

Մասնավոր հատվածը բնեռացված է ինքնազբաղածության ու փոքր ծերնարկությունների մեջածավալ ոչ ֆորմալ տնտեսության և մեծապես կենտրոնացված ֆորմալ տնտեսության միջև։ Հայաստանը հաջողությամբ իրականացրել է առաջին փուլի կառուցվածքային բարեփոխումների մեջ խումբ, որն արտացոլված է Համաշխարհային բանկի և Եվրոպանկի կողմից ներկայացված ցուցանիշներում։ Օրինակ՝ համաձայն Համաշխարհային բանկի 2004 թ. ցուցանիշների Հայաստանը տարածաշրջանում և եկամտի իր մակարդակով երկրների շարքում համեմատաբար բավականին լավ է՝ գործ սկսելու արդյունավետ կարգավորման, պայմանագրերի կիրառման և սեփականության գրանցման առումով։ Հայաստանի գրադարձության օրենսդրությունը միջազգային համեմատությամբ նույնական համեմատաբար ճկուն է համարվել։ Ցու-

ցանիշները մատնանշում են, որ լրացուցիչ առաջընթաց պետք է գրանցվի կորպորատիվ հայտարարագրումն ուժեղացնելու համար: Գրավի և սնանկության դրույթները պետք է ավելի հստակեցվեն և կիրառվեն, որպեսզի դրանք հնարավորություն տան ֆինանսական միջնորդների միջոցով ընդլայնել ձեռնարկությունների և տնային տնտեսությունների վարկավորումը: Որոշ լուրջ թերություններ կան կորպորատիվ կառավարման և առողջի ստանդարտներում:

Սահմանադրությամբ ազատ տնտեսական մրցակցությունը երաշխավորված է և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքը, որը հիմնված է միջազգային ուղեցույցների վրա, ուժի մեջ է մտել 2001 թ.: Կերպինս արգելում է հակամրցակցային համաձայնություններ և գերիշխող դիրքի չարաշակում, սահմանում է կենտրոնացումները և որոշակի շեմքից բարձր տեղեկացման պարտավորություն է սահմանում: Օրենքը սահմանում է նաև իրականացնող մարմին, Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական համանաժողովը, որի յոթ անդամները նշանակվել են Նախագահի կողմից 2001 թ.: Դանձնաժողովն իրավասություն ունի որոշում կայացնել, գգուշացումներ տալ, պատժամիջոցներ և տույժեր կիրառել և դատարանում գործ հարուցել, սակայն այն իրավունք չունի տեղում ստուգումներ անցկացնելու համար: Ինստիտուցիոնալ առումով Դանձնաժողովը անկախ է որևէ պետական մարմնից, սակայն օրենսդրության արդյունավետ կիրառման համար դրան բացակայում է վարչական կարողություններ, միջոցներ և համապատասխան կիրառման դաշտ: Եթ-ի կողմից ֆինանսավորվող ծրագիրը ներկայումս աջակցություն է տրամադրում հանձնաժողովին՝ իրականացման կամոնակարգերը մշակելու համար:

Ներկայումս գոյություն չունի պետական աջակցության վերահսկման կամ ստուգման ռեժիմ՝ ԵՄ-ի հետ համադրելի: Ապրանքների և ծառայությունների կառավարության գնումները ֆորմալ մրցութային գործընթացներով մեծացել են նոր «Գնումների մասին» օրենքի ընդունումից հետո, որն ուժի մեջ մտավ 2000 թ.: 240 մրցույթներ են անցկացվել 2003 թ., որին մասնակցել են մոտ 600 ձեռնարկություն՝ ընդհանուր 15 միլիարդ դրամ արժողությամբ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համար: Սա նկատելի առաջընթաց է՝ համեմատած 2001 թ. 5.5 միլիարդ դրամի գնումների հետ: Գրանցվել են օրենսդրության իրականացման թերություններ:

* * * **ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

3.2.3. Ֆինանսական հատված

Հայաստանի Կենտրոնական բանկը (ՀԿԲ) ստեղծվել է 1991 թ. դեկտեմբերին: Հայաստանում այն բանկային գործունեության միակ կարգավորողն է: Դրան է պատկանում բանկային լիցենզիաների տրամադրման բացարձիկ իրավասությունը և այն կարող է պատժամշջոցներ կիրառել օրենքի խախտումների համար՝ ներառյալ լիցենզիայի անվավեր ճանաչումը: 1996 թ. «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքը համոլիսանում է Հայաստանի բանկային ոլորտի զարգացման օրենսդրական հիմքը: Կոնսոլիդացման ժամանակահատվածից հետո ներկայում Հայաստանում գործում են 19 առևտրային բանկեր՝ բոլորը մասնավոր (30 բանկ 1997 թ): Կազմելով ՀՆԱ-ի 17%՝ բանկային ոլորտը դեռ թերզարգացած է, ֆինանսական միջնորդները դեռ արդյունավետ չեն գործում, որն արտացոլված է բարձր ռիսկի ապահովագրում: 2004 թ-ից փոխառությունների միջին տոկոսը կազմել է 20%-ից քիչ պակաս: Դոլարացումը դեռ բարձր է մնում՝ կազմելով բանկային ավանդների մոտ 70%-ը և միջազգային փորձի վրա հիմնված՝ կարելի է ասել, որ անհավանական է դրա արագ նվազումը: Հիպոտեկային վարկավորումը Հայաստանում ներդրվել է և այս բնագավառում առաջին զարգացումները քաջալերող են:

Բազեյան կոնվենցիայի կապիտալի համապատասխանության պահանջների ընդունումը խթանեց մնացյալ բանկերի աստիճանական վերակապիտակացմանը, մինչդեռ փոխառության ապահովման ծրագիրն օգնեց նվազեցնել անհույս վարկերը մինչև ընդհանուր վարկային փաթեթի 4.9%-ը: 2005 թ. հուլիսին նվազագույն կապիտալի պահանջը կրածրացվի մինչև 5 միլիոն ԱՄՆ դրամին համարժեք դրամը: Վերահսկման և կանոնակարգման նպատակներով ՀԿԲ-ն կիրառում է CAMEL դասակարգման մեթոդաբանությունը: ՀԿԲ-ն հիմնադրել է ավանդների ապահովագրման սխեմա, որն ամբողջովին կգործի 2005 թ.: 2003 թ. գործում է վարկերի գրանցման համակարգ: Կիրառվում են միջազգային հաշվապահական ստանդարտներ:

Ոչ բանկային ֆինանսական հատվածը գտնվում է զարգացման ամենավաղ փուլերում: Ապահովագրության վերաբերյալ օրենսդրությունն ուժի մեջ է մտել 1996-97 թթ.: 2003 թ. վերջի Հայաստանում գործում են 19 ապահովագրական ընկերություններ՝ կմբլած ապահովագրական պայմանագրերի ընդհանուր 700 միլիարդ դրամ պարտավորություններով (ՀՆԱ-ի մոտ 40%): Վարկային կազմակերպությունների մասին նոր օրենսդրությամբ ստեղծվել են վեց կազմակերպություններ՝

ներառյալ երկու լիգինգային ընկերություններ: Ապահովագրության վերահսկման լիազորությունը տրված է Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության ապահովագրական տեսչությանը: Չնայած, որ այն միշտ կարևոր է ծեռքբերումներ է գրանցել, սակայն ապահովագրական ոլորտի վերահսկման մարմնի վերահսկման և ինստիտուցիոնալ կառողությունների զարգացման տեղ դեռ կա: Ներկայիս օրենսդրությունը չի պահանջում, որ տեսչությունը, որպես լիցենզավորման պայման գնահատի սեփականատերների, ապահովագրողների և առողջապահների համապատասխանությունը: Ապահովագրության տեսչությունը ապահովագրական շուկայի զարգացման համար մշակել է ռազմավարական փաստաթուղթ:

2000 թ. «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» օրենքին համաձայն ստեղծվեց Արժեթղթերի հանձնաժողով և Կենտրոնական դեպոզիտարիա: Արժեթղթերի հանձնաժողովը զբաղվում է արժեթղթերի թողարկմամբ, գրանցմամբ և հանրային վաճառքով: Օրենքով այն վերահսկում է արժեթղթերի շուկայի պրոֆեսիոնալ մասնագետների, ինքնակարգավորվող կազմակերպությունների (ներառյալ Կենտրոնական դեպոզիտարիան) և արժեթղթերի բորսաների գործունեությունները: Մոտ 190 ընկերություններ են ցուցակագրվել Հայաստանի արժեթղթերի բորսայում 2001 թ. հուլիսից՝ 7.6 միլիարդ դրամ ընդհանուր շուկայական կապիտալացմանը (2004 թ. նոյեմբերի կեսի դրությամբ մոտ 1.1 միլիարդ եվրո): Գործարքների ընդհանուր ծավալները փոքր են՝ հիմնականում գանձապետական պարտատոմսեր:

3.2.4. Այլ դոմորների հետ հարաբերությունները

Հայաստանի անկախացումից հետո և ԱՄՆ-ն, և Համաշխարհային բանկը երկրին տրամադրել են արտոնյալ պայմաններով միջոցներ և լայնածավալ տեխնիկական աջակցություն: Հայաստանի մակրոտնտեսական կայունությունն ուժեղացել է երեք տարվա միջոցառման ընթացքում (2001-2004 թթ.), որը հանրապետությունն իրականացրեց ԱՄՆ-ի Աղքատության հաղթահարման և ԱՃի ծրագրով: 2004 թ. հունիսին Համաշխարհային բանկը հաստատեց նոր՝ երկրի օժանդակության ռազմավարությունը, որը կենտրոնանում է մասնավոր հատվածով առաջնորդվող տնտեսական աճի, ավելի աղքատահեն աճի և ոչ եկամտային աղքատության նվազեցման վրա: ՎՃԵԲ-ը շարունակում է ուշադրությունը կենտրոնացնել տեղական բանկերի միջոցով ՓՄՁ և միկրոծնոնարկությունների ֆինանսավորման վրա և դիտարկում է նաև

★ ★ ★
★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
★ ★

տեղական ֆինանսական հատվածում բաժնետոմսային ներդրումների հնարավորությունը: Դաշվի առնելով վարկ ստանալու սահմանափակ ինքնուրույն կարողությունը՝ Ենթակառուցվածքների և կոմունալ ծառայությունների ֆինանսավորումը կարող է հասանելի դառնալ ՎԶԵԲ-ի ոչ անկախ հիման վրա, եթե այն ուղեկցվի համապատասխան օրենսդրության և ինստիտուցիոնալ բարեփոխումներով (ՎԶԵԲ-ի երկրի ռազմավարությունն ընդունվել է 2003 թ. նոյեմբերին):

Հայաստանը որպես կազմակերպություն է ստանալու ԱԱՆ Հազարամյակի մարտահրավերների կորպորացիայի դրանաշնորհները, որի համար կառավարությունն առաջարկություն է ներկայացրել՝ ներառյալ գյուղական ներքաղաքաց վաճառքներում նոր ներդրումները և սոցիալական հատվածին բյուջետային աջակցությունը: Մի քանի այլ երկկողմանի դոնորներ ակտիվ գործունեություն են ծավալել Հայաստանում՝ ներառյալ էական աջակցություն ԵՄ անդամ երկրներից: Հայաստանը դոնորների միջոցների բացակայություն չի ունեցել: Մյուս կողմից՝ մասնավոր ներդրումների մերգրավման առօլունվ միայն շատ համեստ արդյունքներ են գրանցվել (ՕՊՒ բավական կայուն է՝ Վերջին տարիներին կազմելով ՀԱԱ-ի մոտ 5%): Դոնորների բավականին ծավալուն միջոցները պահանջում են սերտ համակարգում նրանց միջև և այս նպատակով Երևանում գտնվող դոնորները ստեղծել են ընդգրկուն կառույցներ:

3.3. Արևատրի հետ կապված հարցեր, շուկայական և օրենսդրական բարեփոխումներ

1991 թ. ի վեր Հայաստան իրականացրել է շուկայական բարեփոխումներ՝ շեշտադրում անելով առևտորի ազատականացման, կայունացման և տնտեսական վերակառուցման վրա: 2003 թ. Հայաստանն անդամակցեց ԱՀԿ-ին:

Լինելով ցանքարկով շրջապատված երկիր, սահմանափակ բնական պաշարներով՝ Հայաստանը համաշխարհային առևտուն շատ փոքր մասնաբաժին ունի, որն արտացոլում է գլոբալ առևտույթին ցանցերում ոչ բավարար ինտեգրացումը: Դրա առևտուրը շատ կենտրոնացված է՝ տարածաշրջանային և ոլորտային առունությունում: Մասնավորապես, հինգ առանցքային առևտուրային գործընկերները կազմում են դրա ընդհանուր առևտուրի 80%-ը: ԵՄ-ը Հայաստանի առաջին ներմուծողը և արտահանող գործընկերն է՝ կազմելով դրա ընդհանուր առևտուրի 38%-ը: Սակայն ԵՄ-ի երկողմանի առևտուրը Հայաստանի հետ շատ ցածր է՝ 474 միլիոն եվրո 2003 թ. (բայց այսպիսի գործընկերությունների մասին առևտուրը Հայաստանում կազմում է առևտուրի 10%): Առաջարկությունը պատճենաբար կազմում է առևտուրի 10% առավելություն՝ առաջարկելով առանձին առևտուրային գործընկերությունների ստեղծումը:

Իսրայելը Հայաստանի երկրորդ և երրորդ առևտրային գործընկերներն են՝ ներկայացնելով ընդհանուր առևտրի համապատասխանարար 13% և 10%-ը: Տարածաշրջանային առևտրային կապերը լրջորեն սահմանափակված են Լեռնային Ղարաբաղի շուրջ Աղրբեջանի հետ հակամարտության պատճառով: 2000 թ. ի վեր Հայաստանի հետ ԵՄ առևտուրը որոշակի առումով փոփոխական միտում է ունեցել: ԵՄ ներմուծումը նվազեց 2001 թ. (-38%), բայց հետո կրկնապատկվեց 2001-2002 թթ.: 2003 թ. Հայաստանից ԵՄ ներմուծումների մարժան նվազեց 2.7%-ով: Նմանապես ԵՄ արտահանումները Հայաստան շեշտակիորեն նվազեցին 2001 թ. (-16.5%), բայց դրանից հետո կայուն ավելացել են՝ համապատասխանարար 18% և 22% 2002 թ. և 2003 թ.: Հայաստանի առևտուրը ԵՄ-ի հետ շատ կենտրոնացված է, ուր գերիշխում են թանկարժեք քարերի ներմուծումը, մշակումը և դրանց հետագա արտահանումը ԵՄ: Սա կազմում է համապատասխանարար Հայաստանից ԵՄ ներմուծումների 63% (99 միլիոն եվրո): ԵՄ-ից այս երկիր արտահանումների 34% (108 միլիոն եվրո): ԵՄ-ը ներմուծում է նաև քաղաքին մետաղներ (հիմնականում՝ այսումին) մոտ 38 միլիոն եվրո: ԵՄ արտահանումները հիմնականում սարքավորումներն են, հաստոցները և մեքենաները, որոնք կազմում են Հայաստան ԵՄ-ի ընդհանուր արտահանման 30%-ը: Հայաստանն օգտվում է ԵՄ-ի Նախապատվությունների ընդհանրացված համակարգի (GSP) սիեմայից և դրա նախապատվային ներմուծումները հզոր կերպով մեծացել են 2001 թ. ի վեր: Օգտագործման գլոբալ աստիճանը (Ենթակա ներմուծումները համեմատած կատարվող GSP ներմուծումների հետ) 63% է, որը բոլոր շահառումների միջինից բարձր է: Մասնավորապես արդյունաբերական և գյուղատնտեսական ոլորտների GSP օգտագործման աստիճանը նկատելի հիորեն բարելավվել է:

Ընդհանուր առմամբ Հայաստանն ունի առևտրի մոտ 525 միլիոն եվրոի բացասական հաշվեկշիռ, որն արտացոլվում է ՀՆԱ-ի մոտ 7.7% ընթացիկ հաշվի բացասական հաշվեկշռում՝ նվազեցնելով միտումը նախորդ տարիների հետ համեմատած:

ԱՐԿ-ԻՆ Հայաստանի անդամակցությունից հետո տեքստիլ ոլորտում առևտրի երկողմանի համաձայնությունը ուժը կորցրեց: Տեքստիլ ոլորտում առևտուրը հետագայում իրականացվում է առանց քանակական սահմանափակումների կամ ստուգումների՝ MFN հիման վրա: Հայաստանը հիմնական ԱՊԴ երկրների հետ կմքել է ազատ առևտրի համաձայնագրեր: Այն MFN առևտրի և համագործակցության հանձայնագրեր է կմքել մի շարք ոչ ԵՄ երկրների հետ:

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսական ոլորտն այսօր կազմում է ՀՆԱ-ի 20%-ը: Արտադրությունը բնորոշվում է լեռնային գյուղատնտեսությամբ: Գյուղատնտեսական հողը կազմում է 1.4 միլիոն հեկտար մշակահողեր, որոնցից միայն մոտ 400,000 վարելահողերը: Ոլորտում հիմնականում գերիշխում է սեփական կարիքների համար գյուղատնտեսությունը: Սննդամշակման արդյունաբերությունը բավականին փոքր է և լուրջ ներդրումներ է պահանջում: Հայաստանը հայտնի է իր խաղողի և ծիրանի հոյակապ տեսականիով: Գյուղատնտեսական արտահանման հիմնական ապրանքներն են՝ սպիրտային խմիչքները և տոմատի մածուկը:

Անասնաբուժական և ֆիտոսանիտարական խնդիրների կապակցությամբ Հայաստանը 1999-2000 թթ. օրենսդրություն է ընդունել, որն իր մեջ ներառում է անասնաբուժական, պարենի ապահովության և բույսերի պաշտպանության խնդիրներ: Չնայած, որ այս օրենսդրությունը պետական և տեղական, ինչպես նաև պետական և մասնավոր հատվածների միջև մակարդակներով սահմանում է բարեփոխումներ, լիազորություններ և առաջնահերթություններ, սակայն դերակատարները դեռ չեն սահմանվել: Անասնաբուժական և ֆիտոսանիտարական համապատասխան հանրապետական ծառայությունների ապահովման համար ոլորտին չի հերիքում ֆինանսավորումը: Տարբեր նախարարություններ (գյուղատնտեսության, առողջապահության, արդյունաբերության) սանդի անվտանգության բնագավառում դերակատարում ունեն, որը հանգեցնում է հանակարգման բարդությունների:

Կենդանիների ինքնության հաստատման համակարգի բացակայությունը, որը հենարավորություն է տալիս վերահսկել կենդանիների հիվանդությունները, սահմանափակ և վատ սարքավորված լարորատորիաները, վատ վերապատրաստված աշխատակիցները և միջազգայնորեն չներդաշնակեցված սանդի ստանդարտները սահմանափակում են ոլորտի հետագա զարգացումները: Սպանանոցների ոչ բավարար քանակը անտեսում է սանդի ապահովությունը մսի արտադրությունում: Հայաստանը ներկայում արդիականացնում է իր սանդի անվտանգության միջոցառումները՝ կապված ԵՄ շուկա որոշ ձկնարժերների արտահանման հետ:

Հայաստանը ԱՀԿ-ի, Սանդի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO), Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) և Էախողոդների միջազգային գրասեմյակի (OIE) անդամ է, բայց չի ստորագրել Բույսերի պաշտպանության միջազգային կոնվենցիան (IPPC):

1992 թ. ստեղծված մաքսային վարչությունը 2001 թ. դարձավ անմիջապես կառավարության ենթակայության տակ գտնվող Պետական մաքսային կոմիտե (ՊՄԿ) և այն պատասխանատու է Հայաստանում մաքսային քաղաքականության կառավարման համար: Հանրապետությունը կա վեց տարածաշրջանային մաքսատուն և 11 մաքսակետ: Սահմանները Աղբեջանի և Թուրքիայի հետ փակ են առևտրային երթևեկության համար, չնայած որ մաքսային անցակետեր կան: Հայաստանը 1991 թ. ի վեր կիրառել է Ապրանքների դասակարգման ներդաշնակեցված համակարգ (HS): ԱՐԿ-ին համապատասխան նոր Մաքսային օրենսգրքը ուժի մեջ մտավ 2001 թ. հունվարի 1-ին: 2003 թ. փոփոխություններով ստեղծվեց հետմաքսագերծման ստուգման հիմքը: Սակայն մաքսային օրենսդրության կիրառումը, ինչպես նաև մաքսային գնահատումը, լրացուցիչ բարելավումների կարիք ունի: Օրենսգրքի կիրարման համար գոյություն չունի եզակի օրենսդրություն, փոխարեն՝ բազմաթիվ օրենքներ և որոշումներ, որոնք ներառում են մաքսային բոլոր խնդիրները: «Մաքսային ծառայության մասին օրենքը» ուժի մեջ մտավ 2002 թ., բայց ՍՊԾ-ի համար չկա ոչ մի եթիկայի կողեքս: Դրա ընդունումը կօգնի հետևել կոռուպցիային և նվազեցնել մաքսային վարչարարության հայեցողային նոտեցումները: Մաքսային ընթացակարգերի համար Հայաստանը կիրառում է եզակի վարչական փաստաթուղթը (SAD): Մաքսային հայտարարագրերի մշակման համակարգը (ASYCUDA) հիմնված է տեղում ընտրությունների վրա: Սակայն ռիսկի վերլուծության օգտագործումը պետք է լրացուցիչ մշակվի: Գոյություն ունի տեղեկատվության փոխանակման և առևտրականների ու այլ շահագրգիռ անձանց հետ մաքսային հարցերի բնարկման հանձնաժողով և հանրության համար մատչելի բազմաթեզու ինտերնետային էջ, որտեղ պարունակվում է մաքսային տեղեկատվություն և օրենսդրություն: Մի քանի մաքսային վճարներ են գանձվում մաքսային ծևակերպումների համար՝ ի լրումն մաքսային տուրքերի: Հայաստանը Վրաստանի հետ ստորագրել է տարանցիկ փոխադրումների երկողմանի համաձայնագիր:

Ինչ վերաբերում է **հարկերին**, ապա գոյություն չունի միասնական հարկային օրենսգրքը, որը կներարի Հայաստանում կիրառվող բոլոր հարկերը: Մի քանի օրենքների գոյությունը, ինչպես նաև դրանց հաճախակի փոփոխությունները ազդեցություն են ունենում այս բնագավառում իրավական հստակության վրա: Շահութահարկի մասին օրենքը ուժի մեջ մտավ 1998 թ. հունվարին: Քաղաքացիների վրա կիրառվում է եզակի՝ 20% դրույթաչափը, մինչեւ ոչ քաղաքացիների վրա կիրա-

★ ★ ★
★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
★ ★

Վում է 5 կամ 10% դրույքաչափ՝ կախված եկամտի բնույթից: Հայաստանում չկա հարկ կապիտալից և կապիտալն ընկնում է շահութափարկի շրջանակներում:

Երկի հարկային եկամտի հիմնական աղբյուրը ԱԱՀ-ն է: Այս ներդրվել է 1997թ.: 20% ստանդարտ դրույքաչափով, որը կիրառվում է տեղական և ներմուծվող ապրանքների վրա: Որոշ ապրանքատեսակներ գրուականցվել են ԱԱՀ-ի նպատակների համար և որոշ ապրանքատեսակներ ու ծառայություններ ազատված են ԱԱՀ-ից: Որոշ ներմուծվող ապրանքատեսակներ, որոնց համար ոչ մի մաքսային կամ ակցիզային տուրք չկա, ԱԱՀ-ով չեն հարկվում մաքսայինների կողմից ներմուծման պահին, այլ՝ հարկային մարմինների կողմից վաճառքի կամ սպառման պահին: Գյուղացիական տնտեսությունների կողմից վաճառվող սեփական գյուղատնտեսական արտադրանքը, ինչպես նաև տեղական անասնաբուժական դեղերը ներկայում ազատված են ԱԱՀ-ից: ԱՀԿ-ի պահանջները բավարարելու համար Նայաստանը փոփոխություններ է կատարել ԱԱՀ-ի մասին օրենքում, որն այս խորականությունը կվերացնի 2009 թ. հունվարի 1-ից:

Համաձայն 2000 թ. «Պարզեցված հարկի մասին» օրենքի՝ որոշ շեմքից ցածր գործարքները ենթակա չեն շահութափարկի և ԱԱՀ-ի ու բոլոր առևտրային գործունեությունները ենթակա են 8 կամ 13% դրույքաչափի, ըստ շրջանառության, մինչեւ մանրածախ խանութենքի հանդեպ կիրառվում են 5 և 7% դրույքաչափերը: Որոշ ոլորտներ ազատված են (օրինակ՝ ակցիզային հարկի ենթակա ապրանքների արտադրողները), մինչդեռ այլ ոլորտներ ենթակա են հարկման, նույնականացման, եթե դրանք գերազանցում են այս շեմքը (օրինակ՝ մանրածախ խանութենք, ռեստորաններ): Ակցիզային հարկերը կիրառվում են սպիտակային և ալկոհոլային խնիքների, ծխախոտի և նավթային ապրանքների նկատմամբ:

2002 թ. ստեղծված Պետական հարկային ծառայությունը հիմնված է նախկին Պետական Եկամուտների նախարարության վրա: Ծառայությունը բաղկացած է չորս հիմնական վարչություններից՝ 26 տարածքային հարկային տեսչության վարչություններից և երեք հատուկ վարչություններից: Օրենսդրության և վարչական կարողությունների առումով դեռ ջանքեր են պահանջվում, մասնավորապես կոռուպցիայի դեմ պայքարի, եկամուտների հավաքագրման ուժեղացման և հարկային գործնեազների ապօպեգան (նեոարևալ ԱԱՅ-ի մեռապարձո): արումով:

Տեխնիկական կարգավորումների և արդյունաբերական արտա-

դրանքների ստանդարտների առումով 1999 թ. ընդունվեցին Երկու նոր օրենքներ, որպեսզի ավելի ուժեղացվեն Հայաստանի օրենսդրության համադրելիությունը ԱՀԿ-ի Առևտություն տեխնիկական արգելքների համաձայնագրի սկզբունքների հետ: Դրանք են՝ «Ստանդարտացման մասին» օրենքը և «Ապրանքների և ծառայությունների համապատասխանության գնահատումը նորմատիվ պահանջներին» (այսուհետ՝ օրենք «Համապատասխանության գնահատման մասին»): 2000 թ. կառավարությունը դրոշում ընդունեց տեխնիկական կարգավորումների նախապատրաստման, ընդունման և կիրառման մասին:

«Ստանդարտացման և սերտիֆիկացման մասին» օրենքը իրավական հիմք է սահմանում ստանդարտացման, ինչպես նաև ապրանքների, ծառայությունների աշխատանքի (գործընթացներ) և որակի համակարգերի սերտիֆիկացման համար: Սա կիրառելի էր պետական կառավարման մարմինների, ծեռնարկությունների, հաստատությունների և մասնավոր ծեռնարկատերների հանդեպ և սահմանում էր սպառողների և պետության շահերի պաշտպանության միջոցները՝ ստանդարտացման մասին նորմատիվ փաստաթղթերի մշակման և կիրառման միջոցով:

Ստանդարտացման, չափագրության և սերտիֆիկացման վարչությունը (SARM) հանդիսանում է ստանդարտացման, չափագրության և սերտիֆիկացման գործունեությունների համակարգողը: Ի շարու այլոց վերջինիս պատասխանատվությունները ներառում են ազգային ստանդարտացման և սերտիֆիկացման համակարգերի ստեղծումն ու ղեկավարումը, ազգային ստանդարտների և դասակարգիչների ընդունումը, միջազգային ստանդարտների կիրառումը, սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների հավատարմագրումը, սերտիֆիկացման հարցերով բողոքների և վեճերի կարգավորումը:

Ոչ խորականացման սկզբունքը, երբ դա վերաբերում է ներքին և արտասահմանյան ապրանքներին և ծառայություններին, ինչպես նաև այլ պետությունների օրենսդրության համահավասարության սկզբունքն արտացոլված է 2000 թ. որոշման մեջ: Համապատասխանության գնահատման մասին օրենքը կարգավորում է արտադրության, ապրանքների, աշխատանքի և ծառայությունների նորմատիվային պահանջների հետ կամավոր և պարտադիր համապատասխանության գնահատումը: Օրենքը սահմանում է նաև այդ ոլորտում պետական գործունեության իրավական հիմքը, ինչպես նաև որոշում է համապատասխանության գնահատման, ապրանքի շուկայավարման պայմանների և համապա-

★ ★ ★
★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
★ ★

თავსუანიტერვან გმაჩატმანა ხსო ჰილმწერი ჰირავის მცნერი ის պარ-
თაკანიტერვან ერე: სუანიტარმცნერი ადგაუენ ჲისტიტუტე (ФРЦ)
ექიმიანერები ს SARM გოგანას კანერის:

Սերտիֆիկացնող մարմինների և ստուգող լաբորատորիաների հավաստագրման գործընթացը հիմնադրվել է 2000 թ. որոշմամբ: SԵ-դական և օտարերկրյա մարմինները և լաբորատորիաները, համաձայն համապատասխանության գնահատման, Ազգային համակարգում ունեն հավաստագրման հավասար իրավունքներ: Հայաստանը հանդիսանում է Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ISO) և Ստանդարտացման, չափագրության և սերտիֆիկացման Եվրո-ասիական խորհրդի (EASC) անդամ: Զանգեր են գործադրվում ԵՄ համապատասխան ստանդարտների Հայաստանում փոխանցման գործընթացն ավարտելու և անկախ լաբորատորիաների ստեղծման ու լիցենզավորման համար, որտեղ հնարավոր է ստուգել տեխնիկական օրենսդրության մեջ սահմանված անվտանգության պահանջները:

Օրենսդրությունն ապահովում է գրական, գիտական և արվեստի գործերի, ներառյալ համակարգչային ծրագրերն ու տվյալների բազաները, պատենտները, մոդելները, արդյունաբերական նախագծերը, առևտորային ապրանքանիշների և ծառայությունների նշանների, առևտորային անունների, ինտեգրացված պատկերների, հեղինակային իրավունքի և համապատասխան իրավունքների և ծագման անվանման նուավոր և արդյունաբերական սեփականության իրավունքի պաշտպանությունը: 1993 թ. Հայաստանը դարձավ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (WIPO) անդամ: 2003 թ. ԱՐԿ-ին անդամակցելուց հետո Հայաստանը պետք է ապահովի TRIPS-ի հետ իր օրենսդրության համապատասխանությունը: PCA-ը Հայաստանից պահանջում է IPR-ի պաշտպանության համար ապահովել նույն մակարդակը, ինչ որ գոյություն ունի ЕС-ում՝ ներառյալ կիրառման արդյունավետ նեխանդիգմները: Քիմա Հայաստանն անդամակցել է իհմնական IPR-ի համաձայնագրերին և կոնվենցիաներին, բայց լրացուցիչ քայլեր են պահանջվում համապատասխան PCA պարտավորությունները ամբողջպիսի կատարելու համար: Այս ոլորտում քաղաքականության ձևակիրումն ու իրականացումը հանդիսանում է Առևտորի և տնտեսական զարգացման նախարարության կազմում գտնվող Հայաստանի նուավոր սեփականության գործակալության պատասխանատվությունը: Այս պատասխանատու է արդյունաբերական սեփականության իրավունքների դիմումների հաստատման, արդյունաբերական սեփա-

կանության իրավունքի պետության պահպանան, պաշտոնական հրապարակումների թողարկման և արտասահմանյան հաստատությունների ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության համար: Չնայած ընդունված օրենսդրության և կազմակերպչական կառույցների՝ IPR բնագավառում իրականացումն ու կիրառումը թույլ է: Առլիդո-վիդեո ոլորտում կեղծիքներն ու իրավունքի խախտումները առանձնահատուկ մտահոգության առարկա են:

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը (ԱՎԾ) գործում է 2000 թ. ընդունված վիճակագրական օրենսդրության հիման վրա՝ հիմք ընդունելով ՄԱԿ-ի վիճակագրական սկզբունքներն ու ԵՄ քարմացված տեխնիկական աջակցությունը: ԱՎԾ-ն գերատեսչությունների մոտ բարձր հեղինակություն ունի: Քանի որ պետք է բավարար չէ վիճակագրական համակարգի հետագա զարգացման համար, արտաքին ֆինանսավորումն եւկան է: Վիճակագրական համակարգում (ներառյալ տեղեկատվության հավաքման ծրագիրը) աշխատում է 814 մարդ, որից 217 կենտրոնական գրասենյակում: ԱՎԾ-ն գործում է որպես երկրի վիճակագրական համակարգի համակարգող: Վիճակագրական գործունեությունների ծրագրավորումն ու նորմատիվային փաստաթղթերի մշակումն իր ուժեղ կողմերից են: Այս որոշ տվյալներ են ստանում այլ նախարարություններից և գերատեսչություններից: ԱՎԾ-ն կարող է օգտվել որոշ ռեգիստրատորներից և այլ վարչական ադրյուններից: Գերատեսչությունները մնում են ամենակարևոր օգտագործողները, բայց այլ օգտագործողների կարիքները նույնպես հաշվի են առնվում: Եվրոպատահ հետ մշտապես փոխանակվում են արտաքին առևտությունները: Ներկայիս վիճակագրական համակարգը աջակցության կարիք ունի, որպեսզի հետագա բարելավումներ կատարվեն միջազգային ստանդարտների հետ համապատասխանելու համար՝ շեշտադրություն կատարելով ԵՄ-ում օգտագործվող ստանդարտների վրա:

Ֆինանսական վերահսկման հետ կապված՝ Ազգային ժողովի վերահսկիչ պալատը (ՎՊ) Հայաստանի գերազույն ստուգիչ հաստատությունն է: ՎՊ-ն ստուգում է ազգային բյուջեի կատարումը և օտարերկրյա փոխառությունների և դրամաշնորհների օգտագործումը: ՎՊ-ի նախագահն ու անդամները նշանակվում են և կարող են հեռացվել Ազգային ժողովի կողմից, որը սահմանում է նաև առլիսի ծրագիրը և պալատի հաշվետվությունների բովանդակությունն ու բնույթը: Սա անմիջական ազդեցություն ունի դրա անկախության վրա: Կան նախագահի վերահսկիչ ծառայությունը, վարչապետի վերահսկիչ ծառայութ-

★ ★ ★
★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
★ ★

յունը և Ֆինանսների ու Էկոնոմիկայի վերահսկիչ ծառայությունը և այլ վերահսկիչ գործակալություններ: Ներկայումս գործող բոլոր մարմինների աշխատանքներում կրկնություն կա, ինչպես նաև տեղեկատվության լրացուցիչ փոխանակման անհրաժեշտություն: ՎՊ-Ը, որը հանդիսանում է Գերազույն առողջտորական հաստատությունների միջազգային կազմակերպության (INTOSAI) անդամ, կազմակերպչական կարողության, առողջտի մեթոդաբանությունների և ֆինանսական ու մարդկային ռեսուրսների հղորազման լրացուցիչ կարիք ունի:

2000 թ. ընդունված նոր օրենքը սահմանում է պետական գնումների ռեժիմի արդիականացման սկզբունքներն ու գործընթացները: Օրենքը նախագծելիս՝ հշխանություններն առաջնորդվել են ԵՄ-ի ուղղուցույների և ԱՀԿ-ի կառավարության գնումների համաձայնության հետ ընդհանուր համադրելիություններից: Օրենքի դրույթները համադրելի են UNCITRAL-ի հետ: Մոդելային օրենքը և լրացուցիչ փոփոխությունները կարևոր են լավ գործող գնումների համակարգն ապահովելու համար: Պաշտպանության և ազգային անվտանգության, ինչպես նաև կառավարության այլ կարիքների համար գնումները կատարվում են համաձայն «Գնումների մասին» օրենքի և փակ են միայն այն ժամանակ, երբ պետական զայտնիք գոյություն ունի: Դայաստանը նշել է ԱՀԿ-ի պետական գնումների համաձայնագրին միանալու իր ցանկության մասին: Իրականացնող և վերահսկող մարմինը Պետական գնումների գործակալությունն է (ՊԳԳ), որը 2002 թ. դարձավ պետական ոչ-առևտորային կազմակերպություն՝ հաշվետու ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը: Այն իրավական կարծիք է տրամադրում մրցության հանձնաժողովի անդամների գործողությունների վերաբերյալ մրցության գործությունների ընթացքում:

Աերի համար, սակայն կոնկրետ ոլորտներում գործունեություն ծավալելու համար (ինչպիսիք են՝ բանկային գործունեությունը, արժեքըդթերի շուկան, ապահովագործությունը և այլն) օտարերկրյա ներդրողները պետք է լիցենզիա ձեռք բերեն: ՕՆՍՕ-ով սահմանված օգուտները, ի շարս այլոց, ներառում են օտարերկրյա ներդրողների հանդեպ նույն վերաբերմունքը, ինչ որ տեղակամների հանդեպ՝ պաշտպանություն ընդուն առգրավման և բռնագրավման, փոխհատուցում կառավարության անօրինական գործողությունների դեմ և ազգային օրենսդրության հակադարձ փոփոխություններից 5 տարվա ազատում: Ներդրումների հիմնական գործակալությունը Առևտուի և տնտեսական զարգացման նախարարությունն է, որը պատասխանատու է օտարերկրյա ներդրումային քաղաքականության և դրա կատարման համար, իսկ ներդրումների խթանման համար պատասխանատու է 1998 թ. հիմնադրված Հայկական զարգացման գործակալությունը, որը մեկ կանգարի ծառայություններ է մատուցում ներդրողներին և արտահանողներին: ՀԶԳ-ի կազմակերպչական ներկային թուլությունների լույսի ներքո՝ գործակալության ներդրումների խթանումից և աջակցումից բաղկացած իր հիմնական գործառույթների իրականացումը պատշաճ չէ և կարիք ունի վերանայման:

1997 թ. Հայաստանի Հանրապետության «Սեփականաշնորհման մասին» օրենքում (փոփոխված 1999 թ.) ասվում է, որ օտարերկրյա ընկերություններն ունեն սեփականաշնորհմանը մասնակցելու նույն իրավունքները, ինչ որ հայկական ընկերությունները:

3.4. Տրամսպորտ, էներգետիկա, տեղեկատվական հասարակություն, շրջակա միջավայր, հետազոտություն և նորամուծություն, մարդիկ-մարդկանց հարցեր

Տրամսպորտի և կապի նախարարությունը պատասխանատու է տրամսապորտային քաղաքականության սահմանման համար: Ներկայումս ազգային տրամսապորտային քաղաքականությունը գտնվում է ուսումնասիրության փուլում՝ նախկին պետական տրամսապորտային ծեռնարկություններից շատերի սեփականաշնորհումից հետո հստակեցնելու քաղաքականության ձևավորումները և նախարարության կարգավորիչ գործառույթները: Թուրքիայի և Ադրբեյջանի հետ փակ սահմաններով և ցանքարով շրջապատված Հայաստանի համար ոչ բավարար տրամսապորտային կապերը լուրջ նոտահոգություն են: Ներքին

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՁՅԱՆ ★ ★ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՌԵՋԻՄԻ

տրանսպորտային ճանապարհները Հայաստանին կապում են Վրաստանի և Իրանի հետ: Վրաստանի հետ կա նաև երկաթուղային կապ: Հայաստանի հյուսիսում գտնվող Գյումրու միջոցով Վրաստանին ու Թուրքիային կապող երկաթուղին ներկայումս չի գործում՝ Թուրքիայի հետ փակ սահմանների պատճառով: Յետևարար Հայաստանը մեծապես կախված է քաղաքացիական ավիացիայից: Ֆիզիկական ենթակառուցվածքների շատ խղճուկ վիճակը և ոչ սովորական շատ բարձր տրանսպորտային սակագները (նորից հայ-բուլղարական փակ սահմանի պատճառով) բարդացնում են իրավիճակը: Ներկայումս իրականացվում է ենթակառուցվածքների վերականգնում և անենակզրից Հայաստանի մասնակցությունը TRACECA նախաձեռնությանը (TRANsport Corridor Europe-Caucasus-Asia) կարևոր ներ է ունեցել տրանսպորտային կապերի զարգացման ջանքերում: Սակայն էական ենթակառուցվածքային և ինստիտուցիոնալ զարգացումներ են պահանջվում ամբողջ միջանցքով համագործակցությունը խթանելու համար:

ճանապարհների ոլորտում ենթակառուցվածքների զարգացումն ու շահագործումը դրված է «Հայկական ճանապարհներ» ՊՓԲԸ-ի վրա, որը ներկայումս հզորացվում է: Միջօրեաքային բեռնա-ուղևորային փոխադրումները սեփականաշնորհվել են: Նախարարությունը պատասխանատու է ոլորտի կարգավորման և վերահսկման համար, որը վերջերս ուժեղացվել է տեսչական վարչության ստեղծմամբ: ճանապարհային անվտանգությունը մտահոգության առարկա է, որին նույնպես անդրադարձում է ճանապարհների անվտանգության ազգային խորհուրդը: Մեքենաների ճանապարհային պիտանելիությունը չի ստուգվում:

Երկաթուղային ոլորտում 1998 թ. Հայկական երկաթուղիներ (ՀԵ) պետական ծեռնարկությունը վերակառուցվեց երեք առածին ընկերությունների (Երկաթուղային բեռնափոխադրումներ, շարժակազմ և երկաթուղային ենթակառուցվածք)` առանձնացնելով ենթակառուցվածքի կառավարումը ծառայությունների մատուցումից: 2001-2002 թթ. սրա արդյունքում բեռնափոխադրումներն առաջին անգամ աշխատեցին օգուտով: Սակայն 2002 թ. վերջում երեք մարմինները վերամիավորվեցին մեկ պետական ծեռնարկությունում: ԵՎ ընդհանուր երկաթուղային ցանցը, և շարժակազմը էական թարմացումների կարիք ունեն:

Ավիացիոն ոլորտում Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունն (ՔԱԳՎ) ամբողջովին առանձնացած է նախարարությունից և գործում է որպես պետական ավիացիոն կարգավորիչ մարմին: Այն

ստեղծել է նաև մի քանի տնտեսվարող սուբյեկտ պետական ծեռնար-կությունների տեսքով՝ ներառյալ վերջերս լուծարված ազգային օդա-փոխադրող Յայկական ավիաուղիները. հինգ ծեռնարկությունները, որոնք մատակարարում են վառելիք, վերապատրաստում, բժշկական, շինարարական և հանգստի ծառայություններ, ինչպես նաև երեք օդանավակայաններ՝ Զվարթնոցը և Էրեբունին՝ Երևանում ու Շիրակը՝ Գյումրիում, որը Յայաստանի երկրորդ ամենամեծ քաղաքն է: 2002 թ. կոնսերվին կառավարման հանձնվեց Զվարթնոց օդանավակայանը հիմնարար վերակառուցման և զարգացման համար: ՔԱԳՎ-Ն նշանակված է Յայաստանի կառավարության կողմից, որպեսզի կառավարի Յայկական Ավիաուղիների պետական բաժնետոմսերը, որն ամբողջովին պետական ծեռնարկություն էր: Մասնավոր Արմավիա ընկերությունն իր գործունեությունը սկսեց 2001 թ.: Մեկ այլ մասնավոր փոխադրող, Յայկական Միջազգային Ավիաուղիները (AIA) ստեղծվեց 2002 թ. հունիսին: Եվ Արմավիան և AIA ներկայումս բանակցություններ են վարում Յայաստանի կառավարության հետ Յայկական ավիաուղիների չվերթների ծեռքբերման և դրա դե ֆակտո ժառանգորդը դաշնալու համար: Յանձնաժողովի և Յայաստանի իշխանությունների միջև նախնական հանդիպումներ են տեղի ունեցել՝ հորիզոնական օդային տրանսպորտի համաձայնագրի բանակցման հեռանկարով:

Արբանյակային նավիգացիայում տեղեկությունների նախնական փոխանակում է տեղի ունեցել 2004 թ. TRACECA շրջանակներում, որպեսզի GALILEO նավիգացիոն, հետևանան և դիրքավորման ծառայությունները ազգային և տարածաշրջանային մակարդակներով ապահովեն ցանքաբային, ծովային և օդային երթևեկության անվտանգությունն ու արդյունավետությունը:

Յայաստանի էներգետիկ ոլորտը լուրջ մարտահրավերների առջև է կանգնած՝ ներառյալ ենթակառուցվածքի և ցանցերի վատ վիճակը, որը վնասվում է կորուստներից, առգողությունները, անարդյունավետությունը, մեկ աղբյուրից մեծ կախվածությունը (Ռուսաստան), թերմերդրումները, պարտքերի չվճարումները և կախվածությունը վակվող միջուկային ատոմակայանից: Այս խնդիրների լուծումը կարևորագույն նշանակություն ունի տնտեսական աճի և աղքատության կրծատման համար: Յայաստանը գրեթե բացառապես կախված է ռուսական էներգետիկ ներմուծումներից (ամբողջ գազի և միջուկային վառելիքի, նավթամբերդների մեծ մասը): Այն ունի էական հիդրոէներգետիկ կարողություն (էներգետիկ արտադրության մոտ 30%) և չշահագործված ածխի

★ ★ ★
★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
★ ★

և բիտումային պահուստներ: Յիդրոկարբոնի հետազոտությունները շարունակվում են: Չկան ոչ նավամշակման գործարաններ, ոչ էլ նավթամուղեր: Յայաստանի մատակարարման անվտանգությունը ավելի է լարվում Թուրքիայի և Աղրբեջանի հետ փոխադարձ կապերի փակման պատճառով: Գազը ներմուծվում է Վրաստանից մեկ խողովակաշարով, մինչդեռ նավամթերքները ներմուծվում են երկաթուղով և ճանապարհով: Յայաստանը ցանկանում է Իրանի հետ զարգացնել զագի և էներգետիկայի կապերը, ներառյալ թուրքմենական զագի ներմուծումները: 2004 թ. մայիսին Յայաստանը և Իրանը ստորագրեցին մինչև 2007 թ. զագատար խողովակաշարի կառուցման համաձայնագիրը: Երկիրը նախատեսում է նաև մեծացնել հիդրոներգիայի արտադրությունն ու արտահանումը, իհմնականում Վրաստան:

Ներկայում Յայաստանը Մեծամորի միջուկային էլեկտրակայա-նում (ՄՄԵԿ) շահագործում է խորհրդային VVER 440 տեսակի ճնշված թերթ ջրային ռեակտորներից (յուրաքանչյուրը 440 MW) մեկը: ՄՄԵԿ-ը փակվել էր 1989 թ.: Երկրաշարժից հետո, բայց բլոկ-2-ը վերսկսեց իր աշխատանքները 1995 թ., որպեսզի փոխվրացնի Էներգետիկ պակա-սորդը: Բլոկ-2-ն ապահովում է Երկրի Էներգաարտադրության 35-40%: Կայանը պատկանում է Էներգետիկայի նախարարությանը, որը 2003 թ. սկսած, հիմնականում միջուկային վառելիքի չվճարումների պատճա-ռով որպես պարտքի փոխատուցում հանձնվեց ռուսական ՄԵՀ (Միաս-նական Էներգօհամակարգեր) ընկերության ֆինանսական կառավար-մանը: ԵՄ-ն գտնում է, որ ՄՄԵԿ-ը հնարավոր չէ ողջամիտ գներով նո-րացնել միջուկային անվտանգության միջազգային ստանդարտների նակարդակի հասցնելու համար: 1996 թ. Նախագահ Տեր-Պետրոսյանը հանձնաժողովին տեղեկացրեց, որ կառավարությունը նշանակ է Մե-ծամորը շահագործել այնքան ժամանակ, որքան ժամանակ կպահանջ-վի Էներգետիկայի այլընտրանքային աղբյուրի ստեղծման համար: Յանձնաժողովը աջակցություն տրամադրեց (21 միլիոն մինչև 2003 թ.) ՄՄԵԿ-ում միջուկային անվտանգության շահագործումից դուրս հանե-լու միջոցառումների համար և ֆինանսավորեց Յայաստանի Երկարա-ժամկետ ռազմակարության նշանական ուսումնասիրությունները: «Խա-ղաղ նպատակներով միջուկային Էներգիայի օգտագործման մասին» օրենքը ուժի մեջ է մտել և վերջերս ներարկվեց փոփոխությունների՝ շահագործումից դուրս բերելու հիմնադրամի ստեղծման նպատակնե-րով: Միջուկային կարգավորչի գործառություններն իրականացնում է Բնա-պահանության նախարարությունը: Յայաստանը գործարկում է նաև

միջուկային հետազոտությունների երկու ինստիտուտ, մեկը՝ Երևանում և մյուսը՝ Անալիքարքում։ Դադիուակտիվ աղբյուրների վերահսկումը, ներառյալ թափոնների կառավարումն ու ապօրինի թրաֆիկինգի խուսափումն արժանի է ուշադրության։ «Էներգետիկայի մասին» օրենքը, «Հանրային ծառայությունների կարգավորիչ հանձնաժողովի մասին» օրենքը, ապահովում են էներգետիկայի, գազի և ջերմային ոլորտների կարգավորման հիմնական դաշտը։ Անկախ Հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովը (ՀԾԿ) վերահսկում է այս բնագավառները։

Հայաստանի էներգետիկ ռազմավարության սկզբունքները, հիմնը՝ ված «Էներգետիկայի մասին» օրենքի վրա, ներառում են մատակարարման ապահովության բարելավումը, մրցակցության ուժեղացումը, շրջական միջավայրի պաշտպանությունը և էներգետիկ արդյունավետության մեծացումն ու շրջանառու էներգետիկ աղբյուրները։ Ներկայում նախապատրաստվում է ազգային էներգետիկ ռազմավարությունը։ Էներգետիկայի ինստիտուտը և էներգետիկայի ռազմավարական կենտրոնը, որոնք գտնվում են էներգետիկայի նախարարության հովանու ներքո, աջակցում են էներգետիկ քաղաքականության աշխատանքներին՝ ներառյալ էներգետիկ բավարարվածությունն ու շրջանառու էներգետիկայի ծրագրերը։ Էներգետիկայի ոլորտի վերակառուցումները, ներառյալ սեփականաշնորհումը, նկատելի առաջընթաց են գրանցել։ Սակայն ավելի շատ պետք է արփի՝ ներառյալ գնային խախտումների աստիճանական վերացում։

Նախակին ուղղահայաց ինտեգրացված էներգետիկ ընկերությունը՝ Հայէներգոն բաժանվել է արտադրության, փոխանցման և բաշխման։ 2004 թ. հոկտեմբերից այն դադարեցրեց իր գործունեությունը (օրինակ՝ էներգիայի մեծածախ վաճառք և փոխանցում) և ենթակա է լուծարման։ ՄԵՀ-ին, որպես գույք պարտքի դիմաց գործարքի մի մաս, պատկանում են արտադրական մեծ կարողություններ (Հրազդանի ջերմակայանը և էլեկտրակայանը, Սևան-Հրազդան կասկադը) և ՄԹ-ում գրանցված ընկերությանն է (Midland Resources Ltd) պատկանում բախչման ոլորտը։ Հյուրութեկտորակայանները հիմնականում սեփականաշնորհված են։ Փոխանցման ցանցը շահագործվում է Բարձրավոլտ էլեկտրակայան պետական ծնննարկության կողմից։ Հայուսագագարող (45% պետական, 45% ռուսական Գազպրոն և 10% Իտերա հնբերնեյշնլ) գերիշխում է գազի ոլորտում, որպես գազի միակ ներմուծող և փոխանցման, բաշխման և ստորերկրյա գազի պահուստի սեփականատեր ու շահա-

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ★ ★ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

գործող: Նավթամթերքների ոլորտն ընդհանուր առնամբ ազատականացվել է: Հայաստանը նվիրված է ավելի շատ շրջանառու էներգետիկ աղբյուրներ օգտագործելուն (հիմնականում փոքր հիդրոկայաններ, բայց հողմային, բիոմասսայի և գեոթերմալ էներգիայի մեջ ներուժ կա), որը կրարելավի շրջակա միջավայրը, կնվազեցնի ներմուծման ծախսերը և կիզրուացմի մատակարարման անվտանգությունը: PSRC նպատակառությունը է սակագների սահմանման միջոցով խթանել շրջանառու էներգետիկայի օգտագործմանը: Էներգետիկ արդյունավետությունը պետք է բարելավվի: «Շրջանառու էներգիայի մասին» և «Էներգետիկ արդյունավետության մասին» օրենքներն ընդունվել են 2004 թ.:

Տեղեկատվական հասարակության ոլորտում Տրանսպորտի և հեռահաղորդակցության նախարարությունը (ՏՀՆ) պատասխանատու է ոլորտի քաղաքականության և ռազմավարության մշակման համար: Նախարարությունը ունի նաև կարգավորիչ պատասխանատվություն և լիցենզավորում է հեռահաղորդակցության ծառայությունները: 2003 թ. ընդունված «Հանրային ծառայությունների մասին» օրենքը սահմանում է, որ հեռահաղորդակցության կարգավորումը փոխանցվի անկախ և քաղմաղորտային մարմնին: Կարգավորիչ մարմինը կստեղծվի, երբ ընդունվի «Էլեկտրոնային հաղորդակցումների մասին» օրենքը: Խորհրդատվական կարգավիճակով SS Զարգացման աջակցման խորհուրդը (SSԶԱԽ) հիմնադրվել է 2001 թ. նախագահական իրամանով, որպեսզի ֆորմալ երկխոսություն ծավալվի կառավարության, SS արդյունաբերության և քաղաքացիական հասարակության խմբերի միջև:

1997 թ. սեփականաշնորհվեց Հայաստանի հեռահաղորդակցության ընկերությունը (Արմենտել) և վերջինիս տրվեց ֆիքսված ենթակառուցվածքի, ֆիքսված ծայնային հեռախոսի, շարժական հեռահաղորդակցության և կարելային հեռուստատեսության 15 տարվա բացառիկ լիցենզիա:ՏՀՆ-ի կողմից լիցենզավորվող տվյալների փոխանցումը ազատականացվել է, բայց այն Արմենտելից գների վարձակալություն է պահանջում: 2002 թ. բավարար ենթակառուցվածքի բացակայության պատճառով Արմենտելը փակեց շարժական կապի բաժանորդագրությունը նոր օգտագործողների համար: Շարժական հեռախոսակապի առկայությունը ամենացածրն է տարածաշրջանում՝ 1.7 100 բնակչի հաշվով: Լարային հեռախոսագծերի ծառայություններն ավելի լավ՝ 14 100 բնակչի հաշվով, բայց ծառայությունները մատչելի չեն որոշ գյուղական վայրերում: Ինտերների չափազանց բարձր գնի պատճա-

ռով ինտերնետի ծառայությունների տարածվածությունը շատ ցածր է՝ բնակչության մոտ 3%-ից պակաս: Հայաստանի իշխանությունների և OTE ընկերության, որին պատկանում է Արմենտելի բաժնետոմսերի 90%, ավարտվեց 2004 թ. վերջին դատարանից դուրս համաձայնության կմքմամբ, որով Արմենտելը կորցրեց շարժական հեռախոսային ծառայությունների մենաշնորհը: Հարժական հեռախոսային ծառայության երկրորդ լիցենզիան հապենք շնորհվեց K Telekom ընկերությանը:

Առողջության ոլորտում Հայաստանում գործում են պետական և մասնավոր հեռուստատեսային և ռադիոընկերություններ: 2002 թ. «Հեռուստառարադի հեռարձակման մասին» օրենքը ոլորտը կարգավորող հիմնական փաստաթուղթն է: Անկախ Հեռուստատեսության և Ռադիոյի ազգային հանձնաժողովը, հիմք ընդունելով այս օրենքը, պատասխանառու է մասնավոր հեռուստատեսային և ռադիոընկերություններին լիցենզիա տրամադրելու և մոնիթորինգի ենթարկելու համար: Հայաստանի հնագույն և հարուստ մշակութային ժառանգությունը փոխանակումների հզորացման լավ հիմք է և քաղաքացիության կառուցման առանցքային հենք: Հայաստանը մշակութային մասնակցությունը համարում է աղքատության հաղթահարման գործիք:

Ծրջակա միջավայրի առումով Հայաստանը 1998 թ. մշակել է Ազգային բնապահպանական գործողությունների ծրագիրը (Վերանայվել է 2004 թ.), որով սահմանվում են առաջնահերթությունները՝ օդի, հողի և ջրի աղտոտվածություն, բնական ռեսուրսների և վտանգված էկոհամակարգերի գերշահագործում ու շրջակա միջավայրի առողջապահական խնդիրներ և վտանգներ: 2002 թ. հաստատվեց Ազգային շրջակա միջավայրի առողջապահական գործողությունների ծրագիրը: 2003 թ. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը շրջակա միջավայրը նույնականացնելու մաս առաջնահերթության գոտի: Սահմանադրությամբ պահանջվում է, որ պետությունը պաշտպանի շրջակա միջավայրը, ինչպես նաև ապահովի բնական պաշարների ռացիոնալ օգտագործումն ու վերարտադրողականությունը: Ծրջակա միջավայրի մասին ընդունված ոչ մի օրենսդրություն չկա, ուստի, ոլորտը կարգավորվում է քաղաքացիական, վարչական և քրեական օրենսգրքերով, «Տեսչությունների մասին» օրենքով և «Լիցենզավորման մասին» օրենքով: 1995 թ. ընդունվել է «Ծրջակա միջավայրի վրա ազդեցության մասին» օրենքը, որը 1991 թ. բնության պահպանության օրենսդրության սկզբունքների հետ միասին քաղաքացիներին իրավունք է տալիս տեղեկատվություն պահանջել և ներգրավված

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՎԱԾՈՒԹՅՈՒՆ

լինել որոշումների կայացման գործընթացում: 2002 թ. հիմնադրվեց շոշակա միջավայրի տեղեկատվական կենտրոնը:

Բնապահպանության նախարարությունը ստեղծվել է 1991 թ.: Մի շաբթ այլ նախարարություններ, ինչպիսիք են ֆինանսների և էկոնոմիկայի, առողջապահության, գյուղատնտեսության, ներքին գործերի, արդարադատության և պետական եկամուտների նախարարությունները, ներգրավված են բնապահպանական խնդիրներում: Պետական բնապահպանական տեսչությունը պատասխանատու է արտանետումների վերահսկման համար, որը նույնպես իրականացվում է տարածաշրջանային տեսչությունների կողմից: Զրանատակարարման հարցերով զբաղվում է Զրային ռեսուրսների կառավարման պետական կոնժիտեն:

Բնապահպանության նախարարությունը օրինագծեր է նախապատրաստել շրջակա միջավայրի որակի նոր ստանդարտների ներդրման համար, որը պետք է արտացոլի միջազգային փորձն ու ԵՄ օրենսդրությունը: Նոր Հողային օրենսգիրքն ընդունվել է 2001 թ. և Զրային օրենսգիրքը, ինչպես նաև Հանքային պաշարների օրենսգիրքը՝ 2002 թ.: Ներկայումս նախապատրաստվում են օրենքներ թույլտվությունների, համրային մասմակցության, սեյսմիկ անվտանգության, հանքային ուսումնասիրությունների, բնապահպանական վճարների, ինչպես նաև բնապահպանական կրթության մասին:

Ոլորտին յուրահատուկ գործողությունների ծրագրեր և ռազմավարություններ են մշակվել անապատացման, կենսաբազմազանության և հատուկ պահպանվող գտտինների, օգնույթին շերտող քայլքայող նյութերի, ինտեգրացված ջրային ռեսուրսների կառավարման և կայուն օրգանական աղտոտիչների վերաբերյալ: 1998 թ. ընդունվել է Սևանա լճի գործողությունների ծրագրը և խորհրդարանին է ներկայացվել «Զրային քաղաքականության մասին» օրենքի նախագիծը:

Շրջակա միջավայրի մոնիթորինգի կենտրոնը, հիդրոօդերևության բանական վարչությունը և երկրաբանական վարչությունն իրականացնում են շրջակա միջավայրի մոնիթորինգի գործունեություններ: Հայաստանը վավերացրել է մի շաբթ միջազգային և տարածաշրջանային կոնվենցիաներ, որոնց անդամակցում է և, մասնավորապես, անդամակցել է կիմայի փոփոխության կիոտոյի արձանագրությանը:

Կառավարությունը հավանության է արժանացրել հինգ թեմաներ ներառող հետազոտության և նորամուծության ռազմավարական ծրագրիրը: Այս հինգը շատ լավ համապատասխանում են վեցերորդ

ծրագրի թեմատիկ առաջնահերթություններին՝ տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաները, գիտություններ կյանքի մասին, սննդի անվտանգություն և որակ, շրջակա միջավայր և էներգետիկա ու նանոտեխնոլոգիաներ: Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիան պատասխանատու է հետազոտական բաղաքանության իրականացման համար: Կրթության և գիտության նախարարը հանդիսանում է դրա նախագահության անդամ՝ երաշխավորելով կառավարության և համալսարանների հետ ընդհանուր համակարգումը: Ակադեմիային են պատկանում մոտ 4,000 հետազոտողներից բաղկացած մոտ 40 ինստիտուտներ: Շենքերի և ժամանակակից սարքավորումների ձեռքբերման համար միջոցների անբավարարությունն ու միջազգային չափանիշներով մրցակցային աշխատավարձերի բացակայությունը բարդացնում են որակյալ աշխատակիցների պահումը:

Հայաստանը իինգերորդ ծրագրի շրջանակներում մասնակցել է 15 հետազոտական պայմանագրերի: Սրանք վերաբերում են թեմատիկ ցանցերի օգտագործմանը և 17 հայ մասնակիցների, որոնցից մեծ մասը ակադեմիայից էին, որոնք ներգրավվել էին միացյալ հետազոտական ծրագրերին: Նպատակները կենտրոնանում էին միջազգային համագործակցության, տեղեկատվական տեխնոլոգիաների և էներգետիկայի հատուկ միջոցառումների վրա: Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիան ստեղծել է Ազգային կապի կետի կառուցվածք (մեկ ընդհանուր ոլորտը ներառում է ամբողջ Վեցերորդ ծրագիրը, իսկ մյուսը նվիրված է Տեղեկատվական հասարակության տեխնոլոգիաների):

2004 թ. ապրիլի դրությամբ Հայաստանի 26 մարմին մասնակցեցին Վեցերորդ հետազոտական ծրագրի առաջարկությունների ներկայացմանը, ներկայացնելով 23 առաջարկություն, որոնցից ոչ մեկը չընտրվեց: Առաջարկությունները սկզբունքորեն հասցեագրված էին միջազգային համագործակցության, տեղեկատվական տեխնոլոգիաների և շրջակա միջավայրի հատուկ միջոցառումներին:

Կրթական համակարգում կան պետական և մասնավոր հաստատություններ՝ ներառյալ նախադպրոցական, տարրական (7-9 տարեկան), հիմնական (10-14 տարեկան), հանրակրթական, բարձրագույն և հետրուհական մակարդակներ: Տարրական և հիմնական մակարդակներում կրթությունը պարտադիր է: Հիմնական մակարդակում հաճախումը շատ բարձր է: Տեսականորեն պետական ոլորտում կրթությունը ծրի է, բայց լայնատարած ոչ ֆորմալ վճարումները (օդինակ՝ վճարներ, դպրո-

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ՔԱՂՖԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ցական պարագաներ) հիմնականում հարված են հասցնում խոցելի խմբերի երեխաներին՝ ներառյալ գյուղական բնակչությունը, որի արդյունքում դպրոց հաճախումները քիչ են: Կրթությունն ու վերապատրաստումը բարեփոխումների կարիք ունեն, որը ավելի հրատապ դարձավ 1988-ի երկրաշրջի հետո: Մարտահրավերներից են որակի՝ անկումը (օրինակ՝ ոչ հստակ ստանդարտները և գնահատումները), կոռուպցիան (օրինակ՝ վճարումները դիպլոմ գնելու համար), թույլ ռազմավարական պլանավորումը, թերֆինանսավորումը (օրինակ՝ վճարովի սարքավորումներ՝ ներառյալ ուսումնական նյութեր, շինություններ), կազմակերպչական անարդյունավետությունները, շուկայի հետ անբավարար կապը, խոցելի խմբերի երեխաների համար պակաս մատչելիությունն ու դուրս մնալու ռիսկը: Ցանկանալով առաջընթաց կերպով ինտեգրվել Բարձրագույն կրթության եվրոպական բնագավառ (Բոլոնիայի գործընթաց՝ կառավարությունը նվիրված է ավելի բարելավել իրավիճակը և արդիականացնել օրենսդրությունը Բոլոնիայի հօչակագրի սկզբունքներին համապատասխանեցնելու համար: Մարդկային ռեսուրսների զարգացումը կառավարության Աղքատության հաղթահարման ռազմավարության սյունակում է: Այս ռազմավարությունը ընդհանուր կրթության բարելավումը համարում է մեծ առաջնահերթություն, բայց բարձրագույն կրթության և մասնագիտական կրթության ոլորտները նույնպես առաջնահերթությունների ցանկում են: Ընդհանուր կրթությունը համարվում է ավագ դպրոցի հավաքագրման և մասնագիտական կրթական համակարգի հիմք, մասնավորապես խոցելի ընտանիքների երեխաների համար: 2001-2005 թթ. Կրթության զարգացման պետական ծրագիրը, 2004 թ. Մասնագիտական կրթության (ՄԿ) ծրագիրը և «Կրթության մասին» օրենքը բարեփոխումների հիմք են հանդիսանում: ՄԿ մասին օրենքը և բարձրագույն կրթության օրենքը ներկայումս գտնվում են նախապատրաստման փուլում: Յայաստանը մասնակցում է Տեսրու ծրագրին բարձրագույն կրթության արդիականացման համար ներքից վերև փոխանակման ծրագրերի և կառուցվածքային միջոցառումների միջոցով, որոնք նպատակաւողված են տեղական բարեփոխումների կարողությունների հզորացմանը: Այս մասնակցում է նաև երիտասարդական ծրագրին, որը հզորացնում է երիտասարդների ոչ ֆորմալ բնագավառում կրթության համագործակցությունը, մասնավորապես բազմակողմանի երիտասարդական փոխանակումների, միջազգային եվրոպական կամավոր ծառայության, ինչպես նաև երիտասարդ աշխատավորների վերապատրաստման և երիտասարդական ՀԿ-ների կարու-

Կառավարությունը ֆինանսավորում է **հանրային առողջապահության** ծառայություններ տրամադրողներին, բայց հասկանալի է, որ այն լրացուցիչ ֆինանսավորման և առողջապահական ծրագրերի նախազօնման և իրականացման գործում հասարակության նաև ակտուացության քաջալերման կարիք ունի: Ապահովագրության թերզարգացման պատճառով շուկան չի կարողանում հանապատասխան նաև ավորության առողջապահական ապահովագրություն տրամադրել: Երկրի Աղքա-ստության հաղթահարման ռազմավարական ծրագիրը նպատակ ունի պետության կողմից երաշխավորված առողջապահական ծառայությունների մասշելիության և որակի էական ավելացման նիշոցով պահպանել հանրային առողջապահությունը: Գործնականում եկամուտների անհավասարությունը նպաստում է բժշկական ծառայությունների անհավասար մատչելիությանը: Աղքատներին աջակցելու համար կառավարությունը հիմնել է Հիմնական նպաստների փաթեթ (ՀՆՓ), որը պետք է առանց փոխհատուցման տրամադրվի բոլոր կատեգորիաների որոշ խոցելի խմբերին: Հիվանդանոցների և պոլիկլինիկայի վճարումները կատարվում են Պետական առողջապահական գործակալության նիշոցով, բայց դրանք ծածկում են առողջապահական ծառայությունների միայն 45%-ը: Մեծաքանակ հիվանդանոցների, հիվանդանոցային մահճակալների, բուժքույրերի և բժիշկների միայն մի փոքր մասն է օգտագործվում: Ոլորտը դեռ մնում է Վատ վիճակում գերկարողությունների, հնարավորությունների պակասի և գործող հիվանդանոցների ցածր պահանջարկի պատճառով: Նմանապես, Յայաստանում կարգի բժիշկների գերկարողություն, որոնց պաշտոնական վճարները շատ ցածր են: Բժշկական աշխատակիցների գերկարողություններին անդուրադարձություն համար Յայաստանը փորձեց նվազեցնել բժշկական ուսանողների քանակը, որը 1992 թ. 700-ից էտակա 250 1995 թ.: Երկրում գործում է մեկ պետական բժշկական համալսարան՝ հավատարմագրված Արողջապահության նախարարության կողմից: Պոլիկլինիկան մասնագիտացված բժշկական խնամք է տրամադրում, մինչդեռ ամբովլատորիա կոչվող փոքր կլինիկաները կենտրոնացնում են առաջնային առողջապահության վրա: Այս ամբովլատորիաները սովորաբար

★ ★ ★ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ
★ ★ ՔԱՂՖԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

գտնվում են մարզերում և պատկանում են տեղական կառավարություններին: Միայն մի քանիսն են Երևանում, որտեղ դրամը դեկավարվում են անմիջապես Առողջապահության նախարարության կողմից: Դրանք ծրի ծառայություններ են մատուցում: Ընտանեկան բժշկությունը կանխարգելիչ առողջապահության հիմնական շարժիչ ուժն է եղել, բայց շատ պոլիկլինիկաներում չկան ընտանեկան բժշկներ:

Առողջության առաջնային խնամքը ներառում է հանրության կրումը առողջապահական խնդիրների, մայրական և մանկական խնամքի, պատվաստման և ընդհանուր վարակիչ հիվանդությունների բուժումը: Ընդհանուր առնամք մանկական պատվաստումը շատ լավ է: Չնայած որ ընդհանուր քանակը դեռ ցածր է մնում, 1998թ. ի վեր գրանցվել է ՄԻԱՎ/ԶԻԱՅՀ-ի տարածում՝ հիմնականում Ռուսաստանում և Ուկրաինայում գործազուրկ արտագնա աշխատանք որոնողների շրջանում, ինչպես նաև չպահպանված սեռական հարաբերությունների և թրապետների չարաշահման միջոցով: Վերջին տարիներին ավելացել է տուբերկուլյոզից մահացությունների քանակը, բայց ոչ այնքան դրամատիկ, որքան նախկին ԽՍՀՄ այլ պետություններում: Երկրի պետական զարգացման հետ մեկտեղ ժամանակակից կյանքի ոճի առողջապահական ռիսկերը գերիշխող չեն:

Սրտանորային հիվանդություններից մահացության աստիճանը նախկին ԽՍՀՄ պետություններում ամենացածրն է, բայց ԵՄ միջինից բարձր է: Ուղեղամկանային հիվանդությունների աստիճանը նույնպես ցածր է: Սակայն շաբարախտը և կանացի կրծքի քաղցկեղը մահվան տարածված պատճաններից են: Ինչպես Հարավային Կովկասի այլ պետություններում, ծխախոտի օգտագործման բարձր մակարդակը իր հետքերն ե բողնում: Հայաստանն օգտվել է ԵՄ ֆինանսավորման սոցիալական ապահովագրության անհատական քարտային համակարգից և ՄՄՁԳ սոցիալական անցման ծրագրից, որը նպատակաւողված է եղել Հայաստանի սոցիալական համակարգի, ներառյալ առողջապահական ծառայությունների տրամադրման, կայուն զարգացմանը՝ առողջապահական նպատաների բարեփոխումների և առողջապահական համակարգի ֆինանսավորման բարեփոխումների միջոցով: Այս ծրագիրը փորձում է նաև ընդլայնել առաջնային առողջապահության ծառայությունները՝ հիմք ընդունելով ընտանեկան բժշկությունը և համայնքահեն առողջապահական կրթությունը ու արդիականացնել գյուղական առողջապահական հաստատությունների անձնակազմի ունակությունները և հեռավոր գյուղական համայնքների



օգնության կարողությունները: Եվրոհամայնքները ֆինանսական աջակցություն են տրամադրել նաև հոգեկան առողջության, ինչպես նաև Գյումրու հիվանդանոցներում մաքուր ջրի մատակարարման հարցերով զբաղվող ՀԿ-ներին:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	Ներածական խոսքեր	6
2.	Եվրոպական Միություն: Եվրոպական Միության կառուցյները: Եվրոպական Միության որոշումների կայացման մեխանիզմը	9
3.	Անվտանգ Եվրոպան բարվոր աշխարհում. Եվրոպական անվտանգության ռազմավարությունը	45
4.	Հանձնաժողովի ուղերձը. Եվրոպական հարևանության քաղաքականություն. Ռազմավարական փաստաթուղթ	63
5.	Առաջարկ Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի Կարգի վերաբերյալ, որը սահմանում է հարևանության և գործընկերության գործիքի հիմնական դրույթները.....	123
6.	Հանձնաժողովի կողմից Խորհրդին տրվող հաղորդագրությունը Եվրոպական հարևանության քաղաքականության /ԵՂԲ/ ծրագրի շրջանակներում նախատեսվող գործողությունների ծրագրերի շուրջ Հանձնաժողովի առաջարկությունների մասին	203
7.	Հաղորդագրություն Հանձնաժողովից Խորհրդին. Եվրոպական հարևանության քաղաքականություն. Առաջարկություններ Հայաստանի, Ադրբեյչանի, Վրաստանի, Եգիպտոսի և Լիբանանի համար	211
8.	Հանձնաժողովի աշխատակազմի աշխատանքային հաշվետվություն. Եվրոպական հարևանության քաղաքականություն. Երկրի գեկուց.Հայաստան.....	225



Թարգմանիչներ՝	Մարլենա Եղիկյան, Վահագն Ղումաշյան, Նունե Մելքոնյան
Ծրագրի ղեկավար՝	Կարեն Բեքարյան
Ծրագրի համակարգող՝	Ռուզաննա Համբարձումյան
Խորհրդատուներ՝	Մանվել Ղումաշյան, Նանե Ավագյան, Սարգիս Հարությունյան, Քրիստին Շովկիաննիսյան
Խմբագիր՝	Գասպար Պետրոսյան
Համակարգչային ծևավորումը՝	Ստեփան Ստեփանյանի
Կազմի ծևավորումը՝	Մայա Սարիբաշյանի
Translators	Madlena Yeghikyan, Vahagn Ghumashyan, Nune Melkonyan
Project Manager	Karen Bekaryan
Project Coordinator	Ruzanna Hambardzumyan
Consultations by	Manvel Ghumashyan Nane Avagyan Sargis Harutyunyan Christin Hovhannisyan
Editor	Gaspar Petrosyan
Layout	Stepan Stepanyan
Design	Maya Saribashyan



ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ - ՀԱՍՏԱՏԸ ԱԿՆԱՐԿ

ԵՎ ՓԱՍՏԱԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

EUROPEAN NEIGHBOURHOOD POLICY

(EUROPEAN UNION – BRIEF SURVEY

AND DOCUMENT FILE)



Տպագրվել է «Անտարես» ՀՈԼԴԻՆԳ-Ը
Երևան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ (+374 10) 58 10 59, 58 09 59
Հեռ./Ֆաք.՝ (+374 10) 58 76 69
E-mail: antares@antares.am
www.antares.am